ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
GAVAR STATE UNIVERSITY

2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ACTIVITY REPORT OF THE 2023-2024 ACADEMIC YEAR AND SELF-ASSESSMENT REPORT

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
GAVAR STATE UNIVERSITY

2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ACTIVITY REPORT OF THE 2023-2024 ACADEMIC YEAR AND SELF-ASSESSMENT REPORT

ԳԱՎԱՌ – 2024
GAVAR – 2024

Գավառի պետական համալսարանի 2023-2024 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն և ռազմավարական ծրագրի իրականացման ինքնավերլուծության զեկույց

Հաշվետվությունը բովանդակում է տեղեկություններ Գավառի պետական համալսարանի 2023-2024 ուսումնական տարվա կրթական, գիտահետազոտական, սոցիալ-մշակութային գործունեության վերաբերյալ, միաժամանակ այն բուհի ռազմավարական ծրագրի կատարման ինքնավերլուծության զեկույց է, որտեղ ներկայացված է նաև համալսարանի հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի իրականացման գործընթացը, և նախանշված են բուհի 2024-2025 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունները:

The report comprises information on the activities of Gavar State University during 2023-2024 academic year including the educational, scientific – research and educative directions, at the same time representing the self-assessment report on the implementation of University's Strategic Program touching upon the implementation process of University's Anti-Corruption Strategic Program and outlining the major development dimensions of 2024-2025 academic year.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ. 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ, 2024-2025 ՈՒՍՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բարձրագույն ուսումնական հաստատության որակական բնութագիրը որոշվում է այն արժեքներով, որոնց վրա խարսխվում է և այն առաքելությամբ, որով առաջնորդվում է:

Գավառի պետական համալսարանի որդեգրած հիմնարար արժեքներն են մարդասիրությունը, սոցիալական արդարությունը, ակադեմիական ազնվությունը, բուհական ժողովրդավարության սկզբունքները, մասնակցային կառավարումը, հրապարակայնությունը, հաշվետվողականությունը, ավանդույթների և նորարարության զուգակցումը, գործունեության բոլոր ոլորտներում օրինականությունը, կարգապահությունն ու պատասխանատվությունը:

Համալսարանի առաքելությունն է առաքինի մարդու, բարեխիղճ քաղաքացու և որակյալ մասնագետի ձևավորումը: Ուստի, ԳՊՀ-ն 2023-2024 ուսումնական տարում ևս գործել է հետևյալ առաջնային նպատակադրմամբ՝ ուսանողների համար ապահովել որակյալ բարձրագույն կրթություն և նպաստել առաքինությունների մեջ նրանց աճին:

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանն իր գործունեությունը ծավալել է՝ «Կրթությունը՝ առաջընթացի երաշխիք» կարգախոսով, հիմք ընդունելով ‹‹Գավառի պետական համալսարան›› հիմնադրամի 2023-2027թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը և 2024թ. տարեկան գործողությունների ծրագիրը: Ծրագրին համապատասխան՝ **ԳՊՀ-ում 2023-2024 ուսումնական տարում աշխատանքներն իրականացվել են հետևյալ գերակա ուղղություններով.**

1. **կրթական, սոցիալ-մշակութային,**
2. **գիտահետազոտական, նորարարական,**
3. **կառավարչական, ֆինանսատնտեսական, ռեսուրսային ապահովման,**

4.հանրային պատասխանատվության, արտաքին կապերի և միջազգայնացման,

5. հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման:

1. **Կրթական, սոցիալ-մշակութային գործունեության ոլորտում** կատարվել են համալիր աշխատանքներ՝ լուծելու առաջնային խնդիրը. ապահովել ուսուցման և ուսումնառության որակի շարունակական բարձրացում, մրցունակ մասնագետների պատրաստում: Այդ նպատակով վերանայվել են ԳՊՀ ներբուհական իրավական ակտերը, բարելավվել կրթության կազմակերպման կառուցակարգերը, դասախոսները վերապատրաստվել են, մասնակցել տարբեր գիտաժողովների, արդիականացրել դասընթացների առարկայական ծրագրերը, թեմաները, վերաձևակերպել վերջնարդյունքները, կիրառել ուսուցման նոր մեթոդներ ու տեխնոլոգիաներ:

Համալսարանը կատարել է ուսանողների սոցիալ-մշակութային զարգացման իր հանձնառությունը՝ կրթությանը օրգանապես շաղկապելով նրանց համակողմանի դաստիարակությանը, մտավոր, ստեղծագործական, լեզվական, հաղորդակցական, տեխնիկական, կազմակերպական, առաջնորդության կարողությունների զարգացմանը միտված ծրագրեր:

Շարունակվել են աշխատանքները՝ ԳՊՀ ուսանողների նյութական և բարոյական աջակցության, փառատոներին, գիտաժողովներին, մրցույթներին, աշխատաժողովներին, սեմինարներին, լրացական դասընթացներին, հանրային տարբեր միջոցառումներին ուսանողների և դասախոսների մասնակցության ապահովման ուղղությամբ:

2023թ.-ին կատարվել է ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության նախագահի, իսկ 2024թ.-ին՝ ուսանողական խորհրդի նախագահի ընտրություն:

Համալսարանի վարչական և պրոֆեսորադասախոսական անձնակազմը խրախուսել է ուսանողական ինքնակառավարման մարմինների ակտիվ գործունեությունը, առաջնային համարել սովորողների ոչ միայն տեսական իմացության ընդլայնումը, այլև գործնական կարողությունների ու հմտությունների կատարելագործումը, աշխատանքի վրա հիմնված ուսուցման մեթոդների, նորարարական տեխնոլոգիաների կիրառումը:

ԳՊՀ-ն կնքել է համագործակցության հուշագրեր գործատուների, կրթական, գիտահետազոտական հաստատությունների հետ՝ ուղղված աշխատանքահեն կրթության ապահովմանը, գիտահետազոտական գործունեության խրախուսմանը:

Համալսարանական և ֆակուլտետային ուսանողական խորհուրդների կողմից հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են հարյուրից ավելի միջոցառումներ:

Ինչպես նախորդ տարիներին, հաշվետու ուսումնական տարում ևս Գավառի պետական համալսարանի ուսանողները հաղթող են ճանաչվել «Հայաստանի Հանրապետության լավագույն ուսանող» մրցույթում, որտեղ ԳՊՀ 4 լավագույն ուսանողից 3-ը արժանացել են առաջին, 1-ը՝ երկրորդ կարգի մրցանակների:

Գավառի պետական համալսարանի ուսանողները և աշխատակիցներն ակտիվորեն մասնակցել են Գավառում՝ որպես 2024 թվականի Հայաստանի Հանրապետության երիտասարդական մայրաքաղաքում անցկացված բոլոր ծրագրերին, բազմաբնույթ միջոցառումներին, սեմինարներին ու քննարկումներին:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից Գավառի պետական համալսարանին տրվել է շնորհակալագիր՝ «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի երիտասարդական մայրաքաղաք» ծրագրի շրջանակներում Գավառ համայնքում իրականացված միջոցառումներին աջակցության, ակտիվ մասնակցության և արդյունավետ համագործակցության համար: Շարունակվել է գործակցությունը ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի և համայնքապետարանների հետ:

ՀՀ Գեղարքունիքի մարզի բարձրագույն դպրոցի իր կոչմանը հավատարիմ՝ ԳՊՀ-ն ակտիվորեն համագործակցել է տարածաշրջանի դպրոցների, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ՝ դիմորդների մասնագիտական կողմնորոշման և ներգրավման նպատակով:

2023-2024 ուսումնական տարվա ընթացքում ձեռնարկվել են համակողմանի միջոցներ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ԳՊՀ ընդունված 28 ուսանողի համար բարենպաստ բարոյահոգեբանական միջավայրի ստեղծման, նրանց անհրաժեշտ մասնագիտական, մանկավարժա-հոգեբանական, սոցիալական աջակցության ցուցաբերման նպատակով: Նրանք անվճար հիմունքներով ապրում են

ԳՊՀ հանրակացարանում, ստացել են 2023-2024 ուստարվա ուսման վարձավճարի փոխհատուցում ՀՀ պետական բյուջեի միջոցներից, իսկ մնացած մասը վճարվել է Հայ օգնության ֆոնդի հայաստանյան մասնաճյուղի կողմից: Նրանց կարիքները բացահայտելու նպատակով համալսարանի որակի ապահովման բաժնի կողմից մշակվել է հատուկ հարցաթերթ, իրականացվել են հարցումներ, կատարվել ուսումնասիրություններ, ձեռնարկվել բարելավման միջոցառումներ:

2. **Համալսարանը շարունակել է իր աշխատանքները գիտահետազոտական և նորարարական ոլորտում**. խրախուսվել են դասախոսների գիտահետազոտական գործունեությունը, ուսանողների հետազոտական աշխատանքը, կարևորվել է գիտահետազոտական աշխատանքների արդյունքների ներառումը կրթական գործընթացում, արդիականացվել են ուսուցման և ուսումնառության գիտական, մեթոդական, նյութատեխնիկական հիմքերը:

2023-2024 թվականներին կազմակերպվել են ԳՊՀ 26-րդ և 27-րդ գիտաժողովները, որտեղ ներկայացվել են 272 հեղինակների և համահեղինակների գիտական զեկուցումներ: Հրատարակվել են ԳՊՀ գիտական պարբերականի 4 պրակներ: Ուսումնական տարվա ընթացքում լույս են տեսել ԳՊՀ դասախոսների 2 դասագիրք, 9 մենագրություն, որից մեկը՝ եռահատորյակ, 4 ուսումնամեթոդական ձեռնարկ, գիտական նյութերի 2 ժողովածու, 7 գիտական զեկուցումներ և թեզիսներ, 105 գիտական հոդված, ինչպես նաև տրամադրվել է 1 գյուտի արտոնագիր:

ԳՊՀ 9 դասախոսների հոդվածներ տպագրվել են հղման բարձր գործակից ունեցող գիտական պարբերականներում:

ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանուշ Հակոբյանը հեղինակել է եռահատորյակ՝ ‹‹Հայրենիք-Սփյուռք գործակցության տասնամյա ուղին (2008-2018թթ.)›› խորագրով (Գիրք Ա, Գիրք Բ, Գրիք Գ, Երևան: Տիգրան Մեծ, 2023, 2024թթ.):

Շարունակվել է ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական թեմայի ուսումնասիրությունը՝ նվիրված ‹‹Սասնա Դավիթ›› դյուցազներգությանը և եվրոպական էպոսագիտությանը: Թեմայի շրջանակներում 2023 թվականին առկա-առցանց ձևաչափերով տեղի ունեցավ միջազգային գիտաժողով՝ «Գրականություն և

բանահյուսություն» խորագրով: 21 հեղինակ և համահեղինակ ներկայացրին 18 գիտական զեկուցումներ, որոնք տպագրվեցին առանձին ժողովածուի ձևով: Իսկ 2024 թվականին լույս տեսավ թեմայի ուսումնասիրության արդյունքներն ամփոփող կոլեկտիվ մենագրություն՝ ‹‹Եվրոպական էպիկական ավանդույթը և «Սասնա ծռեր» էպոսը›› վերտառությամբ, ԳՊՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտական խմբի ղեկավար Վաչագան Գրիգորյանի և նույն ամբիոնի դասախոսներ, գիտական խմբի անդամներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արա Առաքելյանի և բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Նաիրա Իսկանդարյանի համահեղինակությամբ:

ԳՊՀ դասախոսները հեղինակել են գիտական աշխատանքներ, մասնակցել միջազգային և հանրապետական բազմաթիվ գիտաժողովների, հանդես եկել զեկուցումներով, վեց դասախոս դարձել է գործընկեր բուհերի՝ Գրոզնիի պետական նավթային տեխնիկական համալսարանի՝ ‹‹Մարդը, սոցիումը, արվեստը›› և Մինսկի պետական լեզվաբանական համալսարանի հրատարակած՝ ՝ ‹‹Մարդը և նրա աշխարհը›› խորագրերով աշխատությունների համահեղինակ:

ԳՊՀ ամբիոնների և ուսանողական գիտական ընկերության համատեղ ջանքերով անցկացվել են ուսանողական գիտաժողովներ, որտեղ քննարկվել են միջազգային և տարածաշրջանային արդի հիմնախնդիրներին, Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթություններին ու առանձնահատկություններին նվիրված թեմաներ:

Համալսարանը կարևորում է «Վիրտուալ համալսարան» ծրագիրը, որի իրականացման ուղղությամբ աշխատանքները շարունակվում են: Ավելի քան երկու տարի հաջողությամբ գործարկվում է ԳՊՀ կայքի՝ «Առցանց դիմում» հարթակը, մշակվել և փորձարկման փուլում է ԳՊՀ ակադեմիական տեղեկագրերի լրացման էլեկտրոնային ծրագիրը, միջոցներ են ձեռնարկվել ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման (Learn.gsu.am) համակարգի բարելավման, էլեկտրոնային ուսուցման նոր գործիքների ներդրման և կրթության էլեկտրոնային ռեսուրսների համալրման ուղղությամբ:

3. **ԳՊՀ-ում գերակա ուղղություն է կառավարչական, ֆինանսատնտեսական, ռեսուրսային ապահովման ոլորտը՝** կարևորելով համալսարանի բնականոն

գործունեությունը, կենսապահովման գործառույթների իրականացումը, ներբուհական տնտեսության պատշաճ կազմակերպումը, ԳՊՀ ֆիզիկական, սոցիալական, վիրտուալ միջավայրների գրավչության աճը:

2023-2024 ուսումնական տարում արդյունավետ գործել են ԳՊՀ կառավարման մասնակցային կառուցակարգերը, գումարվել են հոգաբարձուների խորհրդի 2 նիստ, գիտական խորհրդի 13 նիստ, ռեկտորատի 25 նիստ, ըստ անհրաժեշտության հրավիրվել են օպերատիվ խորհրդակցություններ ու թռուցկաժողովներ: Սահմանված կարգով տրվել է ԳՊՀ ռեկտորի ընդհանուր թվով 389 հրաման (նախորդ տարի տրվել է 335 հրաման), ձևակերպվել է 83 գործուղում:

ԳՊՀ գործունեության բոլոր ոլորտները կարգավորող 104 ներբուհական իրավական ակտից հաշվետու տարում գիտական խորհրդի կողմից վերանայվել և փոփոխվել է 10 ակտ՝ ՀՀ օրենսդրության փոփոխություններին ու լրացումներին համապատասխան, ինչպես նաև բուհի զարգացման ներքին պահանջներից ելնելով: 2023-2024 ուստարում ԳՊՀ մուտքագրվել և համապատասխան մակագրություններով, կարգադրություններով և ուղեկցող գրություններով ելքագրվել է 2647 դիմում, ընթացք է տրվել 1144 զեկուցագրի: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից, ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեից, հանրային իշխանության՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվել և համալսարանի քարտուղարություն է մուտքագրվել 371 պաշտոնական գրություն, ելքագրվել է 398 ԳՊՀ գրություն, տրամադրվել են 472 տեղեկանքներ: ԳՊՀ 78 աշխատակցի և ուսանողի տրվել է գործուղում: ԳՊՀ ուսանողներին տրամադրվել են եռալեզու ակադեմիական տեղեկագրեր, ինչպես նաև սահմանված կարգով 3 շրջանավարտի տրամադրվել են դիպլոմի կրկնօրինակներ:

ԳՊՀ էլեկտրոնային փոստի հասցեներին /info@gsu.am, infogsu@mail.ru/ ուղարկվել և պատասխան ու համապատասխան ընթացք են ստացել 8435 նամակներ:

Պատրաստվել և ԳՊՀ պաշտոնական կայքէջում /www.gsu.am/ ու դիմագրքում (ԳՊՀ ֆեյսբուքյան էջում՝ https://www.facebook.com/gavarstateuniversity) տեղադրվել են 189 լուր և հայտարարություն՝ համապատասխան լուսանկարներով:

Հաշվետու ֆինանսական տարում ԳՊՀ-ն կատարել է իր բոլոր ֆինանսական պարտավորությունները, ժամանակին վճարել հարկերը, աշխատավարձերը, կիրառել

ուսման վարձավճարի զեղչեր, նորոգել է ԳՊՀ մասնաշենքերի տանիքները, լսարաններ, աշխատասենյակներ, հանրակացարանի որոշ հատվածներ: Միաժամանակ, առաջացել է նախատեսված և հավաքագրված գործառնական եկամուտների անհամապատասխանություն՝ կապված 2023-2024 ուսումնական տարում և նախորդ տարիներին ընդունելության քննությունների արդյունքներով մրցութային շեմը հաղթահարած և առաջին կուրս ընդունված դիմորդների թվի նվազման և համապատասխանաբար՝ ֆինանսական մուտքերի զգալի կրճատման հետ: Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ ԳՊՀ գիտական խորհուրդը 2024թ. հունվարի 12-ին որոշում կայացրեց՝ հոգաբարձուների խորհրդին ներկայացնել առաջարկություն՝ «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կառուցվածքի փոփոխությունների մասին: Ելնելով համալսարանի առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետներում միևնույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման փաստից, ուսանողների թվից և համալսարանի ֆինանսական մուտքերից, հոգաբարձուների խորհուրդը գիտական խորհրդի առաջարկության հիման վրա 2024թ. հունվարի 27-ին ընդունեց որոշում՝ ԳՊՀ կառուցվածքում հետևյալ փոփոխությունները կատարելու մասին՝ միավորել ԳՊՀ առկա ուսուցման բանասիրական, հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետները և հեռակա ուսուցման ֆակուլտետի հումանիտար ուղղվածության տարրական կրթության մանկավարժության և մեթոդիկայի, հայոց լեզվի և գրականության, ռուսաց լեզվի և գրականության, իրավագիտության ու պատմության բաժինները ընդհանուր՝ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի կազմում, և միավորել առկա ուսուցման բնագիտական, տնտեսագիտական ֆակուլտետները և հեռակա ուսուցման ֆակուլտետի բնագիտական ու տնտեսագիտական ուղղվածության համակարգչային ճարտարագիտության, դեղագործական քիմիայի, քարտեզագրության և կադաստրային գործի, կենսաբանության, բնապահպանության և բնօգտագործման, սերվիսի, հաշվապահական հաշվառման բաժինները ընդհանուր՝ բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի կազմում: Գիտական խորհրդի առաջարկությամբ և հոգաբարձուների խորհրդի որոշմամբ կատարվեց նաև ԳՊՀ հաստիքների կրճատում: ԳՊՀ 2024 թվականի բյուջեն հաշվարկվեց և կատարվեց՝ համալսարանի կառուցվածքային փոփոխություններին և աշխատակիցների

վերանայված հաստիքներին համապատասխան: Սահմանված կարգով իրականացվեց ԳՊՀ 2023 թվականի ֆինանսական գործունեության արտաքին աուդիտ, և հաստատվեց համալսարանի ֆինանսական գործունեության օրինականությունը, հաշվետվությունների արժանահավատությունը:

4. Համալսարանը՝ որպես հանրորեն պատասխանատու իրավաբանական անձ, **հանրային պատասխանատվության, արտաքին կապերի և միջազգայնացման ոլորտում** իրականացրել է տարբեր ծրագրեր: Հաշվի առնելով ՀՀ հանրակրթական չափորոշիչների փոփոխությունը և ուսուցիչներին առաջադրվող նոր պահանջները՝ ԳՊՀ-ն նախաձեռնել և անցկացրել է ուսուցիչների մասնագիտական և մեթոդական վերապատրաստման անվճար դասընթացներ: Ելնելով հաշվապահական հաշվառման ոլորտում ՀՀ օրենսդրական փոփոխությունները մանագետներին պարզաբանելու և նոր ծրագրերի առանձնահատկությունները ներկայացնելու անհրաժեշտությունից՝ ԳՊՀ-ն կազմակերպել է ՀՀ Գեղարքունիքի մարզի հանրային հատվածի կազմակերպությունների 75 հաշվապահների վերապատրաստման դասընթաց: 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում համալսարանը պրոֆեսորադասախոսական կազմի համար կազմակերպել է վերապատրաստման դասընթացների շարք՝ 15 արդիական թեմաներով: Մասնավորապես, անցկացվել է «Գեներատիվ արհեստական բանականության /ԱԲ/ գործիքներ» թեմայով վերապատրաստման դասընթաց՝ կրթական գործընթացում ԱԲ հնարավորությունների կիրառման նպատակով: Դասընթացի շրջանակներում շեշտադրումը կատարվել է առարկայական ծրագրերի մշակման, ուսումնական նյութերի պատրաստման, դասավանդման և հետազոտական աշխատանքներում մեքենայական ուսուցման ԱԲ համակարգերի (գեներատիվ արհեստական բանականության գործիքակազմի՝ chatGPT, Claude AI, Dall-E, Stability.AI,chatPDF, Gamma և այլն) կիրառության, թվային փոխակերպման հիմնախնդիրների վրա:

ԳՊՀ ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի կողմից կազմակերպվել են գեներատիվ ԱԲ-ի կիրառությունների (prompt engineering) վերաբերյալ սեմինարներ նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցականների և ուսուցիչների համար:

Բաժինը շարունակել է համագործակցել ԳՊՀ ուսանողներին կրթաթոշակներ տրամադրող կազմակերպությունների՝ Հայ օգնության ֆոնդի «Ժիրայր Նիշանյան» հիմնադրամի, «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ-ի, Հայ կրթական հիմնարկության, Գավառի համայնքապետարանի, Եկեղեցիների համաշխարհային միության, այլ բարեգործական, մարդասիրական կառույցների հետ:

Գավառի պետական համալսարանն ունի միջազգային համագործակցության ուղեծիր և այն ընդլայնելու նպատակով հաշվետու տարում գործակցության պայմանագրեր և հուշագրեր է կնքել ու վերակնքել հետևյալ եվրոպական բուհերի հետ. Իսպանիայի Ալմերիայի, Մուրսիայի Սան Անտոնիո կաթոլիկե, Վալլադոլիդի, Կորդոբայի, Կորունայի համալսարանների, Պորտուգալիայի Մինհոյի, Բրագանսայի պոլիտեխնիկ համալսարանների, Իտալիայի Հռոմի Սապիենզայի համալսարանի, Ռումինիայի Տիմիշոարայի համալսարանի հետ:

Հաշվետու ժամանակահատվածում եվրոպական բուհերում սովորել են ԳՊՀ 9 ուսանող, դասավանդել, միջազգային շաբաթի մասնակցել և վերապատրաստում անցել 8 դասախոս:

ՀՀ բուհերի՝ Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին անդամակցությամբ և ԳՊՀ-ի՝ Եվրոպական միության ծրագրերին մասնակցությամբ պայմանավորված, իրականացվում են բարձրագույն մասնագիտական կրթության բարեփոխումներ՝ նորարարական, ‹‹կանաչ››, ‹‹թվային››, ներառական, աշխատանքահեն և այլ ուղղություններով: ԳՊՀ-ն ավարտեց Եվրոպական միության ‹‹ERASMUS+ FLEXWBL›› ծրագիրը՝ նվիրված աշխատանքահեն ուսուցմանը և այժմ իրականացնում է ‹‹ERASMUS+T-GREEN››, ‹‹ERASMUS+ KPI4HE›› միջազգային ծրագրերը, ինչպես նաև շահել է վիրտուալ կրթությանը նվիրված ‹‹VIRTUAL VOYAGES›› ծրագիրը:

5. Հաշվետու ժամանակահատվածում ԳՊՀ-ն շարունակել է իր որդեգրած հակակոռուպցիոն քաղաքականության իրականացումը՝ ‹‹Գավառի պետական համալսարան›› հիմնադրամի 2023-2027թթ. հակակոռուպցիոն ծրագրի հիման վրա: Համալսարանի վարչական և պրոֆեսորադասախոսական անձնակազմը ծավալել և ծավալում է իր գործունեությունը օրինականության, օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքներով՝ բացառելով կոռուպցիոն երևույթները, ղեկավարվելով ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգով, պահպանելով

համալսարանի էթիկայի կանոնները, ընդհանուր, մասնագիտական և մանկավարժական բարեվարքության նորմերն ու սկզբունքները:

2024-2025 ուսումնական տարում ԳՊՀ զարգացման հիմնական ուղղություններն են.

-Գավառի պետական համալսարանի 2023-2027թթ. զարգացման ռազմավարական ծրագրի հիման վրա 2024-2025 ուսումնական տարվա գործողությունների պլանի իրականացում,

-ԳՊՀ 2023-2027թթ. հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի դրույթների կատարում,

-ԳՊՀ երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ գործողությունների կատարողականի արդյունավետության ցուցիչների ապահովում,

- կրթական ծրագրերի արդիականացում՝ ելնելով ժամանակի հրամայականից, գործատուների պահանջներից, Եվրամիության ծրագրերի շրջանակներում իրականացվող բարեփոխումներից, արտերկրի առաջատար բուհերի փորձից, հաշվի առնելով ուսանողների կրթական ակնկալիքները, գիտության արդի նվաճումները, արհեստական բանականության առաջարկած հնարավորությունները,

- ԳՊՀ կառավարման տեղեկատվական նոր համակարգի մշակում և ներդրում,

-ԳՊՀ դասախոսների գիտահետազոտական աշխատանքների ներկայացման միասնական էլեկտրոնային հարթակի կատարելագործում,

-ԳՊՀ ուսանողների ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի միասնական էլեկտրոնային շտեմարանի ստեղծում, գրագողության դեմ պայքարի արդյունավետության բարձրացում, գրագողության դեպքերի բացահայտման նոր էլեկտրոնային ծրագրի ներդրում,

-ԳՊՀ ‹‹Վիրտուալ համալսարան›› նախագծի աստիճանական իրականացում,

-ԳՊՀ կրթական գործընթացում արհեստական բանականության գործիքների, թվային ուսուցողական տեխնոլոգիաների և հնարավորությունների կիրառում, զարգացման ծրագրերի կենսագործում:

ԳՊՀ գործունեությունը ծավալելիս՝ հաշվի ենք առնում համալսարանի առջև ծառացած մարտահրավերները: Խոսքը սոցիալական, տնտեսական, բարոյա-

հոգեբանական հիմնախնդիրների, գյուղական համայնքներից շարունակվող արտագաղթի, մասնագիտական զբաղվածության ապահովման դժվարությունների, միջհամայնքային տրանսպորտի անկանոն գործունեության, դիմորդների թվի նվազման, միասնական ընդունելության քննությունների մտահոգիչ արդյունքների, վարձավճարների հավաքագրման դժվարությունների, նախատեսված և հավաքագրված ֆինանսական մուտքերի, եկամուտների և ծախսերի անհամապատասխանության մասին է:

Թվարկված խնդիրների հնարավոր լուծման ուղիներն են. վճարովի նոր կրթական ծառայությունների մատուցումը, ՀՀ Գեղարքունիքի մարզի ուսուցիչների և այլ մասնագետների վերապատրաստման վճարովի ծրագրերի իրականացումը, դպրոցների հետ համագործակցության և աշակերտների մասնագիտական կողմնորոշման նոր ձևերի կիրառումը, գործատուների հետ կապերի ակտիվացումը, ԳՊՀ բազմախողովակ ֆինանսավորման ապահովումը:

Գավառի պետական համալսարանը 2023-2024 ուսումնական տարվա ավարտին ճանապարհեց շրջանավարտների 27-րդ սերնդին և 2024թ. սեպտեմբերի 1-ին դիմավորեց առաջին կուրսեցիների 32-րդ սերնդին՝ նոր տարեշրջանը մեկնարկելով ‹‹Կրթությունը՝ հաջողության ճանապարհ›› կարգախոսով, շարունակելով ՀՀ Գեղարքունիքի մարզի բարձրագույն կրթության և գիտության կենտրոնի իր կարևոր առաքելությունը:

Ռուզաննա Հակոբյան՝

Գավառի պետական համալսարանի ռեկտոր,

Իրավաբանական գիտությունների դոկտոր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՇՆՈՐՀՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1.1. 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Դասիչը	Մասնագիտությունը	Որակավորումը
011301.00.6 Ընդհանուր մանկավարժություն		
011301.01.6	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Մանկավարժության բակալավր
011301.00.7 Ընդհանուր մանկավարժություն		
011301.01.7	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Մանկավարժության մագիստրոս
011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն		
011401.01.6	Կենսաբանություն	Մանկավարժության բակալավր
011401.03.6	Աշխարհագրություն	Մանկավարժության բակալավր
011401.18.6	Պատմություն	Մանկավարժության բակալավր
011401.19.6	Հայոց լեզու և գրականություն	Մանկավարժության բակալավր
011401.20.6	Ռուսաց լեզու և գրականություն	Մանկավարժության բակալավր
011401.21.6	Անգլերեն լեզու և գրականություն	Մանկավարժության բակալավր
011401.00.7 Մասնագիտական մանկավարժություն		
011401.01.7	Կենսաբանություն	Մանկավարժության մագիստրոս
011401.03.7	Աշխարհագրություն	Մանկավարժության մագիստրոս
011401.18.7	Պատմություն	Մանկավարժության մագիստրոս
011401.19.7	Հայոց լեզու և գրականություն	Մանկավարժության մագիստրոս
011401.20.7	Ռուսաց լեզու և գրականություն	Մանկավարժության մագիստրոս
011401.21.7	Անգլերեն լեզու և գրականություն	Մանկավարժության մագիստրոս
041101.00.6 Հաշվապահական հաշվառում և հարկում		
041101.01.6	Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	Տնտեսագիտության բակալավր
041101.00.7 Հաշվապահական հաշվառում և հարկում		

041101.01.7	Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/	Տնտեսագիտության մագիստրոս
041201.00.6 Ֆինանսներ		
041201.01.6	Ֆինանսներ /ըստ ոլորտի/	Տնտեսագիտության բակալավր
041201.00.7 Ֆինանսներ		
041201.01.7	Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ	Տնտեսագիտության մագիստրոս
031101.00.6 Տնտեսագիտություն		
031101.01.6	Տնտեսագիտություն	Տնտեսագիտության բակալավր
031101.00.7 Տնտեսագիտություն		
031101.01.7	Տնտեսագիտություն	Տնտեսագիտության մագիստրոս
042101.00.6 Իրավագիտություն		
042101.01.6	Իրավագիտություն	Իրավագիտության բակալավր
042101.00.7 Իրավագիտություն		
042101.01.7	Իրավագիտություն	Իրավագիտության մագիստրոս
053101.00.6 Քիմիա		
053101.02.6	Դեղագործական քիմիա	Քիմիայի բակալավր
054201.00.6 Աշխարհագրություն		
054201.02.6	Քարտեզագրություն և կադաստրային գործ	Աշխարհագրության բակալավր
061103.00.6 Համակարգչային ճարտարագիտություն		
061103.01.6	Համակարգչային ճարտարագիտություն	Ինֆորմատիկայի բակալավր
061103.00.7 Համակարգչային ճարտարագիտություն		
061103.01.7	Համակարգչային ճարտարագիտություն	Ինֆորմատիկայի մագիստրոս
101801.00.6 Սերվիս		
101801.01.6	Սերվիս	Սերվիսի բակալավր
052201.00.6 Բնապահպանություն և բնօգտագործում		
052201.01.6	Բնապահպանություն և բնօգտագործում	Շրջակա միջավայրի բակալավր

1.2. 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԸՆԴՈՒՆՎԱԾՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՖԱԿՈՒԼՏԵՏ, ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ընդունելության քննություններ			ընդունվածների քանակը
	մրցութային քննություններ		ոչ մրցութային քնն.	
1	2	3	4	5
1.Բանասիրական ֆակուլտետ				
Հայոց լեզու և գրականություն	Հլգ (գ)	Օտլ (գ)		2
Ռուսաց լեզու և գրականություն	Ռլ (գ)	Հլգ (գ)		1
Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ (գ)	Հլգ (գ)		7
2. Բնագիտական ֆակուլտետ				
Սերվիս	Հլգ(գ)	Օտլ (գ) կամ Ա (գ)		7
Համակարգչային ճարտարագիտություն	Մ (գ)	Ֆ (գ) կամ Անգլ (գ)	Հլգ(գ)*	6
Դեղագործական քիմիա	Ք (գ)	Կ (գ) կամ Ֆ (գ)	Հլգ(գ)*	2
3.Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ				
Պատմություն	ՀՊ (գ)	Հլգ (գ)		3
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ (գ)	Մ (գ) կամ Օտլ(գ)		2
Իրավագիտություն	ՀՊ (գ)	Հլգ (գ) կամ Օտլ (գ)	Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*	8
4. Տնտեսագիտական ֆակուլտետ				
Ֆինանսներ /ըստ ոլորտի/	Մ (գ)	Հլգ (գ) կամ Օտլ (գ)	Օտլ (գ)* կամ Հլգ (գ)*	6
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	Մ (գ)	Հլգ (գ) կամ Օտլ (գ)	Օտլ (գ)* կամ Հլգ (գ)*	3
Տնտեսագիտություն	Մ (գ)	Հլգ (գ) կամ Օտլ (գ)	Օտլ (գ)* կամ Հլգ (գ)*	8
Ընդամենը				55

5. Հեռակա ուսուցման ֆակուլտետ				
Ռուսաց լեզու և գրականություն	Ռլ (գ)	Հլգ (գ)		**1**
Պատմություն	ՀՊ (գ)	Հլգ (գ)		2
Իրավագիտություն	ՀՊ (գ)	Հլգ (գ) կամ Օտլ (գ)	Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*	5
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	Մ (գ)	Հլգ (գ) կամ Օտլ (գ)	Օտլ (գ)* կամ Հլգ (գ)*	4
Համակարգչային ճարտարագիտություն	Մ (գ)	Ֆ (գ) կամ Անգլ (գ)	Հլգ(գ)*	1
Սերվիս	Հլգ(գ)	Օտլ (գ) կամ Ա (գ)	Հլգ(գ)	2
Ընդամենը				**15**

1.3. 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՖԱԿՈՒԼՏԵՏ, ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Անվճար տեղեր Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ	Վճարովի տեղեր	Ընդունվածների թվակազմը
1. Բանասիրական ֆակուլտետ			
Հայոց լեզու և գրականություն	2	10	2
Անգլերեն լեզու և գրականություն	2	13	3
2. Բնագիտական ֆակուլտետ			
Կենսաբանություն	-	10	1
Համակարգչային ճարտարագիտություն	1	11	4
3. Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ			
Իրավագիտություն	-	20	12
Պատմություն	1	11	4
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	2	13	7
4. Տնտեսագիտական ֆակուլտետ			
Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ	2	13	3

Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/	2	10	3
Տնտեսագիտություն	1	11	3
Ընդամենը	**13**	**122**	**42**

2. «ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

1.	**Ղազարյան Էդուարդ**	*«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*
2.	**Մարգարյան Հասմիկ**	*Գավառի պետական համալսարանի հաշվապահական հաշվառման ամբիոնի դասախոս, «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քարտուղար*
3.	**Սարգսյան Կարեն**	*ՀՀ Գեղարքունիքի մարզպետ*
4.	**Մովսիսյան Արտուր**	*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի տեղակալ*
5.	**Ղարիբյան Կարեն**	*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի տեղակալ*
6.	**Անդրիկյան Արման**	*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի խորհրդական*
7.	**Հակոբյան Արսեն**	*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի փորձաքննության և վերլուծությունների վարչության պետ*
8.	**Շուքուրյան Յուրի**	*ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*
9.	**Գևորգյան Էմիլ**	*ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*
10.	**Ղազարյան Հայկ**	*Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*
11.	**Սարգսյան Բագրատ**	*Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն*
12.	**Հակոբյան Հրանուշ**	*Գավառի պետական համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս,*

		իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
13.	**Կատվալյան Վիկտոր**	*Գավառի պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ*
14.	**Հովհաննիսյան Անդրանիկ**	*Գավառի պետական համալսարանի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի դասախոս, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ*
15.	**Պողոսյան Աշխունջ**	*Գավառի պետական համալսարանի հասարակական գիտությունների ամբիոնի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ*
16.	**Բունիաթյան Սյուզաննա**	*Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի ուսանող*
17.	**Ասլանյան Արմինե**	*Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի ուսանող*
18.	**Մանուկյան Լաուրա**	*Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի ուսանող*
19.	**Պարոնիկյան Անահիտ**	*Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի ուսանող*
20.	**Վարդանյան Անահիտ**	*Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ուսանող*

2. ԳՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

1.	ԳՊՀ գիտական խորհրդի նախագահ՝ **Հակոբյան Ռուզաննա Խաչիկի**	*ԳՊՀ ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր*
2.	ԳՊՀ գիտական խորհրդի քարտուղար՝ **Ասոյան Թաթուլ Արտիկի**	*Բանասիրական ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ*
3.	ԳՊՀ գիտական խորհրդի անդամներ՝ **Կուտուզյան Նելլի Ալբերտի**	*ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր*
4.	**Ավագյան Մարտին Պատվականի**	*Բնագիտական ֆակուլտետի դեկան, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, ԳՊՀ պրոֆեսոր*
5.	**Ղաջոյան Համլետ Գրիշայի**	*Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր*
6.	**Ամիրխանյան Սամվել Գրիգորի**	*Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր*
7.	**Սուքիասյան Սերգեյ Սպարտակի**	*Տնտեսագիտության դոկտոր*
8.	**Առաքելյան Արա Հրաչիկի**	*Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*
9.	**Հակոբյան Արմեն Աշմատի**	*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*
10.	**Թունյան Վալերի Գեորգիի**	*Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*
11.	**Հերգնյան Մարիամ Նորիկի**	*Տնտեսագիտական ֆակուլտետի փոխդեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*
12.	**Ղուլոյան Հակոբ Մելսիկի**	*Հաշվապահական հաշվառում ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*
13.	**Ավագյան Արամայիս Ռուստամի**	*Աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*
14.	**Հակոբյան Մամիկոն Զալիբեկի**	*Տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր*
15.	**Միրիբյան Գայանե Աշոտի**	*Օտար լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտ. թեկնածու*
16.	**Քուրքչյան Լուսիկ Ներսեսի**	*Մանկավարժական գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր*

17.	**Խուրշուդյան Արմեն Կորյունի**	*Տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ*
18.	**Գրիգորյան Վաչագան Ռաֆիկի**	*Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*
19.	**Խաչատրյան Գայանե Արտիկի**	*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*
20.	**Ղռեջյան Լուսինե Խաչատուրի**	*Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ*
21.	**Ներսիսյան Վարսիկ Արմենի**	*Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ*
22.	**Խաչիկյան Թերմինե Գագիկի**	*Կենսաբանական գիտությունների թեկնածու*
23.	**Ավետիսյան Կարինե Սամվելի**	*Քիմիական գիտությունների թեկնածու, դոցենտ*
24.	**Ավետիսյան Վարազդատ Կորյունի**	*Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու*
25.	**Մուրադյան Գուրգեն Գևորգի**	*ԳՊՀ գլխավոր հաշվապահ*
26.	**Սաֆարյան Խաչատուր Ժորայի**	*ԳՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի վարիչ*
27.	**Սիրունյան Լյովա Գուրգենի**	*ԳՊՀ արհեստակցական կազմակերպության նախագահ*
28.	**Աբրահամյան Ռոզա Վեզիրի Ֆինանսեր**	*Տնտեսագիտական ֆակուլտետի Ֆինանսներ /ըստ ոլորտի/ բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի*
29.	**Հայրապետյան Լիաննա Արմենի**	*Բնագիտական ֆակուլտետի Համակարգչային ճարտարագիտություն բաժնի, մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի*
30.	**Բունիաթյան Մերի Արայի**	*Բանասիրական ֆակուլտետի Անգլերեն լեզու և գրականություն բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի*
31.	**Բաղալյան Լարիսա Արմենի**	*Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Իրավագիտություն բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի*

4. ԳՊՀ ՊԱՏՎԱՎՈՐ ԴՈԿՏՈՐՆԵՐ

Հ/հ	*Անուն, ազգանուն*	*Երկիր*	*Դիպլոմի բնութագիրը*	*Հանձման ժամկետը*	**Դիպլոմի համարը**
1.	**Իվան Իվանչև**	Բուլղարիա	Հասարակական ակտիվ գործունեության համար	19.05.2000	01
2.	**Ռիթա Պալյան**	ԱՄՆ	Հայրենասիրական-մարդասիրական արդյունավետ գործունեության համար	25.05.2004	02
3.	**Ջոն Էվանս**	ԱՄՆ	Հասարակական ակտիվ գործունեության համար	15.11.2004	03
4.	**Ռոբերտ Ենգիբարյան**	Ռուսաստան	Գիտության ասպարեզում ձեռք բերած նվաճումների և բարեսիրական գործունեության համար	29.04.2006	04
5.	**Արշակ Պողոսյան**	Գերմանիա	Կիրառական ֆիզիկայի բնագավառում ունեցած ներդրումների, ինչպես նաև հայ-գերմանական գիտական համագործակցության ծրագրերի իրականացման համար	18.06.2008	05
6.	**Ռալֆ Յիրիկյան**	ՀՀ	Կրթության և գիտության ոլորտներում բարեգործական ծրագրերի իրականացման համար	30.05.2012	06
7.	**Ժիրայր Նիշանյան**	ԱՄՆ	Գիտական վաստակի, հայ երիտասարդների կրթության գործում մեծ ավանդի համար	03.10.2015	07
8.	**Գերապայծառ Տեր Լևոն Զեքիյան, Վենետիկի**	Իտալիա	Աստվածաբանության, փիլիսոփայության, հայագիտության,	14.10.2022	08

	Մխիթարյան Միաբանության քահանայապետական պատվիրակ, պրոֆեսոր, ՀՀ Գիտություններիազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ, Վենետիկի ակադեմիայի անդամ		լեզվաբանության, գրականագիտության, պատմագիտության ոլորտում ունեցած անուրանալի ներդրումների համար		
9.	**Նորին Գերազանցություն Պավել Պեցցի, Մոսկվայի և ողջ Լատինական կաթոլիկ արքեպիսկոպոսության Եպիսկոպոս, Ռուսաստանում Հռոմի Պապի տեղապահ, ԱՊՀ և Բալթյան երկրների Քրիստոնեական միջեկեղեցական կոմիտեի համանախագահ**	Իտալիա	Երիտասարդ սերնդի հոգևոր, մշակութային, բարոյական կրթության ու դաստիարակության, մարդասիրական արժեքների տարածման գործում ունեցած վաստակի և խաղաղասիրական առաքելության իրականացման համար	19.09.2023	09

5. ԳՊՀ ՊԱՏՎԱՎՈՐ ԲԱՐԵՐԱՐՆԵՐ

Հ/հ	Անուն, հայրանուն, ազգանուն	Երկիր	Դիպլոմի բնութագիրը	Հանձման ժամկետը	Դիպլոմի համարը
1.	**Ժիրայր Նիշանյան**	ԱՄՆ	Հայրենասիրական, բարեգործական արդյունավետ գործունեության համար	08.09.2007	01
2.	**Վահան Ափրոյան**	ՌԴ	Ուսանողներին նյութական և բարոյական աջակցության համար	30.06.2008	02
3.	**Բրունո Դյութուա**	Ֆրանսիա	Բարեգործական և մարդասիրական գործունեության համար	14.12.2011	03
4.	**Ռալֆ Յիրիկյան**	ՀՀ	Հայրենասիրական, մարդասիրական, գործունեության համար	21.06.2012	04

5.	**Ֆրանսիս Ժելիբտեր**	Ֆրանսիա	Բարեգործական և մարդասիրական գործունեության համար	03.05.2013	05

6. ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՍՏԱՑՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ ԺԻՐԱՅՐ ՆԻՇԱՆՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հ/h	Ազգանուն, անուն, հայրանուն	Ֆակուլտետ, բաժին	Կուրս
1.	Աղեկյան Սեդա Արտակի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի տնտեսագիտություն մասնագիտություն	1-ին
2.	Դեղոյան Լիաննա Կամոյի	Հումանիտար մասնագիտությունների, առկա բաժնի անգլերեն լեզու և գրականություն մասնագիտություն	1-ին
3.	Դադոյան Լենա Գարիկի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի ֆինանսներ մասնագիտություն	1-ին
4.	Աբաչյան Մարինե Արմենի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի ֆինանսներ մասնագիտություն մասնագիտություն	1-ին
5.	Ներսիսյան Լիլիթ Արամի	Հումանիտար մասնագիտությունների, առկա բաժնի պատմություն մասնագիտություն	1-ին
6.	Սաֆարյան Քրիստինե Բաբկենի	Հումանիտար մասնագիտությունների, առկա բաժնի պատմություն մասնագիտություն	1-ին
7.	Ավետիսյան Ռիտա Գևորգի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի սերվիս մասնագիտություն	1-ին
8.	Շահրիկյան Մերի Հրայրի	Հումանիտար մասնագիտությունների, առկա բաժնի անգլերեն լեզու և գրականություն մասնագիտություն	1-ին
9.	Դադոյան Վալյա Գագիկի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի տնտեսագիտություն մասնագիտություն	2-րդ
10.	Խաչատրյան Միլենա Արտակի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի մասնագիտություն տնտեսագիտություն մասնագիտություն	2-րդ
11.	Գևորգյան Սաթենիկ Միսակի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի ֆինանսներ մասնագիտություն	2-րդ
12.	Գասպարյան Էմմա Մկրտչի	Հումանիտար մասնագիտությունների, առկա բաժնի անգլերեն լեզու և գրականություն մասնագիտություն	2-րդ
13.	Հարությունյան Միլենա Յուրիկի	Հումանիտար մասնագիտությունների, առկա բաժնի անգլերեն լեզու և գրականություն մասնագիտություն	2-րդ
14.	Դավթյան Մարիետա Գևորգի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի տնտեսագիտություն մասնագիտություն	2-րդ
15.	ճնգռյան Մելինե Հրայրի	Հումանիտար մասնագիտությունների, առկա բաժնի պատմություն մասնագիտություն	2-րդ
16.	Պիպոյան Դավիթ Մանվելի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի ֆինանսներ մասնագիտություն	2-րդ
17.	Մարգարյան Մովսես Անդրանիկի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի համակարգչային ճարտարագիտություն մասնագիտություն	2-րդ
18.	Վարպետյան Էլեն Արայիկի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի համակարգչային սերվիս մասնագիտություն	2-րդ

19.	Ասատրյան Վարդ Ռոբերտի	Հումանիտար մասնագիտությունների, առկա բաժնի հայոց լեզու և գրականություն մասնագիտություն	3-րդ
20.	Մելքոնյան Հրանուշ Հովիկի	Հումանիտար մասնագիտությունների, առկա բաժնի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտություն	3-րդ
21.	Խաչատրյան Անահիտ Բաբկենի	Հումանիտար մասնագիտությունների, առկա բաժնի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտություն	3-րդ
22.	Ղալակչյան Ռիտա Արմենի	Հումանիտար մասնագիտությունների, առկա բաժնի հայոց լեզու և գրականություն մասնագիտություն	3-րդ
23.	Պողոսյան Աշոտ Արտակի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի ֆինանսներ մասնագիտություն	3-րդ
24.	Մուրադյան Գուրգեն Սամվելի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի ֆինանսներ մասնագիտություն	3-րդ
25.	Մակարյան Անի Սարգսի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի ֆինանսներ մասնագիտություն	3-րդ
26.	Հակոբյան Գայանե Արծրունու	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի ֆինանսներ մասնագիտություն	3-րդ
27.	Մաթևոսյան Օլյա Սիմոնի	Հումանիտար մասնագիտությունների, առկա բաժնի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտություն	3-րդ
28.	Հովհաննիսյան Վեներա Արտավազդի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի ֆինանսներ մասնագիտություն	3-րդ
29.	Ներսիսյան Վիկտորյա Արթուրի	Հումանիտար մասնագիտությունների, առկա բաժնի անգլերեն լեզու և գրականություն մասնագիտություն	3-րդ
30.	Իսպիրյան Անժելա Սամվելի	Հումանիտար մասնագիտությունների, առկա բաժնի անգլերեն լեզու և գրականություն մասնագիտություն	3-րդ
31.	Մանուկյան Սամվել Արմենի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի ֆինանսներ մասնագիտություն	3-րդ
32.	Սարգսյան Մելինե Արմանի	Հումանիտար մասնագիտությունների, առկա բաժնի անգլերեն լեզու և գրականություն մասնագիտություն	4-րդ
33.	Գասպարյան Սյուզաննա Արտակի	Հումանիտար մասնագիտությունների, առկա բաժնի անգլերեն լեզու և գրականություն մասնագիտություն	4-րդ
34.	Պողոսյան Սյուզաննա Գոռի	Հումանիտար մասնագիտությունների, առկա բաժնի անգլերեն լեզու և գրականություն մասնագիտություն	4-րդ
35.	Մալաքյան Էդիտա Էդուարդի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի ֆինանսներ մասնագիտություն	4-րդ
36.	Դաշտոյան Լալա Լևոնի	Հումանիտար մասնագիտությունների, առկա բաժնի անգլերեն լեզու և գրականություն մասնագիտություն	4-րդ
37.	Հոդաբաշյան Մարիամ Միսակի	Հումանիտար մասնագիտությունների,	4-րդ

		առկա բաժնի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտություն	
38.	Պետրոսյան Թագուհի Հայկի	Հումանիտար մասնագիտությունների, առկա բաժնի հայոց լեզու և գրականություն մասնագիտություն	4-րդ
39.	Պարոնիկյան Լիաննա Կարենի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի դեղագործական քիմիա մասնագիտություն	4-րդ
40.	Հակոբյան Լիաննա Համլետի	Հումանիտար մասնագիտությունների, առկա բաժնի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտություն	4-րդ
41.	Նաջարյան Դուխինե Մարկոսի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի սերվիս մասնագիտություն	4-րդ
42.	Ներսիկյան Թագուհի Արմենի	Հումանիտար մասնագիտությունների, առկա բաժնի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտություն	4-րդ

ԲՈՒՀՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՎԱԾ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՎ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻՑ՝ ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

Հ/հ	**Ազգանուն, անուն, հայրանուն**	**Ֆակուլտետ, բաժին**	**Կուրս**
1.	Սարգսյան Իվետա Կամոյի	Հումանիտար մասնագիտությունների, հեռակա բաժնի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտություն	3-րդ
2.	Գալստյան Արսեն Արմենի	Բնագիտատնտեսագիտական, հեռակա բաժնի հաշվապահական հաշվառում և հարկում մասնագիտություն	1-ին
3.	Մնացականյան Մարինե Անդրանիկի	Հումանիտար մասնագիտությունների, հեռակա բաժնի իրավագիտություն մասնագիտություն	1-ին
4.	Նազարյան Մարիամ Նելսոնի	Հումանիտար մասնագիտությունների, հեռակա բաժնի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտություն	5-րդ
5.	Դիվանյան Զոյա Սպարտակի	Հումանիտար մասնագիտությունների, հեռակա բաժնի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտություն	2-րդ
6.	Մնացականյան Արարատ Կարմենի	Բնագիտատնտեսագիտական, հեռակա բաժնի հաշվապահական հաշվառում և հարկում մասնագիտություն	2-րդ
7.	Ղազարյան Շողեր Հայկի	Հումանիտար մասնագիտությունների, հեռակա բաժնի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտություն	2-րդ
8.	Հովսեփյան Արփինե Մխիթարի	Հումանիտար մասնագիտությունների, հեռակա բաժնի տարրական	3-րդ

		մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտություն	
9.	Զաքարյան Անթառամ Արտուրի	Հումանիտար մասնագիտությունների, հեռակա բաժնի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտություն	3-րդ
10.	Աֆիյան Վլադիմիր Վասիլի	Բնագիտատնտեսագիտական, հեռակա բաժնի հաշվապահական հաշվառում և հարկում մասնագիտություն	4-րդ
11.	Մարտիրոսյան Արա Մանվելի	Հումանիտար մասնագիտությունների, հեռակա բաժնի իրավագիտություն մասնագիտություն	1-ին
12.	Պետրոսյան Արևիկ Կարենի	Հումանիտար մասնագիտությունների, հեռակա բաժնի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտություն	2-րդ
13.	Ադամյան Երվանդ Աշոտի	Բնագիտատնտեսագիտական, հեռակա բաժնի հաշվապահական հաշվառում և հարկում մասնագիտություն	4-րդ
14.	Լազարյան Աննա Ռուբենի	Հումանիտար մասնագիտությունների, առկա բաժնի հայոց լեզու և գրականություն մասնագիտություն	2-րդ
15.	Գրիգորյան Նարե Սասունի	Հումանիտար մասնագիտությունների, առկա բաժնի հայոց լեզու և գրականություն մասնագիտություն	4-րդ
16.	Բաբայան Նարե Աշոտի	Հումանիտար մասնագիտությունների, առկա բաժնի իրավագիտություն մասնագիտություն	3-րդ
17.	Բեկլարյան Արտյոմ Վահանի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի, ֆինանսներ մասնագիտություն	2-րդ

ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Ֆակուլտետ, բաժին	Կուրս
1.	Հովհաննիսյան Լևոն Իվանի	Բնագիտատնտեսագիտական, հեռակա բաժնի համակարգչային ճարտարագիտություն մասնագիտություն	2-րդ
2.	Շահինյան Հովհաննես Կամոյի	Հումանիտար մասնագիտությունների, հեռակա բաժնի իրավագիտություն մասնագիտություն	2-րդ
3.	Մանուկյան Սվետլանա Մարատի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի ֆինանսներ մասնագիտություն	4-րդ
4.	Գրիգորյան Անահիտ Սամվելի	Հումանիտար մասնագիտությունների, հեռակա բաժնի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտություն	4-րդ

5.	Նադարյան Երանուհի Արմենի	Հումանիտար մասնագիտությունների, առկա բաժնի հայոց լեզու և գրականություն մասնագիտություն	2-րդ
6.	Դադոյան Լենա Գարիկի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի ֆինանսներ մասնագիտություն	2-րդ
7.	Չանդոյան Անի Մկրտչի	Հումանիտար մասնագիտությունների, առկա բաժնի անգլերեն լեզու և գրականություն մասնագիտություն	2-րդ
8.	Դաշտոյան Լալա Լևոնի	Հումանիտար մասնագիտությունների, առկա բաժնի անգլերեն լեզու և գրականություն մասնագիտություն	4-րդ
9.	Ավագյան Սաթիկ Մարտինի	Հումանիտար մասնագիտությունների, առկա բաժնի իրավագիտություն մասնագիտություն, մագիստրատուրա	1-ին
10.	Ջպանյան Մելինե Հակոբի	Բնագիտատնտեսագիտական, հեռակա բաժնի հաշվապահական հաշվառում և հարկում մասնագիտություն	3-րդ
11.	Հակոբյան Նորայր Հուսիկի	Բնագիտատնտեսագիտական, հեռակա բաժնի հաշվապահական հաշվառում և հարկում մասնագիտություն	1-ին
12.	Մարգարյան Մովսես Անդրանիկի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի համակարգչային ճարտարագիտություն մասնագիտություն	2-րդ
13.	Գևորգյան Վոլոդյա Արայի	Բնագիտատնտեսագիտական, հեռակա բաժնի համակարգչային ճարտարագիտություն մասնագիտություն	3-րդ
14.	Սողոմոնյան Սերիկ Սերոբի	Հումանիտար մասնագիտությունների, առկա բաժնի իրավագիտություն մասնագիտություն	4-րդ
15.	Չատիկյան Ռուստամ Մկրտչի	Բնագիտատնտեսագիտական, հեռակա բաժնի համակարգչային ճարտարագիտություն մասնագիտություն	3-րդ
16.	Գրիգորյան Անահիտ Սամվելի	Հումանիտար մասնագիտությունների, հեռակա բաժնի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտություն	4-րդ
17.	Սարգսյան Հովհաննես Հայկի	Հումանիտար մասնագիտությունների, հեռակա բաժնի իրավագիտություն մասնագիտություն	3-րդ
18.	Գրիգորյան Ռոման Սամվելի	Բնագիտատնտեսագիտական, հեռակա բաժնի սերվիս մասնագիտություն	2-րդ
19.	Գարեյան Վարդան Գևորգի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ մասնագիտություն, մագիստրատուրա	2-րդ
20.	Զախարյան Աշոտ Արտյոմի	Բնագիտատնտեսագիտական, հեռակա բաժնի հաշվապահական հաշվառում և հարկում մասնագիտություն	4-րդ

21.	Կոստանյան Վանուհի Երեմի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի սերվիս մասնագիտություն	1-ին
22.	Ղուրշուդյան Գևորգ Մարտիկի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի համակարգչային ճարտարագիտություն մասնագիտություն	2-րդ
23.	Թաթարյան Իսկուհի Մանուկի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի ֆինանսներ մասնագիտություն	4-րդ
24.	Մարտիրոսյան Հռիփսիմե Արթուրիկի	Հումանիտար մասնագիտությունների, հեռակա բաժնի իրավագիտություն մասնագիտություն	5-րդ
25.	Պիպոյան Դավիթ Մանվելի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի ֆինանսներ մասնագիտություն	2-րդ

«ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ»

Հ/h	Ազգանուն, անուն, հայրանուն	Ֆակուլտետ, բաժին	Կուրս
1.	Սահակյան Սուրեն Մարտիկի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի համակարգչային ճարտարագիտություն մասնագիտություն	3-րդ
2.	Բաղդասարյան Վոլոդյա Հակոբի	Հումանիտար մասնագիտությունների, առկա բաժնի իրավագիտություն մասնագիտություն	3-րդ
3.	Խաչատրյան Մերի Խաժակի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի ֆինանսներ մասնագիտություն	3-րդ
4.	Թոռչյան Արարատ Հովհաննեսի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի ֆինանսներ մասնագիտություն	3-րդ
5.	Սարգսյան Մարատ Ավետիքի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի համակարգչային ճարտարագիտություն մասնագիտություն	4-րդ
6.	Սահակյան Գոհար Խաժակի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի կենսաբանություն մասնագիտություն, մագիստրատուրա	2-րդ

«ՎՏԲ ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ ՓԲԸ»

Հ/h	Ազգանուն, անուն, հայրանուն	Ֆակուլտետ, բաժին	Կուրս
1.	Զախարյան Աշոտ Արտյոմի	Բնագիտատնտեսագիտական, հեռակա բաժնի հաշվապահական հաշվառում և հարկում մասնագիտություն	4-րդ
2.	Մանուկյան Վասիլ Սևակի	Բնագիտատնտեսագիտական, հեռակա բաժնի հաշվապահական	3-րդ

		հաշվառում և հարկում մասնագիտություն	
3.	Ցոգոլակյան Համլետ Արայի	Բնագիտատնտեսագիտական, հեռակա բաժնի համակարգչային ճարտարագիտություն	4-րդ
4.	Մովսիսյան Լևոն Հենրիկի	Հումանիտար մասնագիտությունների, հեռակա բաժնի իրավագիտություն մասնագիտություն	5-րդ
5.	Բաբայան Արմինե Վաչագանի	Հումանիտար մասնագիտությունների, հեռակա բաժնի իրավագիտություն մասնագիտություն	5-րդ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅ. Մ/Ճ

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Ֆակուլտետ, բաժին	Կուրս
1.	Մարգարյան Մովսես Անդրանիկի	Բնագիտատնտեսագիտական, առկա բաժնի համակարգչային արտարագիտություն մասնագիտություն	2-րդ

Նունե Միրիբյան՝
Գավառի պետական համալսարանի
արտաքին կապերի և լրատվության բաժնի մասնագետ

7. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ (ՆԵՐԱՌՅԱԼ ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐԸ)՝ ԸՍՏ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ

Ֆակուլտետ, ամբիոններ	**Պրոֆե-սորներ**	**Դոցենտ-ներ**	**Ասիս-տենտներ**	**Դասա-խոսներ**	**Ընդամենը**
Բանասիրական Հայոց լեզվի և գրականության Օտար լեզվի և գրականության	2	6 3	3 5	2 7	13 15
Բնագիտական Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի, Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների	3 -	5 5	- -	9 11	17 16
Հումանիտար մասնագիտությունների Իրավագիտության Հասարակական գիտությունների	1 2	2 5	4 1	8 8	15 16
Տնտեսագիտական Կառավարման և ֆինանսների Հաշվապահական հաշվառման	2 1	8 3	1 1	9 4	20 9
Ընդամենը	***11***	***37***	***15***	***58***	***121***

8. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿԱԶՄԸ

8.1. Բակալավրիատ

Ֆակուլտետ, մասնագիտություն	***Ուսանողների թիվը***				***Ընդա-մենը***
	I կուրս	**II կուրս**	**III կուրս**	**IV կուրս**	
Բանասիրական					
Հայոց լեզու և գրականություն	2	4	8	8	*22*
Անգլերեն լեզու և գրականություն	7	8	8	9	*32*
Ընդամենը ֆակուլտետում	*9*	*12*	*16*	*17*	*54*
Բնագիտական					
Սերվիս	6	5	-	6	*17*
Համակարգչային ճարտարագիտություն	3	6	5	7	*21*
Դեղագործական քիմիա	-	-	3	4	*7*
Ընդամենը՝ ֆակուլտետում	*9*	*11*	*8*	*17*	*45*
Հումանիտար մասնագիտությունների					
Իրավագիտություն	*8*	*9*	*6*	*7*	*30*
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	*2*	*4*	*8*	*8*	*22*
Պատմություն	*3*	*3*	-	-	*6*
Ընդամենը՝ ֆակուլտետում	*13*	*16*	*14*	*15*	*58*
Տնտեսագիտական					
Ֆինանսներ /ըստ ոլորտի/	6	5	14	11	*36*
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	3	3	4	3	*13*
Տնտեսագիտություն	8	5	5	6	*24*
Ընդամենը՝ ֆակուլտետում	*17*	*13*	*23*	*20*	*73*
ԸՆԴԱՄԵՆԸ	***48***	***52***	***61***	***69***	***230***

8.2. Մագիստրատուրա

Ֆակուլտետ, մասնագիտություն	**ՈՒսանողների թիվը**		**Ընդամենը**
	I կուրս	**II կուրս**	
Բանասիրական			
Հայոց լեզու և գրականություն	2	2	4
Անգլերեն լեզու և գրականություն	2	-	2
Ընդամենը ֆակուլտետում	4	2	6
Բնագիտական			
Համակարգչային ճարտարագիտություն	2	2	4
Կենսաբանություն	-	3	3
Ընդամենը՝ ֆակուլտետում	2	5	7
Հումանիտար մասնագիտությունների			
Իրավագիտություն	12	6	18
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	6	5	11
Պատմություն	3	2	5
Ընդամենը ֆակուլտետում	21	13	34
Տնտեսագիտական			
Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ	3	5	8
Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/	2	3	5
Տնտեսագիտություն	3	2	5
Ընդամենը ֆակուլտետում	8	10	18

8.3. Հեռակա ուսուցման ֆակուլտետ

Ֆակուլտետ, մասնագիտություն	**ՈՒսանողների թիվը**					**Ընդա-մենը**
	բակալավր					
	I կուրս	**II կուրս**	**III կուրս**	**IV կուրս**	**V կուրս**	
Հայոց լեզու և գրականություն	-	-	-	4	-	4
Ռուսաց լեզու և գրականություն	1	-	5	-	-	6
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	-	10	14	14	17	55
Պատմություն	2	-	5	6	3	16
Սերվիս	-	7	2	-	2	11
Իրավագիտություն	9	19	38	23	16	105
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	6	17	27	29	16	95
Համակարգչային ճարտարագիտություն	1	15	13	8	4	41
Քարտեզագրություն և կադաստրային գործ	-	-	1	3	3	7
Դեղագործական քիմիա	-	-	3	-	-	3
Կենսաբանություն	-	-	-	-	5	5
Բնապահպանություն և բնօգտագործում	-	-	-	4	-	4
Ընդամենը	**19**	**68**	**108**	**91**	**66**	**352**

9. Շ Ր Ջ Ա Ն Ա Վ Ա Ր Տ Ն Ե Ր

9.1. ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ

Ֆակուլտետ, մասնագիտություն	**2023թ.**			**2024թ.**		
	բակալավր (գերազան-ցության դիպլոմով)	այդ թվում՝ նախորդ տարի-ների	Ընդա-մենը	բակալավր (գերազան-ցության դիպլոմով)	այդ թվում՝ նախորդ տարի-ների	Ընդա-մենը
Բնագիտատնտեսագիտական						
Աշխարհագրություն	-	1	1	-	-	-
Դեղագործական քիմիա	2 (1)	-	2 (1)	4 (3)	-	4 (3)
Սերվիս	4 (3)	-	4 (3)	6 (4)	-	6 (4)
Համակարգչային ճարտարագիտություն	3 (0)	1	4 (0)	7 (3)	-	7 (3)
Ֆինանսներ /ըստ ոլորտի/	8 (4)	-	8 (4)	11 (10)	-	11 (10)
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	6 (2)	-	6 (2)	3 (2)	-	3 (2)
Տնտեսագիտություն	4 (4)	-	4 (4)	5 (3)	-	5 (3)
Ընդամենը	*27 (14)*	*2*	*29 (14)*	*36 (25)*	-	*36 (25)*
• 26-27 марта, 2024, Оренбургский институт путей сообщения (ОрИПС), г. Оренбург, РФ: IV Международная научно-методическая конференция «НАУКА И ОБРАЗОВАНИЕ: АКТУАЛЬНЫЕ ВОПРОСЫ ТЕОРИИ И ПРАКТИКИ» /дистанционное участие/.
• 2024 ապրիլի 15-19, Erasmus+ teaching mobility, University of Minho (Portugal), School of Arts and Humanities, Department of German and Slavic studies.
• 25-26 апреля, 2024, Воронежский экономико-правовой институт, г. Воронеж, РФ: Международная научно-практическая конференция «Актуальные проблемы развития вертикальной интеграции системы образования, науки и бизнеса: экономические, правовые и социальные аспекты» /дистанционное участие/

- 3-4 мая, 2024, Российско-Армянский Университет, г. Ереван, РА: Международная конференция «Бархударовские чтения» /заочное участие/
- 2024 թվականի հունիսի 25 -ից հուլիսի 1-ը /10 ժամ/, «Դասավանդման մեթոդաբանություն» վերապատրաստման դասընթաց,ՀՊՏՀ շարունակական կրթության բաժին

Սաթենիկ Հայթյան

- 2024 թվականի փետրվարի 2-9, «Teach» վիրտուալ դասընթացի մասնակցություն:
- 2024 թվականի ապրիլ-մայիս, «Teach» դասալսման գործիքի ինքնաշխատ 5 մեդուլների վերապապատրաստման դասընթացներ:
- 2024 թվականի ապրիլի 1-13, «21-րդ դարի հմտություններ» թեմայով վերապատրաստման դասընթաց, Ռուզաննա Ստեփանյան Կրթական Արհեստանոց ՀԿ,
- 2024 թվականի ապրիլի 10-23, «Ռեսուրսների կառավարում» թեմայով վերապատրաստման դասընթաց, Ռուզաննա Ստեփանյան Կրթական Արհեստանոց ՀԿ,
- 2024 թվականի օգոստոսի 19-31, «Դասերի պլանավորման առցանց գործիքներ» թեմայով վերապատրաստման դասընթաց, Ռուզաննա Ստեփանյան Կրթական Արհեստանոց ՀԿ:
- 2024 թվականի օգոստոսի 5 – 15, «Արհետական բանականություն», Ինչպես երեխաներին գերմաներենը ավելի հեշտ սովորեցնել», «Աութենթիկ հաղորդակցություն», «Ուսումնառության արդյունավետ գործիքներ» թեմաներով վերապատրաստման դասընթաց, կազմակերպող՝ Klett Sprachen International:

Սաթենիկ Տիգրանյան

- April 5-6, May 2-3, 2024 “Promoting English Language Learning and Youth Development” /PelIYD program/ , Social Change Through Project Based Learning Training, orgnized by US Embassy Armenian, PH International

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2024-2025 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2023-2024 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանն առաջնորդվել է «Կրթությունը՝ առաջընթացի երաշխիք» կարգախոսով

2023-2024 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանը շարունակել է իրականացնել արդյունահեն աշխատանքներ՝ կրթական, վարչարարական, լուսավորչական, հանրային պատասխանատվության, ֆինանսատնտեսական, կրթության միջազգայնացման և այլ ուղղություններով: Համալսարանի գործունեության բոլոր ուղղություններում ապահովվել է թափանցիկ հաշվետվողականության, ակադեմիական ազնվության, ուսանողակենտրոն մոտեցումների, հանրային պատասխանատվության սկզբունքների պահպանում:

Ուսանողական համակազմի համալրման ցուցանիշները՝ ըստ կրթական աստիճանների և ուսուցման եղանակների

1. *<u>Առկա ուսուցմամբ բակալավրիատի ընդունելություն</u>*

1. 2023-2024 ուստարում համալսարանի առկա ուսուցման բակալավրիատի 12 կրթական ծրագրերի գծով ընդունվեց 55 դիմորդ:
2. հեռակա ուսուցման բակալավրիատի 6 կրթական ծրագրերի գծով ընդունվեց 15 դիմորդ:

2. *<u>Մագիստրատուրայի ընդունելություն</u>*

3. 2023-2024 ուստարում մագիստրատուրա ընդունվեց բակալավրիատի 42 շրջանավարտ:

4. *<u>Միջին մասնագիտական կրթություն ունեցող բարձր առաջադիմությամբ շարունակական կրթության կարգով ընդունելություն</u>*

2023-2024 ուսումնական տարում միջին մասնագիտական ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո համալսարանում շարունակական կրթություն ստացողների քանակը եղել է 34:

5. <u>Երկրորդ մասնագիտության կարգով ընդունելություն՝</u> 2 ուսանող:

➢ <u>Տեղափոխություններ</u>

ԳՊՀ-ից այլ բուհ ուսանող չի տեղափոխվել, իսկ Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական հավատարմագրված, Լեռնային Ղարաբաղի բուհերից հաշվետու ուստարում սահմանված կարգով Գավառի պետական համալսարան է տեղափոխվել 33 ուսանող, որից 28-ը՝ Արցախի բուհերից:

➢ <u>Վերականգնումներ</u>

Ուսանողական իրավունքները վերականգնել են 66, որից 55-ը ԳՊՀ նախկին, իսկ 11-ը ՀՀ այլ բուհերի ուսանող:

Արդյունքում, 2023-2024 ուստարում ԳՊՀ ուսանողական համակազմը համալրել է 247 ուսանող, նախորդ ուստարում՝ 215 ուսանող:

ԳՊՀ ուսանողական համակազմի համալրման ցուցանիշները հաշվետու և նախորդ ուստարիներին



Ուսանողների առաջին կիսամյակի ակադեմիական առաջադիմության ցուցանիշներն՝ ըստ ֆակուլտետների, հաշվետու և նախորդ ուստարիներին

2023-2024 **ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքներն առկա ուսուցման համակարգում.**

2023-2024 հաշվետու ուստարում՝ առաջին կիսամյակում, առկա ուսուցման բակալավրիատում և մագիստրատուրայում ուսանողների ակադեմիական առաջադիմությունը կազմել է 84.8% (նախորդ ուստարում՝ 81,6%), արձանագրվել է 3,2% աճ:



Ուսանողների առաջադիմության ցուցանիշների համեմատումը նախորդ և հաշվետու ուստարիների առաջին կիսամյակներում



2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքներն առկա ուսուցման համակարգում՝ նախորդ և հաշվետու ուստարվա երկրորդ կիսամյակներում

Հաշվետու՝ 2023-2024 ուստարվա երկրորդ կիսամյակում առկա ուսուցման բակալավրիատում և մագիստրատուրայում ուսանողների ակադեմիական առաջադիմությունը կազմել է 87.4% (նախորդ ուստարում՝ 90,4%), նկատվել է 3% նվազում:



Ուսանողների առաջադիմության ցուցանիշների համեմատումը նախորդ և հաշվետու ուստարիների երկրորդ կիսամյակներում



Ուսանողների երկու կիսամյակների արդյունքում ամփոփիչ առաջադիմության ցուցանիշների համեմատումը նախորդ և հաշվետու ուստարիների հետ



2023-2024 ուստարում առկա ուսուցման բակալավրիատում սովորում էր 221 ուսանող, մագիստրատուրայում՝ 65, հեռակա ուսուցմամբ բակալավրիատում՝ 363, ընդամենը՝ 649 ուսանող, նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ուսանողների թիվը 704 էր՝ առկա ուսուցման բակալավրիատում՝ 229 ուսանող, մագիստրատուրայում՝ 85, հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 390:

2023-2024 ուստարվա շրջանավարտների թվաքանակի վերաբերյալ տվյալներ

Ամփոփիչ ատեստավորման գործընթացի արդյունքներով 2023-2024 ուստարում ԳՊՀ-ն ավարտեց ավարտական կուրսերի ուսանողների 100%-ը: Համալսարանի առկա ուսուցման բակալավրիատի 67, հեռակա ուսուցման բակալավրիատի 65 և մագիստրատուրայի ավարտական կուրսերի 30 ուսանողի, ինչպես նաև նախորդ տարիներին բուհը չավարտած 2 նախկին հեռակա բակալավրիատի և 2 մագիստրատուրայի ուսանողի շնորհվեց դիպլոմ՝ դիպլոմի համաեվրոպական նմուշի երկլեզու՝ հայերեն և անգլերեն հավելվածներով:

Գավառի պետական համալսարանի ուսումնական տարվա ուսանողների փոխատեղման արդյունքների վերաբերյալ տվյալներ

«Գավառի պետական համալսարանի ուսանողների ուսման վարձը վճարելու և նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցում (լրիվ կամ մասնակի (զեղչ)) տրամադրելու» կարգի դրույթներին համապատասխան ռեկտորի հրամանով հաստատված ֆակուլտետային և համալսարանական հանձնաժողովների կողմից, ուսանողների ակադեմիական առաջընթացի ցուցանիշներով՝ միջին որակական գնահատականներով /ՄՈԳ/ անցկացրած փոխատեղման մրցույթի արդյունքում արձանագրվեց առկա ուսուցման բակալավրիատի 34 ուսանողի և մագիստրատուրայի 2 ուսանողի կարգավիճակի փոփոխություն: Ուսանողների առաջադիմության նախորդ տարվա ցուցանիշների ճշգրտությունը վերստուգվեց նաև Ակադեմիական քաղաքականության վարչության կողմից: Փոխատեղման արդյունքները ժամանակին և սահմանված ընթացակարգերով և ձևերով հրապարակվեց ուսանողներին հասանելի միջոցներով, արդյունքների վերաբերյալ ուսանողների կողմից բողոքներ չեն արձանագրվել: Փոխատեղումը հիմք հանդիսացավ բուհի և ուսանողի միջև կնքած պայմանագրերի լուծման և կարգավիճակին համապատասխան՝ պայմանագրերի կնքման համար:

Բուհում սովորող սոցիալապես անապահով ուսանողների թիրախային խմբերը մշտապես եղել են ռեկտորատի ուշադրության կենտրոնում՝ հնարավոր միջոցներով տրամադրելու ֆինանսական աջակցություն: ԳՊՀ առկա և հեռակա բաժինների ուսանողները ֆինանսական աջակցության նպատակով ուսման վարձի փոխհատուցում են ստացել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից, ԳՊՀ միջոցներից, գործընկեր կազմակերպություններից, ԳՊՀ բարերարներից և տարբեր հիմնադրամներից, մասնավորապես, Հայ կրթական հիմնարկությունից, Հայ օգնության ֆոնդի «Ժիրայր Նիշանյան» հիմնադրամից, Գավառի քաղաքապետարանից, «4090» բարեգործական հիմնադրամից, «Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցություն»-ից, «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ից: ՀՀ պետական բյուջեից հաշվետու ուստարում ֆինանսական աջակցություն են ստացել 245 ուսանող, որոնցից 72-ը հեռակա ուսուցմամբ սովորողներ, 136-ը՝ առկա բակալավրիատի, իսկ 37-ը մագիստրատուրայի ուսանողներ են:

ԳՊՀ միջոցների հաշվին զեղչեր են ստացել 58 ուսանողներ, նրանցից 10-ը ստացել են ուսման վարձերի ամբողջովին փոխհատուցում:

Այլ կազմակերպություններից ֆինանսական աջակցություն ստացողների թիվը կազմել է 78 ուսանող /18-ը հեռակա ուսուցմամբ, իսկ 60-ը առկա ուսուցմամբ սովորող ուսանողներ են/: Ընդհանուր առմամբ ԳՊՀ-ում 381 ուսանող ստացել է ֆինանսական աջակցություն, որից 127-ը հեռակա ուսուցմամբ, իսկ 254-ը՝ առկա ուսուցմամբ, այսպիսով ԳՊՀ-ում սովորող ուսանողների 58,7 %-ը ստացել է ֆինանսական աջակցություն ուսման վարձի լրիվ կամ մասնակի չափով՝ առկա ուսուցմամբ սովորողների՝ 88,8%-ը, հեռակա ուսուցմամբ սովորողների 34,9% -ը:

2023-2024 ուսումնական տարում ԳՊՀ դասախոսական կազմը՝ ըստ գիտական աստիճանների

ԳՊՀ-ում իրականացվող բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր մասնագիտական կրթական ծրագրերը իրենց մասնագրերում սահմանված դասախոսական կազմին ներկայացվող մասնագիտական և ընդհանրական պահանջներին համապատասխան 2023-2024 ուսումնական տարում համալրված են եղել դասախոսական կազմով՝ արդյունքում բուհի պրոֆեսորադասախոսական կազմում ուսումնական գործընթացում, գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված են եղել համապատասխան պահանջներին բավարարող թվով 129 դասախոսներ, որոնց 10%-ը նաև գործատուներ են:



2023-2024 ուսումնական տարում իրականացված աշխատանքներն ու արձանագրված արդյունքները՝ ըստ ռազմավարական ուղղությունների

I. ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Նպատակը՝

Կրթության որակի ապահովման ներբուհական համակարգի շարունակական բարելավում՝ որակի ապահովման կառուցակարգերի հստակեցում, շահակիցների ներգրավում որակի ապահովման գործընթացում, կրթության որակի մշտադիտարկման նոր մեթոդների և գործիքակազմի կիրառում, ԳՊՀ-ում կրթության որակի ապահովման գործընթացների համադրելիության ապահովում Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի (ԵԲԿՏ) որակի ապահովման գործընթացներին, կրթության որակի ապահովման համակարգի գործունեության արդյունավետության բարձրացում: Համալսարանի ենթակառուցվածքային հավատարմագրման գործընթացի տարեկան և միջնաժամկետ ծրագրերի կատարման մշտադիտարկում, համապատասխան արդյունքների ներկայացում Որակի ապահովման ազգային կենտրոն:

Իրականացված աշխատանքները՝

ԳՊՀ կրթության որակի ապահովման ընթացակարգերն իրականացնելու համար մշակվել է տարեկան գործողությունների պլան՝ բխեցված երկարաժամկետ պլանից, սահմանված ժամանակացույցով, պատասխանատուներով և գնահատման արդյունավետության ցուցիչներով /ԳԱՑ/:

Մշակվել է կրթության որակի ապահովման գործողությունների մշտադիտարկման տարեկան պլանը, ինչի արդյունքում վեր են հանվել այս ուղղությամբ կատարված աշխատանքների կատարողական արդյունավետության ցուցիչները /ԿԱՑ/:

Բուհում ընթացող գործընթացները կարգավորող իրավական ակտերի վերանայման արդյունքում լրամշակվել, փոփոխություններ են կրել ԳՊՀ հետևյալ ներբուհական ակտերը.

1. Գավառի պետական համալսարանի և ԳՊՀ արհեստակցական կազմակերպության միջև կնքված կոլեկտիվ պայմանագիր,
2. «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կառուցվածք,
3. «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի տարեկան զարգացման ծրագիր,
4. Գավառի պետական համալսարանի հանրակացարանի կանոնակարգ,
5. Գավառի պետական համալսարանում բակալավրի ու մագիստրոսի կրթական աստիճաններում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների գնահատման կարգ,
6. Գավառի պետական համալսարանում բակալավրի ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պատրաստման, պաշտպանության ու գնահատման կարգ,
7. Գավառի պետական համալսարանում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգ,
8. Գավառի պետական համալսարանի ուսանողների ուսման վարձը վճարելու և վարձն ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու կանոնակարգ,
9. «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգ,

10. Գավառի պետական համալսարանի 2023-2027 թվականների գիտահետազոտական գործունեության շրջանակ:

Արդյունքը՝

ՀՀ օրենսդրական փոփոխություններին համապատասխանող ԳՊՀ իրավական ակտեր, դրանցից բխող իրավաչափ գործընթացներ, ակադեմիական ազնիվ միջավայր, Եվրոպական որակավորումների ոլորտային շրջանակին, ՀՀ որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների բնութագրիչներին համադրելի վերջնարդյունքահեն մասնագիտական կրթական ծրագրեր:

Գավառի պետական համալսարանի իրականացրած կրթական և սոցիալ-մշակութային ծրագրերի արդյունավետությունից ներքին և արտաքին շահակիցների բավարարվածության աստիճանի աճ:

2. Նպատակը՝

Կրթության որակի շարունակական բարձրացում,

ԳՊՀ ուսումնական, սոցիալ-մշակութային, գիտահետազոտական և այլ ուղղություններով աշխատանքների կազմակերպման արդյունավետության ապահովում,

Ուսանողների ուսումնական, արտադրական, մանկավարժական, նախաավարտական և այլ տեսակի պրակտիկաների բարելավմանն ուղղված համալիր միջոցառումների ծրագրի մշակում և իրականացում՝ կիրառելով աշխատանքի վրա հիմնված կրթության մեթոդներ:

Իրականացված աշխատանքները՝

Վերանայվել են ԳՊՀ-ում իրականացվող բոլոր մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանները, դասընթացների առարկայական ծրագրերը, թեմատիկ պլանները, վերջնարդյունքները,

Վերանայվել են ԳՊՀ և գործընկեր հաստատությունների միջև կնքված պայմանագրերը, գործունեության ոլորտները: ԳՊՀ ՈԱԲ-ի կողմից իրականացվող հարցումների միջոցով գնահատվել են ԳՊՀ պրակտիկանտ-ուսանողների և գործատուների բավարարվածությունը պրակտիկաների կազմակերպման, պրակտիկաների հաշվետվությունների ընդունման և գնահատման գործընթացներից, արդյունքները քննարկվել են ռեկտորատի, գիտական խորհրդի համապատասխան նիստերում:

Արդյունքը՝

Գործատուների հետ կնքված և վերակնքված 43 պայմանագրեր և հուշագրեր:

ԳՊՀ ՈԱԲ-ի կողմից իրականացվող հարցումների արդյունքում հարցվող ԳՊՀ պրակտիկանտ-ուսանողների և գործատուների բավարարվածությունը պրակտիկաների կազմակերպման գործընթացից կազմել է 81%, նախորդ ուստարվա 76,8%-ի փոխարեն, արձանագրվել է 4,2% աճ:

3. Նպատակը՝

Ուսանողների մոտ հետազոտական հմտություններ, վերլուծելու և եզրահանգելու կարողություններ զարգացնելու նպատակով բակալավրիատի բոլոր մասնագիտական կրթական ծրագրերում «Հետազոտության մեթոդաբանություն» դասընթացի ներառում:

Իրականացված աշխատանքները՝

Բակալավրիատի առկա և հեռակա բաժինների բոլոր մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլաններում ներառվել է «Հետազոտության մեթոդաբանություն» դասընթացը:

ԳՊՀ ՈԱԲ-ի կողմից իրականացվող հարցումների արդյունքում գնահատվել է «Հետազոտության մեթոդաբանություն» դասընթացի դասավանդման, գնահատման արդյունավետությունից բակալավրիատի ուսանողների բավարարվածությունը:

ԳՊՀ ակադեմիական քաղաքականության բաժնի կողմից իրականացվել են դասալսումներ, վերլուծվել են արդյունքները, շահակիցների կարծիքների հիման վրա պլանավորվել է բարելավելու դասընթացի բովանդակությունն ու ուսուցման, ուսումնառության, գնահատման մեթոդաբանությունը, նրանում ամրագրված վերջնարդյունքները:

Արդյունքը՝

«Հետազոտության մեթոդաբանություն» դասընթացի դասավանդման, գնահատման արդյունավետությունից բակալավրիատի ուսանողների բավարարվածության գնահատման վերլուծություն: Դասընթացի առարկայական ծրագրի բարելավման նախապատրաստական աշխատանքներ:

4. Նպատակը՝

Բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) բարելավում, արդիականացում, դրանցում ամրագրված իրազեկությունների՝ գիտելիքների, կարողությունների և հմտությունների համապատասխանեցում ՀՀ Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին, աշխատաշուկայի արդի պահանջներին, ԵԲԿՏ որակավորումների համընդհանուր շրջանակին, հաշվի առնելով «կանաչ կրթության» սկզբունքը՝ ըստ ՈՈԾ-ների վերջնարդյունքների, իրականացնել կրթական ծրագրերի արդիականացում, ՄԿԾ-ների մասնագրերի լրամշակում, արտաքին գնահատում:

Իրականացված աշխատանքները՝

Բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերի վերանյաման, բարելավման աշխատանքներն ընթացքի մեջ են: Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող Էրազմուս+ T-Green հետբակալավրի կրթության փոխակերպումը հանուն կանաչ և կայուն ապագայի» (The Erasmus+ CBHE project "Transforming Graduate Education for Green and Sustainable Future" (T-GREEN)) ծրագրի շրջանակում մշակվում է նոր մագիստրոսական կրթական ծրագիր «Կանաչ տնտեսություն», ինչպես նաև վերանայվում են «Սերվիս», «Դեղագործական քիմիա», «Տնտեսագիտություն» մասնագիտական կրթական ծրագրերի առանցքային դասընթացներ:

ՈԱԲ-ի կողմից իրականացված հարցումների արդյունքում գնահատվել է ներքին և արտաքին շահակիցների բավարարվածությունը վերջնարդյունքահեն ՄԿԾ-ների իրականացումից:

Արդյունքը՝

Վերանայված և բարելավված բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրեր, մեկ նոր կրթական ծրագրի մասնագիր, 2 վերամշակված դասընթացների առարկայական ծրագիր, այս ուղղությամբ վերապատրաստված դասախոսական և վարչական անձնակազմի 4 անդամներ:

5. Նպատակը՝

ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման համակարգի և թեստավորման գործող ծրագրի համալրում ուսումնական նոր նյութերով, թեստերով, զուգահեռաբար էլեկտրոնային նոր համակարգերի մշակում և շահագործում՝ ՄԿԾ-ների, ուսումնական մոդուլների,

ուսումնամեթոդական տարաբնույթ նյութերի, դասախոսությունների առցանց մատուցման նպատակով, ինչպես նաև ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման գործընթացում էլեկտրոնային գործիքների կիրառում:

Իրականացված աշխատանքները՝

ՈԱԲ-ի կողմից մշտադիտարկվել է ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման http://learn.gsu.am/ համակարգը և թեստավորման https://exam.gsu.am/ ծրագիրը, արդյունքները քննարկվել է ռեկտորատի մի քանի նիստերում, մասնագիտական ամբիոններին առաջադրվել է կատարել էլեկտրոնային ուսումնական նոր նյութերով, թեստերով, այլ ուսուցման ռեսուրսների համալրման աշխատանքներ:

Մասնագիտական բոլոր կրթական ծրագրերի բակալավրիատի և մագիստատուրայի քննական և ստուգարքային տեղեկագրերի գործարկումը թվայնացման ընթացքի մեջ է, կգործարկվի ընթացիկ ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանում:

ԳՊՀ ՈԱԲ-ի կողմից իրականացվող հարցումների արդյունքում գնահատվել են ԳՊՀ էլեկտրոնային ռեսուրսներից ներքին և արտաքին շահակիցների բավարարվածությունը:

Գնահատման արդյունքերի հիման վրա համալսարանի էլեկտրոնային ռեսուրսները հաշվառվել և բարելավվել են:

Արդյունքը՝

ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման http://learn.gsu.am/ հարթակում առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի 910 դասընթացների ուսումնական փաթեթներ:

ԳՊՀ էլեկտրոնային քննությունների թեստավորման https://exam.gsu.am/ ծրագիրը համալրվել է 23 նոր թեստերով:

6. Նպատակը՝

Ուսանողների և դիմորդների համար ՄԿԾ-ների նկարագրերի, մասնագրերի մշակում և հրապարակում:

Իրականացված աշխատանքները՝

Ընթացքի մեջ է բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերի մասնագրերի բարելավման աշխատանքները:

Դիմորդների համար կազմակերպվել և իրականացվել են մասնագիտական կողմնորոշման դասընթացներ, որոնց ընթացքում ներկայացվել են ԳՊՀ-ում իրականացվող ՄԿԾ-ները:

Արդյունքը՝

Վերանայված և բարելավված բակալավրիատի և մագիստրատուրայի 11 մասնագիտական կրթական ծրագրեր:

Դիմորդների մասնագիտական կողմնորոշմանը միտված հանրակրթական դպրոցների հետ համատեղ իրականացված ավելի քան 50 միջոցառումներ:

II. *ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ*

1. Նպատակը՝

Համալսարանի գիտահետազոտական արդյունավետ գործունեության շարունակականության ապահովում:

Իրականացված աշխատանքները՝

Հաշվետու ժամանակաշրջանում պարբերաբար հանդիպումներ են կազմակերպվել բոլոր ֆակուլտետների առկա և հեռակա բաժինների ուսանողների հետ: Հանդիպումների ընթացքում ուսանողներիննն տրամադրվել է խորհրդատվություն հոդվածներ գրելու, գիտաժողովներին դիմելու և զեկուցումներ ներկայացնելու կարգի վերաբերյալ:

ԳՊՀ ՈՒԳԸ ֆեյսբուքյան էջի, տելեգրամյան ալիքի, ինչպես նաև էլեկտրոնային նամակագրության միջոցով, ուսանողները տեղեկացվել են հանրապետական և միջազգային տարաբնույթ գիտաժողովների, մրցույթների, միջոցառումների և այլ հնարավորությունների մասին:

Ուսանողների շրջանում իրականացվել են գիտության և գիտահետազոտական գործունեության նկատմամբ հետաքրքրությունը խթանող սեմինարներ, բաց դասեր:

ԳՊՀ-ում կազմակերպվել և անցկացվել է ամենամյա 27-րդ գիտաժողովը:

Արդյունքը՝

2024թ. մայիսի 3-ին զուգակցված՝ առկա-առցանց ձևաչափով կազմակերպված ԳՊՀ 27-րդ գիտաժողով, որի ծրագրում ներառված էին բնական և հասարակական գիտությունների տարբեր ուղղություններին նվիրված 108 զեկուցում՝ ներկայացված 158 հեղինակի և համահեղինակի կողմից: Գիտաժողովին մասնակցել են 30-ից ավելի բուհերի, գիտահետազոտական ինստիտուտների ու կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես ՀՀ-ից, այնպես էլ ԱՄՆ-ից, Գերմանիայից, Ռուսաստանի Դաշնությունից, Բելառուսի Հանրապետությունից: Գիտական զեկուցումներով հանդես եկան Գավառի պետական համալսարանի գործընկեր բուհերի՝ Ալթայի պետական մանկավարժական համալսարանի, Վորոնեժի պետական համալսարանի, Պովոլժիեյի կառավարման ինստիտուտի, Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի, Բելառուսի պետական տնտեսագիտական համալսարանի և այլ բուհերի դասախոսներն ու ասպիրանտները:

2. Նպատակը՝

Գավառի պետական համալսարանի 2023-2027 թվականների գիտահետազոտական գործունեության շրջանակի սահմանում:

Իրականացված աշխատանքները՝

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի 2023-2027թթ. զարգացման ռազմավարական ծրագրի գիտահետազոտական, նորարարական գործունեության գերակա ուղղության միջնաժամկետ, կարճաժամկետ գործողությունների պլանների իրականացման մշտադիտարկման պլանների միջոցով վերահսկվել են արդյունավետության ցուցիչների կատարողականը, վերլուծվել են դրանց շեղումները և պատճառները:

Արդյունքը՝

2023-2027թթ. ռազմավարական ծրագրում որպես գերակա ուղղություն է սահմանվել գիտահետազոտական, նորարարական ուղղությունը: Ռազմավարական ծրագրի երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ գործողությունների պլաններում այս գերակա ուղղության համար նշվել են նպատակներն ու խնդիրները, մշակվել գործողությունների քանակական և որակական առաջընթացի գնահատման արդյունավետության ցուցիչները: Հաշվետու ժամանակահատվածում հաստատվել է Գավառի պետական համալսարանի 2023-2027 թվականների գիտահետազոտական գործունեության շրջանակը՝ ներառելով Գեղարքունիքի մարզի առանձնահատկությունների հաշվառմամբ

ամբիոնների գիտահետազոտական գործունեության արդիականացված թեմատիկ ուղղություններ:

3. Նպատակը՝

ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուի բովանդակային և տեխնիկական պահանջների համապատասխանեցում ազգային և միջազգային շտեմարաններում ընդգրկված գիտական հանդեսներում տպագրություններին ներկայացվող պահանջներին:

Իրականացված աշխատանքները՝

Վերանայվել են ԳՊՀ-ի գիտական հոդվածների ժողովածուի տեխնիկական պահանջները, դրանք համապատասխանեցվել են ՀՀ Բարձրագույն որակավորումների կոմիտեի կողմից ընդունելի պարբերականների համար նախատեսված պահանջներին:

Արդյունքը՝

Հաշվետու ժամակահատվածում ազգային և միջազգային շտեմարաններում ընդգրկված գիտական հանդեսներում տպագրություններին ներկայացվող պահանջներին համատասխան տպագրվել են ԳՊՀ-ի 15-րդ և 16-րդ գիտական հոդվածների ժողովածուները, ինչպես նաև ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6B038 ծածկագրով «Եվրոպական էպիկական ավանդույթը և «Սասնա ծռեր» էպոսը» գիտական թեմայի շրջանակում «Բանահյուսություն և գրականություն» ընդհանուր խորագրով միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուն և «Եվրոպական էպիկական ավանդույթը և «Սասնա ծռեր» էպոսը» կոլեկտիվ մենագրությունը:

4. Նպատակը՝

Ազգային և միջազգային դրամաշնորհային ծրագրերի ֆինանսական միջոցների ներգրավում և ԳՊՀ գրադարանային պաշարների, լաբորատորիաների, համակարգչային լսարարանների, մասնագիտական աշխատասենյակների հնարավորությունների համալրում, ենթակառուցվածքների բարելավում:

Իրականացված աշխատանքները՝

Համալսարանում իրականացվող դրամաշնորհային ծրագրերի ֆինանսական միջոցներով բարելավվել և համալրվել են ԳՊՀ գրադարանային պաշարները (հաշվետու ժամանակահատվածում գրադարանը համալրվել է 678 միավոր գրականությամբ, արդյուքնում՝ ԳՊՀ գրադարանում առկա է 43533 միավոր գրականություն), մասնագիտական աշխատասենյակների հնարավորությունները (հաշվետու ժամանակահատվածում վերանորոգվել է 3 լսարան, ձեռք է բերվել թվով 30 աթոռ, որոնք բաշխվել են շահակիցների կարիքների հաշվառմամբ), ենթակառուցվածքները (հաշվետու ժամանակահատվածում համալսարանը ձեռք է բերել 29 միավոր արդի տեխնիկական և ծրագրային տվյալներով համակարգչային տեխնիկա, որոնք բաշխվել են ինչպես ստորաբաժանումների, այնպես էլ համակարգչային լսարանների միջև՝ հաշվի առնելով շահակիցների կարիքները):

Արդյունքը՝

Համակարգչային տեխնիկայով վերազինված ԳՊՀ համակարգչային լսարաններ, նոր գրականությամբ գրադարաններ, արդիականացվել են վարչական և ուսումնաօժանդակ կազմին տրամադրված գույք ու տեխնիկա, ստեղծվել է համակարգչային նոր լսարան, որոշ լսարաններ համալրվել են ինտերակտիվ գրատախտակներով և լուսացրիչներով, վարչական անձնակազմին տրամադրվել է նորագույն տեխնիկա:

5. Նպատակը՝

ՀՀ և օտարերկրյա բուհերի, գիտահետազոտական ինստիտուտների և մասնավոր կազմակերպությունների հետ համատեղ գիտահետազոտական նախագծերի իրականացում:

Իրականացված աշխատանքները, Արդյունքը՝

Ներքին և արտաքին գիտական հաղորդակցության ժամանակակից մեխանիզմների ներդրմամբ՝ պրոֆեսորադասախոսական կազմի հետազոտական կարողությունների և հմտությունների զարգացում:

Ազգային, միջազգային գիտական, հետազոտական ծրագրերին համալսարանի դասախոսների և ուսանողների մասնակցության խրախուսում:

Արդյունքը՝

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանը կնքել և վերակնքել է 9 միջինստիտուցիոնալ պայմանագիր, որի արդյուքնում՝ ԵՄ «Էրազմուս+» միջազգային կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակում ԳՊՀ 9-ը դասախոսներ վերապատրաստումներ են անցել եվրոպական առաջատար բուհերում:

ԳՊՀ դասախոսների գիտական հետազոտությունների, հեղինակած հոդվածների, մենագրությունների, դասագրքերի հրատարակման մշտադիտարկման արդյունքների համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում հրատարակվել է 2 դասագիրք, 7 մենագրություն, որից մեկը՝ եռահատորյակ, 4 ուսումնամեթոդական ձեռնարկ, 99 հոդված, 2 թեզիս, 5 զեկուցումներ, տրվել է 1 գյուտի արտոնագիր: ԳՊՀ 6 դասախոս հանդես է եկել որպես համահեղինակ՝ արտերկրի գործընկեր բուհերի հրատարակած 2 կոլեկտիվ մենագրություններում՝ Բելառուսի Հանրապետության Մինսկի պետական լեզվաբանական համալսարանի՝ «Человек и его мир» և ՌԴ Գրոզնիի պետական նավթային տեխնիկական համալսարանի հրատարակած «**Человек. Социум. Искусство**» աշխատություններում:

ԳՊՀ դասախոսները՝ որպես համապատասխան ոլորտների մասնագետ - գիտնականներ ներգրավված են բարձրագույն ուսումնական այլ հաստատությունների գիտահետազոտական դրամաշնորհային տարբեր ծրագրերում, օրինակ՝ Հայոց լեզվի և գրականության ամբիոնի 1 դասախոս ընդգրկված է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի «Շիրակի հայոց բանահյուսական մշակույթը» թեման իրականացնող խմբի կազմում:

Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի 1 դասախոս ընդգրված է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող «Գյուղատնտեսական հողատեսքերի կադաստրային կարգերի վերագնահատման մեթոդիկայի մշակումը և հողային ռենտայի հաշվառումը» թեման իրականացնող խմբի կազմում:

ԳՊՀ դասախոսները հանդես են գալիս որպես թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների գիտական ղեկավարներ, գրախոսներ, անդամակցում գիտական աստիճաններ շնորհող բնական և հասարակական գիտությունների տարբեր ուղղվածությամբ մասնագիտական խորհուրդներին:

III.ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ, ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Նպատակը՝

ԳՊՀ կառավարման իրավական հիմքերի կատարելագործում՝ ՀՀ օրենսդրական կարգավորումներին համապատասխան:

Իրականացված աշխատանքները՝

Վերանայվել են ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները և գործառույթների շրջանակները:

Մշակվել և գործածության մեջ են դրվել ԳՊՀ-ի 2023-2027թթ. ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների տարեկան և միջնաժամկետ մշտադիտարկման պլանները:

Արդյունքը՝

ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների առաջարկությամբ և հոգաբարձուների խորհրդի որոշմամբ փոփոխություն է կատարվել ԳՊՀ ստորաբաժանումների կառուցվածքում՝ միավորվել են նույնանուն ՄԿԾ-ների առկա և հեռակա բաժինները սպասարկող ստորաբաժանումները, համալսարանի կառուցվածքի վերակազմակերպման արդյունքում վերանայվել են համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցների գործառույթները, իրավասություններն ու պարտականությունները:

ԳՊՀ 2023-2027թթ. ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների տարեկան և միջնաժամկետ մշտադիտարկման պլանի արդյունքների, ներքին և արտաքին շահակիցների կարծիքների հաշվառմամբ նախանշվել են բարելավման ուղիներ:

2. Նպատակը՝

Դասախոսների և ուսանողների համար անվտանգ կրթական միջավայրի ապահովում:

Իրականացված աշխատանքները՝

Բարելավվել են ԳՊՀ ընդհանուր անվտանգության, մուտքի և ելքի վերահսկման համակարգերը:

Ապահովվել են ԳՊՀ հանրակացարանում հանգստի կազմակերպման համար անհրաժեշտ պայմաններ:

Արդյունքը՝

ԳՊՀ-ում հաշվետու ժամակահատվածում իրականացվել է անվտանգության համակարգերի վերազինում: ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի նախկին մասնաշենքում, անվտանգության նկատառումներից ելնելով, տեղադրվել են տեսահսկող սարքեր, որոնք վերահսկում են ոչ միայն մասնաշենքը, այլև հարակից տարածքը: Սահմանված ժամկետներում գազի կաթսայատունը ենթարկվել է հիդրավլիկ փորձաքննության, ստուգվել են գազի մատակարարման անվտանգության պահպանման կանոնները, առաջին կուրսեցիներին ԳՊՀ գլխավոր մասնաշենք մուտքի և ելքի անցաքարտերի ստուգման և տրամադրման աշխատանքներն ընթացքի մեջ են:

ԳՊՀ շահակիցների կարիքների հաշվառմամբ բարելավվել են համալսարանի ենթակառուցվածքները՝ լսարանները համալրվել են տեղեկատվական և հաղորդակցական նոր տեխնոլոգիաներով, թարմացվել է կահույքը, վերանորոգվել է հանրակացարանը, փոխվել են դասախոսների հանգստի սենյակների կահույքը, անկողնային, խոհանոցային և այլ անհրաժեշտ պարագաները:

3. Նպատակը՝

ԳՊՀ-ում կրթական նորարարությունների խթանման ծրագրերի մշակում՝ դիմելով միջազգային, հասարակական ու այլ ազգային և միջազգային կազմակերպություններին՝ ֆինանսական աջակցության նպատակով:

Իրականացված աշխատանքները՝

Բարելավվել է ԳՊՀ ֆինանսական կայունությունը՝ աստիճանաբար ավելացնելով ու բազմազանեցնելով ֆինանսական հոսքերը՝ օրենքով չարգելված աղբյուրներից:

Արդյունքը՝

Հաշվետու ժամանակահատվածում ԳՊՀ-գործատու համատեղ պայմանագրերի արդյունքում իրականացվել է ԳՊՀ տարածքների, ռեսուրսների համատեղ օգտագործում, որոնք հնարավորություն են տվել ապահովելու լրացուցիչ ֆինանսական մուտքեր:

4. Նպատակը՝

ԳՊՀ պրոֆեսորադասախոսական և վարչական կազմերի մասնագիտական զարգացման դասընթացների մշակում և վերապատրաստումների իրականացում:

Իրականացված աշխատանքները՝

Հաշվետու ժամանակահատվածում պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումները պլանավորելիս հաշվի են առնվել ՄԿԾ-ների դասավանդման համար առաջնահերթ կարիքները:

Շարունակվել են ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի, ակադեմիական շարժունության ծրագրերը:

Արդյունքը՝

Հաշվետու ժամանակահատվածում գրանցվել է վերապատրաստում անցած դասախոսների թվաքանակի աճ:

ԳՊՀ ՊԴ կազմի ակադեմիական կարիքների վերհանման արդյունքում ԳՊՀ դասախոսները վերապատրաստումներ են անցել ինչպես բուհում, այնպես էլ բուհից դուրս՝ մինչբուհական համագործակցության, ակադեմիական շարժունության միջազգային ծրագրերի շրջանակներում:

5. Նպատակը՝

ԳՊՀ ենթակառուցվածքների, մշակութային միջոցառումների և մարզական պարապմունքների դահլիճների վերանորոգում և կահավորում՝ համապատասխանեցնելով ներառականության պահանջներին:

Իրականացված աշխատանքները՝

Ապահովվել է հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար մատչելի կրթական միջավայր:

Արդյունքը՝

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանը անդամակցում է նաև ԵՄ «Էրազմուս+, Հայաստանում ներառական, թվային ու կանաչ ուղղվածությամբ բարձրագույն կրթության պատշաճ կառավարման և որակի ապահովման գործունեության առանցքային ցուցանիշների ազգային շրջանակի (ԳԱՑԱՇ) ստեղծում» (KPI4HE), ինչպես նաև «Էրազմուս+, Կրթության փոխակերպումը հանուն կանաչ և կայուն ապագայի» (T-GREEN) եռամյա ծրագրերին, որի շրջանակում նախատեսվում են հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար մատչելի կրթական միջավայրի, սննդի և հանրակացարանային պայմանների ապահովումը:

IV.ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Նպատակը՝

ԳՊՀ-ում շարունակական մասնագիտական զարգացման ծրագրերի համար անհրաժեշտ նյութատեխնիկական պայմանների ապահովում և ծրագրերի իրականացում, խորհրդատվական ծառայությունների մատուցում:

Իրականացված աշխատանքները՝

ԳՊՀ-ում հաստատված ժամանակացույցով պլանավորվել են դասախոսների մասնագիտական վերապատրաստումների ծրագրերը, շարունակվել են դրանց իրականացումը:

Իրականացվել է գործընթացից ներքին և արտաքին շահակիցների բավարարվածության գնահատում, համապատասխան վերլուծության ներկայացում:

Արդյունքը՝

Հաշվետու ժամանակահատվածում ԳՊՀ-ի ներքին և արտաքին շահակիցների համար իրականացվել են թվով ութ շարունակական մասնագիտական վերապատրաստումներ՝ 15 թեմայի շրջանակում:

Վերապատրաստումներն իրականացվել են ինչպես ԳՊՀ դասախոսների, այնպես էլ համապատասխան ոլորտի հրավիրյալ փորձագետների կողմից: Վերապատրաստումներին մասնակցել են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցներ:

ՈԱԲ-ի կողմից գնահատվել են շահակիցների բավարարվածությունը գործընթացից: Շահակիցների կարծիքների հաշվառմամբ վերանայվել են վերապատրաստումների անցկացման ձևաչափերը, դասավանդման մեթոդները:

2. Նպատակը՝

Միջազգային, այդ թվում՝ ԵԲԿՏ-ի միջբուհական համագործակցության, շարժունության, գիտահետազոտական և այլ ծրագրերին ԳՊՀ-ի ակտիվ մասնակցության խթանում:

Իրականացված աշխատանքները՝

Շարունակական բնույթ է կրել ԳՊՀ սովորողների և պրոֆեսորադասախոսական կազմի, վարչական աշխատակիցների ակադեմիական շարժունության խրախուսման գործընթացները:

Ապահովվել է արտերկրում կազմակերպվող գիտաժողովներին, սեմինարներին, վերապատրաստման դասընթացներին, շարժունության ծրագրերին ԳՊՀ աշխատակազմի անդամների մասնակցությունը:

Արդյունքը՝

Հաշվետու ժամանակահատվածում ԵՄ «Էրազմուս+» միջազգային ակադեմիական շարժունության ծրագրերին, արտերկրում կազմակերպվող գիտաժողովներին, սեմինարներին, վերապատրաստման դասընթացներին մասնակցել են 9-ը ուսանող, 8 դասախոս:

3. Նպատակը՝

Ուսանողական թիրախային խմբերի, այդ թվում՝ Արցախից բռնի տեղահանված ուսանողների կարիքների ուսումնասիրում՝ բացահայտելու նրանց ակնկալիքներն ու

սպասումները կրթական և գիտահետազոտական ուղղություններով, դրանց բավարարման նպատակով ծրագրերի մշակում:

Իրականացված աշխատանքները՝

Ուսանողական կառույցների կողմից ուսանողների կարիքների վերհանման ներդրված կառուցակարգերով աշխատանքներ են տարվել սովորողներին կրթության բովանդակության ձևավորման ու բարելավման, ՄԿԾ-ների վերանայման, բուհի գործունեության տարբեր ոլորտների արդյունավետության գնահատման, համալսարանի ամենամյա ինքնավերլուծության, ուսանողների փոխատեղման, սովորողներին անվանական կրթաթոշակների ներկայացման և այլ գործառույթներում ներգրավելու նպատակով:

Ուսանողական թիրախային խմբերի, այդ թվում՝ Արցախից բռնի տեղահանված ուսանողների շրջանում անցկացվել են հարցումներ՝ կրթական գործընթացում նրանց կարիքների բացահայտման և բավարարման, աջակցության ծրագրերի իրականացման նպատակով:

Արդյունքը՝

Հաշվետու ժամանակահատվածում ԳՊՀ ուսանողական ինքնակառավարման մարմինները պարբերաբար անցկացրել են տեղեկատվական հանդիպումներ՝ նվիրված բուհում կրթության կազմակերպման, ուսանողական կառույցների գործունեության, ուսանողների կարիքների վերհանման, բավարարման, գործող կրթաթոշակներին դիմելու և այլ գործընթացների վերաբերյալ:

2023-2024 ուստարում ՈԱԲ-ի կողմից անցկացվել է հարցում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ԳՊՀ-ում կրթությունը շարունակող ուսանողների շրջանում, վեր են հանվել նրանց կրթական կարիքները, ուսումնասիրվել և մշակվել են համապատասխան գործողություններ ուսանողների կրթական կարիքները բավարարելու ուղղությամբ:

4. Նպատակը՝

Միջազգային ուսանողական գիտաժողովների կազմակերպում:

Իրականացված աշխատանքները՝ հաշվետու ժամանակահատվածում ԳՊՀ ՈւԳ ընկերության համակարգված աշխատանքի արդյունքում ԳՊՀ ուսանողները մասնակցել են թվով 6 հանրապետական ուսանողական գիտական նստաշրջանի, հանդես եկել զեկուցումներով, որոնց արդյունքների հաշվառմամբ ԳՊՀ թվով 6 ուսանողներ մասնակցել են հանրապետության «Լավագույն ուսանող» մրցույթին, որոնցից 3-ը՝ /Բատիկյան Քրիստինե՝ Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի առկա բաժնի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության բակալավրիատի 3-րդ կուրս, Բատիկյան Թեհմինե՝ Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրս, Աբրահամյան Ռոզա՝ Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի առկա բաժնի «Ֆինանսներ /ըստ ոլորտի/» մասնագիտության բակալավրի 4-րդ կուրս/ զբաղեցրել են առաջին տեղ, 1-ը՝ /Բաղդասարյան Անուշ՝ Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի «Համակարգչային ճարտարագիտություն» մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրս/՝ 2-րդ տեղ:

Արդյունքը՝ Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են ՈՒԽ և ՈՒԳԸ գործունեության ակտիվացման աշխատանքները, գիտաժողովներին մասնակցությունը:

V. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Նպատակը՝

Գործողությունների պլաններում արտացոլված որակական և քանակական ցուցիչների ճշգրտությունն ապահովելու նպատակով ընդհանուր մոտեցման և մեխանիզմների մշակում և գործարկում, գնահատման ցուցիչների չափելիության մշտադիտարկում:

Իրականացված աշխատանքները՝

ԳՊՀ ՌԾ հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման գերակա ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունավետությունից շահակիցների բավարարվածության գնահատումները կրել են շարունակական բնույթ, կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ գործողությունների պլանների իրականացման մշտադիտարկման պլանների միջոցով վերահսկվել են արդյունավետության ցուցիչների կատարողականը, վերլուծվել են դրանցից շեղումները, պատճառները:

Արդյունքը՝

ԳՊՀ ՈԱԲ հարցումների արդյուքների համաձայն նկատվել է, նախորդ ուստարվա համամեմատությամբ, շահակիցների բավարարվածության աճ:

2. Նպատակը՝

Կոռուպցիոն ռիսկերի վերհանման, կանխարգելման և վերահսկման մեխանիզմների կատարելագործում և կիրառում, ԳՊՀ բարեվարքության կանոնների վերանայում և համալրում:

Իրականացված աշխատանքները՝

ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթները, կոռուպցիոն ռիսկերի վերհանման, կանխարգելման և վերահսկման մեխանիզմները մշտապես գտնվել են բուհի առանցքային կարևորության հարցերի շարքում, հետևողականորեն պահպանել են ԳՊՀ բարեվարքության կանոնները:

Ապահովվել է բուհի գործունեության բոլոր ոլորտների հաշվետվողականությունն ու թափանցիկությունը:

Համալսարանի որակի ապահովման բաժնի կողմից կոռուպցիոն ռիսկերի բացահայտմանը միտված ներքին և արտաքին շահակիցների շրջանում պարբերաբար իրականացվել են անանուն հարցումներ, հրապարակվել են արդյունքները:

Արդյունքը՝

Գնահատվել է ակադեմիական միջավայրից շահակիցների բավարարվածությունը, հրապարակվել են արդյունքները, որոնք փաստում են ազնիվ ակադեմիական միջավայրի պահպանման հանգամանքը: Տարբեր կառույցների կողմից անանուն հարցումների արդյունքում ներքին և արտաքին շահակիցների կողմից բուհը շարունակաբար գնահատվում է որպես ակադեմիական ազնիվ միջավայրում աշխատող, կոռուպցիայից զերծ կառույց:

3. Նպատակը՝

Իրավագիության բաժնի դասախոսների և ուսանողների միջոցով աշակերտների շրջանում իրավագիտակցության բարձրացման ծրագրերի մշակում և իրականացում:

Իրականացված աշխատանքները՝

Իրավագիտության բաժնի դասախոսների և ուսանողների միջոցով աշակերտների շրջանում կազմակերպվել են բաց դաս–քննարկումներ, սեմինարներ, համատեղ միջոցառումներ՝ միտված իրավագիտակցության բարձրացմանը՝ մասնավորապես ի նշանավորումն Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրվա, Գավառի պետական համալսարանում անցկացվեց բաց դաս, որին մասնակցեցին ՀՀ Գեղարքունիքի մարզի ավագ դպրոցների աշակերտներ, ինչպես նաև ուսուցիչներ և ԳՊՀ դասախոսներ: Բաց դասի ընթացքում ուսանողները ներկայացրին մարդու և քաղաքացու (առանց ազգային խտրականության) հիմնարար իրավունքները խաղաղ պայմաններում և պատերազմի ժամանակ:

2024-2025 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի ուսումնագիտական գործունեության զարգացման ռազմավարական ուղղությունները

<u>2024-2025 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանը սահմանել է «Կրթությունը՝ հաջողության ճանապարհ» կարգախոսը</u>

Ի. ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Կրթության որակի ապահովում, որակի ապահովման եվրոպական չափանիշներին և չափորոշիչներին համապատասխանող կրթական ծրագրերի իրականացում, ուսուցման և ուսումնառության արդյունավետության շարունակական բարձրացում՝ պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի ջանքերով կրթության բովանդակության հարստացման, դասավանդման մեթոդների կատարելագործման, նորարարական տեխնոլոգիաների կիրառման, ուսումնական ռեսուրսների բազմազանեցման և արդիականացման միջոցով:
2. Վերջնարդյունքահեն բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) շարունակական բարելավում՝ հաշվի առնելով աշխատաշուկայի արդի պահանջները, Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի որակավորումների համընդհանուր շրջանակը, ՀՀ որակավորումների ազգային (ՈԱՇ) և ոլորտային (ՈՈՇ) շրջանակները, ուսանողների կրթական կարիքները, գիտության նորագույն նվաճումները:
3. Հանրակրթական, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ սերտ համագործակցության ապահովում, դիմորդների մասնագիտական կողմնորոշում և նրանց թվի ավելացում:
4. Ուսանողների հայրենասիրական, բարոյական, հոգևոր-մշակութային, իրավական, գեղագիտական, ֆիզիկական, աշխատանքային, էկոլոգիական դաստիարակություն, պատասխանատու և ակտիվ քաղաքացիների ձևավորում:
5. Բակալավրի և մագիստրատուրայի կրթական աստիճանների բոլոր ՄԿԾ-ների ուսումնական պլանների վերանայում, մոդուլների խոշորացում, մասնագրերի նորացում, դասավանդողներին ներկայացվող հստակեցված պահանջներ:

6. Առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերի ներքին աուդիտի կազմակերպում՝ արտաքին փորձագետի ներգրավմամբ:
7. ԳՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման հանձնաժողովի կողմից ընդունված բարելավման ծրագրի միջնաժամկետ մշտադիտարկման իրականացում և արդյունքների հրապարակում, բարելավման նոր գործողությունների պլանավորում:

II.ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների գիտահետազոտական գործունեության խրախուսում, արդյունքների հնարավորինս ներդրում պրակտիկայում՝ նպաստելով բարձրագույն կրթության, գիտության և տնտեսության ինտեգրմանը:
2. Գիտության նորագույն նվաճումների արտացոլում ՄԿԾ-ներում, մասնագիտական ուղղվածությանը համապատասխանող գիտահետազոտական աշխատանքների արդյունքների օգտագործում կրթական գործընթացում:
3. Գիտահետազոտական գործունեության ոլորտում համալսարանի համագործակցային կապերի ընդլայնում արտերկրի և հանրապետության առաջատար գիտահետազոտական ինստիտուտների, համալսարանների, ձեռնարկությունների, գործարար կառույցների հետ, համալսարանի աստիճանական ինտեգրում Եվրոպական հետազոտական տարածքին:
4. Միջազգային գիտական, հետազոտական ծրագրերին համալսարանի դասախոսների և ուսանողների մասնակցության ապահովում և խրախուսում, նրանց գրանցում միջազգային ակադեմիական հարթակներում (Google Scholar, ORCID, ResearchGate, Publons, Elsevier, SSRN, HAL, Elibrary, Academic.edu, այլ):
5. Սկսնակ դասախոսների գիտական ներուժի զարգացում, գիտական կադրերի պատրաստում:
6. Միջազգային գործընկերների հետ համատեղ իրականացված գիտագործնական ծրագրերի իրականացում, ուսանողների հետազոտական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման ապահովում:
7. Միջազգային բարձր հղման ցուցիչ ունեցող գիտական պարբերականներում հրատարակված հոդվածներ՝ համագործակցության ծրագրերի շրջանակներում:

III.ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ, ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Համալսարանի զարգացման ծրագրերի իրագործման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և տնտեսական ռեսուրսների ապահովում:
2. ԳՊՀ ֆինանսական, նյութատեխնիկական միջոցների կառավարման, ներբուհական տնտեսության կազմակերպման, գնումների կատարման կառուցակարգերի, էլեկտրոնային հաշվապահության գործող ծրագրի կատարելագործում՝ ապահովելով

դրա ծրագրային կապակցումը կրթական, հետազոտական գործընթացների էլեկտրոնային կառավարման ծրագրային համակարգին:

3. ՀՀ ԿՏԱԿ-ի կողմից մշակված էլեկտրոնային համակարգում ԳՊՀ ՄԿԾ-ների, ուսանողների, աշխատակիցների վերաբերյալ միասնական տեղեկատվության համալրում, շարունակական աշխատանքների ապահովում, միասնական տեղեկատվական համակարգի գործարկում:
4. ԳՊՀ ենթակառուցվածքների զարգացում, կրթական, գիտահետազոտական, նյութատեխնիկական, տեխնոլոգիական և այլ ռեսուրսների շարունակական համալրում ու արդիականացում, ներառական կրթության կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում:
5. Համալսարանի տեխնիկական վերազինում, տեղեկատվական արդի տեխնոլոգիաներով հագեցած լսարանների կահավորում բոլոր մասնաշենքերում, ռեսուրսախնայող տեխնոլոգիաների ներդրում, նվազ ծախսատար սարքերի ու սարքավորումների օգտագործում, ՄԿԾ-ների իրականացման, հետազոտական աշխատանքների կատարման համար անհրաժեշտ կրթական և հետազոտական միջավայրի շարունակական բարելավում, «կանաչ կրթության» բաղադրիչի կարևորում:
6. Կառավարման համակարգի, դրա առանձին օղակների և հատկացվող ռեսուրսների գնահատման մեխանիզմների մշակում և ներդնում, խնդիրների և շեղումների պատճառների վերհանում և դրանցով պայմանավորված փոփոխությունների իրականացում, հոգաբարձուների խորհրդի ներուժի լավագույնս օգտագործում:
7. Հնարավոր գործընկերների և ներդրողների հետ համագործակցության արդյունքում համալսարանի համապատասխան տարածքների վարձակալության տրամադրում, ռեսուրսների համատեղ օգտագործում:

IV. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Համալսարանի եկամուտների, բարեգործական հիմնադրամների և այլ աղբյուրների հաշվին սոցիալապես անապահով ուսանողների ուսման վարձավճարների զեղչման, սովորողների նյութական և բարոյական խրախուսման համակարգի կատարելագործում:
2. Համանման կրթական ծրագրեր իրականցնող բուհերի հենանիշային ուսումնասիրություն, արդյունքների վերլուծություն, համադրում և առաջավոր փորձի կիրառում, համալսարանի ինտեգրում եվրոպական գիտակրթական տարածքին:
3. «Համալսարան-դպրոցներ, քոլեջներ, այլ ուսումնական հաստատություններ» բազմաբնույթ համագործակցության ապահովում, գործընկեր դպրոցների, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ցանկի ընդլայնում, մանկավարժական խորհուրդների, մասնագիտական մեթոդմիավորումների հետ գործընկերային հարաբերությունների սերտացում:
4. Համալսարանի իրականացրած ծրագրերի, գործունեության բոլոր ուղղություններով կատարված աշխատանքի վերաբերյալ հանրությանը օբյեկտիվ տեղեկատվության

տրամադրում, հաշվետվողականության համակարգի կատարելագործում, գործընթացների հրապարակայնության և թափանցիկության ապահովում:

V. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. ԳՊՀ հակակոռուպցիոն ծրագրի արդյունավետ իրականացում:
2. ԳՊՀ էթիկայի կանոնների և համալսարանի ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթների իրականացում, ներքին և արտաքին շահառուների հետ հարաբերություններում բարեվարքության սկզբունքների ու նորմերի պահպանում:
3. Համալսարանի կառավարման գործընթացների, որոշումների կայացման թափանցիկության և հաշվետվողականության ապահովում:

Նելլի Կուտուզյան՝
ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ Ավագյան Մարտին Պատվականի,
գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, ԳՊՀ պրոֆեսոր
Դեկանի տեղակալ՝ Խանդանյան Սիրանուշ Կառլենի

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Դասիչը	Մասնագիտությունը	Որակավորումը
011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն		
011401.01.6	*Կենսաբանություն*	Մանկավարժության բակալավր
011401.03.6	*Աշխարհագրություն*	Մանկավարժության բակալավր
011401.00.7 Մասնագիտական մանկավարժություն		
011401.01.7	*Կենսաբանություն*	Մանկավարժության մագիստրոս
011401.03.7	*Աշխարհագրություն*	Մանկավարժության մագիստրոս
052201.00.6 Բնապահպանություն և բնօգտագործում		
052201.01.6	*Բնապահպանություն և բնօգտագործում*	Շրջակա միջավայրի բակալավր
052201.00.7 Բնապահպանություն և բնօգտագործում		
052201.01.7	*Բնապահպանություն և բնօգտագործում*	Շրջակա միջավայրի մագիստրոս
053101.00.6 Քիմիա		
053101.02.6	Դեղագործական քիմիա	Քիմիայի բակալավր
054201.00.6 Աշխարհագրություն		
054201.02.6	*Քարտեզագրություն և կադաստրային գործ*	Աշխարհագրության բակալավր
061103.00.6 Համակարգչային ճարտարագիտություն		
061103.01.6	*Համակարգչային ճարտարագիտություն*	Ինֆորմատիկայի բակալավր
061103.00.7 Համակարգչային ճարտարագիտություն		
061103.01.7	*Համակարգչային ճարտարագիտություն*	Ինֆորմատիկայի մագիստրոս
101801.00.6 Սերվիս		
101801.01.6	*Սերվիս*	Սերվիսի բակալավր

Ուսանողների թիվը՝ 52

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հիմք ընդունելով ԳՊՀ զարգացման հայեցակարգը, ինչպես նաև բնագիտական ֆակուլտետի գործունեության ծրագիրը՝ 2023-2024 ուսումնական տարում հետևողական աշխատանքներ են կատարվել կրթական ծրագրերի իրականացման որակի շարունակական բարձրացման, արդի պահանջներին համապատասխան մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների տիրապետող մասնագետների պատրաստման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում, նպատակահարմարությունից ելնելով, ֆակուլտետն իր գործունեությունը ծավալեց ԳՊՀ կենտրոնական մասնաշենքում: Վերակառուցվեցին մասնագիտական լսարանները, ընթերցասրահում տեղակայվեց ԳՊՀ երկրորդ գրադարանը, որը բացման օրվանից գործում էր բնագիտական ֆակուլտետի մասնաշենքում:

Ֆակուլտետի խորհրդի նիստերում քննարկվել են ուսումնական գործընթացին վերաբերող տարաբնույթ հարցեր, տրվել համապատասխան լուծումներ:

Ամբիոնների կողմից հետևողական աշխատանքներ են կատարվել գիտական գործունեության ակտիվացման, գիտական և գիտահետազոտական աշխատանքներում մագիստրոսների և բակալավրիատի ուսանողների մասնակցության ապահովման, ուսանողների շրջանում առողջ մրցակցային միջավայրի ստեղծման ուղղությամբ:

Ֆակուլտետում գործող ուսումնական պլաններն ուսումնական տարվա մեկնարկից առաջ վերանայվել են, քննարկումների արդյունքում թարմացվել, համապատասխանեցվել արդի պահանջներին, ինչը համարվում է ամբիոնների առաջնահերթություններից մեկը: Բացառություն չէ նաև հաշվետու ժամանակաշրջանը, որի ընթացքում վերանայվել և արդիականացվել են գործող մասնագիտական կրթական ծրագրերը:

Համալրվել է գրադարանային ֆոնդը՝ 34 անուն (45 կտոր) գրականությամբ՝ դասախոսների նվիրատվությունների շնորհիվ:

Դպրոց-բուհ համագործակցային կապի ամրապնդման, ինչպես նաև ապագա դիմորդների մասնագիտական կողմնորոշման ապահովման նպատակով ֆակուլտետում կազմակերպվել են հանդիպումներ մարզի հանրակրթական դպրոցների աշակերտների հետ:

I. Ընդունելությունը, ուսանողական համակազմը.

2023-2024 ուսումնական տարում բնագիտական ֆակուլտետ են ընդունվել բակալավրիատի 15 և մագիստրատուրայի 2 ուսանողներ՝ Համակարգչային ճարտարագիտություն, Սերվիս, Դեղագործական քիմիա մասնագիտություններով: Սեպտեմբերի 1-ի դրությամբ ֆակուլտետի 1-ին կուրսերում սովորել են 11 ուսանողներ:

Հաշվետու ժամանակահատվածում բնագիտական ֆակուլտետում իրենց ուսանողական իրավունքները վերականգնել են 2 ուսանողներ, պարտադիր զինվորական ծառայության համար տարկետում է տրամադրվել 5 ուսանողի, ազատվել են 9-ը, հեռացվել է 1-ը, ֆակուլտետ են տեղափոխվել 2 ուսանողներ:

2023-2024 ուսումնական տարում ֆակուլտետն ունեցել է 52 ուսանող (45 բակալավր և 7 մագիստրոս):

II. Ուսանողների կուրսից կուրս առաջընթացը, ակադեմիական առաջադիմությունը.

2023-2024 ուսումնական տարում 1-ին կիսամյակում առաջադիմությունը բակալավրիատում կազմել է 88.10%, մինչդեռ նախորդ տարում եղել է 93.6%, իսկ մագիստրատուրայում 94.20%-ից իջել է 54.14%-ի: Մագիստրատուրայում առաջադիմության կտրուկ անկումը պայմանավորված է քննաշրջանին ուսանողների չմասնակցելու հանգամանքով՝ ֆինանսական պարտավորությունը չկատարելու պատճառով:

Հաշվետու ժամանակահատվածում անհարգելի բացակայությունների համար գրավոր նկատողություն են ստացել 5, խիստ նկատողություն՝ 6 ուսանողներ:

Պարբերաբար իրականացվել են դասալսումներ, արդյունքները քննարկվել են ամբիոնների նիստերում, առաջարկվել են դասավանդման արդյունավետ ձևեր և տեխնոլոգիաներ՝ ուսուցման որակի բարձրացման նպատակով:

Բնագիտական ֆակուլտետի այն ուսանողները, ովքեր ցուցաբերել են ուսման բարձր առաջադիմություն, նախորդ տարիների պես կրկին օգտվել են պետական բյուջեի կողմից տրվող փոխհատուցումներից, բարերարների և կրթական հիմնադրամների ֆինանսական օժանդակությունից, ինչպես նաև՝ համալսարանի կողմից կիրառված զեղչերից. ՀՕՖ-ի Ժիրայր Նիշանյան հիմնադրամից՝ 5 ուսանող, Հայ կրթական հիմնարկությունից՝ 3 ուսանող, Գավառի համայնքապետարանից՝ 2, Ամերիկայի հայ ավետարանչական հայաստանյան մասնաճյուղից՝ 1 ուսանող:

III. Կրթական ծրագրերի բարեփոխումները և զարգացումները.

Իրականացվել են բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի թարմացում, դրանց բովանդակային և կառուցվածքային բարեփոխումների արդյունքում արդիականացում և բազմազանեցում: Ամբիոնների կողմից կատարվել են ՄԿԾ-ների մշտադիտարկում, ըստ անհրաժեշտության՝ փոփոխություններ, որոնք արտահայտվել են ամբիոնների նիստերի համապատասխան արձանագրություններում:

Ակտիվ է եղել նաև պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական գործունեությունը: Դասախոսները շարունակաբար մասնակցել են մասնագիտական և մեթոդաբանական տարբեր վերապատրաստումների, տպագրության են ներկայացվել հոդվածներ:

Ֆակուլտետի ամբիոնների գերակա գիտական ուղղություններն են.

Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնում՝

- Հողային ռեսուրսների մելիորատիվ վիճակի բարելավման հիմնախնդիրները,
- ՀՀ Գեղարքունիքի մարզում տուրիզմի զարգացման հնարավորություններն ու հեռանկարները,
- Ջրակենսաբանական հետազոտությունների, ֆիտոպլանկտոնի քանակական և որակական ցուցանիշների հետազոտությունը,
- Բարդ օրգանական նյութերի սինթեզը և կիրառումը դեղաբանության մեջ:

Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնում՝

- Արհեստական բանականության համակարգեր և նեյրոնային ցանցեր,
- Ծրագրային ապահովման մշակում,
- WEB-տեխնոլոգիաներ,

- Էլեկտրոնային ուսուցում, առցանց կրթական տեխնոլոգիաներ,
- Համակարգչային թեստավորում, գիտելիքների ստուգումը և գնահատում:

IV. Միջոցառումներ

- 2023թ. նոյեմբերի 4-ին բնագիտական ֆակուլտետի «Դեղագործական քիմիա» բաժնի ուսանողները «Մանրէաբանություն՝ վիրուսոլոգիայի հիմունքներով» դասընթացի շրջանակում դասախոս Մարինե Հովհաննիսյանի ուղեկցությամբ ճանաչողական-ուսուցողական այց կատարեցին պանրի արտադրությամբ զբաղվող Միքայելյանների ընտանեկան ֆերմա:
- Նոյեմբերի 9-ին կայացավ ֆակուլտետի առաջին կուրսեցիների «Բարև, մե՛նք ենք» միջոցառումը:
- Նոյեմբերի 18-ին «Սերվիս» բաժնի ուսանողները կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս Լալա Մկրտչյանի ուղեկցությամբ հերթական գործնական դասն անցկացրին Արագածոտնի մարզում:
- Նոյեմբերի 26-ին Կենսաբանության և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս, քիմիական գիտությունների թեկնածու, դոցենտ Կարինե Ավետիսյանը Կարմիրգյուղի թիվ 1 միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտների համար անցկացրեց «Իոնափոխանակման ռեակցիաներ» թեմայով բաց դաս:
- Դեկտեմբերի 6-ին կայացավ «Եկե՛ք, ձեզ հարազատներն են սպասում» խորագրով ցերեկույթ, որն անցկացվեց կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամայիս Ավագյանի ղեկավարությամբ: Ներկա էին Գավառի ավագ դպրոցի աշակերտները:
- Դեկտեմբերի 7-ին տեղի ունեցավ բաց դաս՝ նվիրված 1988 թվականի Սպիտակի երկրաշարժի 35-րդ տարելիցին:
- Դեկտեմբերի 9-ին ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Վարազդատ Ավետիսյանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ բաց դաս՝ նվիրված արհեստական բանականության կիրառություններին և զարգացման միտումներին: Բաց դասին մասնակցեցին տարբեր դպրոցների աշակերտներ, ուսանողներ՝ Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջից, ԳՊՀ ուսանողներ և դասախոսներ:
- Դեկտեմբերին ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Վարազդատ Ավետիսյանի նախաձեռնությամբ բուհի պրոֆեսորադասախոսական կազմի անդամների համար անցկացվեց վերապատրաստման դասընթաց՝ «Արհեստական բանականության գրագիտություն», «ChatGPT-ի կիրառությունը ուսումնական գործընթացներում» թեմաներով:
- Դեկտեմբերի 25-ին ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Վարազդատ Ավետիսյանի և նույն ամբիոնի դասախոս Շահեն Գասպարյանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ սեմինար-քննարկում՝ նվիրված արհեստական բանականության կիրառություններին և զարգացման միտումներին:

- Դեկտեմբերի 30-ին «Սերվիս» բաժնի ուսանողների մասնակցությամբ և օտար լեզուների ամբիոնի դասախոս Լիլիթ Թոռչյանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ “Christmas sole” խորագիրը կրող ցերեկույթ՝ անգլերենով:

V. Համագործակցային կապերը և դրանց ակտիվացումը

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետն ակտիվ է եղել արտաքին համագործակցության ոլորտում: Տարբեր հանդիպումների, միջոցառումների, բաց դասերի միջոցով առավել ամրապնդվել է կապը Գավառի տարածաշրջանի հանրակրթական դպրոցների հետ: Ճանաչողական այցերի, էքսկուրսիաների, մասնագիտական դասերի շրջանակներում ակտիվացել է համագործակցությունը տարբեր կազմակերպությունների հետ:

ՔՆՆԱՀՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ՁՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՀՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	**Քննաշրջա-նին մասնակցել են**	**Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը**	**Գերազան-ցիկների թիվը**	**Առաջադիմու-թյան %-ը**
Բակալավրիատ				
Համակարգչային ճարտարագիտություն				
1-ին	1	-	-	100
2-րդ	6	-	2	50
3-րդ	5	-	1	60
4-րդ	7	-	3	100
Դեղագործական քիմիա				
3-րդ	3	-	2	100
4-րդ	4	-	3	100
Սերվիս				
1-ին	5	-	-	100
2-րդ	5	-	3	100
4-րդ	6	-	3	100
Ընդամենը	**42**	**-**	**17**	**88,10**
Մագիստրատուրա				
Համակարգչային ճարտարագիտություն				
1-ին	2	-	1	0
2-րդ	2	-	-	100
Կենսաբանություն				
2-րդ	3	-	-	66,7
Ընդամենը	**5**	**-**	**1**	**57,14**

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ Ամիրխանյան Սամվել Գրիգորի,
տնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ պրոֆեսոր
Դեկանի տեղակալ՝ Հերգնյան Մարիամ Նորիկի,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Դասիչը	**Մասնագիտությունը**	**Որակավորումը**
041101.00.6 Հաշվապահական հաշվառում և հարկում		
041101.01.6	*Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/*	Տնտեսագիտության բակալավր
041101.00.7 Հաշվապահական հաշվառում և հարկում		
041101.01.7	*Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/*	Տնտեսագիտության մագիստրոս
041201.00.6 Ֆինանսներ		
041201.01.6	*Ֆինանսներ /ըստ ոլորտի/*	Տնտեսագիտության բակալավր
041201.00.7 Ֆինանսներ		
041201.01.7	Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ	Տնտեսագիտության մագիստրոս
031101.00.6 Տնտեսագիտություն		
031101.01.6	*Տնտեսագիտություն*	Տնտեսագիտության բակալավր
031101.00.7 *Տնտեսագիտություն*		
031101.01.7	Տնտեսագիտություն	Տնտեսագիտության մագիստրոս

Ուսանողների թիվը՝ 91

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Ընդունելությունը և ուսանողական համակազմը.

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետ 2023-2024 ուսումնական տարում ընդունվել են 16 ուսանողներ, իսկ նախորդ տարում ընդունվել էր 28 ուսանող:

Հաշվետու ժամանակաշրջանում տնտեսագիտական ֆակուլտետում արձանագրվել է ուսանողների հետևյալ շարժը.

- ✓ շարունակական կրթության հիմքով ուսումը տնտեսագիտական ֆակուլտետում շարունակել են 5 ուսանող,
- ✓ տարկետում է տրամադրվել 6 ուսանողի՝ բանակ է զորակոչվել 5 ուսանող, որից 4-ը՝ ժամանակավոր կցագրված,
- ✓ սեփական դիմումի համաձայն ազատվել են 2 ուսանողներ,
- ✓ ուսանողական իրավունքները վերականգնել է 1 ուսանող,
- ✓ հեռակա ուսուցման ֆակուլտետից տնտեսագիտական ֆակուլտետ է տեղափոխվել 1 ուսանող,
- ✓ ուսումն արտերկրում շարունակել է 3 ուսանող:

2023-2024 ուսումնական տարում ֆակուլտետն ունեցել է 91 ուսանող (73 բակալավր և 18 մագիստրոս):

2. Ուսանողների կուրսից կուրս առաջընթացը, ակադեմիական առաջադիմությունը.

2023-2024 ուսումնական տարում 1-ին կիսամյակում առաջադիմությունը բակալավրիատում կազմել է 87.50%, իսկ մագիստրատուրայում 77.78%-ի:

Տնտեսագիտական ֆակուլտետում հետևողականորեն արձանագրվել են ուսանողների հաճախումները: Ամենօրյա հաշվառման արդյունքում որոշ ուսանողներ ստացել են նկատողություն, խիստ նկատողություն: Հաշվետու ժամանակահատվածում անհարգելի բացակայությունների համար գրավոր նկատողություն են ստացել 11, խիստ նկատողություն՝ 6 ուսանողներ:

Ֆակուլտետի դեկանատը ուսանողների սոցիալական խնդիրները ժամանակին բարձրաձայնել է նրանց նյութապես աջակցելու նպատակով:

Բակալավրիատում և մագիստրատուրայում անվճար տեղերի առկայությունը խթանում է ուսանողների ակտիվությունը և նպաստում ուսման առաջադիմության բարձրացմանը: Տնտեսագիտական ֆակուլտետի սոցիալապես անապահով ընտանիքների բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներն օգտվում են պետության կողմից տրամադրվող սոցիալական աջակցության ծրագրերից: Բակալավրատի 26 և մագիստրատուրայի 13 ուսանողներ սովորում են պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ, իսկ մեկ ուսանող սովորում է ԳՊՀ միջոցների հաշվին:

Տնտեսագիտական ֆակուլտետի այն ուսանողները, ովքեր ցուցաբերել են ուսման բարձր առաջադիմություն, նախորդ տարիների պես կրկին օգտվել են պետական բյուջեի կողմից տրվող փոխհատուցումներից, բարերարների և կրթական հիմնադրամների ֆինանսական օժանդակությունից, ինչպես նաև՝ համալսարանի կողմից կիրառված զեղչերից.

ՀՕՖ-ի Ժիրայր Նիշանյան հիմնադրամից՝ 15 ուսանող, Գավառի համայնքապետարանից՝ 6, Հայ կրթական հիմնարկությունից՝ 2 ուսանող:

3. Կրթական ծրագրերի բարեփոխումները և զարգացումները.

Տնտեսագիտական ֆակուլտետում ուսումնական տարվա ընթացքում ամբիոններում պարբերաբար քննարկվել են կրթական ծրագրերի անհրաժեշտ՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան փոփոխությունների մասին հարցեր, ինչը նպաստում է ՄԿԾ-ների արդիականացմանը և աշխատաշուկային համապատասխանեցմանը:

Կրթական ծրագրերում բարելավման փոփոխություններն իրականացնելիս՝ հաշվի են առնվել դասախոսների, ուսանողների, շրջանավարտների կարծիքները: Վերանայվել են դասընթացները, կատարվել են որոշ առարկաների կիսամյակային տեղաշարժեր:

Տնտեսագիտական ֆակուլտետում պարբերաբար կազմակերպվել են դասալսումներ, իսկ ուսանողների շրջանում հարցումներ՝ դասախոսների դասավանդման որակից և կրթական միջավայրից բավարարվածության վերաբերյալ: Հարցումների արդյունքները քննարկվել են ամբիոնների, ֆակուլտետի խորհրդի նիստերում, աշխատանքներ են տարվում գործողությունների ծրագրում դրանք ներառելու և նկատված թերությունները շտկելու ուղղությամբ:

Դասավանդման և ուսումնառության մեթոդների, գիտելիքների գնահատման ձևերի ու չափանիշների շարունակական բարելավումը մշտապես գտնվում է դասախոսների ուշադրության կենտրոնում:

Դասախոսությունների և սեմինար-գործնական պարապմունքների անցկացման մեթոդների բարելավումը նպաստում է ինչպես թեմայի, այնպես էլ առարկայի վերջնարդյունքների ապահովմանը:

4. Որակի ապահովման գործընթացը.

Կրթության որակը, լինելով ընդհանրական հասկացություն, բազմագործոն է, որտեղ ներկայումս ավելի կարևորում ենք դասաժամը գրավիչ դարձնելը և մնացորդային գիտելիքների ապահովման գործոնը: Այստեղ կարևորվում են նաև ՄԿԾ-ներում կատարված բարելավումները, որոնք կատարվում են խորը՝ բազմակողմանի ուսումնասիրությունների և համեմատությունների արդյունքում:

Կրթության որակը որոշվում է ուսուցման և ուսումնառության բովանդակային հատկանիշների ու ցուցանիշների համակցությամբ: Ներկայումս ուսուցման որակի բարձրացման միջոցառումները ավելի շատ բխեցվում են աշխատաշուկայի պահանջներից:

Տնտեսագիտական ֆակուլտետում քննարկվել են նաև ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից դասընթացների որակի վերաբերյալ ուսանողների շրջանում անցկացված հարցումների արդյունքները, որտեղ արված դիտողությունների ու առաջարկությունների հիման վրա մշակվել է բարելավման գործիքակազմ՝ միտված դասավանդման որակի բարձրացմանը:

5. Համագործակցային կապերը և դրանց ակտիվացումը

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետում ակտիվացել է համագործակցությունը տարբեր կազմակերպությունների հետ: Կազմակերպվել են տարաբնույթ միջոցառումներ, հանդիպումներ, էքսկուրսիաներ:

Առանձնակի պետք է նշել ԵՄ «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում ֆակուլտետի ակտիվությունը:

Այսպես, «Տնտեսագիտություն» բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Էլիզա Տոնոյանը 2023 թվականի սեպտեմբերից մինչև 2024 թվականի փետրվարն ընկած ժամանակահատվածում ուսանել է Իտալիայում՝ Հռոմի Սապիենզայի համալսարանում:

«Ֆինանսներ /ըստ ոլորտի/» բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Իսկուհի Թաթարյանը առաջին կիսամյակն ուսումնառել է Իսպանիայի Թագավորության Կորդոբայի Համալսարանում:

«Տնտեսագիտություն» բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Լիաննա Օհանյանը 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակն ուսանել է Ռումինիայի Հանրապետության Տիմիշոարայի Արևմտյան համալսարանում:

ԵՄ «Էրազմուս+» ակադեմիական շարժունության ծրագրի շրջանակներում ստացվել են դիմումներ՝ 2023-2024 ուստարվա երկրորդ կիսամյակում եվրոպական գործընկեր բուհերում ուսումնառությունը շարունակելու համար:

6. Միջոցառումներ

- 2023թ. հոկտեմբերի 10-ին կայացավ ֆակուլտետի առաջին կուրսեցիների «Բարև, մե՛նք ենք» միջոցառումը:
- Նոյեմբերի 3-ին ֆակուլտետի երկրորդ կուրսի ուսանողները ֆակուլտետի դեկան Սամվել Ամիրխանյանի գլխավորությամբ անցկացրին բանավեճ՝ նվիրված պետության տնտեսության զարգացման և բնության պահպանության ու օգտագործման հիմնահարցերին:
- Նոյեմբերի 10-ին ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողները՝ դեկան Սամվել Ամիրխանյանի, դասախոս Աստղիկ Ավետիսյանի, ֆինանսների և կառավարման ամբիոնի ակադեմիական խորհրդատու Մարիամ Մանուկյանի ուղեկցությամբ այցելեցին Ոսկեվազի գինու գործարան:
- Նոյեմբերի 18-ին ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողները՝ դեկան Սամվել Ամիրխանյանի և դասախոս Հասմիկ Մարգարյանի ուղեկցությամբ այցելեցին ՀՀ Տավուշի մարզում գործող «Տավուշ տեքստիլ» ընկերություն, ծանոթացան ձեռնոցների արտադրամասի աշխատանքին, սարքավորումների առանձնահատկություններին:
- Նոյեմբերի 24-ին ֆակուլտետի ուսանողները մասնակցեցին «CaseKey»՝ բիզնես խնդիրների լուծման 2023 թ-ի մրցույթին և ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում կայացած ամփոփիչ միջոցառմանը:
- Նոյեմբերի 24-ին դեկան Սամվել Ամիրխանյանի և «Ֆինանսներ» բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի, ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ Մերի Խաչատրյանի նախաձեռնությամբ բուհում կայացավ սեմինար-քննարկում՝ նվիրված մարքեթինգային ռազմավարության և մարզերում ոչ ֆորմալ կրթության կարևորության հիմնահարցերին:

- Դեկտեմբերի 8-ին ֆակուլտետի մագիստրատուրիայի 1-ին կուրսի ուսանողները՝ ֆակուլտետի դեկան Սամվել Ամիրխանյանի ուղեկցությամբ եղան ՀՀ Արագածոտնի մարզի պատմամշակութային վայրերում:
- Դեկտեմբերի 8-ին տեղի ունեցավ «Տնտեսագետների ակումբ»-ի հերթական քննարկումը՝ ակումբի նախագահ, Ֆինանսներ /ըստ ոլորտի/ բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Սոնա Ավագյանի և նույն բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Արեգա Հովհաննիսյանի նախաձեռնությամբ:

ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ԶՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան-ցիկների թիվը	Առաջադիմու-թյան %-ը
Բակալավրիատ				
Ֆինանսներ /ըստ ոլորտի/				
1-ին	6	1	2	66,7
2-րդ	8	-	4	87,5
3-րդ	14	-	7	100
4-րդ	10	-	7	80
Հաշվ. հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/				
1-ին				
2-րդ	2	-	-	100
3-րդ	3	-	1	100
4-րդ	3	-	1	66,7
Տնտեսագիտություն	3	-	2	66,7
1-ին				
2-րդ	7	-	1	100
3-րդ	7	-	4	85,7
4-րդ	4	-	3	100
	5	-	3	80
Ընդամենը	**72**	**1**	**35**	**87,50**
Մագիստրատուրա				
Ֆինանսներ, դրամաշրջ. և վարկ				
1-ին	3	-	-	100
2-րդ	5	-	4	80
Հաշվ. հաշվառում /ըստ ճյուղերի/				
1-ին	2	-	-	100
2-րդ	3	-	2	66,7
Տնտեսագիտություն				
1-ին	3	-	1	66,7
2-րդ	2	-	1	50
Ընդամենը	**18**	**-**	**8**	**85,56**

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲՆԱԳԻՏԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Դեկան՝ Ավագյան Մարտին Պատվականի,
գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, ԳՊՀ պրոֆեսոր
Դեկանի տեղակալ՝ Գարեյան Մելանյա Վարդանի

Հիմք ընդունելով «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2024թ. հունվարի 27-ի նիստի թիվ 4 որոշումը հիմնադրամների կառուցվածքի փոփոխությունների մասին՝ ձևավորվեց և 2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակից իր գործունեությունը ծավալեց բնագիտատնտեսագիտական ֆակուլտետը: Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետում գործել են բակալավրի առկա և հեռակա բաժինների, մագիստրատուրայի հետևյալ բաժինների 49 կուրսեր.

	Առկա բակալավր	**Հեռակա բակալավր**	**Մագիստրատուրա**
1.	Համակարգչային ճարտարագիտություն	Համակարգչային ճարտարագիտություն	Համակարգչային ճարտարագիտություն
2.	Սերվիս	Սերվիս	-
3.	Դեղագործական քիմիա	Դեղագործական քիմիա	
4.	Ֆինանսներ /ըստ ոլորտի/	-	Ֆինանսներ, դրամաշրջա-նառություն և վարկ
5.	Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/
6.	Տնտեսագիտություն	-	Տնտեսագիտություն
7.	-	Բնապահպանություն և բնօգտագործում	-
8.	-	Կենսաբանություն	Կենսաբանություն
9.	-	Քարտեզագրություն և կադաստրային գործ	-

I. Ուսանողական համակազմը.

Հաշվետու ժամանակաշրջանում բնագիտատնտեսագիտական ֆակուլտետում արձանագրվել է ուսանողների հետևյալ շարժը.

- ✓ ուսանողական իրավունքները վերականգնել են 5 ուսանող,
- ✓ դասերից անհարգելի բացակայելու, ակադեմիական և ֆինանսական պարտքեր ունենալու պատճառով հեռացվել են 20 ուսանողներ,
- ✓ ներֆակուլտետային առկա և հեռակա բաժինների միջև տեղափոխվել են 4 ուսանողներ,
- ✓ ուսումն արտերկրում շարունակել է 2 ուսանող:

2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի սկզբին ֆակուլտետն ունեցել է 314 ուսանող (288 բակալավր և 26 մագիստրոս):

II. Ուսանողների կուրսից կուրս առաջընթացը, ակադեմիական առաջադիմությունը.

2023-2024 ուսումնական տարում 2-րդ կիսամյակում առաջադիմությունը բակալավրիատում կազմել է 82,67%, իսկ մագիստրատուրայում 44,44%-ի:

Հաշվետու ժամանակահատվածում քննաշրջանն անհատական ժամանակացույցով հանձնելու թույլտվություն է ստացել 27 ուսանող:

Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետում հետևողականորեն հաշվառվել են ուսանողների հաճախումները: Ամենամսյա ամփոփման արդյունքում անհարգելի բացակայելու համար որոշ ուսանողներ ստացել են նկատողություն, խիստ նկատողություն, երեք ուսանող հեռացվել է:

Ֆակուլտետի դեկանատը հետևողական է նաև ուսանողների սոցիալական խնդիրները ժամանակին բարձրացնելու հարցում՝ նրանց ուսման վարձի մասնակի փոխհատուցման նպատակով:

Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողները օգտվել են պետական բյուջեի կողմից տրվող փոխհատուցումներից, բարերարների և կրթական հիմնադրամների ֆինանսական օժանդակությունից, ինչպես նաև՝ համալսարանի կողմից կիրառված զեղչերից. ԳՊՀ միջոցների հաշվին զեղչվել է 6 ուսանողի ուսման վարձ, զիջվել՝ 3 ուսանողի ուսման վարձի պարտք, որից մեկը՝ նախկին ուսանողի, ԳՊՀ ուսանողների նվիրատվություններից գումար է փոխանցվել է 2 ուսանողի, ՀՕՖ-ի Ժիրայր Նիշանյան հիմնադրամից՝ 20 ուսանողի և ևս 5-ը՝ Արցախից բռնի տեղահանված ուսանողների, Գավառի համայնքապետարանից՝ 15, Հայ կրթական հիմնարկությունից՝ 5 ուսանողի, Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության հայաստանյան մասնաճյուղից՝ 1 ուսանողի:

III. Կրթական ծրագրերի բարեփոխումները և զարգացումները.

Ամբիոնների կողմից կատարվել է գործող մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկում, մասնակցային աշխատանքներ են տարվել 2024-2025 ուստարվա ուսումնական պլանների կազմման ուղղությամբ: ՄԿԾ-ների լիարժեք իրականացման համար կարևորվել է նաև պրակտիկաների կազմակերպումը և պատշաճ անցկացումը: Ուսումնական, արտադրական, նախաավարտական պրակտիկաները կազմակերպվել են համապատասխան ոլորտների լավագույն կազմակերպություններում, ուսանողների մոտ ձևավորվել են գործնական հմտություններ, պրակտիկան հաջողությամբ անցած ուսանողներն անցել են աշխատանքի:

IV. Որակի ապահովման գործընթացը.

Որակի ապահովման գործընթացը մշտապես եղել և մնում է ֆակուլտետի գործունեության ուշադրության կենտրոնում: Ուսուցման և ուսումնառության բարձր որակի ապահովումը, դասավանդման և ուսումնառության մեթոդների բազմազանեցումը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը, գիտության նորարարական նվաճումներին ուսանողներին հաղորդակից դարձնելը նպաստում է որակի կայուն

բարձրացմանը: Այս գործընթացի իրական պատկերն արտացոլվում է ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից իրականացվող ուսանողական հարցումների արդյունքում:

Ուսումնառության որակի բարձրացման ուղղությամբ տարվել են համապատասխան աշխատանքներ: Ավելացվել է համակարգչային մասնագիտական լսարանների, համակարգիչներով համալրված լսարանները քանակը, մշտապես կատարվում է համակարգչային և հաշվապահական ծրագրերի թարմացում, համալրվել է գրադարանային ֆոնդը՝ 51 անուն (62 կտոր) գրականությամբ, էլեկտրոնային գրադարանային ֆոնդը համալրվել է 150 անուն մասնագիտական գրականությամբ:

Որակի ապահովման կարևոր ցուցանիշ է ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական գործունեությունը: Այսպես, տարբեր գիտաժողովներին մասնակցությունը, մասնագիտական գործուղումները, վերապատրաստումները ևս փաստում են որակի բարձրացման մասին:

2023-2024 ուստարվա ընթացքում բնագիտական և տնտեսագիտական ֆակուլտետների, երկրորդ կիսամյակից արդեն բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի համապատասխան ամբիոնների դասախոսների կողմից ընդհանուր տպագրվել են 35 գիտական հոդվածներ, ուսումնամեթոդական, ուսումնական 3 ձեռնարկներ, 1 մենագրություն:

Ընթացքի մեջ է պետական բյուջեի թեմատիկ ֆինանսավորմամբ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հետ համատեղ իրականացվող «Գյուղատնտեսական հողատեսքերի կադաստրային կարգերի վերագնահատման մեթոդիկայի մշակումը և հողային ռենտայի հաշվումը» գիտական թեմայի շրջանակում կատարվող աշխատանքները, որի արդյունքներով տպագրվել են 5 գիտական հոդվածներ: Դրանցից երկուսը հրատարակվել են ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուներում:

Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետն ակտիվ մասնակցություն է ունեցել ԳՊՀ ամենամյա՝ 27-րդ գիտաժողովին: Գիտաժողովին ներկայացվել են 11 հոդվածներ տնտեսագիտության ոլորտում, որոնցից 2-ը՝ ուսանողների հետ համատեղ կատարված աշխատանքներ, 10-ը՝ բնական գիտությունների գծով, որոնցից մեկը՝ ուսանողի հետ համատեղությամբ:

V. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2023-2024 ուսումնական տարում Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետում ամփոփիչ ատեստավորմանն ընդհանուր առմամբ թույլատրվել են մասնակցելու 82 ուսանողներ առկա և հեռակա բաժինների բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններով: Արդյունքում բոլոր ուսանողներն ստացել են դրական գնահատականներ և ապահովել 100% առաջադիմություն:

Այսպիսով.

- Համակարգչային ճարտարագիտություն մասնագիտության բակալավրիատի առկա բաժնի 7 շրջանավարտներից գերազանց գնահատականով ավարտել են 4-ը, լավ՝ 2-ը, բավարար՝ 1-ը: Գերազանցության դիպլոմի արժանացել են 3 շրջանավարտներ: Հեռակա բաժնի 3 շրջանավարտներից 1-ը ստացել է լավ, 2-ը՝ բավարար գնահատական: Մագիստրատուրայի երկու շրջանավարտները թեզերի պաշտպանության արդյունքում ստացած գերազանց գնահատականներով արժանացել են գերազանցության դիպլոմի:

- Սերվիս մանսագիտության բակալավրիատի առկա բաժնի 6 շրջանավարտներից գերազանց գնահատականով բուհն ավարտել են 6-ը: Գերազանցության դիպլոմի է արժանացել 4 շրջանավարտ: Հեռակա բաժնի 2 շրջանավարտներից 1-ը ստացել է լավ, 1-ը՝ բավարար գնահատական:
- Դեղագործական քիմիա մասնագիտության բակալավրիատի առկա բաժնի 4 շրջանավարտներից գերազանց գնահատականով ավարտել է 3-ը: Գերազանցության դիպլոմի է արժանացել 3 շրջանավարտ:
- Կենսաբանություն մասնագիտության բակալավրիատի հեռակա բաժնի 5 շրջանավարտներից գերազանց գնահատականով ավարտել է 2-ը, լավ՝ 1-ը, բավարար՝ 2-ը: Գերազանցության դիպլոմի է արժանացել 3 շրջանավարտ: Մագիստրատուրայի 3 շրջանավարտներից 2-ն ստացել է գերազանց, 1-ը՝ բավարար գնահատական: Գերազանցության դիպլոմի է արժանացել 2 շրջանավարտ:
- Քարտեզագրություն և կադաստրային գործ մասնագիտության բակալավրիատի հեռակա բաժնի 3 շրջանավարտներից լավ գնահատականով բուհն ավարտել է 2-ը, բավարար՝ 1-ը:
- Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/ մասնագիտության բակալավրիատի առկա բաժնի 3 շրջանավարտներից գերազանց գնահատականով ավարտել են 2-ը, լավ՝ 1-ը: Գերազանցության դիպլոմի արժանացել են 2 շրջանավարտներ: Հեռակա բաժնի 16 շրջանավարտներից 8-ը ստացել է գերազանց, 3-ը՝ լավ, 5-ը՝ բավարար գնահատական: Գերազանցության դիպլոմի արժանացել են 3 շրջանավարտներ: Մագիստրատուրայի 4 շրջանավարտները թեզերի պաշտպանության արդյունքում ստացած գերազանց գնահատականներով արժանացել են գերազանցության դիպլոմի:
- Ֆինանսներ /ըստ ոլորտի/ մասնագիտության բակալավրիատի առկա բաժնի 11 շրջանավարտներից գերազանց գնահատականով ավարտել են 10-ը, լավ՝ 1-ը: Գերազանցության դիպլոմի արժանացել են 10 շրջանավարտներ:
- Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ մասնագիտության մագիստրատուրայի 5 շրջանավարտները թեզերի պաշտպանության արդյունքում ստացած գերազանց գնահատականներով արժանացել են գերազանցության դիպլոմի:
- Տնտեսագիտություն մասնագիտության բակալավրիատի առկա բաժնի 5 շրջանավարտներից գերազանց գնահատականով ավարտել է 4-ը, լավ՝ 1-ը: Գերազանցության դիպլոմի է արժանացել 3 շրջանավարտ: Մագիստրատուրայի 2 շրջանավարտներն ստացել են գերազանց գնահատականներ և արժանացել արժանացել գերազանցության դիպլոմի:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահները ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման, պաշտպանության վերաբերյալ հայտնել են դրական կարծիքներ:

Բոլոր հանձնաժողովների նախագահների կողմից առաջարկվել է մեծ ուշադրություն դարձնել թեմաների արդիականությանը, աշխատանքներում մեծացնել շրջանավարտի ինքնուրույն աշխատանքի, վերլուծական մտքի բաղադրիչը, օգտագործել վերջին տարիներին հրատարակված հայալեզու և օտարալեզու մասնագիտական գրականություն:

VI. Միջոցառումներ

- 2024թ. ապրիլի 6-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների հետ համագործակցության ծրագրի շրջանակներում ԳՊՀ բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի դեկան Մարտին Ավագյանը, որակի ապահովման բաժնի վարիչ Քանաքարա Հայրապետյանը, ակադեմիական քաղաքականության բաժնի վարիչ Օլգա Ղազարյանը, արտաքին կապերի և լրատվության բաժնի մասնագետ Նունե Միրիբյանը, ուսանողներ այցելեցին Սարուխանի թիվ 1, թիվ 2, թիվ 3, Գանձակի թիվ 1, թիվ 2, Հայրավանքի և Ծովազարդի միջնակարգ դպրոցներ:
- Ապրիլի 27-ին ֆակուլտետը հյուրընկալեց Գավառի թիվ 8 միջնակարգ դպրոցի յոթերորդ դասարանի աշակերտները՝ կենսաբանության ուսուցչուհի Սուսաննա Ավագյանի և դասղեկ Լուսինե Չիբուխչյանի ղեկավարությամբ:
- Մայիսի 18-ին ֆակուլտետի երկու ուսանողներ մասնակցեցին Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարանի կազմակերպած «Ուսանողական գարուն-2024» ամենամյա մրցույթ-փառատոնին:

VII. Համագործակցային կապերը և դրանց ակտիվացումը

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետն ակտիվ է եղել արտաքին համագործակցության ոլորտում: Տարբեր միջոցառումների միջոցով առավել ամրապնդվել է կապը Գավառի տարածաշրջանի հանրակրթական դպրոցների հետ, իրականացվել են դիմորդների մասնագիտական կողմնորոշմանը նվիրված հանդիպումներ և՛ դպրոցներում, և՛ բուհում: Ճանաչողական այցերի, էքսկուրսիաների, մասնագիտական դասերի, ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաների շրջանակներում ակտիվացել է համագործակցությունը տարբեր կազմակերպությունների հետ:

Ակտիվ է նաև միջազգային համագործակցությունը: Եվրոպական միության «Էրազմուս+» ակադեմիական շարժունության շրջանակներում ուսումը եվրոպական գործընկեր բուհերում շարունակել է երկու ուսանող, դասախոսական աշխատանք է կատարել երկու դասախոս, վերապատրաստվել է 1 դասախոս, 4 դասախոս մասնակցել է տարբեր աշխատաժողովների:

Այսպես՝

- ✓ «Տնտեսագիտություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Արմինե Սաֆոյանը երկրորդ կիսամյակն ուսումնառել է Իսպանիայի Թագավորության Ալմերիայի համալսարանում,
- ✓ «Տնտեսագիտություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող Արծրուն Նաջարյանը երկրորդ կիսամյակն ուսումնառել է Պորտուգալիայի Հանրապետության Ավեիրոյի համալսարանում:
- ✓ Կառավարման և ֆինանսների ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Մարե Խաչատրյանը 2024թ. փետրվարի 18-ից 29-ը՝ ներառյալ դասախոսական աշխատանք է կատարել Պորտուգալիայի Հանրապետության Էվորայի համալսարանում:
- ✓ Հաշվապահական հաշվառման ամբիոնի դասախոս Հասմիկ Մարգարյանը 2024թ. ապրիլի 8-ից 12-ը՝ ներառյալ դասախոսական աշխատանք է կատարել Պորտուգալիայի Հանրապետության Էվորայի համալսարանում:

- ✓ Ռումինիայի Հանրապետության Տիմիշոարայի համալսարան 2024թ. մայիսի 13-17-ը ԵՄ «Էրազմուս+» շարժունության ծրագրի շրջանակներում վերապատրաստում է անցել ֆակուլտետի դեկան, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Մարտին Ավագյանը:
- ✓ Եվրոպական Միության «Էրազմուս+ KPI4HE. Հայաստանում ներառական, թվային ու կանաչ ուղղվածությամբ բարձրագույն կրթության պատշաճ կառավարման և որակի համար գործունեության առանցքային ցուցանիշների ազգային շրջանակի (ԳԱՑԱՇ) ստեղծում» ծրագրի մեկնարկային հանդիպմանը մասնակցեցին ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Վարազդատ Ավետիսյանը, բուհի այլ աշխատակիցներ:
- ✓ Լեհաստանի Հանրապետության Յագելոնյան համալսարանում կայացած ԵՄ «Erasmus+T-Green Հետբակալավրիական կրթության փոխակերպումը հանուն կանաչ և կայուն ապագայի» ծրագրի շրջանակներում աշխատաժողովին մասնակցել են ԳՊՀ պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը, Հաշվապահական հաշվառման ամբիոնի վարիչ Հակոբ Ղուլոյանը, Կառավարման և ֆինանսների ամբիոնի դասախոս Գուրգեն Մուրադյանը, ԱԼԲ վարիչ Լիլիթ Թոռչյանը:
- ✓ Նույն ծրագրի շրջանակներում 2024 թվականի հուլիսի 11, Երևանի Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում կայացած «Կրթության փոխակերպումը հանուն կանաչ և կայուն ապագայի» աշխատաժողովին մասնակցել է ԳՊՀ պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը:

ՔՆՆԱՀՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՀՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան-ցիկների թիվը	Առաջադիմու-թյան %-ը
Բակալավրիատ առկա				
Համակարգչային ճարտարագիտություն				
1-ին	1	-	1	100
2-րդ	6	-	1	66,7
3-րդ	4	-	1	50
Դեղագործական քիմիա				
3-րդ	3	-	1	66,7
Սերվիս				
1-ին	5	-	-	80
2-րդ	5		3	100
Ֆինանսներ /ըստ ոլորտի/				
1-ին	6	-	1	100
2-րդ	6	-	1	100
3-րդ	14	-	6	71,4
Հաշվ. հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/				
1-ին	1	-	-	100

2-րդ	4	-	-	100
3-րդ	3	-	2	66,7
Տնտեսագիտություն				
1-ին	7	-	-	100
2-րդ	6	-	4	100
3-րդ	4	-	4	100
Ընդամենը	**75**	**-**	**25**	**82,67**
Մագիստրատուրա				
Համակարգչային ճարտարագիտություն				
1-ին	2	-	-	0
Ֆինանսներ, դրամաշրջ. և վարկ				
1-ին	3	-	1	100
Հաշվ. հաշվառում /ըստ ճյուղերի/				
1-ին	2	-	-	0
Տնտեսագիտություն				
1-ին	2	-	1	50
Ընդամենը	**9**	**-**	**2**	**44,4**

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԱՄԲԻՈՆ

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Ավագյան Մարտին Պատվականի –** գյուղ. գիտ. դոկտոր, ԳՊՀ պրոֆեսոր
2. **Առաքելյան Լյուդմիլա Նիկոլայի -** կենս. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
3. **Սարգսյան Վահան Արշավանի –** ԳՊՀ դոցենտ
4. **Հասասյան Գագիկ Գուրգենի –** դասախոս
5. **Մկրտչյան Լալա Արշալույսի -** դասախոս
6. **Հովհաննիսյան Մարինե Հրահատի -** դասախոս

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Ավագյան Արամայիս Ռուստամի –** աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. **Թադևոսյան Արտաշես Վահանի –** տեխ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր
3. **Մխիթարյան Ազնիվ Կառլենի –** տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. **Սիմոնյան Ռուզան Մաքսիմի –** կենս. գիտ. թեկնածու, ԳՊՀ դոցենտ
5. **Ավետիսյան Կարինե Սամվելի –** քիմ. գիտ. թեկնածու, դոցենտ
6. **Այվազյան Գրիգորի Բաղդասարի -** քիմ. գիտ. թեկնածու, դոցենտ
7. **Մուրադյան Էդիկ Կամսարի –** տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ
8. **Խաչիկյան Թերմինե Գագիկի -** կենս. գիտ. թեկնածու
9. **Խուդավերդյան Նանե Արմենի -** տեխ. գիտ. թեկնածու
10. **Էֆենդյան Պարույր Սերգեյի** տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

11. Գալոյան Ռուսլան Պապինի – դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հողային ռեսուրսների մելիորատիվ վիճակի բարելավման հիմնախնդիրներ
2. ՀՀ Գեղարքունիքի մարզում տուրիզմի զարգացման հնարավորությունները և հեռանկարները
3. Ջրակենսաբանական հետազոտությունների, ֆիտոպլանկտոնի քանակական և որակական ցուցանիշների հետազոտություն
4. Բարդ օրգանական նյութերի սինթեզը և կիրառումը դեղաբանության մեջ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկներ	Գյուտերի հայտ, արտոնագիր	Հոդված	Ձեկուցումների թեզիսներ
-	-	-	1	16	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Էֆենդյան Պ. Ս., Ավագյան Մ. Պ., Հովհաննիսյան Տ. Ա.**, Գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փաստացի օգտագործման մոնիթորինգի և հողային ռեսուրսների հաշվառման առկա խնդիրները Արարատի մարզում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 16, 2024, էջ 44-53:
2. **Սիմոնյան Լ. Ա., Սիմոնյան Ա. Ա., Հովհաննիսյան Մ. Հ.**, Մոդելավորված էպիլեպսիանման նոպաներով հյուսվածքներում էներգետիկ նյութափոխանակության ռեակցիաների ֆունկցիոնալության վերլուծություն // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 16, 2024, էջ 54-64:
3. **Էֆենդյան Պ. Ս., Խուդավերդյան Ն. Ա., Մկրտչյան Մ. Շ., Հովհաննիսյան Տ. Ա.,** Հայաստանում գյուղատնտեսական հողատեսքերի կադաստրային գնահատման, փոփոխության և հողագնահատման խմբերի սահմանման գործող մեթոդաբանության վերլուծություն // Ագրոգիտություն և տեխնոլոգիա, ՀԱԱՀ, 1(85), 2024, էջ 21-27:
4. **Эфендян П. С., Кузнецова О. В., Радов С. Г.**, Оптимизация проектного профиля линейныхсооружений // Proceedings of YSU, Series Geology and Geography, (58)1, 2024, էջ 41-46:
5. **Efendyan P. S., Khudaverdyan N. A., Mkrtchyan M. Sh.**, Analysis of the Current Procedures for Cadastral Assessment of Agricultural Lands in Armenia // Agriscience and technology, ANAU, 4(84), 2023, էջ 321-326:
6. **Efendyan P. S., Khudaverdyan N. A., Hovhannisyan T. A.**, The Necessity to Calculate the Impact of Climate Risks on Determining the Cadastral Assessment of Agricultural Lands // Agriscience and technology, 2(86), ANAU, 2024, էջ 111-115:

7. **Efendyan P. S., Khudaverdyan N. A., Maralyan L. Yu.**, Land Law, Land Relations and Issues of Land Survey in Historical Armenia by Works of S. Bahatreants and H. Musaelyan // Proceedings of YSU, Series Geology and Geography, (58)2, 2024, էջ 74-82:
8. **Feschyan S. M., Simonyan R. M., Simonyan G. M., Simonyan M. A., Manukyan A.L.**, NADPH containing superoxide-producing thermostable complex from raspberry, apricot, grape, and grape seeds: isolation, purification and properties // «Plant Methods» 19:1, p. 1-10, 2023, https://doi.org/10.1186/s13007-022-00978-9 internet https://plantmethods.biomedcentral.com/articles/10.1186/s13007-022-00978-9
9. **Darbinyan L. V., Simonyan K. V., Hambardzumyan L. E., Simonyan M. A., Simonyan R. M., Manukyan L. P.,** Membrane-stabilizing and protective effects of curcumin in a rotenone-induced rat model of Parkinson disease // «Metabolic Brain Disease» 38, p. 2457–2464, 2023, https://doi.org/10.1007/s11011-023-01237-z
10. **Danielyan M., Nebogova K., Simonyan R., Hovsepyan A., Avetisyan Z., Simonyan K., Simonyan G., Khachatryan V., Karapetyan K.** Regulatory effect of bacterial melanin on the isoforms of new superoxide-producing associates from rat tissues in rotenone-induced Parkinson's disease // Neuroscience, 2023, 24(1), 1-8 https://doi.org/10.1186/s12868-023-00838-9
11. **Simonyan R., Babayan M., Yekmalyan H., Alexanyan A., Simonyan G., Alexanyan S., Darbinyan L., Simonyan K., Simonyan M.**, Isolation and purification of superoxide-producing protein complex from Helianthus tuberosus, Daucus sativus, and Solanum tuberosum // Pharmacophore, 14(5), pages: 107-111, 2023, https://doi.org/10.51847/XdwSHDmxQr
12. **Simonyan R. M., Chichoyan N. B., Manukyan A. L., Feschyan S. M., Simonyan G. M., Babayan M. A., Yekmalyan H. H., Aleksanyan A. S., Aleksanyan S. S., Simonyan M. A.,** Superoxide-producing thermostable associate from flaxseeds, flaxseed cake and sunflower seeds: isolation, purification, properties and mechanism of superoxide production // Ученые записки ШГУ, N 2, Выпуск А, стр. 69-79:
13. **Simonyan R. M., Feschyan S. M., Madoyan R. A., Simonyan G. M., Sargsyan H. H., Babayan M. A., Yekmalyan H. H., Melkonyan M. M., Simonyan M. A., Manukyan A. L.**, Superoxide-producing associates from gastrointestinal bacteria: stimulation of its growth by exogenous superoxide-producing complex from raspberries. Free Radical Research. 2024 Mar 1:1-14, DOI: 10.1080/10715762.2024.2325940
14. **Գևորգյան Գ., Հովսեփյան Ա., Խաչիկյան Թ.**, Ցիանոբակտերիաներ: Լճերի ծաղկման որոշ գործոններ // Գիտության աշխարհում հանդես, Երևան 2023 (4), 50-56 էջ:
15. **Hayrapetyan A., Gevorgyan G., Schultze M., Shikhani M., Khachikyan T., Krylov A., Rinke K.** Contemporary community composition, spatial distribution patterns, and biodiversity characteristics of zooplankton in the large alpine Lake Sevan // Armenia, Limnology 81 (s1), 2150:
16. **Թադևոսյան Ա.** Ձկնարդյունաբերության աղտոտված ջրերի մաքրման եղանակ // Արտոնագիր № 901 Y, գյուտի կարճաժամկետ արտոնագիր, գրանցված է պետական գրանցամատյանում 01.07.2024թ.:

17. **Паронян З. Х., Степанян А. А., Аракелян Л. Н., Григорян Л. С., Сеферян Т. Е.** Действие нового антидиабетического аминокислотного комплекса на плазменный гемостаз // Актуальные проблемы медико-биологических дисциплин, физкультуры и спорта: сборник материалов III Международной научно-практической конференции, 21–22 марта 2024 г. – Коломна: ГОУ ВО МО «ГСГУ», 2024. – 160 с.

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ Ավետիսյան Վարազդատ Կորյունի,
տեխնիկական գիտությունների թեկնածու

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Շեկյան Արտյոմ Լավրենտիի -** ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. **Հակոբյան Մամիկոն Զալիբեկի**- տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
3. **Խուրշուդյան Արմեն Կորյունի** – տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. **Հովհաննիսյան Անդրանիկ Պարույրի**- տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
5. **Միրիբյան Արթուր Աշոտի** – դասախոս

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Կուտուզյան Նելլի Ալբերտի-** ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. **Դարբինյան Ալբերտ Սարգսի** - դասախոս, ԳՊՀ պրոֆեսոր
3. **Հովհաննիսյան Մարգար Արտավազդի –** դասախոս
4. **Գասպարյան Շահեն Հրաչիկի** – դասախոս
5. **Բալագոզյան Արմինե Հովիկի** - դասախոս
6. **Սարոյան Սվետլանա Գեղամի** - դասախոս
7. **Մաստոյան Կարեն Արթուրի** - դասախոս
8. **Նավոյան Ռուստամ Լևիկի** - դասախոս
9. **Սարգսյան Երեմ Նորայրի** - դասախոս
10. **Մարտիրոսյան Արմեն Էդիկի** - դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Արհեստական բանականության համակարգեր և նեյրոնային ցանցեր,
2. Ծրագրային ապահովման մշակում,
3. WEB-տեխնոլոգիաներ,
4. Էլեկտրոնային ուսուցում,առցանց կրթական տեխնոլոգիաներ,
5. Համակարգչային թեստավորում, գիտելիքների ստուգում և գնահատում:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկներ	Գյուտերի հայտ, արտոնագիր	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	3	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Կուտուզյան Ն. Ա., Ավետիսյան Ա. Խ**., Հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում մաթեմատիկայի տեքստային խնդիրների լուծման գործընթացում կիրառվող աշխատանքի ձևերը // Գիտական տեղեկագիր Հայաստանի Հանրապետության Կրթության, Գիտության, Մշակույթի և Սպորտի նախարարություն, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան, 2024, No 1, էջ 357:
2. **Մաստոյան Կ.**, Թվային պատկերների համեմատական վերլուծություն իրականացնող համակարգի մշակում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 16, 2024, էջ 75-86:
3. **Շեկյան Ա. Լ.**, Առաձգական անշարժ կիսատարածության և պտտվող կոշտ գլանի կոնտակտային փոխազդեցության խնդրի մասին // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 16, 2024, էջ 97-105:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ Ամիրխանյան Սամվել Գրիգորի
տնտեսագիտության թեկնածու,
դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Սուքիասյան Սերգեյ Սպարտակի** - տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
2. **Հերգնյան Մարիամ Նորիկի -** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
3. **Խաչատրյան Գայանե Արտիկի -** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
4. **Հարությունյան Հարություն Սարգսի -** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
5. **Մուրադյան Գուրգեն Գևորգի -** ասիստենտ
6. **Բագոյան Սոնա Սահակի -** ասիստենտ
7. **Հովեյան Աստղիկ Գագիկի -** դասախոս
8. **Սինանյան Արեգ Սամվելի**– դասախոս
9. **Քալոյան Մանվել Խաչիկի** - դասախոս
10. **Բաղինյան Արա Պավելի** – դասախոս
11. **Ավետիսյան Աստղիկ Սիմոնի –** դասախոս
12. **Թորոսյան Դավիթ Լևոնի** – դասախոս

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Սահակյան Արմեն Կոլյայի** - տնտեսագիտության թեկնածու, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
2. **Նալչաջյան Վահրամ Թորգոմի -** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
3. **Բաղդասարյան Արեգ Մերուժանի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
4. **Խաչատրյան Մարե Վահանի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
5. **Մարտիրոսյան Արտակ Արտուշի** - տնտեսագիտության թեկնածու
6. **Ղազարյան Արմեն Յուրիկի** – տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
7. **Ղազարյան Ռոմիկ Արմենի** – դասախոս
8. **Մատինյան Աննա Սանասարի**– դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հարկաբյուջետային քաղաքականության բարելավման հնարավորությունները ՀՀ-ում,
2. ՀՀ խոշորացված համայնքների համաչափ զարգացման ապահովման հիմնահարցերը,
3. ՀՀ Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկներ	Գյուտերի հայտ, արտոնագիր	Հոդված	Ձեկուցումների թեզիսներ
-	3	1	-	11	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Ամիրխանյան Ս. Գ., Մուրադյան Ն. Վ.,** Թվային մարքեթինգը որպես բիզնեսի զարգացմանը և առաջընթացին նպաստող գործիք // Գավառի պետական համալսարան, գիտական հոդվածների ժողովածու, N 14, 2023թ., էջ 144-159:
2. **Ամիրխանյան Ս. Գ., Սարգսյան Ա.** Ֆինանսական ապահովվածության հիմնահարցերը և ֆինանսական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման ուղիները Գավառ համայնքում՝ համայնքների խոշորացման համատեքստում // Գավառի պետական համալսարան, գիտական հոդվածների ժողովածու, N 16, 2024թ., էջ 150-162:
3. **Խաչատրյան Մ. Վ.,** Ներքին վերահսկողության առկա հիմնախնդիրները ՀՀ առևտրային կազմակերպություններում և դրանց լուծման ուղիները միջազգային փորձի համատեքստում // Գավառի պետական համալսարան, գիտական հոդվածների ժողովածու N 16, 2024թ., էջ 198-217:

4. **Սինանյան Ա. Ս.,** Զբոսաշրջային գրասենյակի գործունեությունը և ֆինանսների կառավարման կառուցակարգերը՝ կախված սեզոնայնությունից // Գավառի պետական համալսարան, գիտական հոդվածների ժողովածու, N 14, 2023թ., էջ 183-194:
5. **Թորոսյան Դ. Լ.,** Զբոսաշրջիկներից ստացված առաջարկությունների և կատարված դիտարկումների հիման վրա բարեփոխումների առաջարկի ներկայացում // Գավառի պետական համալսարան, գիտական հոդվածների ժողովածու, N 14, 2023թ., էջ 194-203:
6. **Саакян А.К., Салгириев Р.Р., Исламова Л.М., Гареев Э.С., Бойко С.В., Покровская Н.Н., Бахшян А.Ж., Амтрханян С.Г., Багданова Э. К., Петросян Е.А., Саакян И. А.,** Социология Туризма // Учебное пособие, Ереван, 2023, 148 с.:
7. **Авакян А. Р., Акобян Г. Г., Акобян Р. Х., Акопян А. Р., Акопян Е. А., Амбарцумов А., Амирханян С. Г., Антонян К. К., Асатрян А. Г., Багандова Э. К., Бабаян К. Т., Ванян С. Г., Гладко М. А. , Ильичева И. Л., Исмаилова Л. М., Июхова А. М., Магомедов М. И., Магомедов Д. М., Метлушко И. В., Минаков И. П., Романовская Е. А., Сивинцева О. В., Свистун Т. И., Саакян А. К., Триль Ю. Н., Шуваева Е. А.,** Человек. Социум. Искусство // Научная монография, результат итоговой работы этнокультурных исследований, проведенных в Ереване, Грозном, Минске. РПК «СПЕКТР» (ИП Иноркаев Ваха Абу-Рашидович), г. Грозный, 2024. 131 с.
8. **Саакян А. К., Бадалян Д. Г.,** Некоторые социокультурные вопросы к процессу цифровизации // 7-ая международная научно-практическая конференция «Государство будущего: актуальные проблемы социально-экономического и политико-правового развития», Уфимский госуниверситет, г. Уфа, 25 апреля, 2024, с. 376-393:
9. **Саакян А. К.,** Управление хозяйственной деятельностью на принципах этатизма // 3-яя международная научно-практическая конференция «Экономико-политические стратегии стабилизации Кавказа», приуроченный к 250-летии присоединения Осетии к России, г. Владикавказ, 17 апреля, 2024, 10 с.:
10. **Саакян А. К.,** Трансформация коммуникативного пространства музея в информационную эпоху // Монография «Человек и его мир», г. Минск, 2024 года, 143 стр.:
11. **Саакян А. К., Амирханян С. Г., Ильичева И. Л.,** Город как этнокультурный ландшафт // Монография «Человек. Социум. Искусство.», г. Грозный, ГГНТУ им. Академика М. Д. Миллионщикова, 2024 год, 142 стр.:
12. **Саакян А. К.,** Цвет и свет в творчестве художника Мартироса Сарьяна // Международная научная конференция «Культурные традиции и

художественное образование. Выпуск 3», Адыгейский государственный университет, г. Майкоп, 26-29 сентября, 2024, с. 43-51:

13. **Саакян А. К.,** Geopolitical Discourse from Armenia in the Context of Arts: Sociological Analyses // Международная научная конференция «Новый мировой порядок: in statu nascendi», г. Олштин, 11-12.06.2024, 5 с. (տպագրության մեջ է):
14. **Саакян А. К.,** Архитектурное пространство как социокультурный феномен // 3-яя международная научно-практическая конференция «Современные строительные материалы, технологии и конструкции», г. Грозный, 9-11 октября, 2024 г. на базе ГГНТУ им академика М. Д. Миллионщикова, 12 с., (ներկայացված է տպագրության «Scopus» գիտական շտեմարանում):
15. **Саакян А. К.,** Карьера и образование будущего в контексте семейных ценностей // 5-ая международная научно-практическая конференция «Образование будущего», г. Грозный, 27-29 сентября, ГГНТУ, 9 с. (տպագրության մեջ է):

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ Ղուլոյան Հակոբ Մելսիկի
տնտեսագիտության թեկնածու,
դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Մարգարյան Հասմիկ Անդրանիկի -** ասիստենտ
2. **Հակոբյան Անահիտ Ալեքսանի -** դասախոս
3. **Ղաջոյան Կարինե Համլետի –** դասախոս

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Հակոբյան Արմեն Աշմատի-** տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
2. **Այրումյան Իրինա Գագիկի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
3. **Առաքելյան Վալերի Հովհաննեսի -** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
4. **Մամիկոնյան Կարեն Հովհաննեսի -** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
5. **Մարկոսյան Սևակ Մեսրոպի -** տնտեսագիտության թեկնածու

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Կազմակերպություններում հաշվապահական հաշվառման, հարկային հաշվառման և աուդիտի կազմակերպման և մեթոդոլոգիայի կատարելագործման հիմնահարցերը:

2. Ձեռնարկությունների (կազմակերպությունների) տնտեսական գործունեության տնտեսագիտական վերլուծության և ֆինանսական պլանավորման մեթոդիկաների մշակման և կատարելագործման հիմնախնդիրները:
3. Ձեռնարկությունների (կազմակերպությունների) կառավարման մեջ հաշվապահական հաշվառման և վերլուծության մեթոդների, մեխանիզմների, գործիքների և տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործման խնդիրները և կատարելագործման հիմնական ուղղությունները:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկներ	Գյուտերի հայտ, արտոնագիր	Հոդված	Ձեկուցումների թեզիսներ
-	1	2	-	11	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Մամիկոնյան Կ. Հ.,** Դատական փորձագետի գիտական հետազոտական աշխատանք կատարելու փորձառության պահանջը հատուկ գիտելիքների կիրառման բնագավառում // «Դատական փորձաքննության և քրեագիտության հայկական հանդես» ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո», համար 9, 2023, էջ 39-45:
2. **Մամիկոնյան Կ., Գալստյան Է.,** Բիզնեսի հոգեբանություն. կամ՝ ձեռնարկատիրության վարման նոր կանոններ տնտեսական հանցագործությունների կանխարգելման համատեքստում // «Դատական փորձաքննության և քրեագիտության հայկական հանդես» ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո», համար 10, 2023, էջ 122-129:
3. **Մամիկոնյան Կ., Ստեփանյան Լ.,** Պետական մասնակցությամբ ընկերությունների գույքի ոչ արդյունավետ կառավարման հետևանքները // «Դատական փորձաքննության և քրեագիտության հայկական հանդես» ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո», համար 10, 2023, էջ 130-135:
4. **Մամիկոնյան Կ., Մելքոնյան Ա., Հարությունյան Ա.,** Հայաստանի Հանրապետություն ապրանքների ներմուծման դեպքում ԱԱՀ-ի հետաձգված հաշվառման մեխանիզմի կիրառման հիմնավորումը՝ (փորձագիտական կարծիք) // «Դատական փորձաքննության և քրեագիտության հայկական հանդես» ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո», համար 11, 2024, էջ 79-94:
5. **Մամիկոնյան Կ., Փիլոյան Ա.,** Համակարգչային ծրագրի՝ որպես ոչ նյութական ակտիվի արժեքի որոշման մեթոդաբանության հարցերը դատական ֆինանսատնտեսագիտական փորձաքննությունների շրջանակներում // «Դատական փորձաքննության և քրեագիտության հայկական հանդես» ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո», համար 11, 2024, էջ 95-104:
6. **Մամիկոնյան Կ.,** Ֆինանսատնտեսագիտական փորձաքննությունների շրջանակներում ապրանքային նշանի արժեքի որոշման մեթոդաբանության հարցերը

// «Դատական իշխանություն (ամսագիր)», Հոկտեմբեր-դեկտեմբեր 2024, 10-12, էջ 129-137:

7. **Առաքելյան Վ., Հայկազյան Է. Պետրոսյան Ա., Թերզյան Հ.,** COVID-19-ի տարածման բազմագործոն վերլուծություն // Գավառի պետական համալսարան, գիտական հոդվածների ժողովածու, N 16, 2024թ., էջ 198-217:
8. **Hakobyan A., Gasparyan V.,** Issues of management reporting on social responsibility of business; Economics, Finance and Accounting No. SI-1 /2023/:
9. **Hakobyan A., Hambardzumyan A.,** Macroeconomic and Bank-Level Factors Impact on NPL Ratio; Educational Administration: Theory and Practice; Vol. 29 No. 3 /2023/:
10. **Hakobyan A., Khachatryan Q.,** ISSUES OF REPORTING ORGANIZATIONS FINANCIAL RESULTS IN THE ESG FRAMEWWORK; Economics, Finance and Accounting No. 13 /2024/
11. **Мамиконян К.,** Проблемы правового регулирования бизнеса с позиции финансово-экономических исследований // Российский государственный университет правосудия Кафедра судебных экспертиз и криминалистики, сборник Круглого стола «Теория и практика судебной экспертизы ...», Москва, 2024, էջ 156-161:
12. **Ղուլոյան Հ., Առաքելյան Վ. և ուրիշներ,** Ներդրումների կազմակերպման հիմնախնդիրները նորամուծական գործունեության ոլորտում // Ուսումնական ձեռնարկ, հեղինակային հրատարակություն, Երևան, 2023թ., էջ 128:
13. **Մամիկոնյան Կ.,** Փորձագիտություն և ակտիվների գնահատում // Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երաշխավորվել է հրատարակության ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի Գիտական խորհրդի որոշմամբ (արձ. №53, 02.11.2023թ.): Հեղինակային հրատարակություն, 2023թ., 223 էջ:
14. **Առաքելյան Վ.,** Կազմակերպությունների մրցակցության և արտադրանքի մրցունակության հիմնախնդիրները արդյունաբերական կազմակերպություններում // Մենագրություն, հեղինակային հրատարակություն, Երևան, 2023թ., 260 էջ:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ Ասոյան Թաթուլ Արտիկի,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Դեկանի տեղակալ՝ Սարգսյան Ռուզաննա Մարատի

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ

Դասիչը	Մասնագիտությունը	Որակավորումը
011301.00.7 Ընդհանուր մանկավարժություն		
011301.00.6	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Մանկավարժության բակալավր
011301.01.7	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Մանկավարժության մագիստրոս
011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն		
011401.19.6	Հայոց լեզու և գրականություն	Մանկավարժության բակալավր
011401.20.6	Ռուսաց լեզու և գրականություն	Մանկավարժության բակալավր
011401.21.6	Անգլերեն լեզու և գրականություն	Մանկավարժության բակալավր
011401.00.7 Մասնագիտական մանկավարժություն		
011401.19.7	Հայոց լեզու և գրականություն	Մանկավարժության մագիստրոս
011401.20.7	Ռուսաց լեզու և գրականություն	Մանկավարժության մագիստրոս
011401.21.7	Անգլերեն լեզու և գրականություն	Մանկավարժության մագիստրոս
011401.18.7	Պատմություն	Մանկավարժության մագիստրոս
042101.00.6 Իրավագիտությ*ություն*		
042101.01.6	Իրավագիտություն	Իրավագիտության բակալավր
042101.00.7 Իրավագիտությ*ություն*		
042101.01.7	Իրավագիտություն	Իրավագիտության մագիստրոս

Սովորողների թիվը՝ 254
Շրջանավարտների թիվը՝ 84

ԳՊՀ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ 2024-2025 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում 2023-2024 ուստարում ուսումնական գործընթացն իրականացվել է ինչպես Գավառի պետական համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրի դրույթների, այնպես էլ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի տարեկան զարգացման հայեցակարգի համաձայն, որը կազմվել է՝ հաշվի առնելով ԳՊՀ ռազմավարական զարգացման ուղղություններն ըստ գործունեության գերակա ոլորտների, որոնք նախատեսված են բուհի զարգացման 2023-2027թթ. ինգամյա ռազմավարական ծրագրում: Հաշվի են առնվել նաև 2022-2023 ուստարվա կատարողականը և բացթողումները, ֆակուլտետի զարգացման հեռանկարները՝ գնահատելով աշխատաշուկայում և հումանիտար գիտությունների ոլորտում տեղի ունեցող փոփոխությունները: Պարբերաբար՝ ժամանակին համընթաց, վերանայվում և թարմացվում են ֆակուլտետի ոլորտային գործողությունները, իսկ դրանք ենթադրում են նոր մոտեցումներ, կառուցակարգեր, ուսումնական գործընթացի կազմակերպման նոր ձևեր՝ ժամանակին և հասարակական զարգացմանը համահունչ:

Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետը բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր է իրականացնում բանասիրության, լեզուների և մանկավարժության ուսուցման, իրավագիտության, պատմության ուղղություններով՝ հաշվի առնելով զարգացման առաջնահերթությունները, երիտասարդության սոցիալ-մշակութային դաստիարակության, նրանց՝ գիտահետազոտական աշխատանքներ կատարելու կարողությունների ձևավորման խնդիրներն ընդհանրապես:

Իր գործառույթներն իրականացնելու համար հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում ստեղծված են ուսանողակենտրոն, թափանցիկ, հակակոռուպցիոն կրթական միջավայր, նպատակաուղղված ուսուցման պայմաններ, որոնք ապահովելու համար համալսարանն ունի համապատասխան ռեսուրսներ, իրավական փաստաթղթեր, կառուցակարգեր և գործիքակազմեր: Ֆակուլտետում կարևորվում է կրթություն-դաստիարակություն-գիտահետազոտական աշխատանք եռամիասնությունը

Ներկայացնում ենք հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում 2023-2024 ուստարում իրականացված աշխատանքները և 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունները:

1.Կրթական և սոցիալ-մշակութային գործունեության ոլորտ

Ուսուցման արդյունավետության և կրթության որակի ապահովումը կապված է մասնագիտական կրթական ծրագրերի լրամշակման, առարկայական ծրագրերում փոփոխությունների, ուսումնական պլանների վերանայման և թարմացման իրականացման հետ՝ հաշվի առնելով գիտության նվաճումները, հենանշումների, որակի ապահովման բաժնի՝ արտաքին ու ներքին շահառուների շրջանում անցկացված հարցումների արդյունքները: Առարկայական ծրագրերում ապահովվել է դասախոսություն-սեմինար-գործնական աշխատանք համամասնությունն ըստ ժամաքանակների, պահպանվել է նաև ավարտական աշխատանքներն ու մագիստրոսական թեզերն ըստ տեսական և գործնական (ուսուցման,

մեթոդական) թեմաների բաժանումը: Վերջիններիս թեմատիկ բազմազանությունն ապահովելու և կատարման որակը բարձր պահելու նպատակով քննարկվել են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի դիտարկումները և առաջարկությունները, որոնք հաշվի են առնվել և դրվել գործողության մեջ: Այս առումով արժևորվել են նաև ուսանողների առաջարկություններն ու հետաքրքրությունները՝ պայմանավորված արդիականությամբ:

Որոշակի հաճախականությամբ անցկացվել են դասալսումներ՝ 16, բաց դասեր՝ 5, տարաբնույթ քննարկումներ, մեթոդական զեկուցումներ, որոնց արդյունքները վերլուծվել են ԳՊՀ որակի ապահովման բաժնի (ՈԱԲ) հետ համատեղ:

Վերլուծվել են ԳՊՀ ՈԱԲ հարցումների արդյունքները, դրանց հիման վրա արված առաջարկությունները ուսանողների կրթական կարիքների բացահայտման, ուսանողների՝ կրթական միջավայրից բավարարվածության, դասավանդողների և դասավանդման, արտաքին շահառուների կարծիքների մասին անցկացված հարցումների, դասալսումների վերաբերյալ: Հարցումների միջոցով բացահայտված թերությունների վերացման ուղղությամբ կատարվելիք աշխատանքները ներառվել են գործողությունների պլանում:

1.1.Ընդունելությունը և ուսանողների շարժը

Ուսանողների թիվը 2023-2024 ուստարվա դրությամբ /ներառյալ ավարտական կուրսերը/ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում կազմել է՝ առկա բաժնում՝ 152 ուսանող, հեռակա բաժնում՝ 186, ընդհանուր թիվը՝ 338 ուսանող:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետ ընդունվել է 59 ուսանող, որից՝ առկա բաժին՝ 51 (բակալավրիատ՝ 23, մագիստրատուրա՝ 28), հեռակա բաժին՝ 8 ուսանող:

	Ընդունելությունը	**Առկա**	**Հեռակա**	**Մագիստրատուրա**
1	Հայոց լեզու և գրականություն	2	-	2
2	Անգլերեն և գրականություն	7	-	3
3	Ռուսաց լեզու և գրականություն	1	1	-
4	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	2	-	7
5	Իրավագիտություն	8	5	12
6	Պատմություն	3	2	4
Ընդամենը		**23**	**8**	**28**

	Ուսանողների շարժը	
1	Տարկետում	4
2	Վերականգնում	16
3	Հեռացում	12
4	Ժամանակավոր կցագրումից հեռացվածներ	4
5	Ազատում	11
6	Ներբուհական տեղափոխություն	8
7	Արցախից տեղափոխված	19

1.2.Առաջադիմությունը

2023-2024 ուստարվա առաջին կիսամյակում, երբ դեռ չէր ձևավորվել միացյալ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետը, բանասիրական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետները գործում էին առանձին, ուստի հարկ ենք համարում նախ և առաջ ըստ այդ ֆակուլտետների անդրադառնալ ուսանողների ակադեմիական առաջադիմության ցուցանիշներին ձմեռային քննաշրջանում:

Բանասիրական ֆակուլտետ
Առաջին կիսամյակ

ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ	1-ԻՆ ԿՈՒՐՍ	2-ՐԴ ԿՈՒՐՍ	3-ՐԴ ԿՈՒՐՍ	4-ՐԴ ԿՈՒՐՍ
Հայոց լեզու և գրականություն	100	25,00	100	50,00
Անգլերեն լեզու և գրականություն	100	87,50	71,43	88,89
Ընդամենը ըստ կուրսերի	100	66,67	86,67	70,59

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ	1-ԻՆ ԿՈՒՐՍ	2-ՐԴ ԿՈՒՐՍ
Հայոց լեզու և գրականություն	100	100
Անգլերեն լեզու և գրականություն	100	-
Ընդամենը ըստ կուրսերի	100	100
Ընդամենը ըստ բակալավրիատի՝ 79,25 %		
Ընդամենը ըստ մագիստրատուրայի՝ 100%		
Ընդամենը ըստ ֆակուլտետի՝ 81,36 %		

Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ
Առաջին կիսամյակ

ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ	1-ԻՆ ԿՈՒՐՍ	2-ՐԴ ԿՈՒՐՍ	3-ՐԴ ԿՈՒՐՍ	4-ՐԴ ԿՈՒՐՍ
Իրավագիտություն	87,50	100	100	57,14
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	100	75,00	100	100
Պատմություն	100	100	100	-
Ընդամենը ըստ կուրսերի	92,31	93,75	100	80,00

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ	1-ԻՆ ԿՈՒՐՍ	2-ՐԴ ԿՈՒՐՍ
Իրավագիտություն	58,33	83,33
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	100	80,00
Պատմություն	100	100
Ընդամենը ըստ կուրսերի	76,19	84,62
Ընդամենը ըստ բակալավրիատի՝ 91,38 %		
Ընդամենը ըստ մագիստրատուրայի՝ 79,41%		
Ընդամենը ըստ ֆակուլտետի՝ 86,96 %		

Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ
Երկրորդ կիսամյակ

ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ	1-ԻՆ ԿՈՒՐՍ	2-ՐԴ ԿՈՒՐՍ	3-ՐԴ ԿՈՒՐՍ
Իրավագիտություն	87,50	100	83,33
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	100	66,67	100
Պատմություն	100	100	-
Հայոց լեզու և գրականություն	100	100	100
Անգլերեն լեզու և գրականություն	83,33	100	100
Ընդամենը ըստ կուրսերի	90,48	96,15	96,43

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ	1-ԻՆ ԿՈՒՐՍ
Իրավագիտություն	91,67
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	100
Պատմություն	100
Հայոց լեզու և գրականություն	100
Անգլերեն լեզու և գրականություն	100
Ընդամենը ըստ բակալավրիատի՝ 94,67 %	
Ընդամենը ըստ մագիստրատուրայի՝ 95,65%	
Ընդամենը ըստ ֆակուլտետի՝ 94,90 % /	

Ամփոփիչ ատեստավորում

Ամփոփիչ ատեստավորումը իրականացվել է՝ սահմանված կարգի համաձայն: 2023-2024 ուստարում ամփոփիչ ատեստավորումն անցկացվել է առկա ձևաչափով, հաստատված ժամանակացույցով: Սահմանված ժամկետներում ուսանողները ավարտին են հասցրել իրենց ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը, ներկայացրել են կիսամյակային հաշվետվությունները: Արդյունքները բավարար են, սակայն կարծում ենք, որ պետք է ավարտական աշխատանքներին և մագիստրոսական թեզերին ներկայացվող պահանջների մեջ լինենք հետևողական այն առումով, որ տարբերակենք ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաներն ըստ իրենց բարդության աստիճանի: Կամ վերլուծական-բովանդակային նույն մոտեցումները չկիրառենք ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նկատմամբ: Ակնհայտ է, որ մագիստրատուրա են գալիս հիմնականում ԳՊՀ լավագույն ուսանողները, և սովորելու, կարդացածը միանգամայն նոր հայացքով ընկալելու, հասկանալու նրանց մղումները տարբերվում են բակալավրիատում ներկայացվող պահանջներից: Հետևաբար մագիստրոսական թեզի իրականացման ընթացքը էականորեն պետք է տարբերվի բակալավրիատի ուսանողներին ներկայացվող պահանջներից: Այստեղ աշխատանքների իրականացման ընթացքը, դրանց ներկայացվող պահանջները անհամեմատ բարձր պետք է լինեն, քան բակալավրիատինը:

Հանձնաժողովների նախագահները իրենց կարծիքներն են արտահայտել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ընտրության, կատարման որակի, ներկայացման վերաբերյալ:

Հայոց լեզվի և գրականության (նախագահ՝ Լ. Սեյրանյան, անդամներ՝ Մ. Հալաջյան, Վ. Գրիգորյան), անգլերեն լեզվի և գրականության (նախագահ՝ Ս. Կարապետյան, անդամներ՝ Ա. Այունց, Ս. Մուրադյան), ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների անդամները բարձր են գնահատել ուսանողների մասնագիտական պատրաստվածության աստիճանը, աշխատանքների կատարման մակարդակը: Թեմաները արդիական էին և համահունչ մասնագիտական հիմնախնդիրներին, տպավորիչ է եղել հետազոտական բաղադրիչը: Առաջարկվել է իրականացնել համագործակցության ծրագրեր այլ բուհերի հետ, նախապես՝ մինչև ատեստավորումը, աշխատանքները տրամադրել հանձնաժողովների անդամներին՝ առավել հանգամանալից ծանոթանալու դրանց հետ:

Պետք է ասել, որ նման կարծիքներ արտահայտվել են նաև մյուս բաժինների ավարտական աշխատանքների վերաբերյալ: Բերենք մի քանի դիտարկումներ. տեսական բարձր պատրաստվածություն և վերլուծելու ու հիմնավորելու կարողություն (Տարրական մանկավարժություն և մեթոդիկա), մասնագիտական խորը գիտելիքներ, վերլուծական մտածողություն (Իրավագիտություն), գիտահետազոտական աշխատանք կատարելու ունակություն և բարեկիրթ պահվածք (Հայոց լեզու և գրականություն), բարձր որակի գիտելիքների ցուցաբերում, պատրաստվածություն, եռանդ և ոգևորվածություն (Անգլերեն լեզու և գրականություն): «Պատմություն» առարկայի ատեստավորման հանձնաժողովի նախագահը ընդհանուր կարծիք չի արտահայտել, կենտրոնացել է միայն մի աշխատանքի վրա՝ արտահայտելով իր նկատառումները:

Կան նաև դիտողություններ և առաջարկություններ: Օրինակ՝ թեմաներ առաջադրելիս կարևորել արդի գրականության հիմնախնդիրները (Հայոց լեզու և գրականություն), ուշադրություն դարձնել եզրակացությունների ներկայացման ձևին (Անգլերեն լեզու և գրականություն), ուշադրություն դարձնել մարդու իրավունքների, ՄԻԵԴ գործերի ուսումնասիրման հարցերին (Իրավագիտություն), ուշադրություն դարձնել հետազոտության նպատակի, խնդիրների, եզրակացությունների ձևակերպման հարցերին (Տարրական մանկավարժություն և մեթոդիկա): Գրեթե նույն կարծիքներն են արտահայտվել հեռակա բաժնի պարագայում, որոշ հավելումով՝ ընտրել առավել փոքր շրջանակ ընդգրկող թեմաներ, ուշադրություն դարձնել լեզվաոճական իրողություններին (Տարրական մանկավարժություն և մեթոդիկա):

Պետք է ասել, որ ատեստավորմանը պատրաստվելիս շատ կարևոր դեր են կատարում ճիշտ կազմակերպված նախապաշտպանություն(ներ)ը: Այս ուստարում դրանք համընկան պրոֆեսոր Է. Այվազյանի՝ գիտահետազոտական աշխատանքներ կատարելու հմտություններին նվիրված դասընթացին: Հասարակական գիտությունների ամբիոնը ուշադրության կենտրոնում է պահել նախապաշտպանությունների գործընթացը (ամբիոնի վարիչ՝ Հ. Ղաջոյան), որը ևս նպաստեց ատեստավորման դրական ընթացքին: Այնուամենայնիվ, ինչպես նշվեց վերը, դեռ անելիքներ կան:

Նշենք, որ ամփոփիչ ատեստավորման գործընթացը իրականացվել է հաստատված ժամանակացույցին համաձայն, արտակարգ դեպքեր տեղի չեն ունեցել, բողոքարկումներ չեն եղել:

2.Գիտահետազոտական և նորարական գործունեություն

Բարձրագույն ուսումնական հաստատություններում այս բաղադրիչը շատ կարևոր դեր է կատարում: Այս ուղղությամբ Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում որոշակի աշխատանքներ են տարվում: Մասնավորապես ամբիոններում որոշվել են գիտահետազոտական աշխատանքների ուղղությունները: Այս ուղղությամբ տարվող աշխատանքները որոշակի արդյունքներ են տվել: Մասնավորապես մշտապես հետևել ենք ամբիոններում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների ընթացքին, խրախուսվել են պրոֆեսորադասախոսական անձնակազմը և գիտահետազոտական աշխատանքների նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող ուսանողները՝ ծավալելու ակտիվ գիտահետազոտական գործունեություն, մասնակցելու հանրապետական և միջազգային գիտաժողովների, սեմինարների, բանավեճերի, քննարկումների, հրատարակելու գիտական, գիտահետազոտական, ուսումնամեթոդական աշխատանքներ:

Ֆակուլտետում կարևորվում են ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ գիտահետազոտական ծրագրերի իրականացման ուղղությամբ տարվող աշխատանքները: Առայժմ դրանք իրականացնել հաջողվել է Հայոց լեզվի և գրականության ամբիոնին: Ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Վ. Գրիգորյանի ղեկավարությամբ արդեն ավարտվել է «Եվրոպական էպիկական ավանդույթը և «Սասնա ծռեր» էպոսը» թեման, հրապարակվել է 1 մենագրություն, 1 գիտական հոդվածների ժողովածու և հոդվածներ տարբեր գիտական հանդեսներում, այդ թվում բարձր ցիտման պարբերականներում, իսկ այժմ ներկայացվել է նոր թեմա՝ «Պատերազմի և խաղաղության խոսույթը արևմտաեվրոպական և հայ գրականության մեջ»: Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Լ. Ղռեջյանը ընդգրկված է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի 21T-6B027 ծածկագրով «Շիրակի հայոց բանահյուսական մշակույթը» թեման իրականացնող խմբի կազմում, որի ներկայացուցիչներն են Շիրակի հայագիտական հետազոտությունների ինստիտուտի և ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատողները:

Մենք կարևորում ենք այն հանգամանքը, որ փոխվել են գիտական պարբերականներում հրատարակվելիք հոդվածներին ներկայացվող միջազգային չափանիշները, ուստի ամբիոններում աշխատանքներ են տարվում Scopus և Web of Science միջազգային գիտական շտեմարաններում հոդվածներ ներկայացնելու ուղղությամբ: Առայժմ ունենք այդպիսի 4 աշխատանք:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը ուստարվա ընթացքում իրականացրել է գիտական, գիտահետազոտական որոշակի աշխատանք՝ մասնակցելով տարբեր գիտաժողովների:

3.Կրթական միջավայրի արդիականացում, կրթական ծրագրեր

Ֆակուլտետում կրթական միջավայրի արդիականացումը պայմանավորված է համալսարանում առկա տեխնիկական-տեխնոլոգիական, ՏՀՏ միջոցների նպատակային օգտագործմամբ, ուսումնամեթոդական նյութերի համալրման և հարստացման գործընթացով: Վերանայվում և բարելավվում են բակալավրիատի 6 և մագիստրատուրայի 5 ծրագրերի մասնագրեր, որոնցում կրթական վերջնարդյունքները տարբերակված են ըստ

առանձին կառուցամասերի: Առարկայական ծրագրերում ներկայացված են ուսումնառության և գնահատման մեթոդները: Ըստ որակի ապահովման բաժնի կողմից իրականացված հարցումների վերլուծության՝ դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետությունից ուսանողների բավարարվածության աստիճանի աճ է նկատվել:

Կրթական ծրագրերի բարելավման նպատակով իրականացվում են հենանշումներ ուսումնական տարվա մեջ մեկ անգամ պարբերականությամբ: Բուհերի ընտրությունը կատարվում է՝ ըստ համադրելի կրթական ծրագրեր իրականացնելու հատկանիշի: Մասնավորապես՝

«Իրավագիտություն» ՄԿԾ - Երևանի պետական համալսարան, Մ. Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարան,

«Պատմություն» ՄԿԾ - Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» ՄԿԾ - Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,

«Անգլերեն լեզու և գրականություն», «Ռուսաց լեզու և գրականություն» - Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարան,

«Հայոց լեզու և գրականություն» ՄԿԾ - Երևանի պետական համալսարան, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Վանաձորի պետական համալսարան, Շիրակի պետական համալսարան:

Շատ կարևոր են ՄԿԾ-ներում, ուսումնական պլաններում իրականացվող փոփոխություններն ու շարունակական բարելավումները: Իրականացվում է ԳՊՀ «Learn.gsu» էլեկտրոնային հարթակում առարկայական ծրագրերի թարմացում: Բաց կամ թերի տիրույթները համալրվել և հարստացվել են նոր ուսումնական նյութերով: Առարկայական ծրագրերի թեմատիկ պլաններում արդեն ամրակայվել են դասախոսություն-սեմինար-գործնական աշխատանք եռաբաղադրիչների դասաժամերի տարբերակումները:

Հումանիտար մասնագիտությունների միացյալ ֆակուլտետի կազմավորումից հետո շատ փոփոխություններ կատարվեցին նաև ուսպլաններում, առարկայացանկերում, ժամաքանակներում: Դրան համապատասխան փոփոխություններ են կատարվել և կատարվում նաև առարկայական ծրագրերում (Հայոց լեզվի և գրականության ամբիոնում՝ 71, Օտար լեզվի և գրականության ամբիոնում՝ 57, Իրավագիտության ամբիոնում՝ 61, Հասարակական գիտությունների ամբիոնում՝ 49 առարկայական ծրագրերում):

Համապատասխանաբար էլեկտրոնային ուսուցման համակարգում գործում են 238 առարկայական տիրույթներ, որոնց թարմացման և վերանայման աշխատանքները ընթանում են աբիոններում:

4.Ուսանողների հետ տարվող աշխատանքներ

Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում նպատակային աշխատանքներ են տարվում ուսանողների, ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ: Խնդիր է դրվում հետևելու ուսանողական ինքնակառավարման մարմինների աշխատանքին, ըստ անհրաժեշտության ուղղորդելու նրանց՝ իրենց գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, նպաստելու նրանց ինքնուրույնության և նախաձեռնողականության մակարդակի

բարձրացմանը: Այդ հանգամանքներով պայմանավորված՝ կազմակերպվել են հանդիպումներ ուսանողների, ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ՝ նրանց հետաքրքրող հարցերի պարզաբանման նպատակով: Հանդիպումների ընթացքում խրախուսվել են գիտահետազոտական աշխատանքներ կատարելու և տարբեր հարթակներում ներկայացնելու ջանքերը: Շատ կարևոր է ուսանողների ներուժի օգտագործումը դպրոց-բուհ կապի ապահովման տեսանկյունից: Այս առումով մեծ դեր կարող են խաղալ մեր ուսանողները մանկավարժական պրակտիկայի ժամանակ: Ուղղակի շփումը աշակերտների հետ հնարավորություն է տալիս ներկայացնելու համալսարանը, օգնելու նրանց թե՛ բուհի, թե՛ մասնագիտության ընտրության հարցերում: Դա էր պատճառը, որ մեր 2 մագիստրոսների՝ Թ. Բատիկյան, Հ. Բաղդասարյան, բարձր դասարաններում անցկացրած բաց դասերը կազմակերպեցինք համալսարանում: Ընդհանրապես ուսանողների ջանքերով կազմակերպված միջոցառումներին գրեթե միշտ հրավիրվել են տարբեր դպրոցների աշակերտներ (Գավառի թիվ 7, Կարմիրգյուղի թիվ 1, թիվ 2, Գանձակի թիվ 1, Նորատուսի թիվ 3, Սարուխանի թիվ 3 միջնակարգ դպրոցներ, Գավառի ավագ դպրոց), մյուս կողմից էլ աշակերտներն են իրենց միջոցառումն անցկացրել Գավառի պետական համալսարանում (Ակունքի միջնակարգ դպրոց):

Ուսուցման արդյունավետության բարձրացման տեսակետից շատ կարևոր է բացահայտել ուսանողների բավարարվածության աստիճանը ուսուցման գործընթացից: Այդ տեսակետից մեծ նշանակություն ունեն ՈԱԲ հարցումներն ու դրանց վերլուծությունները: Ֆակուլտետում ստեղծվել է ևս մեկ համակարգչային լսարան, Հեռակա բաժնի ուսանողների առաջարկությամբ ուսումնական շաբաթների թիվը 3-ից դարձել է 4: Դասամիջոցների ընթացքում հնչող զանգը փոխարինվել է երաժշտությամբ: Ավելացվել է պրակտիկաների տևողությունը, կազմակերպվել են ուսանողական ճանաչողական էքսկուրսիաներ:

Ֆակուլտետում մեծ ուշադրություն է դարձվել միջազգային ակադեմիական շարժունության ծրագրերին ուսանողների մասնակցության հարցերին: Ունեցել ենք այդպիսի 4 ուսանող՝ Սմբաթյան Արուսյակ, Գասպարյան Սյուզաննա, Բաղդասարյան Նատաշա, Նադարյան Մելինե:

Հայեցակարգային խնդիր է ուսանողների մասնակցության հարցը ուսանողական համալսարանական, հանրապետական, միջազգային գիտաժողովներին, գիտամեթոդական ուղղվածություն ունեցող սեմինարներին, քննարկումներին: 2023-2024 ուստարում գիտաժողովների ընդհանրապես մասնակցել է 7 ուսանող՝ ներկայացնելով 18 հոդված, որից 10-ը՝ միջազգային, 8-ը հանրապետական: Համեմատության համար ասենք, որ 2022-2023 ուստարում գիտաժողովներին մասնակցել է 9 ուսանող՝ ներկայացնելով 14 հոդված, որից 5-ը՝ միջազգային, 9-ը հանրապետական: Համեմատությունից երևում է, որ գիտաժողովների մասնակցած ուսանողների թվով հետընթաց կա, իսկ հոդվածների թվով՝ առաջընթաց: Մասնակցությունը միջազգային գիտաժողովներին կրկնապատկվել է, սակայն մտահոգիչ է ուսանողների թվի նվազումը:

Ուսանողների մասնակցությունը գիտաժողովների
2022-2023 ուստարի

Ոսանողների քանակը՝ 9, զեկուցումների քանակը՝ 14, որից միջազգային՝ 5, հանրապետական՝ 9

2023-2024 ուստարի

Ուսանողների քանակը՝ 7, զեկուցումների քանակը՝ 18, որից միջազգային՝ 10, հանրապետական՝ 8

Հաշվետու ժամանակաշրջանում հանրապետական «Լավագույն ուսանող» մրցույթին մասնակցած Թեհմինե Բատիկյանը (մագիստրատուրա) և Քրիստինե Բատիկյանը (բակալավրիատ) ճանաչվել են հաղթողներ: Այս առումով ֆակուլտետում ակտիվություն է նկատվում. մրցույթին մասնակցել ցանկացողների թիվը աճել է: Դասախոս - ուսանող համահեղինակությամբ կամ ղեկավարությամբ հաշվետու ուստարում գրվել է 18 հոդված:

Ուսանողական ինքնակառավարման մարմինների նախաձեռնությամբ իրականացվել են մի շարք միջոցառումներ.

«Բարև, մենք ենք», «Հայրենիքը հոգուս մեջ», «Շոտլանդիայի լեգենդները և խորհրդանիշները»: «Գարեգին Նժդեհ», «Christmas sole», «Հայոց լեզուն հազարագանձ», «Աստվածամոր աչքերով», «Պատմության խաչուղիներում», միջոցառում՝ նվիրված Պարույր Սևակի ծննդյան 100-ամյակին: Ֆակուլտետի ուսանողները մասնակցել և մրցանակային տեղեր են զբաղեցրել նաև «Ուսանողական գարուն» հանրապետական փառատոնին:

5. Պրոֆեսորադասախոսական անձնակազմ

Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան կատարվում է դասախոսական կազմի պլանավորում: 2023-2024 ուստարում ՊԴ կազմում տեղի են ունեցել փոփոխություններ:

Հասարակական գիտությունների ամբիոնում դասախոսների թիվը եղել է 18, ազատվել են 1 գիտությունների թեկնածու՝ Քնարիկ Պետրոսյանը, 3 դոցենտ՝ Էդուարդ Զոհրաբյանը, Հայկ Օհանյանը, Լուսիկ Քուրքչյանը, 2 դասախոսներ՝ Հայկ Խաչիկյանը, Թամարա Կոտոլկյանը, ընդունվել են նոր դասախոսներ՝ Ջեմմա Կևեյանը, Արմինե Ղարաբաղցյանը, Մերի Ազիզյանը:

Հայոց լեզվի և գրականության ամբիոնում ավելացել է 1 դոցենտ՝ Սուսաննա Գրիգորյանը, ազատվել են 1 դասախոս՝ Լիլիթ Իսկանդարյանը, և 1 ասիստենտ՝ Ալինա Ղարիբյանը:

Օտար լեզվի և գրականության ամբիոնից ազատվել են 1 պրոֆեսոր՝ Գայանե Մուրադյանը, 2 դոցենտ՝ Ալլա Հովհաննիսյանը, Սիրարփի Կարապետյանը, ընդունվել է 1 դասախոս՝ Սաթիկ Ավագյանը:

Իրավագիտության ամբիոնում ազատվել են 3 դասախոսներ՝ Օլգա Հովհաննիսյանը և Տիգրանուհի Բաղայյանը, Տարոն Գրիգորյանը, ընդունվել են նոր դասախոսներ՝ Արմինե Հովսեփյանը, Սյուզաննա Պողոսյանը:

ՊԴ կազմը զբաղվում է ակտիվ գիտահետազոտական աշխատանքով, գրվում են հոդվածներ, մենագրություններ, ձեռնարկներ, դասախոսները մասնակցում են գիտաժողովների, սեմինարների, աշխատաժողովների, վերապատրաստումների: Այսպես.

ամբիոնի դասախոսներ Եղիշե Դաշտոյանը, Ռուզաննա Սարգսյանը, Անիկ Բալագոզյանը, Սաթենիկ Տիգրանյանը, Գայանե Միրիբյանը, Սաթենիկ Հայթյանը առցանց և առկա ձևաչափերով վերապատրաստումներ են անցել Հայաստանի Հանրապետության և միջազգային տարբեր բուհերում:

Լիլիթ Թոռչյանը, Սիրանույշ Մկրտչյանը, Նարինե Նալբանդյանը մասնակցել են աշխատաժողովների արտերկրի բուհերում, Սոնա Սիմոնյանը, Ռուզաննա Սարգսյանը դասախոսական աշխատանք են իրականացրել եվրոպական համալսարաններում:

Հաշվետու ուստարում օտար լեզվի և գրականության ամբիոնի կողմից իրականացվել են վերապատրաստման դասընթացներ պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողների և

հանրակրթական դպրոցի ուսուցիչների համար: Ամբիոնը հյուրընկալել է ԱՄՆ պետդեպարտամենտի «Fullbright» փոխանակման ծրագրով բիզնես անգլերենի դասախոս Լորի Ֆարքյուհարսոնին, որը 2024թ. մարտ ամսվա ընթացքում վերապատրաստման դասընթացներ է իրականացրել ամբիոնի դասախոսների և ուսանողների համար հետևյալ թեմաներով՝ «Նախագծային ուսուցման դերը անգլերենի՝ որպես օտար լեզվի յուրացման հարցում», «Փոխներգործուն և ուսանողակենտրոն լսարանի ապահովումը թվային նոր գործիքակազմի կիրառմամբ»: Բոլոր մասնակիցներին շնորհվեցին վկայականներ ԱՄՆ պետդեպարտամենտի կողմից:

Ամբիոնի դասախոս Սաթենիկ Հայթյանը, ով նաև ՀՀ կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոնի (ԿԶՆԱԿ) գնահատման մշակման և զարգացման բաժնի մասնագետ է, իրականացրել է վերապատրաստման դասընթաց՝ «Գնահատման նոր համակարգը հանրակրթական դպրոցում» թեմայով, որին մասնակցում էին պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ և հանրակրթական դպրոցի ուսուցիչներ:

Հասարակական գիտությունների ամբիոնի դասախոս Արմինե Դավթյանը առկա և առցանց ձևաչափերով անցկացրել է սեմինար-վերապատրաստում՝ «Մանկավարժական հաղորդակցում» թեմայով: Հաշվետու ուստարում Արմինե Դավթյանը Սանկտ Պետերբուրգում մասնակցել է 72 ժամ տևողությամբ վերապատրաստման դասընթացների, արժանացել է 2023 թ. «Տարվա մանկավարժ» կոչմանը և 1-ին կարգի դիպլոմի: Արտերկրում վերապատրաստման դասընթացների է մասնակցել ամբիոնի դասախոս Արսեն Հակոբյանը:

6. Արտաքին կապեր և համագործակցություն

Համակարգված աշխատանքներ են տարվել Գավառի պետական համալսարանի արտաքին կապերի ընդլայնման ու ամրապնդման ուղղությամբ: Ֆակուլտետների դասախոսներն ու ուսանողները օգտվել են արտերկրում սովորելու, վերապատրաստվելու և դասավանդելու հնարավորություններից: Ֆակուլտետը համագործակցային սերտ կապեր է ստեղծել հատկապես ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հետ: Հաճախ են կազմակերպվել առցանց հանդիպում-քննարկումներ: Այս տեսակետից հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետը կապող օղակ է և ապահովում է ոչ միայն ուսանողների, այլև Գեղարքունիքի մարզի բարձր դասարանների աշակերտության և ուսուցչության կապը ՀՀ ԳԱԱ լեզվի, հնագիտության և ազգագրության, պատմության ինստիտուտների, Բժշկական համալսարանի հայոց լեզվի և բժշկագիտական տերմինաբանության ամբիոնի հետ: Ասվածի լավագույն օրինակը 2024թ. փետրվարի 21-ին լեզվի ինստիտուտի հետ համատեղ կազմակերպած միջազգային գիտաժողովն էր՝ նվիրված Մայրենի լեզվի օրվան, որին մասնակցեցին նաև ֆակուլտետի ուսանողները:

Ֆակուլտետի իրավագիտության ամբիոնը շարունակական համագործակցություն է ունեցել ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ փաստաբանների պալատի, ՀՀ դատախազության, ՀՀ դատական դեպարտամենի, դատարանների, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների, ՀՀ նոտարական պալատի հետ:

Օտար լեզվի և գրականության ամբիոնը շարունակում է համագործակցել արտերկրյա և հայաստանյան բուհերի մասնագիտական ամբիոնների հետ՝ Բելառուսի Հանրապետության Մինսկի պետական լեզվաբանական համալսարանի, Բրյուսովի անվան համալսարանի, ԵՊՀ-ի և մանկավարժական համալսարանի, Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի հետ՝ մասնագիտական փորձի փոխանանակման նպատակով: Շարունակվել է համագործակցությունը Գեղարքունիքի մարզի կրթական հաստատությունների հետ:

Առավելապես ուշադրություն է դարձվել բարձր դասարանների աշակերտների մասնակցությանը ֆակուլտետում անցկացվող բաց դասերին և միջոցառումներին: Բաց դասեր են կազմակերպվել աշակերտների համար: Ֆակուլտետի դասախոսներն ու ուսանողները մասնակցել են դպրոցներում և Գավառի մարզային ու քաղաքային գրադարաններում կազմակերպված քննարկումներին և հոբելյանական միջոցառումներին:

Ֆակուլտետը համագործակցել է Գավառի պետական համալսարանի կառուցվածքային մյուս ստորաբաժանումների հետ՝ համակողմանի գործունեությունը ապահովելու և աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

7. Հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի, ակադեմիական ազնվության հայեցակարգի, բարեվարքության կանոնների իրականացում

Ֆակուլտետում ապահովված է ընթացող գործընթացների հրապարակայնությունը և թափանցիկությունը: Քննությունների, ստուգարքների, ամփոփիչ ատեստավորումների ընթացքում բացառվել են անազնվության, մագիստրոսական թեզերի, ավարտական աշխատանքների կատարման ընթացքում՝ գրագողության դեպքերը: Ուսանող-դասախոս հարաբերությունները կառուցվել են ԳՊՀ բարեվարքության կանոններին համապատասխան:

ԳՊՀ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2024-2025 ուստարվա զարգացման հայեցակարգը կազմվել է ըստ ԳՊՀ զարգացման հնգամյա ռազմավարական ծրագրի (2023-2027թթ.): Համալսարանական գործունեության ռազմավարական ուղղություններով անհրաժեշտ է ուսումնական գործընթացի նորովի կազմակերպում, ուսուցման իրականացման առկա ձևաչափ, այլ ուղիների, միջոցների, եղանակների և նոր տեխնոլոգիաների ներդրում և կիրառում: Նոր ուսումնական տարին նախորդների համեմատ ունի որոշակի առանձնահատկություններ՝ պայմանավորված ֆակուլտետների միավորմամբ: Մեծանում է պատասխանատվությունը դասավանդման գործընթացի արդյունավետության ապահովման տեսանկյունից:

1. ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

1.1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ավարտել մասնագիտական կրթական ծրագրերի լրամշակումները՝ հաշվի առնելով առարկայական ծրագրերում կատարվող փոփոխությունները: Կատարված փոփոխությունները ներառել առարկայական վերջնարդյունքների քարտեզագրման մեջ:

1. Շարունակել ուսումնական պլանների վերանայումը՝ ըստ անհրաժեշտության կատարելով փոփոխություններ առարկայացանկում, ժամաքանակներում:
2. Առարկայական ծրագրերում շարունակել պահպանել դասախոսություն-սեմինար-գործնական աշխատանք համամասնությունը՝ այդպես ապահովելով գիտելիք-

կարողություն-հմտություն համալիր վերջնարդյունքը, տեսական գիտելիք-գործնական իրացում գործընթացը:

3. Ուշադրության կենտրոնում պահել ինքնուրույն աշխատանքների՝ որպես ուսանողի ակտիվության որոշման բաղադրիչի կատարման ընթացքը:
4. Ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի թեմաների ընտրությունը պայմանավորել ինչպես արդիականությամբ, այնպես էլ ատեստավորող հանձնաժողովների առաջարկություններով և ուսանողների հետաքրքրություններով:
5. Ուսուցման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հաճախադեպ դարձնել դասալսումները, բաց դասերը, քննարկումները, մեթոդական զեկուցումները, որոնց արդյունքները վերլուծել՝ ՈԱԲ-ի հետ համագործակցությամբ:
6. Հետևողական լինել բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագրերում կրթական վերջնարդյունքների տարբերակումն ապահովելու հարցում:
8. Ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի գրախոսականներում մեծ տեղ հատկացնել ուսանողի ինքնուրույն աշխատելու, տվյալները մշակելու, եզրակացություններ անելու, գործնական առաջարկությունների վերաբերյալ բաղադրիչներին:

1.2. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1. Ստեղծել աշխատանքային նպաստավոր պայմաններ ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեության համար, ըստ անհրաժեշտության ուղղորդել նրանց՝ իրենց գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:
2. Նպատակաուղղել ուսանողական ինքնակառավարման մարմինների աշխատանքները ուսումնառության արդյունավետության բարձրացմանը:
3. Ուսանողների, ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ հանդիպումներն ու քննարկումներն ակտիվացնել՝ ֆակուլտետում գիտաժողովների, միջոցառումների կազմակերպման, դպրոցների հետ կապեր հաստատելու, ուսանողների նախաձեռնություններին ընդառաջելու, նրանց հետաքրքրող հարցերի պարզաբանման նպատակով:
4. Խրախուսել ուսանողներին՝ կատարելու գիտահետազոտական աշխատանքներ և առավել ակտիվությամբ հանդես գալու միջազգային և հանրապետական ուսանողական գիտաժողովներում, բանավեճերում, քննարկումներում, սեմինարներում:
5. Հետևողական լինել դասախոսների և ուսանողների՝ համատեղ գիտահետազոտական աշխատանքներ կատարելու գործընթացում:
6. Տարաբնույթ միջոցառումների կազմակերպման և անցկացման միջոցով բարձրացնել ուսանողների գեղագիտական ճաշակը, ազգային արժեհամակարգը, քաղաքացիական ակտիվ դիրքորոշումը:

1.3. ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

1. Ապահովել «Learn.gsu» էլեկտրոնային հարթակում նորացված առարկայական ծրագրերի էլեկտրոնային նյութերի ներմուծումը, դասախոսությունների ընթացքում ապահովել տեսական և գործնական աշխատանքի համամասնությունը:
2. Համագործակցելով SS բաժնի հետ՝ խորացնել ուսանողների գիտելիքները տեղեկատվական տեխնոլոգիաների, առցանց դասերի անցկացման ձևաչափերի, համակարգչային և ՏՀՏ միջոցների օգտագործման վերաբերյալ:
3. Համագործակցելով որակի ապահովման բաժնի հետ՝ պարզել կրթական միջավայրից ուսանողների բավարարվածության աստիճանը և անել հետևություններ, ձեռնարկել համապատասխան միջոցներ:
4. Օգտագործել միջազգային շարժունության ծրագրերով արտերկրում ուսանած ուսանողների փորձը:
5. Գործուն միջոցներ ձեռնարկել՝ ակտիվացնելու ֆակուլտետի ուսանողական կառույցների աշխատանքը:

2. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

1. Որոշարկել ամբիոնների գերակա գիտական ուղղությունները՝ հաշվի առնելով ժամանակակից գիտությունների զարգացման ուղղվածությունը:
2. Համակարգել և վերահսկել ամբիոններում գրախոսություններ և կարծիքներ ներկայացնելու գործընթացը: Ամբիոններում պահպանել տպագրության երաշխավորվող գիտամեթոդական աշխատանքների քննարկման կայուն ընթացակարգը:
3. Գիտահետազոտական աշխատանքների նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող ուսանողների համար ստեղծել համապատասխան հնարավորություններ:
4. Անցկացնել հայոց լեզվի, գրականության, պատմության, մանկավարժության, իրավագիտության արդի հիմնախնդիրներին նվիրված քննարկումներ, զեկուցումներ:
5. Խրախուսել ամբիոնների դասախոսների մասնակցությունը հանրապետական և միջազգային գիտաժողովների, գիտահետազոտական աշխատանքների տպագրությունը բարձր վարկանիշ ունեցող միջազգային շտեմարաններում:
6. Ուսանողների շրջանում նպաստել գիտահետազոտական աշխատանքների նկատմամբ հետաքրքրությունների աճին, ուշադրության կենտրոնում պահել ֆակուլտետի ՈւԳ ընկերության աշխատանքները:
7. Իրականացնել ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ գիտահետազոտական ծրագրեր:

3. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏ

1.Ֆակուլտետում իրականացված ծրագրերի, աշխատանքների թափանցիկության և հաշվետվողականության ապահովում, ԳՊՀ կայքում լուրերի տեղադրում՝

ապահովելով ֆակուլտետում ընթացող գործընթացների հրապարակայնությունը և թափանցիկությունը:

2. Գավառի պետական համալսարանի ֆեյբուքյան էջում (Դիմագիրք) Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի էջի ակտիվ վարում ֆակուլտետում իրականացվող ծրագրերը հանրայնացնելու, տարածելու, հասարակության հետ կապն ապահովելու նպատակով:
3. Ֆակուլտետում անցկացվող միջոցառումներին, քննարկումներին, բաց դասերին բարձր դասարանների աշակերտների, ուսուցիչների, քոլեջների սովորողների մասնակցության ապահովում թե՛ առցանց, թե՛ անցանց ձևաչափերով:
4. Ֆակուլտետի ուսանողների և դասախոսների ակտիվ ներգրավում միջազգային շարժունության ծրագրերում, ձեռք բերած փորձի տարածում ուսանողական միջավարում:
5. Համագործակցային կապերի հաստատում մշակութային, կրթական հաստատությունների հետ:

5. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏ

1. Քննությունների, ստուգարքների, ամփոփիչ ատեստավորումների ընթացքում բացառել անազնվության դեպքերը:
2. Մագիստրոսական թեզերի, ավարտական աշխատանքների կատարման ընթացքում բացառել գրագողության դեպքերը:
3. Ուսանող-դասախոս հարաբերությունները կառուցել ԳՊՀ բարեվարքության կանոններին համապատասխան:

Թաթուլ Ասոյան
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 4
2023/2024 ՈՒՍՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Նյութերի ժողովածու	Հոդված	Զեկուցումների թեզիս
2	5	-	1	2	64	7

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ
ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Հակոբյան Ռուզաննա Խաչիկի - իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ,
2. Խաչատրյան Սամվել Արտաշեսի - իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
3. Հովհաննիսյան Օլգա Արտյոմի - ԳՊՀ դոցենտ,
4. Ամիրյան Անի Սամվելի – լաբորանտ, դասախոս:

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Հակոբյան Հրանուշ Հրանտի - իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
2. Հարությունյան Մնացական Հայկի - իրավաբանական գիտությունների թեկնածու,
3. Խաչատրյան Հայկ Աշոտի - իրավաբանական գիտությունների թեկնածու,
4. Վարդանյան Գեղեցիկ Մարատի - ասիստենտ,
5. Բաղալյան Տիգրանուհի - դասախոս,
6. Վարդանյան Մարզպետունի Գոռի - ասիստենտ,
7. Մուրադյան Պապին Օնիկի- դասախոս,
8. Ղաջոյան Վարդան Համլետի – դասախոս,
9. Մոսիկյան Դանիել Կարապետի – դասախոս,
10. Հարությունյան Արևիկ Տելեմակի– ասիստենտ,
11. Բախտիկյան Լուսինե Վանիկի - ասիստենտ:

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Պետության և իրավունքի տեսություն և պատմություն,
2. ՀՀ սահմանադրական, քաղաքացիաիրավական ինստիտուտներ,
3. Հայաստան-Սփյուռք գործակցություն:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	2	-	-	15	5

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Հակոբյան Հ. Հ., «Հայրենիք-Սփյուռք գործակցության 10-ամյա ուղին», մենագրություն, եռահատորյակ, Հատոր Ա.,** Երևան: Տիգրան Մեծ, 2023, 684 էջ, **Հատոր Բ.,** 2023, 681 էջ, **Հատոր Գ.,** Երևան, «Տիգրան Մեծ», 2024, 644 էջ:
2. **Акобян Г. Г., Акобян Р. Х.,** О механизме самозащиты Основного закона государства на примере Конституций Республики Армения и Республики Беларусь // **Коллективная монография «Человек. Социум. Искусство»**, Грозный, 2024, с. 11-18.
3. **Акобян Г. Г., Акобян Р. Х.** Эволюция формы правления Республики Армения // Государство и право, 2023, С. 146-152. URL: http: // gospravo-journal.ru/s102694520024780-9-1/. Научный журнал Российской академии наук, РФ (Журнал включен Высшей аттестационной комиссией (ВАК) при Министерстве высшего образования и науки РФ в перечень ведущих рецензируемых научных журналов и изданий, в Российский Индекс Научного Цитирования **(РИНЦ)** и зарегистрирован в научной электронной библиотеке Elibrary.ru; в базу Russian Science Citation Index (RSCI) на платформе **Web of Science**).
4. **Հակոբյան Հ. Հ.** «Պետություն-Սփյուռք» փոխհարաբերությունների որոշ հիմնախնդիրների մասին // «Հանրային կառավարում» գիտական պարբերական, Երևան, 1/2023, էջ 155-165:
5. **Հակոբյան Հ. Հ.** Մայրենի լեզվի անաղարտության պահպանման արդի հիմնախնդիրների մասին զեկուցում ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կազմակերպած առցանց գիտաժողովին՝ նվիրված Մայրենի լեզվի օրվան, 21.02.2023թ.;
6. **Հակոբյան Հ. Հ., Հակոբյան Ռ. Խ.** Միավորված ազգերի կազմակերպության կայուն զարգացման նպատակները և ՀՀ Սահմանադրության դրույթները (համեմատաիրավական վերլուծություն) // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2023, N 14, էջ 419-435:
7. **Հակոբյան Հ. Հ.** Հայկական Սփյուռքի ձևավորման պատճառների և ցեղասպանության միջազգային իրավական հիմնահարցերի մասին // Զեկուցումը ներկայացվել է Գավառի պետական համալսարանի հիմնադրման 30-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովին, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, I մաս, Երևան, 2023, N 15, էջ 511-529:
8. **Հակոբյան Հ. Հ.** Տարածաշրջանում խաղաղության և անվտանգության պահպանման գործում կանանց դերակատարությանը նվիրված զեկուցում Հայ կանանց միջազգային միության նիստում, Երևան, 06.06.2023թ.;
9. **Հակոբյան Հ. Հ.** Պասիվ ընտրական իրավունքի սահմանադրաիրավական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում // ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հիմնադրման 30-ամյակին նվիրված «Հանրային կառավարման արդի 30 հիմնախնդիրները» խորագրով 3-րդ միջազգային

գիտաժողովի նյութեր, «Հանրային կառավարում» գիտական պարբերական, Հատուկ թողարկում, Երևան, 2024, մայիսի 22-24, էջ 266-278:

10. **Հակոբյան Հ. Հ., Հակոբյան Ռ. Խ.** ՀՀ Սահմանադրությամբ Ազգային ժողովի պատգամավորին ներկայացվող պահանջների վերանայման մասին // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, II մաս, N 16, Երևան, 2024, էջ 457-476:
11. **Հակոբյան Ռ. Խ.** Կրթությունը որպես մարդու հիմնարար իրավունք և հասարակության առաջընթացի երաշխիք // Հոդվածը նվիրված է Գավառի պետական համալսարանի հիմնադրման 30-ամյակին, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, II մաս, N 16, Երևան, 2024, էջ 26-43:
12. **Հակոբյան Հ. Հ., Հակոբյան Ռ. Խ.** Քննիչ հանձնաժողովները որպես պառլամենտական փոքրամասնության վերահսկողական ինստիտուտ // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, N 17, Երևան, 2024, էջ 506-536:
13. **Հակոբյան Ռ. Խ.** ՀՀ Սահմանադրության «ինքնապաշտպանության» կառուցակարգերի մասին // ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հիմնադրման 30-ամյակին նվիրված «Հանրային կառավարման արդի 30 հիմնախնդիրները» խորագրով 3-րդ միջազգային գիտաժողովի նյութեր, «Հանրային կառավարում» գիտական պարբերական, Հատուկ թողարկում, Երևան, 2024, մայիսի 22-24, էջ 279-289:
14. **Акобян Г. Г., Акобян Р. Х.,** О некоторых особенностях интерактивных методов обучения // Вестник Брестского государственного университета имени А. С. Пушкина, Республика Беларусь, Брест, 2024 /Հոդվածն ընդունված է տպագրության/:
15. **Hakobyan H. H., Hakobyan R. Kh.** Subjects of the legislative initiative in the Republic of Armenia // Հոդվածը ներկայացված է տպագրության "Bialystok Legal Studies" բարձր ցիտման գործակից ունեցող գիտական պարբերականում:
16. **Հակոբյան Հ. Հ.** Զեկուցում ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում Հայրենիք-Սփյուռք համագործակցության մասին, «Հայրենիք-Սփյուռք գործակցության 10-ամյա ուղին» եռահատորյակ մենագրության շնորհանդեսին, Երևան, 20.02.2024թ.:
17. **Հակոբյան Հ. Հ.** Զեկուցում Բեյրութի «Ազդակ» կենտրոնում Հայրենիք-Սփյուռք համագործակցության մասին, «Հայրենիք-Սփյուռք գործակցության 10-ամյա ուղին» եռահատորյակ մենագրության շնորհանդեսին, Լիբանան, 15.04.2024թ.:
18. **Հակոբյան Հ. Հ.** Զեկուցում Տորոնտոյի համազգային գրադարանում Հայրենիք-Սփյուռք համագործակցության մասին, «Հայրենիք-Սփյուռք գործակցության 10-ամյա ուղին» եռահատորյակ մենագրության շնորհանդեսին, Կանադա, 30.06.2024թ.:
19. **Հակոբյան Հ. Հ.** Զեկուցում Նյու-Յորքի Սուրբ Վարդան Մայր տաճարի հանդիսասրահում Հայրենիք-Սփյուռք համագործակցության մասին, «Հայրենիք-Սփյուռք գործակցության 10-ամյա ուղին» եռահատորյակ մենագրության շնորհանդեսին, ԱՄՆ, 07.07.2024թ.:
20. **Հակոբյան Հ. Հ.** Զեկուցում Գլենդելի Իրանահայերի միության կենտրոնում Հայրենիք-Սփյուռք համագործակցության մասին, «Հայրենիք-Սփյուռք գործակցության 10-ամյա ուղին» եռահատորյակ մենագրության շնորհանդեսին, ԱՄՆ, 12.07.2024թ.:
21. **Խաչատրյան Ս. Ա.,** Բաքվի Աղջկա աշտարակի շուրջ, // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, N 14, Երևան, 2023, էջ 436:
22. **Խաչատրյան Ս. Ա.,** Իրավունքի ընդհանուր հասկացությունը // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 17, Երևան, 2024, հանձնված է տրագրության:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Թունյան Վալերի Գեորգիի - պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
2. Պողոսյան Աշխունջ Ամիրխանի - պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
3. Հակոբյան Արսեն Աշոտի - պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
4. Ղաջոյան Համլետ Գրիշայի - փիլիսոփայական գիտությունների թեկնածու,
5. Պապիկյան Կարինե Միշայի - մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ,
6. Քուրքչյան Լուսիկ Ներսեսի - մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ,
7. Հայրապետյան Քանաքարա Խաչիկի – ասիստենտ,
8. Գարեյան Մելանյա Վարդանի - դասախոս,
9. Դավթյան Արմինե Վահրամի – դասախոս:

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Այվազյան Էդվարդ Իշխանի – մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
2. Բարսեղյան Պարգև Աշոտի - փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ,
3. Զարգարյան Արփինե Հրանտի - դասախոս,
4. Կոտոլկյան Թամարա Հակոբի - դասախոս,
5. Ղարաբաղցյան Արմինե Գագիկի – դասախոս,
6. Ազիզյան Մերի Տիգրանի – դասախոս,
7. Սաֆարյան Ալիտա Սոսի – դասախոս:

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը 21-րդ դարում,
2. Ներառական կրթության մանկավարժական, սոցիալ-մանկավարժական, հոգեբանական հիմնախնդիրները,
3. Մանկավարժների մասնագիտական-մանկավարժական իրազեկությունները (կոմպետենտությունները),
4. Հայ գրողների և պատմիչների փիլիսոփայական հայացքների վերլուծություն:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Նյութերի ժողովածու	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
1	2	-	1	1	11	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Թունյան Վ.** «Հայերի պայքարը» և տեղեկատվական պատերազմը // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, N 17, Երևան, 2024, հանձնված է տպագրության:
2. **Թունյան Վ.** Подготовка Туркманчайского мира.- В кн. // Материалы Международной научно-практической конференции «195 лет Туркманчайскому договору – веха мировой дипломатии» Ереван. 2023, с. 17-25 ISBN 978-9939-0-4500-9
3. **Թունյան Վ.** 195 лет Туркманчайскому договору–веха мировой дипломатии 20.2.2023 թ. զեկուցում "Подготовка Туркманчайского мира", 2024 թ., https:orcid.org/0009-0001-0274-5132
4. **Թունյան Վ.** Т. Ольгенин. Армения в первой половине 1913 г. // Историко-филологический журнал. 2024, N 1 с.276-283. ՀՏԴ 947.926:
5. **Թունյան Վ.** Идентичность меликов ХАМСЫ: мифы и реалии // История и политика.2024,N 1,с.3-21. DOI- https://doi.org/10.59630/25792644-2024.1.26-3:
6. **Թունյան Վ**. Исток армянского христианства.- https: // generalnews.am/hy/ article/ f0fe0143a326898 f71 10f 96e99401edb/:
7. **Թունյան Վ.** Манук-бей: грани созидания. Дополнение // монография, Ереван, 2024, Из-во Чартарагет, 240 с.ISBN 978-9939-79-202-6.
8. **Թունյան Վ.** Армянский вопрос и Геноцид армян в политмифотворчестве: Конец XX в.-начало XXI.в.// монография, Ереван, 2024.Из-во Чартарагет. 128 с.. ISBN 978-9939-79-209-3.
9. **Բարսեղյան Պ.** Սարգսյան Գ., Իգական սկզբի արխետիպային կերպարների քննական արժեվորումը // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, N 17, Երևան, 2024, հանձնված է տպագրության:
10. **Հայրապետյան Ք**. On the mystery of death of Khoren I Muradbekian - Catholicos of All Armenians, Էջմիածին: Պաշտոնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, Ս. Էջմիածին, Օտարալեզու հավելված, 2023, էջ 85-96:
11. **Հայրապետյան Ք.** Մայր Աթոռ-նվիրապետական աթոռներ փախհարաբերություններն Ամենայն հայոց Խորեն Ա կաթողիկոսի հովվապետության տարիներին // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, N 15, Երևան, 2023, էջ 227-240:
12. **Պողոսյան Ա.** Հովհաննես Շամբարյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանի գորգերի և կարպետների հավաքածու // Քարտեզների ժողովածու, Երևան, 2024, 235 էջ:
13. **Այվազյան Էդ.,** Աբաջյան Ս. «Մաթեմատիկա -6» դասագիրք հիմնական դպրոցի 6-րդ դասարանի համար // դասագիրք, «Զանգակ» հրատարակչություն, 2024 թ., 176 էջ:
14. **Այվազյան Էդ.** Մաթեմատիկայի դասավանդումը 6-րդ դասարանում // ուսումնամեթոդական ձեռնարկ, «Զանգակ» հրատ., Երևան, 2024, 100 էջ:
15. **Հակոբյան Ա.,** ««Ղափանի դեպքերի» առասպելը նախասումգայիթյան, սումգայիթյան և հետսումգայիթյան զարգացումներում»// «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագիր, Երևան, 2024, N 2, 63-95.
16. **Hakobyan A.,** Mollica Marcello. (2024) L'Uomo Società Tradizione Sviluppo, 13(2), 77–102. Recuperato dhttps // rosa.uniroma1.it / rosa03/ uomo/article/view/18825.

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Գրիգորյան Վաչագան Ռաֆիկի*
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Ասոյան Թաթուլ Արտիկի - ԲՖ դեկան, բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
2. Կատվալյան Վիկտոր Լիպարիտի - բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
3. Առաքելյան Արա Հրաչիկի - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
4. Ներսիսյան Վարսիկ Արմենի - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
5. Ղոեջյան Լուսինե Խաչատուրի - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
6. Խանդանյան Սիրանուշ Կառլենի – ասիստենտ
7. Սարգսյան Ռուզաննա Մարատի - ասիստենտ
8. Կարապետյան Գայանե Լևիկի - ասիստենտ
9. Բագոյան Ալլա Սահակի - դասախոս
10. Ղազարյան Օլգա Ալբերտի – դասախոս

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Իսկանդարյան Նաիրա Մանվելի - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
2. Գրիգորյան Սուսաննա Ալբերտի - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հայոց լեզվի պատմության հիմնահարցեր
2. Արևելահայերենի և արևմտահայերենի հիմնախնդիրներ
3. Բայազետի բարբառի և նրա խոսվածքների ուսումնասիրություն
4. ՀՀ Գեղարքունիքի մարզում բանահավաքչություն, բանահյուսական առանձին ժանրերի ուսումնասիրություն
5. Հայ ժողովրդական դյուցազնավեպի և եվրոպական էպիկական երկերի առնչությունների քննություն
6. Հայ գրականության պատմության հիմնահարցեր
7. Արդի հայ և արտասահմանյան գրականության զարգացման միտումների ուսումնասիրություն
8. Սփյուռքահայ գրականության ուսումնասիրություն

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Նյութերի ժողովածու	Հոդված /ժողովածու	Զեկուցումների թեզիս
1	1	-	-	1	29	2

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Ասոյան Թ.**, Մխիթարյանների բառարանագրական գործունեության շուրջ, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 17, 2024, հանձնված է տպագրության:
2. **Ասոյան Թ.,** Մխիթարյանների մանկավարժական գործունեության շուրջ, Հայոց լեզվի ուսումնասիրության և ուսուցման արդի խնդիրներ, Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2024, էջ 29-35:
3. **Գրիգորյան Վ. Ռ., Առաքելյան Ա. Հ., Իսկանդարյան Ն. Մ.,** Եվրոպական էպիկական ավանդույթը և Սասնա ծռեր էպոսը // մենագրություն, Երևան, 2024:
4. **Գրիգորյան Վ. Ռ.,** 20-րդ դարի հայ գրականության պատմություն, մենագրություն // Էջմիածին, 2024, 536 էջ:
5. **Գրիգորյան Վ. Ռ. , Առաքելյան Ա. Հ., Իսկանդարյան Ն. Մ., Նազարյան Ա.,** Ծիծաղի առանձնահատկությունները «Սասնա ծռեր» էպոսում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 16, Երևան, 2024, էջ 283-309:
6. **Գրիգորյան Վ. Ռ.,** Սեյլանի «Սասուն»-ը և «Սասնա ծռեր» էպոսը // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 17, Երևան, 2024, հանձնված է տպագրության:
7. **Գրիգորյան Վ. Ռ.,** Տեղաշարժերը հայ գրականության մեջ վերջին հարյուր տարում // Հայկազյան Հայագիտական հանդես, հանձնված է տպագրության:
8. **Գրիգորյան Վ.** Հայ գրականության զարգացման միտումները 21-րդ դարասկզբին, հայագիտության խնդիրները // Հայ բանասիրության հեռանկարներ, միջազգային գիտաժողով, Լոս Անջելէս-Երեւան, 2024, էջ 21-33:
9. **Առաքելյան Ա. Հ.,** Իշխանության ու բռնության մոտիվները գերմանական գրականության մեջ և շեքսպիրյան ժառանգությունը // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 17, Երևան, 2024, հանձնված է տպագրության:
10. **Ղռեջյան Լ. Խ.,** «Շիրակ. հայոց բանահյուսական մշակույթը» // (Բանահյուսական նյութերի ժողովածու, կազմողներ՝ Մ.Խեմչյան, Է. Խեմչյան, Լ. Ղռեջյան, Հ. Մատիկյան), ՀՀ ԳԱԱ ՀԱԻ հրատ., Երևան, 2024, 656 էջ:
11. **Ղռեջյան Լ. Խ., Բագոյան Ա. Ս.,** «Երդումը հայ ժողովրդական հեքիաթներում և հավատալիքներում» // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 17, Երևան, 2024, հանձնված է տպագրության:
12. **Ղռեջյան Լ. Խ.,** «Ժողովրդական երդումների իմաստային և կիրառական խմբերը» // Բանբեր Հայաստանի գրադարանների (տպագրության ընթացքում է):
13. **Ղռեջյան Լ. Խ., Մատիկյան Հ.,** Elements of beliefs and cult in the vows of Shirak (interdisciplinary study) // ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտական աշխատություններ պրակ. 27 (2), Գյումրի, 2024, էջ 61-83:
14. **Ղռեջյան Լ. Խ.,** «Երդումը հայ ժողովրդական հեքիաթներում» // (Հեքիաթի բանահյուսական քննություն. Ժանրային խաչաձևումներ և փոխակերպումներ միջազգային գիտաժողովի հիմնադրույթներ), թեզիս, Երևան, ՀԱԻ հրատ., էջ 77-82:

15. **Ղռեջյան Լ. Խ.,** «Ժողովրդական երդումների կիրառական և իմաստային խմբերը» // (Ժառանգության պահպանություն՝ հանուն կայուն ապագայի միջազգային գիտաժողովի հիմնադրույթներ), թեզիս, Երևան, 2024, «Գիրք» հրատ., էջ 68-69:
16. **Ներսիսյան Վ. Ա.,** Բաղադրյալ բառերի դասակարգումը Մանուկ Աբեղյանի աշխատություններում // ISSN 1829-4480, ՀՏԴ 81, 10.56246/18294480-2023.14-19, Գիտական հոդվածների ժողովածու, ԳՊՀ, N 14, Երևան, 2023, էջ 249-268:
17. **Ներսիսյան Վ. Ա.,** Հինհայերենյան լեզվական իրողությունների ուսումնասիրման նշանակությունը բուհի տարրական մանկավարժության և մեթոդիկայի բաժնում // Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ 100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր՝ «Բարձրագույն մանկավարժական կրթության հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները» խորագրով, Երևան, 2023, էջ 993-1000:
18. **Ներսիսյան Վ. Ա., Բատիկյան Թ.Կ. (ԳՊՀ մագիստրատուրայի ուսանող),** Օտարաբանությունների և փոխառությունների գնահատման հարցը Էդուարդ Աղայանի «Հայ լեզվաբանության պատմություն» աշխատության էջերում, «Հայոց լեզվի ուսումնասիրման և ուսուցման խնդիրներ», ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Էդուարդ Աղայանի ծննդյան 110-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, ISSN 2953-822X, 1(1), DOI:10.54412/2953822X-2023.1-197, Ե., 15-16 նոյեմբերի, Երևան, 2023, էջ 197-205:
19. **Ներսիսյան Վ. Ա.,** «Հայոց լեզվի ուսումնասիրման և ուսուցման խնդիրներ» միջազգային գիտաժողով՝ նվիրված ԳԱԱ ակադեմիկոս Է. Աղայանի ծննդյան 110-ամյակին (տեղեկատվական հաղորդում), «Ջահուկյանական ընթերցումներ» հանդես, ISSN 2738-2738-277X, 2(20), Երևան, 2023, էջ 103-108:
20. **Ներսիսյան Վ. Ա.,** Բառակազմության հարցերի քննությունը Գրիգոր Ղափանցյանի աշխատություններում // ներկայացվել է «Հայոց լեզվի ուսումնասիրման և ուսուցման խնդիրներ» միջազգային գիտաժողովին, ՀՀ ԳԱԱ ԼԻ, Երևան, 21 փետրվարի, 2024, 10 էջ, հանձնված է տպագրության նույնանուն ժողովածուում:
21. **Ներսիսյան Վ. Ա.**, Ավետիսյան Ա. (ԳՊՀ մագիստրատուրայի ուսանող), Բառակազմության ուսումնասիրումը երկրորդ դասարանում // «Հետազոտահեն կրթության արդի մարտահրավերներն ու խնդիրները» միջազգային գիտաժողովի նյութեր, ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն, ISBN 978-9939-1-1866-6, «Ալվարդ Օհանջանյան Վառլենի» ԱՁ, Երևան, 31 մայիսի, 2024, էջ 81 - 90: /https://www.isec.am/images/ gitakan_hraparakumner/Gitajoghov_2024.pdf.
22. **Կատվալյան Վ. Լ.,** Շիրակի մարզի բարբառային խոսքի ընդհանուր բնութագիրը, «Շիրակը հայոց բառ ու բանի գանձարան» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, ԼԻ հրատ., 2023, էջ 67-74:
23. **Կատվալյան Վ.Լ.**, Է. Աղայանը բարբառների մասին, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Է. Աղայանի ծննդյան 110-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, Երևան, ԼԻ հրատ., 2023, էջ 145-152:
24. **Կատվալյան Վ.Լ.**, Բարբառային հայերենը Հայաստանի Հանապետությունում, ՀՀ ԳԱԱ Զեկույցներ, հ. 1, Երևան, 2024, էջ 67-86:
25. **Կատվալյան Վ.Լ.,** Շիրակի մարզի խոսվածքներին բնորոշ մի քանի բառերի մասին, «Ջահուկյանական ընթերցումներ», 1 (21), Ե., ԼԻ հրատ., 2024, էջ 76-8
26. **Առաքելյան Ա.Հ.** Ելույթ Հայ շեքսպիրյան միության 5-րդ գիտաժողովում (ԵՊՀ, 3-5-հոկտեմբերի, 2024)- «Իշխանության և բռնության մոտիվները գերմանական գրականության մեջ և շեքսպիրյան ժառանգությունը»:
27. **Առաքելյան Ա.Հ.** Ելույթ ՀՀ Գիտությունների ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կազմակերպած Միջազգային գիտաժողովում (8-10-

հոկտեմբերի)-«Պոետիկայի փոխակերպումները եվրոպական գրականության պատմության համատեքստում» թեմայով:

28. **Գրիգորյան Ս. Ա.**, Պարոնյան Ն., Փոխառությունները Կոստանդին Երզնկացու տաղերում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, 2024, 16, 330-343 էջ:
29. **Գրիգորյան Ս. Ա.**, Պարոնյան Ն.,Արդի արևելահայերենի բառապաշարի հարստացումը ըստ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանում չվկայված բառերի // Բանբեր Երևանի համալսարանի: Բանասիրություն, 2024, հատ. 3, 2, 50-60 էջ:
30. **Գրիգորյան Ս. Ա.**, Նորակազմությունները Պետրոս Ղափանցու բանաստեղծու-թյուններում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 17, 2024, հանձնված է տպագրության:
31. **Գրիգորյան Ս. Ա.,**Վարդան Արևելցու ներբողների բառային արվեստը // Բանբեր Եվրասիա միջազգային համալսարանի, 2023, 2, 122-133 էջ:
32. **Գրիգորյան Ս. Ա.,** The Stylistic Characteristics of K. Yerznkatsi's Verses, Հայագիտական հանդես, 2023, 3 (62), 14-26:
33. **Իսկանդարյան Ն. Մ.**, Մոգական անխոցելիության մոտիվը «Սասնա ծռեր» էպոսում, Вестник Российско-Армянского (Славянского) университета" (серия: гуманитарные и общественные науки) , 2023, 3, 141-158:
34. **Իսկանդարյան Ն. Մ.**, Հերոսական կինը և մայրը էպոսում, 2024, Вестник Российско-Армянского (Славянского) университета" (серия: гуманитарные и общественные науки), 2024 N1, 135-156:

ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ ***Գայանե Աշոտի Միրիբյան***
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Մուխսիխաչոյան Արուսյակ Մուշեղի- մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
2. Դաշտոյան Եղիշե Նորիկի – բանասիրական գիտությունների թեկնածու
3. Հայթյան Սաթենիկ Հայրապետի - ասիստենտ
4. Մուրադյան Սիրանուշ Հովհաննեսի – ասիստենտ
5. Բալագոզյան Անիկ Կարապետի - ասիստենտ
6. Մելքոնյան Աննա Վրեժի – դասախոս
7. Թոռչյան Լիլիթ Գրիգորի – դասախոս
8. Մկրտչյան Սիրանույշ Սարգսի- դասախոս
9. Ավագյան Սաթիկ Մարտինի- դասախոս
10. Նալբանդյան Նարինե Նորայրի – դասախոս

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Սարգսյան Ռուզաննա Ռուբենի - մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
2. Տիգրանյան Սաթենիկ Սաշայի - ասիստենտ

3. Եղիազարյան Անդրանիկ Ռաֆիկի - ասիստենտ
4. Սիմոնյան Սոնա Կոստանտի - դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Օտար լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկայի արդի հիմնահարցեր և ուսուցման նորագույն տեխնոլոգիաներ
2. Համեմատական լեզվաբանություն
3. Ռուս և հայ ազգային մշակույթի, բանահյուսության և գրականության համեմատական ուսումնասիրություն

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումներ ի թեզիս
-	-	-	-	9	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Սարգսյան Ռ. Ռ.,** Использование потенциала chatGPT для генерирования игровых заданий на уроке русского языка в экономическом вузе (на примере ролевых игр) // Восток – Запад: теоретические и прикладные аспекты преподавания европейских и восточных языков: материалы VII Междунар. науч.-практ. конф. (Новосибирск, 6 марта 2024 г.). – Новосибирск: Изд-во СГУПСа, 2024. – 226 с., ISBN 978-5-00148-420-2, с.182-190.
2. **Սարգսյան Ռ. Ռ.,** Развитие ключевых навыков студентов в VUCA-МИРЕ (на примере обучения русскому языку в армянском государственном экономическом университете)// Наука и образование: актуальные вопросы теории и практики: IV Международ. науч.-методич. конф. 26-27 марта 2024 г. Самара-Оренбург /СамГУПС, ОрИПС, 2024. – 583, с 483-489.
3. **Սարգսյան Ռ. Ռ., Սարիբեկյան Ա. Մ.** Preparing to Implement DOGME Approach in an EFL Class: Results of the Student Survey // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 17, 2024, հանձնված է տպագրության:
4. **Սարգսյան Ռ. Ռ.,** Развитие технологической и цифровой грамотности как одной из ключевых компетенций преподавателя в условиях VUCA-МИРА // Международная научно-практическая конференция «Актуальные проблемы развития вертикальной интеграции системы образования, науки и бизнеса: экономические, правовые и социальные аспекты» (Воронеж, 25-26 апреля 2024 г.)
5. **Սարգսյան Ռ. Ռ.,** Развитие навыков представления презентаций у студентов на уроке иностранного языка: из опыта преподавания в АГЭУ И ГГУ // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 17, 2024, հանձնված է տպագրության:
6. **Սարգսյան Ռ. Ռ., Հայրապետյան Ա.** Взаимосвязанное обучение видам речевой деятельности на уроке русского языка в экономическом вузе (на примере урока русского языка на факультете информатики и статистики АГЭУ) // Бархударовские чтения: сб. науч. ст. участников Международ. науч.-метод. конф., приуроченной к 130-

летию со дня рождения С. Г. Бархударова (3–5 мая 2024 г.) / отв. ред. К. С. Акопян. – Ереван: РАУ, 2024. – 124 с., ISBN 978-9939-67-344-8, с. 98-104.

7. **Սիմոնյան Ս. Կ.,** Ժամանակակից հայերենի և անգլերենի երկբաղադրիչ բայական դարձվածքների ձևաբանական որոշ առանձնահատկություններ // Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան, Գիտական տեղեկագիր, N 2, ՊՐԱԿ Բ, Գյումրի, 2023:
8. **Սիմոնյան Ս. Կ.,** Ժամանակակից հայերենի և անգլերենի բայական հարադրությունների ոչ բայական բաղադրիչները և դրանց առաջացրած իմաստային փոփոխությունները // Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան, Գիտական տեղեկագիր, N 2, ՊՐԱԿ Բ, Գյումրի, 2023:
9. **Սիմոնյան Ս. Կ.** , Structural-Semantic Types of Modern Armenian and English Two-Component Verbal Phraseological Units, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան, Գիտական տեղեկագիր, Հումանիտար և հասարակական գիտություններ, N 2, Վանաձոր, 2023, էջ 21-30:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ ՔՆՆԱՀՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԶՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՀՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան-ցիկների թիվը	Առաջադիմության %-ը
Բակալավրիատ				
Իրավագիտություն				
1-ին	7	-	3	87.5
2-րդ	9	-	4	100
3-րդ	6	-	1	100
4-րդ	4	-	2	57.14
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա				
1-ին	2	-	-	100
2-րդ	3	-	-	75,0
3-րդ	8	-	2	100
4-րդ	8	-	1	100
Պատմություն				
1-ին	3	-	1	100
2-րդ	3	-	2	100
Ընդամենը	**53**	**-**	**16**	**91,38**
Մագիստրատուրա				
Իրավագիտություն				
1-ին	7	-	2	58.33
2-րդ	5	-	1	83,33
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա				

1-ին 2-րդ	6 4	- -	- -	100 80
Պատմություն 1-ին 2-րդ	 3 2	 - -	 1 1	 100 100
Ընդամենը	**27**	**-**	**5**	**79,41**
Ընդամենը ֆակուլտետում	**80**	**-**	**21**	**86,96**

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ԶՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան-ցիկների թիվը	Առաջադիմու-թյան %-ը
Բակալավրիատ				
Հայոց լեզու և գրականություն 1-ին 2-րդ 3-րդ 4-րդ Անգլերեն լեզու և գրականություն 1-ին 2-րդ 3-րդ 4-րդ	 2 1 8 4 7 7 5 8	 - - - - - - - -	 - - 1 - - 3 1 5	 100 25 100 50 100 87,5 71,43 88,89
Ընդամենը	**42**	**-**	**10**	**79,25**
Մագիստրատուրա				
Հայոց լեզու և գրականություն 1-ին 2-րդ Անգլերեն լեզու և գրականություն 1-ին	 2 2 2	 - - -	 - 1 2	 100 100 100
Ընդամենը	**6**	**-**	**3**	**100**
Ընդամենը ֆակուլտետում	**48**	**-**	**13**	**81,36**

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՀՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջա-նին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան-ցիկների թիվը	Առաջադիմություն %-ը
Բակալավրիատ				
Իրավագիտություն				
1-ին	7	-	2	87.5
2-րդ	8	-	1	100
3-րդ	5	-	1	83,33
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա				
1-ին	2	-	-	100
2-րդ	2	-	-	66,67
3-րդ	7	-	3	100
Պատմություն				
1-ին	3	-	1	100
2-րդ	3	-	1	100
Հայոց լեզու և գրականություն				
1-ին	2	-	-	100
2-րդ	4	-	-	100
3-րդ	8	-	4	100
Անգլերեն լեզու և գրականություն				
1-ին	5	-	-	83,33
2-րդ	8	-	1	100
3-րդ	7	-	2	100
Ընդամենը	71	-	16	94,67
Մագիստրատուրա				
Իրավագիտություն 1-ին	11	-	2	91,67
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա 1-ին	5	-	1	100
Պատմություն 1-ին	3	-	1	100

Հայոց լեզու և գրականություն 1-ին	2	-	-	100
Անգլերեն լեզու և գրականություն 1-ին	1	-	1	100
Ընդամենը	22	-	5	95,65
Ընդամենը ֆակուլտետում	93	-	21	94,90

Թաթուլ Ասոյան՝
ԳՊՀ Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանի ակադեմիական քաղաքականության բաժնի (ԱՔԲ) աշխատանքները 2023-2024 ուսումնական տարում կազմակերպվել են «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի զարգացման 2023-2027 թվականների ռազմավարական ծրագրի, ԱՔԲ 2023-2024 ուստարվա զարգացման ուղղությունների, ԱՔԲ կանոնակարգի դրույթների հիման վրա:

Իր գործառույթներն իրականացնելիս՝ ԱՔԲ-ն համակարգված աշխատել է ուսումնական գործընթացին մասնակցող ԳՊՀ բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների հետ:

Հաշվետու ժամանակահատվածում 2023-2024 ուստարվա գործողությունների պլանի իրականացման նպատակով բաժինը **կրթական և սոցիալ-մշակութային գործունեության ոլորտում** իրականացրել է կրթական գործընթացի արդյունավետության շարունակական բարձրացման, ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ փաստաթղթային հիմքերի ապահովման աշխատանքներ: Ուսումնական տարվան ընդառաջ՝ ֆակուլտետների դեկանատների և ամբիոնների հետ կատարված համատեղ աշխատանքների արդյունքում վերանայվել են բակալավրիատում և մագիստրատուրայում իրականցվող բոլոր մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ-ների) ուսումնական պլանները, կազմվել դրանցից ածանցված աշխատանքային պլանները, ստուգվել են ամբիոնների դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածությունները: Ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման, դասավանդման մեթոդների բազմազանեցման, արդիականացման, դրանց կիրառման արդյունավետության և որակի գնահատման նպատակով հաշվետու ուսումնական տարում որակի ապահովման բաժնի, ֆակուլտետների և ամբիոնների հետ համատեղ կազմակերպվել են թվով 38 հանձնաժողովային դասալսումներ: Դասալսումների արդյունքների հիման վրա կատարվել են քննարկումներ, վերլուծվել արդյունքները և ներկայացվել են համապատասխան ամբիոններ՝ դասախոսների հետ հետադարձ կապի ապահովման, դասավանդման որակի բարձրացման նպատակով:

Փորձի փոխանակման նպատակով ամբիոնների փորձառու և սկսնակ դասախոսների ներգրավմամբ կազմակերպվել են նաև փոխադարձ դասալսումներ, իրականացվել է դասավանդման արդյունավետ փորձի տարածում բաց դասերի անցկացման միջոցով:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմությամբ շրջանավարտների՝ ԳՊՀ-ում կրթությունը շարունակելու, երկրորդ մասնագիտություն ստանալու, միջբուհական և ներբուհական տեղափոխությունների հետ կապված առարկայական տարբերությունների հանձնման, փաստաթղթային փաթեթների կազմման, զեկուցագրերի, հաշվետվությունների, առաջարկությունների ներկայացման և փաստաթղթերի արխիվացման գործընթացներ: ԳՊՀ ուսանողներին տրամադրվել են կրթական գործընթացի վերաբերյալ անհատական և խմբային խորհրդատվություններ, իրականացվել են շարունակական կրթությամբ, ինչպես

նաև 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Արցախից բռնի տեղահանված և ուսումը ԳՊՀ-ում շարունակող ուսանողների՝ ուսումնական գործընթացին ինտեգրման աշխատանքներ:

2023-2024 ուսումնական տարում աշխատանքներ են տարվել անվճար և վճարովի համակարգերում սովորող ուսանողների փոխատեղման գործընթացի ստուգման ուղղությամբ, արձանագրվել են «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման» մրցույթի ներբուհական փուլի արդյունքները, համակարգվել են «Լավագույն ուսանող» մրցույթի հանրապետական փուլի հավակնորդների փաստաթղթային փաթեթները:

Կատարվել է բակալավրիատում և մագիստրատուրայում ուսումնական գործընթացի կազմակերպման, միջանկյալ և ամփոփիչ քննությունների, պրակտիկաների անցկացման ընթացքի վերահսկում, մշտադիտարկվել են անհրաժեշտ փաստաթղթային հիմքերը, պարբերաբար ստուգվել են դասամատյանները, յուրաքանչյուր ամսվա վերջում, ըստ ֆակուլտետների կողմից ներկայացված կատարողական փաստաթղթերի՝ ստուգվել, հաշվարկվել և ներկայացվել են ժամավճարի սկզբունքով աշխատող դասախոսների դասաժամերը: Յուրաքանչյուր կիսամյակի վերջում ստուգվել և ամփոփվել են ուսանողների առաջադիմության արդյունքները:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակաբար համալրվել է ուսանողների տվյալների բազան, ներկայացվել են եռամսյակային հաշվետվություններ, ամփոփվել են ԳՊՀ ուսանողների շարժի արդյունքները՝ հեռացման, ազատման, տարկետման, վերականգման և տեղափոխությունների վերաբերյալ, որոնք ներկայացված են ստորև բերված աղյուսակում.

2023-2024 ուսումնական տարում ԳՊՀ ուսանողների շարժը՝ 2022-2023 ուսումնական տարվա համեմատությամբ

Աղյուսակ 1.

		2022-2023 ուստարի	**2023-2024 ուստարի**
1	**Այլ բուհերից ԳՊՀ են տեղափոխվել**	**10**	**33**
2	**ԳՊՀ-ից այլ բուհ են տեղափոխվել**	**-**	**-**
3	**Երկրորդ մասնագիտություն ստացողներ**	**4**	**2**
4	**Քոլեջից ԳՊՀ են ընդունվել**	**27**	**34**
5	**Ներբուհական տեղափոխություններ**	**24**	**14**
	➢ Առկա բաժնից տեղափոխվել են հեռակա բաժին	10	8
	➢ Հեռակա բաժնից տեղափոխվել են առկա	9	5
	➢ Ներֆակուլտետային տեղափոխություններ	5	1
6	**Տարկետում են ստացել**	**7**	**16**
	➢ Առողջական վիճակի պատճառով /երեխայի խնամքի/	1	2
	➢ զինծառայության մեկնելու հիմքով	6	14

7.	**Արտերկրում ուսումը շարունակել են**	8	9
7	**ԳՊՀ-ից հեռացվել են**	**109**	**79**
8	**ԳՊՀ-ից ազատվել են**	**15**	**29**
9	**Վերականգնվել են ԳՊՀ՝**	**69**	**55**
	➢ զորացրումից հետո	28	9
	➢ հեռացումից հետո	33	42
	➢ տարկետումից հետո	1	-
	➢ ազատումից հետո	3	-
	➢ ամփոփիչ ատեստավորման գործընթացին թույլատրվածներ	4	4
10.	**Այլ բուհերից ազատվել կամ հեռացվել և ԳՊՀ-ում ուսանողական իրավունքները վերականգնել են**	-	11
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇԱՐԺ		**273**	**282**

Հաշվետու ուսումնական տարում մագիստրատուրա է ընդունվել 42 դիմորդ՝ յոթ մասնագիտությունների և տասը կրթական ծրագրերի գծով.

1. ***Մասնագիտական մանկավարժություն /011401.00.7/***
   - Հայոց լեզու և գրականություն՝ 2
   - Անգլերեն լեզու և գրականություն՝ 3
   - Պատմություն՝ 4
   - Կենսաբանություն՝ 1:
2. ***Ընդհանուր մանկավարժություն / 011301.00.7/***
   - Տարրական մանկավարժություն և մեթոդիկա՝ 7
3. ***Համակարգչային ճարտարագիտություն /061103.00.7/***
   - Համակարգչային ճարտարագիտություն՝ 4
4. ***Իրավագիտություն /042101.00.7/***
   - Իրավագիտություն՝ 12
5. ***Ֆինանսներ /041201.00.7/***
   - Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ՝ 3
6. ***Հաշվապահական հաշվառում և հարկում /041101.00.7/***
   - Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/՝ 3
7. ***Տնտեսագիտություն /031101.00.7/***
   - Տնտեսագիտություն՝ 3:

2023-2024 ուստարվա երկրորդ կիսամյակում կատարվել են բակալավրիատի առկա և հեռակա բաժինների, ինչպես նաև մագիստրատուրայի՝ բուհն ավարտող ուսանողների ավարտական փաստաթղթերի (դիպլոմների և ներդիրների) նախապատրաստման և հաշվառման աշխատանքներ: Պատրաստվել և շրջանավարտներին է հանձնվել 166 դիպլոմ /32-ը՝ մագիստրատուրայի, 134-ը՝ բակալավրիատի շրջանավարտներին /տե՛ս Աղյուսակ 2/:

Աղյուսակ 2.

2023-2024 ուսումնական տարվա ԳՊՀ շրջանավարտների թիվը՝ ըստ ֆակուլտետների և կրթական աստիճանների

Ֆակուլտետ		***ոչ գերազանցության***	***գերազանցության***	***ընդամենը***
Բնագիտատնտեսա-գիտական	առկա բակալավրիատ	11	25	*36*
	հեռակա բակալավրիատ	26	3	*29*
	մագիստրատուրա	2	15	*17*
Հումանիտար մասնագիտությունների	առկա բակալավրիատ	16	15	*31*
	հեռակա բակալավրիատ	36	2	*38*
	մագիստրատուրա	9	6	*15*
ԸՆԴԱՄԵՆԸ	բակալավրիատ	*89*	*45*	***134***
	մագիստրատուրա	*11*	*21*	***32***
ԸՆԴԱՄԵՆԸ		***100***	***66***	***166***

Հաշվետու ժամանակահատվածում **գիտահետազոտական և նորարարական գործունեության ոլորտում** իրականացվել է ԳՊՀ գիտական պարբերականում տպագրության ներկայացվող հոդվածների մասնագիտական գրախոսման, տեխնիկական պահանջներին համապատասխանեցման ուղղությամբ աշխատանքների համակարգում: Համալսարանի գիտական պարբերականում տպագրվող նյութերը ապահովվել են թվային օբյեկտի նույնականացուցիչներով (ԹՕՆ՝ DOI-Digital Object Identifier) և համընդհանուր տասնորդական դասիչներով (ՀՏԴ՝ UDC-Universal Decimal Classification): ԳՊՀ գիտական պարբերականի 16-րդ և 17-րդ համարներում ընդգրկված հոդվածները ստուգվել են հակագրագողության ծրագրով:

Կառավարչական, ֆինանսատնտեսական, ռեսուրսների ապահովման ոլորտում բաժինը ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի հետ համատեղ իրականացրել է ԱՔԲ էլեկտրոնային հարթակի ստեղծման և գործարկման նախապատրաստական աշխատանքներ, ֆակուլտետների հետ կազմակերպվել են քննարկումներ ուսանողների գիտելիքների գնահատման փաստաթղթերի, ակադեմիական տեղեկագրերի էլեկտրոնային տարբերակների ստեղծման ուղղությամբ: Այս նպատակով համատեղ աշխատանքները շարունակվում են:

2023-2024 ուստարում կատարվել են ԳՊՀ տարբեր ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունների հավաքագրման և ԳՊՀ հաշվետվության կազմման աշխատանքներ, ինչպես նաև ՀՀ վիճակագրական կոմիտե են ներկայացվել ամենամյա վիճակագրական հաշվետվությունները:

ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի առաջարկությունների հիման վրա հաշվետու ուսումնական տարում կազմակերպվել են վերապատրաստումներ՝ մասնագիտական և մանկավարժական ուղղություններով: Վերապատրաստման դասընթացներին մասնակցել են ինչպես ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, ուսանողներ, այնպես էլ ՀՀ Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների ուսուցիչներ: Վերապատրաստման դասընթացի թեմաները ներկայացված են ստորև բերված Աղյուսակ 3-ում.

Աղյուսակ 3. ԳՊՀ-ում 2023-2024 ուսումնական տարում կազմակերպված և իրականացված վերապատրաստման դասընթացների ծրագիր

Հ/հ	Թեմա	Ժամաքա-նակը	Անցկացման օրը, ժամը	Վերապատրաստող դասընթացավարի տվյալները	Մասնակիցներ
1.	1. Նախագծային ուսուցման դերը անգլերենի՝ որպես օտար լեզվի յուրացման հարցում 2. Փոխներգործուն և ուսանողակենտրոն լսարանի ապահովումը թվային նոր գործիքակազմի կիրառմամբ	2 ժամ	16.03.2024թ., ժամը՝ 13:00	Լորի Ֆարքյուհարսոն՝ ԱՄՆ պետդեպարտամենտի «Fullbright» փոխանակման ծրագրի մասնակից, բիզնես անգլերենի դասախոս	ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմ, հանրակրթական դպրոցների ուսուցիչներ, ուսանողներ
	3. Գործընկերային գնահատումը՝ որպես դասավանդման որակի բարելավման միջոց	2 ժամ	23.03.2024թ., ժամը՝ 13:00		
2.	1. Մանկավարժական հաղորդակցական իրազեկություն /կոմպետենտություն՝ ՄՀԿ/: ՄՀԿ նշանակությունը, գործառույթները, ոճերը, մոդելները և տիպերը:	**4** ժամ	06.04.2024թ. ժամը՝ 14:30	Արմինե Դավթյան ԳՊՀ հասարակական գիտությունների ամբիոնի դասախ	ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմ, հանրակրթական դպրոցների ուսուցիչներ, ուսանողներ
	2. Ուսուցման գործընթացում արդյունավետ հաղորդկացման կանոնները: Ինչու՞ է անձը սովորում: Անձնական և սոցիալական դրդապատճառների տարբերակում: Հաղորդակցման առանձնահատկությունները տարբեր թիրախային և տարիքային խմբերում:	4 ժամ	13.04.2024թ. ժամը՝ 14:30		

	3. Մանկավարժական կոնֆլիկտներ: Մանկավարժական իրավիճակ, խնդիր և կոնֆլիկտ: Մանկավարժական կոնֆլիկտների հաղթահարման ուղիները, հաղորդակցման կոնֆլիկտածին սխալներ	4 ժամ	20.04.2024թ. ժամը՝ 14:30		
	4. Մանկավարժի հուզական ինտելեկտ և մասնագիտական այրում: Հուզական ինտելեկտի դերը հաղորդակցման մեջ: Ինչպե՞ս հասկանալ սեփական և այլ անձի հույզերը: Ինչպե՞ս օգնել սովորողներին հասկանալ իր և այլոց հույզերը:	**4** ժամ	27.04.2024թ. ժամը՝ 14:30		
3.	1.Գնահատման նոր համակարգը հանրակրթական դպրոցում 1. Հայտորոշիչ գնահատում: 2. Ձևավորող գնահատում: 3. Ամփոփիչ գնահատում:	2 ժամ	04.05.2024թ. ժամը՝ 14:30	Սաթենիկ Հայթյան ԳՊՀ օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, ՀՀ կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոնի (ԿԶՆԱԿ) գնահատման մշակման և զարգացման բաժնի մասնագետ	Հանրակրթական դպրոցների ուսուցիչներ, դասախոսներ, բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական կուրսերի ուսանողներ
	2. Հանրակրթական դպրոցների ուսուցիչների որակավորման տարակարգի համար համապանակի ձևավորման պահանջները	2 ժամ	11.05.2024 թ. ժամը՝ 14:30		
4.	Գեներատիվ ԱԲ (Generative AI)	2 ժամ	13.04.2024, ժամը՝ 14:30	**Վարազդատ Ավետիսյան,** ԳՊՀ Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու	ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմ
	Մեծ լեզվական մոդելների (LLM) կիրառություններ	2 ժամ	20.04.2024, ժամը՝ 14:30	**Վարազդատ Ավետիսյան,** ԳՊՀ Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու	

5.	Արհեստական բանականության (ԱԲ) գրագիտություն, գեներատիվ ԱԲ կիրառություններ (chatGPT, Gemini, Midjourney)	10 ժամ	19.04.2024թ., ժամը՝ 14:30 26.04.2024թ., ժամը՝ 14:30 03.05.2024թ. , ժամը՝ 14:30 10.05.2024թ. , ժամը՝ 14:30	**Վարազդատ Ավետիսյան,** ԳՊՀ Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու	Հանրակրթական դպրոցի ուսուցիչներ, ուսանողներ, բարձր դասարանների աշակերտներ և ընդհանրապես արհեստական բանականության հարցերով հետաքրքրվողներ, որոնք ցանկանում են տեղեկություններ ստանալ ԱԲ զարգացման միտումների մասին
6.	Ներքին վերահսկողության ժամանակակից համակարգերը կազմակերպություններում	4 ժամ	10.05.2024թ., ժամը՝ 12:00	**Հակոբ Ղուլոյան,** ԳՊՀ հաշվապահական հաշվառման ամբիոնի վարիչ, տնտ. գիտությունների թեկնածու, դոցենտ	ԳՊՀ Հաշվապահական հաշվառման, ֆինանսների և կառավարման ամբիոնների դասախոսներ, ԳՊՀ աշխատակիցներ
7.	Սպիրտներ, ընդհանուր բնութագիրը, ստացումը, հատկությունները և կիրառումը	2	24.05.2024թ., ժամը՝ 12:00	**Կարինե Ավետիսյան,** ԳՊՀ կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս, ԵՊՀ դասախոս, քիմիական գիտությունների թեկնածու, դոցենտ	Հանրակրթական դպրոցների քիմիայի ուսուցիչներ

Հանրային պատասխանատվության և արտաքին կապերի ընդլայնման ոլորտում բաժնի կողմից իրականացվել են հանրակրթական դպրոցների և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ համագործակցության ապահովմանն ուղղված աշխատանքներ ԳՊՀ որակի ապահովման բաժնի և ֆակուլտետների հետ համատեղ կազմակերպվել են թվով 12 այցելություններ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղի Ս. Մակարյանի անվան N 1, Սարուխանի Մ. Խոստեղյանի անվան N 2, Սարուխանի Հ. Խաչատրյանի անվան N 3, Գանձակ գյուղի N 1, N 2, Հայրավանք գյուղի, Ծովազարդ գյուղի, Կարմիրգյուղ գյուղի N 1, N 2, Զոլաքար գյուղի Ալվարդ Վարդանյանի անվան N 2, Արծվանիստի միջնակարգ դպրոցներ, Վարդենիկի կրթահամալիր՝ դիմորդների մասնագիտական կողմնորոշման, շարունակական կրթությամբ ուսումը շարունակելու վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրման նպատակով:,

ԳՊՀ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ 2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

I. ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Կրթական գործընթացի արդյունավետության շարունակական բարձրացում և արդիականացում,
2. ֆակուլտետներում և ամբիոններում ուսումնամեթոդական ռեսուրսների մշտադիտարկում,
3. համադրական ուսումնասիրության և հենանիշային վերլուծության (բենչմարքինգի) իրականացման գործընթացի արդյունավետության բարձրացում, բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերի, դրանցում ամրագրված իրազեկությունների շարունակական մշտադիտարկում և բարելավում՝ ՀՀ Որակավորումների ազգային շրջանակի, Որակավորումների ոլորտային շրջանակի բնութագրիչների, ՄԿԾ-ներում և առարկայական ծրագրերում դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների հաշվառմամբ,
4. բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերի ներքին աուդիտի ժամանակացույցի կազմում, նախապատրաստական աշխատանքների իրականացում՝ արտաքին գնահատման նպատակով
5. դասալսումների հաճախակի անցկացում, կազմակերպման ձևաչափի բազմազանեցում, դասավանդման արդյունավետ փորձի տարածում,
6. ԳՊՀ ուսանողներին կրթական գործընթացին վերաբերող հարցերով խորհրդատվությունների տրամադրում, շարունակական կրթությամբ սովորող, ինչպես նաև այլ բուհերից տեղափոխված և ուսումը ԳՊՀ-ում շարունակող ուսանողների ինտեգրում ուսումնական գործընթացին:

II. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Գավառի պետական համալսարանի 2023-2027 թվականների գիտահետազոտական գործունեության շրջանակի, Գավառի պետական համալսարանի ամբիոնների 2023-2027 թվականների գիտահետազոտական գործունեության հիմնական ուղղությունների կատարման արդյունքների մշտադիտարկում, վերլուծություն, բարելավման միջոցների առաջարկում,
2. համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտահետազոտական գործունեության խրախուսման կառուցակարգերի մշակում՝ բարձր ազդեցության գործակից ունեցող պարբերականներում հոդվածների տպագրման նպատակով
3. ԳՊՀ գիտական պարբերականում տպագրության ներկայացվող հոդվածների ստուգում՝ հակագրագողության ծրագրերով,
4. համալսարանի գիտական պարբերականում տպագրության ներկայացվող հոդվածների գրախոսման ընթացակարգի բարելավում, տպագրվող նյութերի թվային օբյեկտի նույնականացուցչի (ԹՕՆ՝ DOI-Digital Object Identifier) և համընդհանուր տասնորդական դասիչի (ՀՏԴ՝ UDC-Universal Decimal Classification) շարունակական ապահովում:

5. ԳՊՀ ամբիոնների գիտահետազոտական աշխատանքներում սովորողների ներգրավում, դասախոս-ուսանող համահեղինակությամբ ԳՊՀ գիտական պարբերականում տպագրության ներկայացված գիտական հոդվածների քանակական ցուցանիշների մշտադիտարկում, վերլուծություն:

III. ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ, ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի համար մասնագիտական և մանկավարժական ուղղություններով վերապատրաստումների կազմակերպում և արդյունքների վերլուծություն,
2. ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի վարկանիշավորման գործընթացի իրականացում, արդյունքների վերլուծություն,
3. Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի հետ համատեղ ԱՔԲ էլեկտրոնային հարթակի գործարկում՝ ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների հետ իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով,
4. ԳՊՀ ակադեմիական տեղեկագրերի էլեկտրոնային տարբերակների գործարկում:

IV. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Հանրակրթական դպրոցների և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ համագործակցության ապահովում, դիմորդների մասնագիտական կողմնորոշում, շարունակական կրթությամբ ուսումը շարունակելու վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրում,
2. «ԳՊՀ-դպրոցներ» համագործակցության աշխատանքների շարունակական իրականացում, աշակերտների և ուսուցիչների ընդգրկում Գավառի պետական համալսարանի կողմից իրականացվող կրթադաստիարակչական տարաբնույթ միջոցառումներին և հետազոտական աշխատանքներին:

V. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. ԱՔԲ գործունեության շրջանակներում ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի, համալսարանի էթիկայի կանոնների և հակակոռուպցիոն ռազմավարության դրույթների իրականացում, ներքին և արտաքին շահառուների հետ հարաբերություններում բարեվարքության սկզբունքների ու նորմերի պահպանում:

Օլգա Ղազարյան՝
Ակադեմիական քաղաքականության
բաժնի վարիչ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺՆԻ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2024-2025 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի (ՈԱԲ) 2023-2024 ուսումնական տարվա գործունեությունը բխել է ԳՊՀ-ի զարգացման հնգամյա ռազմավարական ծրագրի առաջնահերթություններից, որակի ապահովման քաղաքականությունից և ՈԱԲ 2023-2024 ուսումնական տարվա գործողությունների պլանում ամրագրված նպատակներից:

Հաշվետու ուստարում ՈԱԲ-ը՝ համալսարանում իրականացվող բոլոր գործընթացների որակի կառավարման Պլանավորում-Իրագործում-Գնահատում-Բարելավում (ՊԻԳԲ) շրջափուլն ապահովելու նպատակով ակտիվ համագործակցել է ներքին և արտաքին շահակիցների, կրթության որակի ապահովման համակարգում ներգրավված մարմինների հետ:

Հաշվետու ժամանակահատվածում ՈԱԲ-ն իր գործառույթներն իրականացնելիս առաջնային է համարել արժանահավատ տվյալների հավաքագրման գործընթացը, բազմակողմանի մոտեցմամբ փաստահեն գնահատումները և վերլուծությունները, դրանց հիման վրա բարելավման ուղիների նախանշումը: Այս համատեքստում բաժինը բուհում իրականացվող բոլոր գործընթացների որակի ապահովմանը միտված արժանահավատ տվյալների հավաքագրման նպատակով կիրառել է հետևյալ գործիքակազմը.

1. հարցումներ,
2. նպատակային /ֆոկուս/ խմբերի հետ հանդիպումներ, քննարկումներ,
3. անելիքի պլանավորում,
4. դասալսումներ,
5. մշտադիտարկումներ,
6. վերլուծություններ,
7. գնահատման իրականացում
8. արդյունքների ներկայացում,
9. հաշվետվություններ,
10. բարելավման միջոցների առաջարկում:

1. <u>Հարցումներ.</u>

2023-2024 ուստարում ՈԱԲ-ը վերանայել և բարեփոխել է բուհում կրթության որակի ներքին գնահատմանը վերաբերող թվով 26 հարցաթերթերից 4-ը, միաժամանակ ԳՊՀ ներքին շահակիցների հետ համատեղ աշխատանքի արդյունքում մշակել և գործածության մեջ է դրել ևս 3 հարցաթերթ՝ ուղղված գործատուների, ուսանողների, ուսանող-պրակտիկանտների, Արցախից բռնի տեղահանված և Գավառի պետական համալսարանում կրթությունը շարունակող ուսանողների կարիքների վերհանմանը: 2023-2024 ուսումնական տարում ՈԱԲ-ի կողմից իրականացվել են թվով 14 հարցում՝ ներքին և արտաքին շահակիցների շրջանում, որոնց արդյունքում ուսումնասիրվել և վեր են հանվել հարցվողների կրթական կարիքները, կարծիքներն ու առաջարկությունները, գնահատվել է ԳՊՀ-ում կրթության որակից նրանց բավարարվածության աստիճանը:

Հարցումների արդյունքների արժանահավատությունը և օբյեկտիվությունն ապահովելու համար ՈԱԲ-ը կարևորել է հարցման նպատակը, թիրախային խմբի ճիշտ ընտրությունը, տվյալ ժամանակահատվածում գնահատում կատարելու նպատակահարմարությունն ու պարբերականությունը:

Հարցումների արդյունքում կատարվել են հետևյալ վերլուծությունները.

Ներքին շահառուներին հասցեագրված

ԳՊՀ բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներ՝

1. ԳՊՀ առաջին կուրսի ուսանողների կարիքների վերհանման վերաբերյալ հարցման արդյունքների վերլուծություն
2. Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի ինտեգրման արդյունավետությունից ԳՊՀ ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցման արդյունքների վերլուծություն
3. ԳՊՀ-ում դասավանդման որակի և ուսումնական գործընթացի արդյունավետության գնահատման հարցման արդյունքների վերլուծություն
4. Մանկավարժական, արտադրական, նախաավարտական պրակտիկաների կազմակերպման ընթացքից և արդյունավետությունից Գավառի պետական համալսարանի ուսանողների բավարարվածության գնահատման արդյունքների վերլուծություն
5. Գավառի պետական համալսարանի ուսումնական ռեսուրսներից ուսանողների բավարարվածության գնահատման հարցման արդյունքների վերլուծություն
6. Արցախից բռնի տեղահանված և Գավառի պետական համալսարանում կրթությունը շարունակող ուսանողների կրթական կարիքների վերհանմանը միտված հարցման արդյունքների վերլուծություն
7. Գավառի պետական համալսարանում աշխատանքահեն ուսուցման իրականացման հնարավորությունների գնահատման վերաբերյալ ուսանողների հարցման արդյունքների վերլուծություն

Արտաքին շահակիցներին հասցեագրված

Գործատուներ՝

8. Գավառի պետական համալսարանում աշխատանքահեն ուսուցման իրականացման հնարավորությունների գնահատման վերաբերյալ գործատուների շրջանում իրականացված հարցման արդյունքների վերլուծություն
9. Գործատուի կողմից Գավառի պետական համալսարանի պրակտիկայի մասնակից ուսանողների մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման հարցման արդյունքների վերլուծություն

Դիմորդներ՝

10. Դիմորդների կարիքների վերհանման հարցման արդյունքների վերլուծություն

Ուսուցիչներ՝

11. Հանրակրթական դպրոցների ուսուցիչների կարիքների վերհանման հարցման արդյունքների վերլուծություն

Շրջանավարտներ՝

12. Գավառի պետական համալսարանի բակալավրիատում ավարտական աշխատանքի կատարման ընթացքի, ամփոփիչ ատեստավորման գործընթացի կազմակերպման

վերաբերյալ՝ շրջանավարտների բավարարվածության գնահատման արդյունքների վերլուծություն

13. Գավառի պետական համալսարանի մագիստրատուրայում մագիստրոսական թեզի կատարման ընթացքից, ամփոփիչ ատեստավորման կազմակերպման գործընթացից շրջանավարտների բավարարվածության գնահատման արդյունքների վերլուծություն
14. Գավառի պետական համալսարանում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման արդյունքների վերլուծություն

Հարցումների արդյունքների վերլուծությունները, դրանց հիման վրա ՈԱԲ-ի առաջարկությունները ներկայացվել են ԳՊՀ ՈԱԲ-ի, համապատասխան ֆակուլտետների խորհուրդների, ռեկտորատի, գիտական խորհրդի նիստերում, դրանց վերաբերյալ եղել են քննարկումներ: Արդյունքները կողմնորոշիչ են եղել բուհի կառուցվածքային ստորաբաժանումների 2024-2025 ուստարվա զարգացման ծրագրերը կազմելիս, բարելավման ուղիները նախանշելիս:

2. <u>Նպատակային /ֆոկուս/ խմբերի հետ հանդիպումներ, քննարկումներ</u>.

Հաշվետու ուստարում նպատակային /ֆոկուս/ խմբերի հետ հանդիպումները կրել են պարբերական բնույթ, դրանք տեղի են ունեցել ինչպես բուհի ներսում, այնպես էլ բուհից դուրս: Նպատակային խմբերում ներգրավված են եղել ԳՊՀ-ի ուսանողական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները, շրջանավարտները, Արցախից բռնի տեղահանված և ԳՊՀ-ում կրթություն շարունակող ուսանողները, գործատուները, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները:

Բուհի ներսում հանդիպումները հիմնականում տեղի են ունեցել ՈԱԲ-ի նիստերի շրջանակում, իսկ բուհից դուրս բաժինը հանդիպումներ է ունեցել արտաքին շահակից ԳՊՀ ապագա դիմորդների, հանրակրթական դպրոցների ուսուցիչների և գործատուների հետ:

Հանդիպումների, քննարկումների և աշխատաժողովների արդյունքում համատեղ ուժերով ի մի են բերվել շահակիցների կարիքները, բուհի կրթության որակի ներքին ապահովմանը միտված տեսակետները, նկատառումները, կարծիքները և ներկայացվել են առաջարկություններ, որոնք տեղ են գտել համապատասխան վերլուծություններում՝ դառնալով ստորաբաժանումների համար ուղենիշային՝ բարելավման պլանները մշակելիս:

Այս համատեքստում 2024թ. մարտ, ապրիլ, մայիս ամիսներին ՀՀ Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների հետ համագործակցության ծրագրի շրջանակներում ԳՊՀ ՈԱԲ աշխատակիցները ֆակուլտետների դեկանների, փոխդեկանների, դասախոսների, այլ ստորաբաժանումների ղեկավարների և ներկայացուցիչների մասնակցությամբ հանդիպումներ ունեցան Գեղարքունիքի մարզի թվով 27 հանրակրթական դպրոցների շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների ապագա դիմորդների և ուսուցիչների հետ /տե՛ս Աղյուսակ 1/: Հանդիպումների ընթացքում բարձր դասարանների աշակերտների մասնագիտական կողմնորոշմանն աջակցելու, նրանց կարիքները վերհանելու, ուսումնասիրելու, գնահատելու և համալսարանում գործող մասնագիտական կրթական ծրագրերի ցանկը վերանայելու ու բարելավելու համար ՈԱԲ աշխատակիցների կողմից իրականացվել է նաև հարցում:

Աղյուսակ 1.

Հ/Հ	Դպրոց	Տնօրեն	Ամսաթիվ	Պատասխանատուներ
1.	Գավառի ավագ դպրոց	Ղուլոյան Նինա	04.03.2024թ.	Հայրապետյան Ք. Միրիբյան Ն. Հովեյան Ս. Բադալյան Լ. Պողոսյան Լ.
2.	Նորատուս գյուղի N 1 միջնակարգ դպրոցներ	Ավետիսյան Վարդ	05.03.2024թ.	Հայրապետյան Ք. Միրիբյան Ն. Պողոսյան Ա. Թադևոսյան Թ. Բադալյան Լ.
3.	Նորատուս գյուղի N 2 միջնակարգ դպրոցներ	Ներսիսյան Նաիրա	05.03.2024 թ.	Հայրապետյան Ք. Միրիբյան Ն. Պողոսյան Ա. Թադևոսյան Թ. Բադալյան Լ.
4.	Նորատուս գյուղի N 3 միջնակարգ դպրոցներ	Բաղդասարյան Արև	05.03.2024թ.	Հայրապետյան Ք. Միրիբյան Ն. Պողոսյան Ա. Թադևոսյան Թ. Բադալյան Լ.
5.	Սարուխան գյուղի Ս. Մակարյանի անվան N 1 միջնակարգ դպրոց	Մուդոյան Հայկ	11.03.2024թ.	Հայրապետյան Ք. Ղազարյան Օ. Ասլանյան Ա. Բադալյան Լ.
6.	Սարուխանի Մ. Խոստեղյանի անվան N 2 միջնակարգ դպրոց	Բադալյան Գոհար	11.03.2024թ.	Հայրապետյան Ք. Ղազարյան Օ. Ասլանյան Ա. Բադալյան Լ.
7.	Սարուխան գյուղի Հ. Խաչատրյանի անվան N 3 միջնակարգ դպրոց	Հովհաննիսյան Սուսանա	11.03.2024թ.	Հայրապետյան Ք. Ղազարյան Օ. Ասլանյան Ա. Բադալյան Լ.
8.	Լանջաղբյուր գյուղի Վ. Ադամյանի անվան միջնակարգ դպրոց	Լուսինե Ավետիսյան	19.03.2024թ.	Հայրապետյան Ք. Ղազարյան Օ. Միրիբյան Ն. Բադալյան Լ.
9.	Գանձակ գյուղի N 1 միջնակարգ դպրոց	Եղիազարյան Հասմիկ Խաժակի	01. 04. 2024թ.	Հայրապետյան Ք. Ղազարյան Օ. Միրիբյան Ն. Բադալյան Լ.
10.	Գանձակ գյուղի N 2 միջնակարգ դպրոց	Բարսեղյան Անուշ Լյովայի	01.04.2024թ.	Հայրապետյան Ք. Ղազարյան Օ. Միրիբյան Ն. Բադալյան Լ.
11.	Հայրավանք գյուղի միջնակարգ դպրոց	Գալոյան Վարդուհի Հարութի	02.04.2024թ.	Հայրապետյան Ք. Ղազարյան Օ. Միրիբյան Ն. Բադալյան Լ.

12.	Ծովազարդ գյուղի միջնակարգ դպրոց	Գալստյան Նվեր Բաբկենի	02.04.2024թ.	Հայրապետյան Ք. Ղազարյան Օ. Միրիբյան Ն. Բադալյան Լ.
13.	Կարմիրգյուղ գյուղի N 1 միջնակարգ դպրոց	Շահբազյան Կարինե	23. 04.2024թ.	Հայրապետյան Ք. Ղազարյան Օ. Վարդանյան Անի Բատիկյան Թերմինե Բատիկյան Քրիստինե
14.	Կարմիրգյուղ գյուղի N 2 միջնակարգ դպրոց	Ենգոյան Գոհար	23.04.2024թ.	Հայրապետյան Ք. Ղազարյան Օ. Վարդանյան Անի Բատիկյան Թերմինե Բատիկյան Քրիստինե
15.	Լճաշեն գյուղի Ա. Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց	Մուրադյան Աիդա Միշայի	25.04.2024թ.	Մուրադյան Ն. Նախրատյան Մ. Միրիբյան Ն.
16.	Սևան քաղաքի N 5 միջնակարգ դպրոց	Նավասարդյան Խաժակն	25.04.2024թ.	Մուրադյան Ն. Նախրատյան Մ. Միրիբյան Ն.
17.	Սևան քաղաքի N 6 միջնակարգ դպրոց	Գևորգյան Էդիկ Սուրիկի	25.04.2024թ.	Մուրադյան Ն. Նախրատյան Մ. Միրիբյան Ն.
18.	Գեղհովիտ գյուղի Ալ. Մյասնիկյանի անվան N 1 միջնակարգ դպրոց	Ասլանյան Էդվարդ	29.04.2024թ.	Միրիբյան Ն. Սարգսյան Ռ. Մարգարյան Ջ.
19.	Գեղհովիտ գյուղի N 2 միջնակարգ դպրոց	Սաֆարյան Մանվել	29.04.2024թ.	Միրիբյան Ն. Սարգսյան Ռ. Մարգարյան Ջ.
20.	Աստղաձոր գյուղի միջնակարգ դպրոց	Սիրեկանյան Ջիվան	29.04.2024թ.	Միրիբյան Ն. Սարգսյան Ռ. Մարգարյան Ջ.
21.	Վաղաշեն գյուղի միջնակարգ դպրոց	Սուվարյան Լաուրա	29.04.2024թ.	Միրիբյան Ն. Սարգսյան Ռ. Մարգարյան Ջ.
22.	Զոլաքար գյուղի N 1 միջնակարգ դպրոց	Մարգարյան Ռուզան	30.04.2024թ.	Միրիբյան Ն. Սարգսյան Ռ. Հայրապետյան Ք. Ղազարյան Օ.
23.	Զոլաքար գյուղի Ալվարդ Վարդանյանի անվան N 2 միջնակարգ դպրոց	Մելիքյան Կարեն	30.04.2024թ.	Միրիբյան Ն. Սարգսյան Ռ. Հայրապետյան Ք. Ղազարյան Օ.
24.	«Վարդենիկի կրթահամալիր» ՊՈԱԿ	Բադալյան Կամո Սերյոժայի	30.04.2024թ.	Միրիբյան Ն. Սարգսյան Ռ. Հայրապետյան Ք. Ղազարյան Օ.

25.	Արծվանիստի միջնակարգ դպրոց	Սահակյան Թոռնիկ Վանիկի	30.04.2024թ.	Միրիբյան Ն. Սարգսյան Ռ. Հայրապետյան Ք. Ղազարյան Օ.
26.	Գավառի Գեորգի Մնացականյանի անվան N7 միջնակարգ դպրոց	Ավետիսյան Սուսաննա	02.05.2024թ.	Կուտուզյան Ն. Բադալյան Լ. Միրիբյան Ն.
27.	Գավառի N 8 միջնակարգ դպրոց	Անուշ Հակոբյան ժ/պ	02.05.2024թ.	Կուտուզյան Ն. Բադալյան Լ. Միրիբյան Ն.

3. Մշտադիտարկում

Հաշվետու ուստարում ՈԱԲ-ը համալսարանում իրականացվող բոլոր գործընթացների որակը գնահատելու և մշտադիտարկելու նպատակով ակտիվ համագործակցել է ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների, ակադեմիական քաղաքականության, արտաքին կապերի և լրատվության բաժինների, այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ: Համատեղ իրականացվել են ԳՊՀ կայքէջի և ՈԱԲ-ի էլեկտրոնային հարթակի մշտադիտարկում և համալրում: Հաշվետու ուստարվա ընթացքում կայքէջում թարմացվել են ԳՊՀ ընթացակարգերը, ներբուհական այլ իրավական ակտերը, «Որակի ապահովում» հարթակը համալրվել է համապատասխան ենթաբաժիններով և նյութերով: Հաշվետու ուստարում ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման «learn.gsu.am» համակարգը պարբերաբար վերանայվել, ստուգվել է ՈԱԲ-ի կողմից, այնուհետ ըստ պատասխանատուների շարունակաբար համալրվել և թարմացվել է նոր նյութերով՝ դասախոսություններով, էլեկտրոնային ժամանակակից մասնագիտական գրականությամբ և այլ անհրաժեշտ ուսումնական ռեսուրսներով:

2023-2024 ուստարվա ընթացքում ԳՊՀ տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների հետ համատեղ աշխատանքի արդյունքում ՈԱԲ-ը մշտադիտարկել և թարմացրել է ԳՊՀ պայմանագրերը, համագործակցության հուշագրերը և համաձայնագրերը: Հաշվետու ժամանակահատվածում կնքվել և վերակնքվել են գործընկեր հաստատությունների հետ 43 պայմանագրեր, որոնցից միայն 38-ը՝ բուհ-դպրոց համագործակցության, փոխադարձ այցելությունների արդյունքում:

Հաշվետու ժամանակահատվածում մշտադիտարկվել են ԳՊՀ գիտական հոդվածների 14-րդ և 15-րդ ժողովածուները, մշտադիտարկման արդյունքների հիման վրա ներկայացվել է վերլուծություն:

Հիմք ընդունելով 2022-2023 ուսումնական տարվա ԳՊՀ-ում դասավանդման որակի և ուսումնական գործընթացի արդյունավետության գնահատման հարցման արդյունքները՝ ԳՊՀ ակադեմիական քաղաքականության բաժնի հետ համատեղ ԳՊՀ-ի 2 ֆակուլտետներում իրականացվել են թվով 38 դասալսումներ՝ նախորդ ուստարվա 23-ի համեմատությամբ:

Հաշվետու ուստարում ՈԱԲ աշխատակիցներն ընդգրկված են եղել ԳՊՀ 2023-2024 ուստարվա առկա, հեռակա բաժինների բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության հանձնաժողովների կազմերում, ինչպես նաև ԳՊՀ-ում կադեմիական անազնվության դեպքերը քննող հանձնաժողովի կազմում:

Վերապատրաստումներ, աշխատաժողովներ

ՈԱԲ-ի աշխատակիցները հաշվետու ուստարում մասնակցել են ինչպես ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպած դասընթացներին, քննարկումներին, աշխատանքային հանդիպումներին, այնպես էլ այլ հանդիպումների և վերապատրաստումների.

1. 2024 թվականի ապրիլի 9-ին ՈԱԲ աշխատակիցները մասնակցել են ՈԱԱԿ-ի կողմից պարբերաբար կազմակերվող առցանց հանդիպմանը՝ նվիրված Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի և Հայկական բժշկական ինստիտուտի մասնագիտական կրթական ծրագրերի մշակման, բարելավման և լավագույն փորձի ուսումնասիրմանը:
2. 2024 թվականի ապրիլի 11-ին ՈԱԱԿ–ում ԳՊՀ ՈԱԲ բաժնի վարիչ Քանաքարա Հայրապետյանը մասնակցել է ՈԱԱԿ-ի կողմից բուհերում որակի ապահովման համակարգի մշտադիտարկումների իրականացման շրջանակում կազմակերպվող քննարկմանը:
3. 2024 թվական հունիսի 6-ին և 7-ին Եվրոպական միության «Էրազմուս+» ծրագրի տեխնիկական աջակցության առաքելությունների շրջանակում որակի ապահովման բաժնի վարիչ Քանաքարա Հայրապետյանը և արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լիլիթ Թոռչյանը Հայաստանի ազգային ագրարային համալսարանում մասնակցել են «Համալսարանների կառավարումն ու կազմակերպչական ենթակառուցվածքները՝ որպես որակյալ կրթության հիմք» թեմայով աշխատաժողովին:
4. 2024 թվական հուլիսի 16-ին ԳՊՀ պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը և ՈԱԲ բաժնի վարիչ Քանաքարա Հայրապետյանը մասնակցել են ՈԱԱԿ-ի և գերմանական Որակի ապահովման գործակալության (AQAS) նախաձեռնած համատեղ միջազգային հավատարմագրման գործընթացի առանձնահատկություններին նվիրված աշխատաժողովին:

ԳՊՀ որակի ապահովման բաժնի 2024-2025 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունները

ԳՊՀ զարգացման 2023-2027թթ. ռազմավարական ծրագրի և ՈԱ քաղաքականության նպատակներին, Բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման եվրոպական չափորոշիչներին և ուղենիշներին, ինչպես նաև ՀՀ Որակի ապահովման ազգային կենտրոնի փորձագիտական խմբի զեկույցի հիման վրա մշակված՝ ԳՊՀ բարելավման ծրագրին համապատասխան՝ 2024-2025 ուստարում նախատեսվում են ՈԱԲ գործունեության հետևյալ հայեցակարգային ուղղությունները.

II. ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Կրթության որակի ապահովման ներբուհական համակարգի շարունակական բարելավում՝ որակի ապահովման կառուցակարգերի հստակեցում, շահակիցների ավելի ակտիվ ներգրավում որակի ապահովման գործընթացներում:

2. ԳՊՀ-ում կրթության որակի ապահովման գործընթացների համադրելիության ապահովում Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի (ԵԲԿՏ) որակի ապահովման գործընթացներին, կրթության որակի ապահովման համակարգի գործունեության արդյունավետության բարձրացում:
3. Ֆակուլտետների, ամբիոնների հետ համատեղ աշխատանքի արդյունքում մասնագիտական կրթական ծրագրերի պարբերական վերանայում, գնահատում, արդիականացմանը միտված առաջարկությունների ներկայացում:
4. Ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման և դրանց բավարարման հնարավոր ուղիների վերաբերյալ հարցումների անցկացում, արդյունքների վերլուծություն, առաջարկությունների ներկայացում, բարելավման ուղիների նախանշում:

III. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. ԳՊՀ-ում գիտահետազոտական աշխատանքների որակի ստուգման մեթոդաբանության մշտադիտարկում, դրանցում շահառուների ներգրավվածության ուսումնասիրում,
2. այս ուղղությամբ նրանց կարիքները, նկատառումներն ու առաջարկություններն ուսումնասիրելու համար հարցումների անցկացում, դրանց արդյունքների վերլուծություն, առաջարկությունների ներկայացում,
3. կրթության և գիտահետազոտական աշխատանքի արդյունքների ինտեգրման գործընթացի բարելավում:

IV. ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ, ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Ուսումնական ռեսուրսների կիրառման արդյունավետության գնահատում,
2. կրթական միջավայրի վերաբերյալ ներքին և արտաքին շահակիցների շրջանում հարցումների անցկացում, արդյունքների վերլուծություն,
3. համապատասխան եզրակացությունների և առաջարկությունների ներկայացում, բարելավման ուղիների նախանշում:

V. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. ԳՊՀ գործունեության հրապարակայնությունն ապահովող մեթոդաբանության արդյունավետության գնահատում և բարելավման առաջարկությունների ներկայացում:
2. Որակի ապահովման ներբուհական գործընթացներում հրապարակայնության և հաշվետվողականության սկզբունքի պահպանում:
3. ԳՊՀ կայքէջի պարբերաբար վերանայում, մշտադիտարկում,

4. որակի ապահովման գործընթացների վերաբերյալ շահակիցներին հավաստի և պատշաճ տեղեկատվության տրամադրում:

VI. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Հակակոռուպցիոն ծրագրի իրականացման արդյունավետության գնահատում, վերլուծության իրականացում, եզրակացությունների և առաջարկությունների ներկայացում:
2. Դասախոսների, ուսանողների, աշխատակիցների շրջանում հնարավոր կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ անանուն հարցումների իրականացում, արդյունքների ամփոփում, համապատասխան կանխարգելիչ միջոցառումների բարելավման ուղիների նախանշում:

Քանաքարա Հայրապետյան՝
ԳՊՀ որակի ապահովման բաժնի վարիչ,
պատմական գիտությունների թեկնածու

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանի արտաքին կապերի և լրատվության բաժինը հաշվետու ուսումնական տարվա ընթացքում իրականացրել է տարաբնույթ տեղեկատվական, ուսուցողական, ճանաչողական ծրագրեր, կազմակերպել միջոցառումներ, կատարել բուհի գիտահետազոտական, կրթական, ուսումնամեթոդական, դաստիարակչական գործունեության օպերատիվ լուսաբանում՝ ապահովելով սերտ համագործակցություն գործընկեր կազմակերպությունների, ներքին և արտաքին շահակիցների հետ:

Իր գործառույթներն իրականացնելիս՝ բաժինը համակարգված աշխատել է ԳՊՀ ռեկտորատի, ֆակուլտետների դեկանատների, ամբիոնների աշխատակազմերի, ակադեմիական քաղաքականության բաժնի, որակի ապահովման բաժնի, ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության, համալսարան-գործատու համագործակցության կենտրոնի, բուհում գործող ակումբների, ուսումնաօժանդակ, տնտեսատեխնիկական և այլ ստորաբաժանումների հետ:

Գավառի պետական համալսարանում 2023-2024 ուսումնական տարում շարունակվել են աշխատանքները բուհի միջազգայնացման գործընթացները խթանելու ուղղությամբ:

2023-2024 ուսումնական տարվա ընթացքում վերակնքվել են մի շարք պայմանագրեր: Մասնավորապես, վերակնքվել են պայմանագրեր հետևյալ եվրոպական համալսարանների հետ.

1. Ալմերիայի համալսարան, Իսպանիա,
2. Վալլադոլիդի համալսարան, Իսպանիա,
3. Կորդոբայի համալսարան, Իսպանիա,
4. Մուրսիայի Սան Անտոնիո Կաթոլիկե համալսարան, Իսպանիա,
5. Մինհոյի համալսարան, Պորտուգալիա,
6. Սապիենզայի համալսարան, Իտալիա,
7. Կորունայի համալսարան, Իսպանիա,
8. Տիմիշոարայի համալսարան, Ռումինիա,
9. Բրագանսայի պոլիտեխնիկ համալսարան, Պորտուգալիա:

Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի անդամները հաշվետու ուսումնական տարում մասնակցել են մի շարք միջազգային և հանրապետական գիտաժողովների, աշխատաժողովների, սեմինարների և վեբինարների:

2023թ. սեպտեմբերի 10-ից 15-ը Լիտվայի Հանրապետության Կլայպեդայի համալսարանում տեղի ունեցավ Եվրոպական Միության «ERASMUS+ FLEXWBL Հայաստանի և Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում աշխատանքի վրա հիմնված ուսուցման ճկուն, նորարարական և գործնական հիմքի մշակում» ծրագրի հերթական աշխատաժողովը՝ նվիրված աշխատանքահեն ուսուցման առանձնահատկություններին: Գավառի պետական համալսարանից աշխատաժողովին

մասնակցեցին ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Վարազդատ Ավետիսյանը, տնտեսագիտական ֆակուլտետի հաշվապահական հաշվառման ամբիոնի դասախոս, գլխավոր հաշվապահ Գուրգեն Մուրադյանը, արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լիլիթ Թոռչյանը և նույն բաժնի մասնագետ Սիրանույշ Մկրտչյանը:

Հաշվետու ուսումնական տարվա հոկտեմբերի 23-ից 28-ը Լատվիայի Հանրապետության Լիեպայայի համալսարանում կայացավ Եվրոպական Միության «ERASMUS+FLEXWBL» ծրագրի եզրափակիչ աշխատաժողովը: Ծրագիրը նվիրված էր աշխատանքահեն կրթությանը և իրականացվեց Հայաստանի Հանրապետության երեք բուհում՝ Գավառի պետական համալսարանում, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում և Հայաստանի ճարտարապետության և շինարարության ազգային համալսարանում: Գործընկեր եվրոպական բուհերն էին Ավստրիայի Լինցի, Լիտվայի Կլայպեդայի և Լատվիայի Լիեպայայի համալսարանները:

Հանդիպման ընթացքում ծրագրի անդամ բուհերի պատվիրակները ներկայացրին իրենց կատարած աշխատանքները՝ 2019-2023 թվականների ընթացքում, նշելով կրթական ծրագրերի բովանդակային, մեթոդաբանական, փաստաթղթային վերանայման և արդիականացման մասին՝ միտված աշխատանքահեն կրթության նպատակների իրականացմանը:

Այնուհետև նոյեմբերի 29-ին տեղի ունեցավ Եվրոպական Միության «ERASMUS+ FLEXWBL» ծրագրի ադյունքների ներկայացմանը նվիրված ամփոփիչ հանդիպում՝ առցանց ձևաչափով:

Ծրագրի իրականացման արդյունքում մշակվեցին հետազոտությունների մեթոդաբանական ուղեցույց և աշխատանքեն ուսուցման իրականացման շրջանակ, իսկ ԵՄ գործընկեր բուհերը ներկայացրին մասնագիտական գրականություն՝ նվիրված աշխատանքահեն ուսուցման սահմանմանը, իրականացման առանձնահատկություններին, այս ոլորտում իրենց ունեցած փորձին:

ԳՊՀ-ն ծրագրի շրջանակում ձեռք բերեց թվով 9 տեսակ սարքավորում, որը տեղադրված է համապատասխան ստորաբաժիններում և նպաստում է բուհում անհրաժեշտ կրթական միջավայրի ապահովմանը:

Հաշվետու ուսումնական տարում Լեհաստանի Հանրապետության Կրակովի Յագելոնյան համալսարանում տեղի ունեցավ Եվրոպական Միության «ERASMUS+T-Green» ծրագրի հերթական աշխատաժողովը: T-GREEN-ը հետբակալավրիական կրթության բարեփոխումներին միտված ծրագիր է, որի հիմնական նպատակը «կանաչ կրթության» քաղաքականության սկզբունքներն ու կառուցակարգերը մագիստրոսական ծրագրերում արտացոլումը և իրականացումն է, դեպի ապագային միտված, «կանաչ» և միջառարկայական ուսումնական ծրագրերի կենսագործումը՝ խթանելով ուսանողների ակադեմիական շարժունությունը, մշակելով համատեղ և կրկնակի որակավորում շնորհող կրթական ծրագրեր: Աշխատաժողովի ընթացքում ԵՄ գործընկերները ներկայացրին Հունաստանի միջազգային Հելլենիկ, Պորտուգալիայի կաթոլիկ, Կրակովի Յագելոնյան և Լիտվայի Միկոլաս Ռոմերիսի անվան համալսարանների՝ «կանաչ կրթության» քաղաքականության մշակման, համատեղ և կրկնակի որակավորումներ շնորհող կրթական ծրագրերի իրականացման փորձը, ինչպես նաև կազմակերպվեցին վերապատրաստման դասընթացներ

կրեդիտների կուտակման և փոխանցման, ակադեմիական շարժունության ծրագրերի իրականացման վերաբերյալ:

Գավառի պետական համալսարանից աշխատաժողովին մասնակցել են ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը, գլխավոր հաշվապահ Գուրգեն Մուրադյանը, հաշվապահական հաշվառման ամբիոնի վարիչ Հակոբ Ղուլոյանը, արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լիլիթ Թոռչյանը:

Հաշվետու ուսումնական տարում ԳՊՀ-ն սկսել է անդամակցել նոր՝ Եվրոպական Միության «Էրազմուս+ KPI4HE. Հայաստանում ներառական, թվային ու կանաչ ուղղվածությամբ բարձրագույն կրթության պատշաճ կառավարման և որակի համար գործունեության առանցքային ցուցանիշների ազգային շրջանակի (ԳԱՑԱՇ) ստեղծում» ծրագրին: Հունվարի 30-ին և 31-ին Երևանի պետական համալսարանում տեղի ունեցան ծրագրի մեկնարկային հանդիպումները:

Ծրագրի նպատակն է բարելավել բարձրագույն կրթության համակարգի կառավարումը, համալսարանների ռազմավարական պլանավորումը, որոնք կնպաստեն որակյալ ու ներառական, թվային և կանաչ ուղղվածությամբ բարձրագույն կրթության զարգացմանը Հայաստանում՝ բարձրագույն կրթության գործունեության առանցքային ցուցանիշների ազգային շրջանակի մշակման և ներդրման, ինստիտուցիոնալ հետազոտությունների կառուցակարգերի զարգացման և պլանավորման ծառայությունների գործարկման, ինչպես նաև հաստատությունների հավատարմագրման պետական չափանիշների վերանայման միջոցով:

Եռամյա ծրագրի համակարգողը Երևանի պետական համալսարանն է, իսկ գործընկեր հաստատություններն են ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը (ՈԱԱԿ), ՀՀ հինգ բուհեր՝ Գավառի պետական համալսարանը, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական, Եվրասիա միջազգային և Հյուսիսային համալսարանները, Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը, մեկ հասարակական կազմակերպություն, ինչպես նաև եվրոպական երեք բուհեր՝ Դրեզդենի տեխնիկական, Օլդենբուրգի (Գերմանիա) և Ջենովայի (Իտալիա) համալսարանները:

Գավառի պետական համալսարանից ԵՊՀ-ում կայացած ծրագրի մեկնարկային հանդիպմանը մասնակցեցին ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Վարազդատ Ավետիսյանը, ակադեմիական քաղաքականության բաժնի վարիչ Օլգա Ղազարյանը, գլխավոր հաշվապահ Գուրգեն Մուրադյանը, արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լիլիթ Թոռչյանը և նույն բաժնի մասնագետ Սիրանույշ Մկրտչյանը:

Արտաքին կապերի և լրատվության բաժնի աշխատակիցները հաշվետու ուսումնական տարում մասնակցել են հետևյալ միջոցառումներին՝ Հայաստանում «Էրազմուս+» գրասենյակի նախաձեռնությամբ Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում տեղի ունեցած հանդիպում՝ հայաստանյան բուհերի միջազգային բաժինների ներկայացուցիչների հետ, Հայկական պետական մանկավարժական համալսարանում կայացած հանդիպում՝ «Բուհերի միջազգայնացմանն ուղղված «Էրազմուս+» նախագծերի միջև փորձի փոխանակում» խորագրով, Երևանի պետական համալսարանում կայացած Հայաստանի և Լիտվայի բուհերի միջև ցանցային հանդիպում:

Հաշվետու ուսումնական տարում ԳՊՀ-ից միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերին մասնակցել է ուսանողների և դասախոսների հետևյալ համակազմը.

Ուսանողներ՝

1-ին կիսամյակ

	Անուն, Ազգանուն Name, Surname	Կրթական աստիճան/Պաշտոն Level/Position	Ժամանակահատված Duration	Համալսարանը University
1.	Սյուզաննա Գասպարյան Syuzanna Gasparyan	Բակալավր Bachelor	5 ամիս 5 months	Կորդոբայի համալսարան, Իսպանիա University of Cordoba, Spain
2.	Իսկուհի Թաթարյան Iskuhi Tataryan	Բակալավր Bachelor	5 ամիս 5 months	Կորդոբայի համալսարան, Իսպանիա University of Cordoba, Spain
3.	Լիաննա Օհանյան Lianna Ohanyan	Բակալավր Bachelor	5 ամիս 5 months	Տիմիշոարայի արևմտյան համալսարան, Ռումինիա West University of Timisoara, Romania
4.	Էլիզա Տոնոյան Eliza Tonoyan	Բակալավր Bachelor	5 ամիս 5 months	Սապիենզայի համալսարան, Իտալիա University of Sapienza, Italy

2-րդ կիսամյակ

	Անուն, Ազգանուն Name, Surname	Կրթական աստիճան/Պաշտոն Level/Position	Ժամանակահատված Duration	Համալսարանը University
1.	Նատաշա Բաղդասարյան Natasha Baghdasaryan	Master	5 months	Սապիենզայի համալսարան, Իտալիա University of Sapienza, Italy
2.	Մելինե Նադարյան Meline Nadaryan	Bachelor	5 months	Վալլադոլիդի համալսարան, Իսպանիա University of Valladolid, Spain
3.	Արմինե Սաֆոյան Armine Safoyan	Bachelor	5 months	Ալմերիայի համալսարան, Իսպանիա University of Almeria, Spain
4.	Արուսյակ Սմբատյան Arusyak Smbatyan	Bachelor	5 months	Էվորայի համալսարան, Պորտուգալիա University of Evora, Portugal

5.	Արծրուն Նաջարյան Artsrun Najaryan	Bachelor	5 months	Ավեյրոյի համալսարան, Պորտուգալիա University of Aveiro, Portugal

Պրոֆեսորադասախոսական կազմ՝

	Անուն, Ազգանուն **Name, Surname**	**Կրթական աստիճան/Պաշտոն** **Level/Position**	**Ժամանակահատված** **Duration**	**Համալսարանը** **University**
1.	Սոնա Սիմոնյան Sona Simonyan	Դասախոս Teaching	1 շաբաթ 1 week	Սապիենզայի համալսարան, Իտալիա University of Sapienza, Italy
2.	Մարե Խաչատրյան Mare Khachatryan	Դասախոս Teaching	1 շաբաթ 1 week	Էվորայի համալսարան, Պորտուգալիա University of Evora, Portugal
3.	Հասմիկ Մարգարյան Hasmik Margaryan	Դասախոս Training	1 շաբաթ 1 week	Էվորայի համալսարան, Պորտուգալիա University of Evora, Portugal
4.	Ռուզաննա Սարգսյան Ruzanna Sargsyan	Դասախոս Teaching	1 շաբաթ 1 week	Մինհոյի համալսարան, Պորտուգալիա University of Minho, Portugal
5.	Լիլիթ Թորչյան Lilit Torchyan	Դասախոս Training	1 շաբաթ 1 week	Մուրսիայի կաթոլիկ համալսարան, Իսպանիա Catholic University of Murcia, Spain
6.	Հասմիկ Մարգարյան Hasmik Margaryan	Դասախոս Teaching	1 շաբաթ 1 week	Վալլադոլիդի համալսարան, Իսպանիա University of Valladolid, Spain
7.	Մարտին Ավագյան Martin Avagyan	Դասախոս Training	1 շաբաթ 1 week	Տիմիշոարայի արևմտյան համալսարան, Ռումինիա West University of Timisoara, Romania

8. a	Սաթիկ Ավագյան Satik Avagyan	Դասախոս Teaching	1 շաբաթ 1 week	Ալմերիայի համալսարան, Իսպանիա University of Almeria, Spain

Ամենօրյա աշխատանքներ են իրականացվել բուհում սովորող սոցիալապես անապահով, բազմանդամ ընտանքների ուսանողների, հաշմանդամություն ունեցող և ծնողազուրկ ուսանողների հետ: Թարմացվել է վերոնշյալ ուսանողների տվյալների բազան, որի հիման վրա համապատասխան կարգավիճակ ունեցող ուսանողները ներգրավվել են կրթաթոշակային ծրագրերում և ստացել ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում:

Բաժինը շարունակել է համագործակցել ԳՊՀ ուսանողներին կրթաթոշակներ տրամադրող կազմակերպությունների հետ. Հայ օգնության ֆոնդի «Ժիրայր Նիշանյան» հիմնադրամ, «ՎՏԲ ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ ՓԲԸ», Հայ կրթական հիմնարկություն, Գավառի համայնքապետարան, Ամերիկայի հայ ավետարանչական ընկերության և այլ բարեգործական, մարդասիրական կառույցների հետ:

ԳՊՀ-դպրոցներ համագործակցության ծրագրի շրջանակներում ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ կազմակերպվել են տարաբնույթ միջոցառումներ:

Բաժնի կողմից հիշյալ հաստատություններին են տրամադրվել դիմորդների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված հարցաթերթեր, տեղեկատվական թերթիկներ:

Բաժնի կողմից համակարգվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների ուսուցիչների համար կազմակերպված տարաբնույթ վերապատրաստումների, մասնագիտական կարողությունների զարգացման ծրագրերի, աշակերտների համար նախատեսված միջոցառումների, դասընթացների կազմակերպչական աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում բուհում կայացած բազմաբնույթ վերապատրաստումների, մրցույթների, միջոցառումների համար ըստ պահանջի պատրաստվել են շնորհակալագրեր, հավաստագրեր:

Իրականացվել է համալսարանում կայանալիք առցանց և անցանց միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության տարածում և մասնակցություն կազմակերպչական աշխատանքներում:

Իրականացվել է ԳՊՀ-ում կայացած միջոցառումների և հիշարժան իրադարձությունների լուսաբանում, լուսանկարում, և նկարված լուսանկարներն արխիվացվել են:

Իրականացվել է ԳՊՀ պաշտոնական կայքէջի ամենօրյա թարմացման աշխատանքներ:

ԳՊՀ «Դիմագիրք» (Facebook) սոցիալական ցանցում կատարվել են ադմինիստրատիվ աշխատանքներ, թարմացումներ, պատասխան են տրվել բոլոր հաղորդագրություններին և մեկնաբանություններին:

Պատասխաններ են տրվել ԳՊՀ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեներին՝ info@gsu.am, infogsu@mail.ru, iro@gsu.am ուղղված նամակներին:

Հաշվետու տարվա ընթացքում ԳՊՀ պաշտոնական կայքէջում www.gsu.am և ԳՊՀ ֆեյսբուքյան պաշտոնական (https://www.facebook.com/gavarstateuniversity/) էջում պատրաստվել և տեղադրվել է 189 նորություն՝ համապատասխան լուսանկարներով: Աշխատանքներ են կատարվել ԳՊՀ կրթաթոշակային ծրագրերից օգտվող 96 ուսանողի հետ:

ԳՊՀ ԿՐԹԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻՑ ՕԳՏՎՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ /2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ/

ԳՊՀ ԿՐԹԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ	2022-2023	2023-2024
«Ժիրայր Նիշանյան հիմնադրամ» կրթավճար ծրագիր	45 ուսանող	42
Բուհում սահմանված ուսման վարձի և ՀՀ Կառավարության սահմանված կրթաթոշակի տարբերության չափով նվիրատվություն Հայ օգնության ֆոնդից՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ԳՊՀ ուսանողներին		17
«ՎՏԲ ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ ՓԲԸ»		5 ուսանող
«Հայ կրթական» հիմնարկություն	8 ուսանող	6 ուսանող
Գավառի համայնքապետարան	15 ուսանող	25 ուսանող
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ	2 ուսանող	1 ուսանող
ԸՆԴԱՄԵՆԸ՝	78 ուսանող	96 ուսանող

ԳՊՀ ԿՐԹԱԹՈՇԱԿԱՌՈՒ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐՆ՝ ԸՍՏ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ /2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ/

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐՆ՝ ԸՍՏ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ	2022-2023	2023-2024
Տնտեսագիտական ֆակուլտետ	18	Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետ 49

Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ	12	Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ 47
Բանասիրական ֆակուլտետ	19	
Բնագիտական ֆակուլտետ	17	
Հեռակա ուսուցման ֆակուլտետ	12	
ԸՆԴԱՄԵՆԸ՝	78	96 ուսանող

ԳՊՀ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹՎԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Գործունեության ոլորտները	2022-2023	2023-2024
www.gsu.am կայքի լուրեր	284	189
«info@gsu.am», «infogsu@mail.ru» էլեկտորոնային հոստի հասցեներին ուղղված նամակների քանակը	7571	8435
Լուսանակարահանված միջոցառումներ/ արխիվացված լուսանկարների քանակը	8852/339	9114/285
ԳՊՀ կրթաթոշակային ծրագրերից օգտվող ուսանողների քանակը	78 ուսանող	96 ուսանող

ԳՊՀ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ 2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ.

- Համալսարանի արտաքին կապերի համակարգում և զարգացում, հանրային պատասխանատվության ծրագրերի իրականացում, բոլոր ներքին շահառուներին և արտաքին շահակիցներին տեղեկատվության օպերատիվ տրամադրում,
- զանգվածային լրատվամիջոցների, ուսումնական հաստատությունների, գործընկեր այլ կազմակերպությունների հետ համագործակցության գործընթացի պլանավորում, կազմակերպում և իրականացում,
- ԳՊՀ միջազգայնացման նպատակով օտարերկրյա բուհերի, գիտակրթական կենտրոնների, պետական մարմինների, միջազգային և այլ կազմակերպությունների հետ համագործակցության խթանում,
- միջազգային տարբեր ծրագրերին անդամակցություն,

- օտարերկրյա բուհերի հետ փոխըմբռնման հուշագրերի և գիտակրթական ոլորտում համագործակցության պայմանագրերի կնքմանն ուղղված աշխատանքների իրականացում,
- ԳՊՀ-ում միջազգային գիտաժողովների և աշխատաժողովների կազմակերպման աշխատանքների համակարգում,
- ԳՊՀ-ում իրականացվող կարևոր միջոցառումների, ծրագրերի մասին տեղեկատվության օպերատիվ տարածում,
- ֆակուլտետների, ամբիոնների, այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ համագործակցության արդյունավետության բարձրացում,
- բաժնի խնդիրներից բխող այլ գործառույթների իրականացում:

ԳՊՀ ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների կողմից ակադեմիական շարժունության ծրագրերին մասնակցության գործընթացների, միջազգային ուսանողների ընդունելության ընթացակարգերի և այլ գործընթացների կարգավորման նպատակով աշխատանքներ են կատարվում՝ մշակելու և հաստատելու մի շարք ընթացակարգեր և կանոնակարգեր՝ այդ թվում.

1. Միջազգային գործընկերության էթիկայի և վարքագծի կանոններ,
2. Միջազգային ուսանողների ընդունելության և աջակցության ուղեցույց,
3. Դասախոսների և ուսանողների շարժունության ծրագրերի ուղեցույց,
4. Միջազգային ծրագրերի և համագործակցության որակի ապահովման կարգ,
5. Ռիսկերի կառավարման և միջազգային գործունեության անվտանգության քաղաքականություն,
6. Միջազգայնացման ծրագրերի թափանցիկության և հաշվետվողականաության կարգ,
7. Կրեդիտների փոխճանաչման կարգ:

Լիլիթ Թոռչյան՝
ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲԱԺՆԻ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2024-2025 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվետու ժամանակահատվածում Գավառի պետական համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) բաժնում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- ✓ ԳՊՀ կայքում ավելացվել են 70-ից ավելի էջեր, համալրվել են կայքի անգլերեն և ռուսերեն տարբերակները,
- ✓ Թարմացվել է ԳՊՀ կայքի «Փաստաթղթեր» բաժինը, տեղադրվել են ներբուհական իրավական ակտերը,
- ✓ Փոփոխության են ենթարկվել ու արդիականացվել ԳՊՀ կայքի գլխավոր էջը, կայքի ընդհանուր կառուցվածքը,
- ✓ Կատարվել են ԳՊՀ պաշտոնական կայքում հայտարարությունների, էջերի օպերատիվ թարմացումներ,
- ✓ Տեղադրվել են ԳՊՀ ֆակուլտետների հեռակա բաժինների դասացուցակները,
- ✓ Պարբերաբար հրապարակվել են քննաշրջանների ժամանակացույցները,
- ✓ Սերվերային հատվածը վերականգնվել է լիարժեք գործառնական կարգավիճակի, և բոլոր ծառայությունները վերսկսվել են հնարավորինս օպերատիվ: Նմանատիպ խնդիրներից խուսափելու համար նախանշվել են անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումներ,
- ✓ Վերականգնվել է ԳՊՀ միջազգային ծրագրերի «international.gsu.am» կայքէջը,
- ✓ Շարունակվել է ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման «E-Learning. GSU» համակարգի ինֆորմացիոն համալրումը,
- ✓ կազմակերպվել է 2023-2024 ուսումնական տարվա բակալավրիատի և մագիստրատուրայի էլեկտրոնային ուսուցման «E-Learning. GSU» համակարգի ինֆորմացիոն ապահովման գործընթացը: Ըստ ուսումնական պլանների՝ «E-Learning. GSU» համակարգում համալրվել են խմբերի, դասախոսների անվանական և առարկաների ուսուցման տիրույթները, թղթային տարբերակով տրամադրվել են համակարգից օգվելու մուտքային տվյալները բովանդակող թերթիկներ,
- ✓ Շարունակական բնույթ է կրել «E-Learning. GSU» համակարգի վերաբերյալ դասախոսներին և ուսանողներին խորհրդատվությունների տրամադրումը, առարկաների փաթեթների խմբագրման գործում աջակցության ապահովումը,
- ✓ Իրականացվել է ԳՊՀ «Office 365» էլեկտրոնային փոստերի ծառայությունների համակարգի սպասարկում,
- ✓ «Examenation Gsu» քննական թեստային համակարգի միջոցով հաշվետու ուսումնական տարում անցկացվել են 2 քննություններ, կատարվել է համակարգի վերազինում և նոր ծրագրային միջավայրի ներդնում,
- ✓ Ստեղծվել է USM էլեկտրոնային տեղեկագրերի համար նախատեսված համակարգի կայքէջը,
- ✓ Սպասարկվել է վիրտուալ լսարանների Zoom համակարգը,

- ✓ Իրականացվել է «VK TEAMS-MYTEAM» կորպորատիվ հաղորդակցություն ապահովող ծրագրի սպասարկում,
- ✓ Սպասարկվել է ԳՊՀ «Առցանց դիմում » համակարգը,
- ✓ Իրականացվել է ԳՊՀ էլեկտրոնային գրադարանի ծրագրային նոր համակարգի ներդնում և սպասարկում,
- ✓ SS բաժնի կողմից իրականացվել է հեռահար համակարգչային տեխնիկայի սպասարկում, խորհրդատվությունների մատուցում,
- ✓ ԳՊՀ դիմորդներին և ուսանողներին տրվել են խորհրդատվություններ՝ կապի տարբեր միջոցների օգնությամբ,
- ✓ Իրականացվել են համակարգչային տեխնիկայի ծրագրային և տեխնիկական սպասարկում, խորհդատվությունների տրամադրում,
- ✓ Կատարվել են սերվերային կենտրոնի պահուստային պատճենման աշխատանքներ,
- ✓ Իրականացվել է տպիչների սպասարկում՝ լիցքավորում, վերանորոգում,
- ✓ Քննարկվել և ներկայացվել են համակարգչային գույքի գնումների ցուցակները,
- ✓ Հստակ և ժամանակին կազմակերպվել են համացանցի հասանելիության, ցանցի կառավարման, սպասարկման և մշտադիտարկման աշխատանքները,
- ✓ Կատարվել են համակարգչային լսարանների արդիականացման աշխատանքներ,
- ✓ Առցանց ուսուցման, աշխատաժողովների, գիտաժողովների, սեմինարկների ընթացքում վերահսկվել է վիրտուալ լսարանների անխափան աշխատանքը,
- ✓ Կատարվել է ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուների կայքի վերաթողարկում նոր ծրագրային միջավայրով:

ԳՊՀ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲԱԺՆԻ 2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ✓ ԳՊՀ պաշտոնական կայքի կատարելագործում, անգլերեն և ռուսերեն տարբերակների համալրում,
- ✓ «ԳՊՀ էլեկտրոնային գրադարան» համակարգի կատարելագործում և ինֆորմացիոն ու աղբյուրագիտական համալրման շարունակական աշխատանքների իրականացում,
- ✓ Ներքին էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգերի ուսումնասիրություն և ներդնում,
- ✓ ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման «Learn.GSU» համակարգի ինֆորմացիոն ապահովման գործընթացի պարբերաբար իրականացում (ուսումնական պլանների հիման վրա թարմացումների, փոփոխությունների կազմակերպում),
- ✓ ԳՊՀ համակարգչային լսարանների միասնական ղեկավարման համակարգի ներդնում և գործարկում,
- ✓ ԳՊՀ ակադեմիական տեղեկագրերի էլեկտրոնային վարման համակարգի ներդնում և կիրառում ուսումնական պրոցեսում,
- ✓ Համալսարանում համացանցի կապի տրամադրման, համակարգչային ցանցի, բաժանորդային համակարգիչների ծրագրային և տեխնիկական սպասարկման, վերահսկման աշխատանքների իրականացում,

- ✓ Նորացվող համակարգչային գույքի տեղադրման, համակարգչային լսարանների գույքի վերաբաշխման աշխատանքների իրականացում,
- ✓ ԳՊՀ լոկալ ցանցի արդիականացում ժամանակակից սարքավորումներով և ստեղծված վիրտուալ ցանցի զարգացում,
- ✓ Առցանց և անցանց՝ զուգակցված ուսումնական գործընթացի որակյալ տեխնիկական ապահովում, ծրագրային սպասարկում,
- ✓ Նոր ձևաչափով և հիմքերով ԳՊՀ «Էլեկտրոնային մատյան» համակարգերի նախագծում և ներդնում,
- ✓ ԳՊՀ ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի հետ համատեղ վերապատրաստումների իրականացում համալսարանի աշխատակիցների, պրոֆեսորադասախոսական կազմի և այլ շահառուների համար,
- ✓ ՏՏ բաժնի գործառույթների արդյունավետ իրականացում, առաջացող տարաբնույթ խնդիրների օպերատիվ լուծում:

Մարգար Հովհաննիսյան՝
ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի վարիչ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2024-2025 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվետու ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի ուսանողները, դասախոսները, վարչական անձնակազմը, ինչպես նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի ընթերցասեր հասարակությունը ակտիվորեն օգտվել են բուհի գրադարաններից և ընթերցասրահներից: Գրադարանները հարստացել են մասնագիտական և գեղարվեստական գրականությամբ: Իրենց գիտահետազոտական աշխատանքները կատարելիս պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամները և ուսանողները օգտվում են ընթերցասրահի համակարգիչներից: Ընթեցասրահն ավելի հաճախ է դառնում մի վայր, որտեղ ընթերցում են, բանավիճում, կատարում ինքնուրույն, անհատական, կուրսային աշխատանքներ, կազմակերպում միջոցառումներ: Գրադարանը շարունակական աշխատանքներ է կատարում ուսանողների շրջանում ընթերցասիրություն սերմանելու համար:

2023-2024 ուստարում ԳՊՀ գրադարանը, կատարելով գրադարանային գործառույթներն ու պարտականությունները, սովորողներին և այլ ընթերցողներին ապահովել է անհրաժեշտ գրքերով, մասնագիտական գրականությամբ, տեղեկատվական աղբյուրներով:

Գրադարանը մատուցել է հետևյալ ծառայությունները.

1. առաջին կուրսեցիների գրադարանի բաժանորդի քարտի գրանցում որպես գրադարանի ընթերցողների, որպեսզի նրանք հնարավորության ստանան ուսումնառության տարիներին օգտվելու գրադարանից,
2. առաջին կուրսեցիների ծանոթացում ինչպես իրենց մասնագիտական գրականության, այնպես էլ գեղարվեստական գրականության հետ,
3. ընթերցասրահում և գրադարանում ընթերցողների սպասարկում՝ ավանդական և ժամանակակից նորարական մեթոդներով,
4. տեղեկատվական-մատենագիտական սպասարկում,
5. գրականության մատենագիտական ցանկերի կազմում և հանրայնացում, միջոցառումների կազմակերպում, գրապահոցի «Բաց դռների» օրերի անցկացում,
6. նոր ստացած գրքերի ցուցադրություն և դրանց վերաբերյալ տեղեկատվության տարածում դեկանատների ու ամբիոնների միջոցով,
7. տեղեկատվություն որոնելու, ընտրելու, ԳՊՀ էլեկտրոնային գրադարանից (Librery.qsu.am) օգտվելու, նորություններին իրազեկ դառնալու գործընթացներում ընթերցողներին անմիջական օգնության ցուցաբերում,
8. մասնագիտական և գեղարվեստական գրականության ընտրության հարցում խորհրդատվության մատուցում,
9. սովորողների շրջանում տեղեկատվության հետ ինքնուրույն աշխատելու կարողությունների ու հմտությունների ձևավորում,

10. ընթերցանության նկատմամբ հետաքրքրության խթանում և ընթերցանության մշակույթի տարածում:

Հաշվետու ժամանակահատվածում ԳՊՀ գրադարանում աշխատանքներ են իրականացվել հետևյալ հիմնական ուղղություններով.

1. գրադարանային ֆոնդի համալրում և արդիականացում,
2. մուտքագրված գրքերի նկարագրում և դասակարգում,
3. գրքապաշարի մշակում,
4. գրքերի շրջանառում,
5. վնասված գրքերի վերանորոգում,
6. մասնագիտական գրականության ֆոնդերի գրացուցակների լրամշակում,
7. մասնագիտական տեղեկատվական բազայի համալրում,
8. ԳՊՀ պաշտոնական կայքէջի «Գրադարան» հատվածամասի համալրում,
9. ԳՊՀ էլեկտրոնային գրադարանի հարստացում՝ լուսապատճենելով պահանջարկ ունեցող մասնագիտական և գեղարվեստական գրքեր:

Իրականացվել է գրադարանային ֆոնդի համալրում՝

2023-2024 ուսումնական տարում գրադարանը համալրվել է թվով 678 կտոր մասնագիտական և գեղարվեստական գրականությամբ, որոնք ձեռք են բերվել ԳՊՀ ռեկտորատի նախաձեռնությամբ, պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների աջակցությամբ, անհատ անձանցից ու կազմակերպություններից: Իրենց ներդրումն են ունեցել պրոֆեսոր Հրանուշ Հակոբյանը, Բարեշնորհ Գևորգ սարկավագ Գևորգյանը, Թաթուլ Ասոյանը, Արմեն Սահակյանը, Լյուդմիլա Առաքելյանը, Վալերի Թունյանը, Շահեն Գասպարյանը, Արտուշ Բոշյանը, «ֆինանսներ» բաժնի 3-րդ կուրսի ուսանողները և ուրիշներ:

Կատարվել է մուտքագրված գրքերի նկարագրում և դասակարգում:

Համալրված 678 միավոր գրքերը մուտքագրվել, նկարագրվել և դասակարգվել են: Արդյունքում ավելացել են.

1. 32 դասագիրք, ուսումնական ձեռնարկ, սեղմագիր,
2. 59 գիտական հանդեսներ և հոդվածների ժողովածուներ,
3. 359 գեղարվեստական գրականություն,
4. 228 այլ ձեռնարկներ, նյութեր:

Արդյունքում՝ ԳՊՀ գրադարանն իր գրքային ֆոնդում այսօր ունի 43533 գրադարանային միավոր, որից.

1. հայերեն՝ 21894 գիրք,
2. ռուսերեն՝ 15.723 գիրք,
3. այլ լեզուներով՝ 5.945 գիրք:

Կատարվել է մասնագիտական գրականության ֆոնդերի գրացուցակների լրամշակում՝

Իրականացվել է 43533 գրքերից կազմված գրքաֆոնդի մասնագիտական գրացուցակների լրամշակում: Արդյունքում ապահովել ենք յուրաքանչյուր մասնագիտությանը համապատասխանող գրքերի հետևյալ քանակը.

1. Հայոց լեզու և գրականություն՝ 4039,
2. Ռուսաց լեզու և գրականություն՝ 2577,
3. Անգլերեն լեզու և գրականություն՝ 2308,

4. Պատմություն՝ 1894,
5. Իրավագիտություն՝ 2079,
6. Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա՝ 1440,
7. Կառավարում և ֆինանսներ՝ 2661,
8. Հաշվապահական հաշվառում՝ 2661,
9. Կենսաբանություն՝ 2546,
10. Դեղագործական քիմիա՝ 242,
11. Աշխարհագրություն՝ 959,
12. Բնապահպանություն և բնօգտագործում՝ 111,
13. Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա՝ 2666,
14. Քարտեզագրություն և կադաստրային գործ՝ 67,
15. Սերվիս՝ 43:

Համալսարանը շարունակում է մասնագիտական գրականության համալրման աշխատանքները:

Մասնագիտական տեղեկատվական բազան շարունակաբար համալրվել է:

Մասնագիտական տեղեկատվական բազան ներառում է մասնագիտական հոդվածների մատենագիտական ցանկերը: Գրադարանում յուրաքանչյուր տարի համալրվում և լրամշակվում է թեմատիկ հանձնարարականների մատենագիտական ցանկը, որը ներառում է տարբեր հանդեսների, գիտական նյութերի ժողովածուներում ընդգրկված հոդվածների վերնագրեր (վերաբերում է 4012 հոդվածի), ինչպես նաև ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուների մատենագիտական ցանկը՝ 12 մասնագիտական ուղղություններով (ընդգրկում է 1917 հոդվածի վերնագիր):

Այս ցանկերը գրադարանում առկա են թղթային և էլեկտրոնային տարբերակներով, ինչպես նաև տեղադրված են ԳՊՀ www.gsu.am պաշտոնական կայքի «Գրադարան» հատվածամասում և պարբերաբար լրացվում են:

Կազմակերպվել է գրքերի շրջանառում և վնասված գրքերի վերանորոգում:

Հաշվետու ժամանակաշրջանում ակտիվ շրջանառվել է ինչպես մասնագիտական, այնպես էլ գեղարվեստական գրականությունը, որոնց հանդեպ մեծ հետաքրքրություն կա ուսանողների շրջանում: Գրքատացքին նպաստում են համալրումների մասին տեղեկատվության տարածումը ամբիոններում, ուսանողներին խորհրդատվությունների մատուցումը, ինչպես նաև նոր գրականության ցուցադրությունը գրադարանում և ընթերցասրահներում:

Յուրաքանչյուր կիսամյակի սկզբում՝ սեպտեմբեր-հոկտեմբեր և փետրվար-մարտ ամիսներին կազմակերպվում են գրադարանի «բաց դռների» օրեր, որոնց ընթացքում ուսանողները, հատկապես՝ առաջին կուրսեցիները, ծանոթանում են համապատասխան մասնագիտական գրքապաշարին:

ԳՊՀ գրքաֆոնդի ֆիզիկական պահպանման, վնասված գրքերի վերանորոգման ուղղությամբ կատարվում են հետևողական աշխատանքներ:

Շարունակական աշխատանքներ են տարվել գրքային պարտքերի վերադարձն ապահովելու ուղղությամբ: Գրադարանում մեծ պատասխանատվությամբ են կատարվել նաև գրքեր պատվիրած և պահանջ ներկայացրած ընթերցողներին գրականության առկայության

մասին տեղեկատվության ապահովման և պահանջագրերի հիման վրա նրանց բարեխիղճ սպասարկման գործառույթները:

Կազմակերպվել են ավանդույթ դարձած գրադարանային միջոցառումներ:

2023-2024 ուսումնական տարում գրադարանը կազմակերպել ու անկացրել է միջոցառումներ, ինչպես նաև իր ներդրումն է ունեցել համալսարանում անցկացված միջոցառումներին: 2024 թ.-ի ապրիլին Հրաչյա Աճառյանի անվան լսարանում անցկացվեց «Ճանաչենք ԳՊՀ շնորհալիներին» ցերեկույթը: Առկա ուսուցման ուսանողները հանդես եկան աստունքով, երաժշտական ու պարային գեղեցիկ կատարումներով, ձեռքարվեստի աշխատանքներով (հելյունագործություն, ասեղնագործություն, շյուղագործություն, նկարչություն՝ կտավի և թղթի վրա): Ուսանողներն իրենց կտավներից նվիրաբերեցին համալսարանին՝ այդպիսով արտահայտելով իրենց սերն ու հարգանքը սիրելի բուհի հանդեպ: Միջոցառմանը մասնակցում էին նաև ստեղծագործող դասախոսներ:

ԳՊՀ գրադարանի համագործակցության ծրագրերը նույնպես շարունակվել են:

ԳՊՀ գրադարանը Հայաստանի գրադարանային ասոցիացիայի անդամ է և, համագործակցելով Հայաստանի ազգային գրադարանի հետ, ներկայացնում է ամենամյա հաշվետվություն գրադարանի հագեցվածության մասին, որոնք հրատարակվում են Հայաստանի ազգային գրադարանի «Հայաստանի գրադարանները» մատենաշարում: ԳՊՀ գրադարանը համագործակցում է նաև ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) հիմնարար գիտական գրադարանի, ՀՀ ազգային գրադարանի, ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի, Մանուկ Աբեղյանի անվան գրականության և պատմության ինստիտուտների գրադարանների հետ:

ԳՊՀ հրատարակությունների օրինակներ են տրամադրվում Հայաստանի ազգային գրադարանին, հիմնարար գիտական գրադարանին, ինչպես նաև ՀՀ այլ բուհերի, ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների գրադարաններին, Գեղարքունիքի մարզային և Գավառի քաղաքային գրադարաններին:

ԳՊՀ գրադարանի շարունակական համագործակցության արդյունքում Գեղարքունիքի մարզային և Գավառի քաղաքային գրադարաններում տարեցտարի համալրվում է ԳՊՀ հրատարակությունների ֆոնդը: Մարզային գրադարանի հետ համագործակցության շրջանակում անցկացվում է գրքերի ամենամյա փոխադարձ նվիրատվություն:

2024–2025 ուստարում ԳՊՀ գրադարանի զարգացման հիմնական ուղղությունները.

2024-2025 ուսումնական տարվա ընթացքում նախատեսվում է ԳՊՀ գրադարանի գործունեության ակտիվացում՝ հետևյալ ուղղություններով.

1. շարունակել ԳՊՀ գրադարանի համագործակցությունը ՀՀ ազգային գրադարանի, ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի, ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի, Մանուկ Աբեղյանի անվան գրականության, պատմության ինստիտուտների և այլ գրադարանների հետ:
2. ընթերցողների պահանջները լիարժեք կատարելու նպատակով իրականացնել գրադարանային պաշարների թվայնացման գործընթացը՝ կիրառելով ժամանակակից տեխնոլոգիաներ,
3. ԳՊՀ «Library.gsu» էլեկտրոնային գրադարանը համալրել՝ անհրաժեշտ գրականությամբ,

4. լուսապատճենել և էլեկտրոնային գրադարանում տեղադրել մեկ օրինակից մասնագիտական գրքերը, դասախոսների և ուսանողների կողմից ներկայացված հազվագյուտ գրքերը, ձեռնարկները և այլ անհրաժեշտ ուսումնական նյութեր,
5. ընթերցասրահում արդիականացնել համակարգչային սարքավորումները,
6. կազմակերպել «Երգող բանաստեղծություններ» և այլ խորագրերով միջոցառումների շարք,
7. աջակցել ԳՊՀ դասախոսներին՝ իրականացնելու գիտահետազոտական գործունեություն, ապահովելով անհրաժեշտ գիտական գրականությամբ,
8. խթանել ընթերցանությունը ուսանողների շրջանում, արմատավորել ընթերցանության բարձր մշակույթ:

Ալվարդ Թորչյան՝
ԳՊՀ գրադարանավարուհի

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ, 2024-2025 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ

Գավառի պետական համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման բաժինը (այսուհետ՝ նաև ՄՌԿ)՝ որպես բուհի կառուցվածքային ստորաբաժանում, գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, ԳՊՀ կանոնադրության, ԳՊՀ ՄՌԿ քաղաքականության հիմունքների, ԳՊՀ ՄՌԿ բաժնի կանոնակարգի և այլ գերատեսչական ու ներբուհական ակտերի հիման վրա:

ԳՊՀ ՄՌԿ բաժինը յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին ներկայացնում է նախորդ ուսումնական տարում կատարված աշխատանքների հաշվետվություն և ընթացիկ ուսումնական տարվա զարգացման ուղությունները՝ ըստ առաջնահերթ խնդիրների և նպատակների:

Հաշվետու՝ 2023-2024 ուսումնական տարում աշխատանքները կատարվել են հետևյալ հիմնական ուղղություններով.

1. վերանայվել և լրացվել են աշխատակիցների անձնական գործերը,
2. նախապատրաստվել են կադրային, վարչական, ուսանողական, ժամանակավոր կցագրման և այլ հրամանների նախագծեր,
3. պատրաստվել և ստորագրման ու կնքման են ներկայացվել աշխատանքային պայմանագրեր, համաձայնագրեր,
4. վերանայվել և ուսումնասիրվել է ԳՊՀ աշխատակիցների շարժը (տե՛ս Աղյուսակ 1):
5. իրականացվել են ուսանողների ընդունման, վերականգման, ազատման, տեղափոխման, տարկետման, հեռացման ձևակերպումներ և ՄՌԿ բաժնին վերաբերող այլ գործառույթներ,
6. 2023-2024 ուսումնական տարում ուսման վարձի զեղչ է տրամադրվել թվով 36 ուսանողի, պատրաստվել են համապատասխան հրամանների նախագծեր և հիմնավորող փաստաթղթերի փաթեթներ,
7. Գավառի պետական համալսարանը հանդիսանում է Գավառի (Կամոյի) ինդուստրիալ մանկավարժական քոլեջի և թիվ 70 պրոֆտեխուսումնարանի իրավահաջորդը: Քոլեջի և ուսումնարանի արխիվային փաստաթղթերը գտնվում են համալսարանի արխիվում: Ուստի, ԳՊՀ-ն ՄՌԿ-ն մինչև 2024-2025 ուստարվա մեկնարկը, սահմանված կարգով նախապատրաստել է վերոհիշյալ ուսումնական հաստատությունների աշխատողների և ուսանողների վերաբերյալ տեղեկանքներ (տե՛ս Աղյուսակ 2):

2023-2024 ուսումնական տարում գրանցվել է ԳՊՀ աշխատակիցների հետևյալ շարժը

Աղյուսակ 1

Հ/Հ	*ԳՊՀ աշխատակիցներ*	**2022-2023 ուստարի**	**2023-2024 ուստարի**
	➢ **Ընդունվել են աշխատանքի**		
1.	**Դասախոսներ**	**82**	**73**

2.	Այլ աշխատողներ	6	3
3.	Ընդամենը	88	76
	➢ Ազատվել են աշխատանքից		
4.	Դասախոսներ	81	85
5.	Այլ աշխատողներ	11	17
6.	Ընդամենը	92	102
	➢ Գործուղում ԵՄ Ծրագրերով		
7.	Դասախոսներ	3	4
8.	Այլ աշխատողներ	15	16
9.	Ընդամենը	18	20
	➢ Գործուղում ՀՀ տարածքում		
10.	Աշխատող	11	18
11.	Ուսանող	45	40
12.	Ընդամենը	56	58
	➢ Պարգևատրումներ		
13.	Աշխատող	18	13
	➢ Նկատողություններ		
14.	Աշխատող	2	-
	➢ Երեխայի խնամքի արձակուրդ	5	1
15.	➢ Հղիության և ծննդաբերության արձակուրդ	1	-

Հաշվետվություն Գավառի (Կամոյի) ինդուստրիալ մանկավարժական քոլեջի և թիվ 70 պրոֆտեխուսումնարանի աշխատակիցների և շրջանավարտների վերաբերյալ պատրաստված և տրամադրված տեղեկանքների վերաբերյալ

Աղյուսակ 2

Հ/Հ	Տեղեկանքներ և պատասխան գրություններ	Հայերեն	Ռուսերեն
1.	պատասխան գրություններ Գավառի (Կամոյի) ինդուստրիալ մանկավարժական քոլեջի աշխատողների և ուսանողների վերաբերյալ	40	5
2.	պատասխան գրություններ թիվ 70 պրոֆտեխուսումնարան աշխատողների և ուսանողների վերաբերյալ	2	1
3.	Տեղեկանքներ Գավառի (Կամոյի) ինդուստրիալ մանկավարժական քոլեջ աշխատողների և ուսանողների վերաբերյալ	7	-

4.	Տեղեկանքներ թիվ 70 պրոֆտեխուսումնարան աշխատողների և ուսանողների վերաբերյալ	1	2
4.	Ընդամենը	50	8

ԳՊՀ ՄՌԿ 2024-2025 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ

2024-2025 ուսումնական տարվա համար ԳՊՀ ՄՌԿ բաժինն առաջնային է համարում գործունեության հետևյալ ուղղությունները.

1. ԳՊՀ ՄՌԿ քաղաքականության արդյունավետության բարձրացում,
2. ԳՊՀ աշխատակիցների անձնական գործերի էլեկտրոնային հաշվառում և վարում,
3. ուսանողների իրավական կարգավիճակի փոփոխությունների օպերատիվ արձանագրում,
4. ԳՊՀ բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների կադրային ապահովվածության գնահատում և կադրային կարիքների բացահայտում, ՄՌԿ գործընթացների մշտադիտարկում,
5. ԳՊՀ արական սեռի դիմորդների և ուսանողների զինծառայության հետ կապված խնդիրների կարգավորում,
6. ԳՊՀ տարբեր տարակարգերի աշխատակիցների պաշտոնների անձնագրերի և աշխատանքի նկարագրերի վերանայում, արդիականացում,
7. դասախոսների վարկանիշային գնահատման արդյունքներով պայմանավորված՝ տարակարգերի համակարգի մշակում և աստիճանաբար գործարկում,
8. աշխատանքային պայմանագրերի և համաձայնագրերի կնքման գործընթացի շարունակական իրականացում և ԳՊՀ աշխատակիցների կողմից աշխատանքային պայմանագրերի պայմանների կատարման վերահսկում,
9. ԳՊՀ աշխատակիցների աշխատանքի ընդունման, ազատման, տեղափոխման, արձակուրդի տրամադրման, գործուղման, կարգավիճակի փոփոխության և աշխատանքային բնույթի այլ հրամանների նախագծերի նախապատրաստում,
10. ԳՊՀ աշխատողների անձնական գործերի կազմման, վարման և պահպանության գործընթացների բարելավում,
11. ՄՌԿ բաժնի փաստաթղթաշրջանառության բարելավում:

ԳՊՀ ՄՌԿ ԲԱԺՆԻ 2024-2025 ՈՒՍՏԱՐՎԱ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

Հ/հ	Նպատակը	Գործողությունները	Ժամկետը	Պատասխանատու ստորաբաժանումները /պատասխանատուները/	Հնարավոր խոչընդոտները	Արդյունավետության ակնկալվող գնահատման ցուցչիները
1.	ԳՊՀ ՄՌԿ քաղաքականության արդյունավետ իրականացում:	Աշխատակիցների հետ նպատակային աշխատանք, նրանց ներգրավում մասնագիտական վերապատրաստման և զարգացման ծրագրերում, աշխատակիցների կարողությունների արդյունավետ օգտագործում ու զարգացում՝ ելնելով Համալսարանի առաքելությունից, զարգացման ռազմավարական ծրագրից, գերակա նպատակներից ու խնդիրներից: Համալսարանի կողմից մարդկային ռեսուրսների կառավարումն իրականացնելիս՝ բոլոր շահակիցների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանություն: Ծառայողական առաջխաղացման պլանավորում: Փոխհատուցման և պարգևատրման	2024-2025 ուստարի	ԳՊՀ ՄՌԿ բաժին:	Պատասխանատու աշխատակցի կողմից պարտականությունների կատարման մեջ թերացում:	Ներքին շահակիցների բավարարվածության աճ:

		կառուցակարգերի շարունակական կիրառում և դրանց բարելավում:				
2.	Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի բարելավում:	ԳՊՀ աշխատակիցների անձնական գործերի էլեկտրոնային հաշվառում և վարում:	2024-2025 ուստարի	ԳՊՀ ՄՌԿ բաժին:	Էլեկտրոնային համակարգի խափանումներ	Ներքին շահակիցների բավարարվածության աճ, փաստաթղթաշրջանառության արդյունավետության բարձրացում:
3.	Ուսանողների իրավական կարգավիճակի փոփոխությունների օպերատիվ հաշվառում:	Ձեկուցագրերի հավաքագրում, ուսանողական հրամանների նախագծերի կազմում, կարգավիճակի փոփոխությունների պատշաճ արձանագրում:	2024-2025 ուստարի	ԳՊՀ ՄՌԿ բաժին, ԳՊՀ դեկանատներ:	Ֆորս-մաժորային իրավիճակներ	Ներքին և արտաքին շահակիցների բավարարվածության աճ:
4.	ՄՌԿ գործընթացների մշտադիտարկում:	Իրականացնել ԳՊՀ բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների կադրային ապահովվածության գնահատում և կադրային կարիքների բացահայտում:	2024-2025 ուստարի	ԳՊՀ ՄՌԿ բաժին	Կարիքի ոչ ժամանակին բացահայտում և ոչ ճիշտ գնահատում:	Համալսարանի աշխատակիցների գործունեության արդյունավետության աճ:
5.	ԳՊՀ արական սեռի դիմորդների և ուսանողների զինծառայության հետ կապված խնդիրների կարգավորում:		2023-2024 ուստարի	ԳՊՀ ՄՌԿ բաժին, ԳՊՀ արխիվի աշխատակից:	Պատասխանատու աշխատակցի կողմից պարտականությունների կատարման մեջ թերացում:	Ներքին և արտաքին շահակիցների բավարարվածության աճ, արական սեռի ուսանողների կարգավիճակի հստակեցում:

6.	ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների հետ ՄՌԿ բաժնի աշխատանքի արդյունավետության բարձրացում:	Տվյալների հավաքագրում և թվայնացում:	2024-2025 ուստարի	ԳՊՀ ՄՌԿ բաժին	Գործառույթների ոչ պատշաճ իրականացում	Հստակ և օպերատիվ փաստաթղթաշրջանառության ապահովում, աշխատանքների արդյունավետ համակարգում:
7.	Գործառույթների հստակ սահմանում, համաչափ բաշխում	ԳՊՀ բոլոր տարակարգերի աշխատակիցների պաշտոնների անձնագրերի և աշխատանքի նկարագրերի բարելավում, արդիականացում:	2024-2025 ուստարի	ԳՊՀ ՄՌԿ բաժին	Պատասխանատու աշխատակցի պարտականությունների և գործառույթների ոչ հստակ սահմանում:	Պարտականությունների հստակ կատարում, առաջադրված խնդիրների ժամանակին և բարեխիղճ լուծում:
8.	Դասախոսների աշխատանքիարդյունավետության բարձրացում	Դասախոսների վարկանիշային գնահատման արդյունքներով պայմանավորված՝ տարակարգերի համակարգի մշակում և աստիճանաբար գործարկում:	2024-2025 ուստարի	ԳՊՀ ՄՌԿ բաժին	Վարկանիշավորման չափանիշների ոչ հստակ սահմանում	Դասախոսների խրախուսման նոր կառուցակարգի ներդնում, դասախոսների շահադրդման (մոտիվացիայի) աճ
9.	Աշխատանքային պայմանագրերի և համաձայնագրերի կատարման գործընթացի բարելավում:	ԳՊՀ աշխատակիցների կողմից աշխատանքային պայմանագրերի և համաձայնագրերի պայմանների կատարման վերահսկում:	2024-2025 ուստարի	ԳՊՀ ՄՌԿ բաժին	Պայմանագրերի և համաձայնագրերի պայմանների ոչ լիարժեք և ոչ ժամանակին կատարում:	Պայմանագրային պարտականությունների հստակ կատարում:
10.	ԳՊՀ աշխատակիցների կարգավիճակների հստակեցում:	ԳՊՀ աշխատակիցների աշխատանքի ընդունման, ազատման, տեղափոխման,	2024-2025 ուստարի	ԳՊՀ ՄՌԿ բաժին	Հրամանների նախագծերում կարգավիճա	ԳՊՀ աշխատակիցների կարգավիճակնե

		արձակուրդի տրամադրման, գործուղման, կարգավիճակի փոփոխության և այլ աշխատանքային բնույթի հրամանների նախագծերի նախապատրաստում:			կի և դրա փոփոխությունների ոչ հստակ և ոչ լիարժեք ամրագրում:	րի փոփոխությունն ե րի համարժեք արձանագրում, Համալսարանի հետ աշխատակիցնե րի հարաբերությունների հստակ և արդյունավետ իրավական կարգավորում:
11.	Էլեկտրոնային ՄՌԿ համակարգի ներդրում	ԳՊՀ աշխատողների անձնական գործերի կազմման, վարման և պահպանության էլեկտրոնային գործընթացների ապահովում և դրանց շարունակական բարելավում:	2024-2025 ուստարի	ԳՊՀ ՄՌԿ բաժին	ԳՊՀ աշխատողնե րի անձնական գործերի կազմման, վարման և պահպանու թյան գործընթացն ե ր ում թերություն ներ և բացթողում ներ:	ԳՊՀ աշխատողնե րի անձնական գործերի կազմման, վարման և պահպանու թյան գործընթացներ ի հստակ իրականացում: Էլեկտրոնային տեխնոլոգիանե ր ով:

Խաչատուր Սաֆարյան՝
ԳՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի վարիչ

ԳՊՀ ԱՐԽԻՎԻ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2024-2025 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ

Հաշվետու ժամանակահատվածում ԳՊՀ արխիվը շարունակել է աշխատանքները՝ ապահովելով բուհի ողջ արխիվային գործի վարումը, արխիվային փաստաթղթաշրջանառության իրականացումը:

Արխիվը՝ որպես Գավառի պետական համալսարանի կառուցվածքային ստորաբաժանում, 2023-2024 ուսումնական տարում իր գործունեությունն իրականացրել է «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության համապատասխան որոշումների, օրենսդրական և ենթաօրենսդրական վերաբերելի ակտերի դրույթներին համապատասխան, Համալսարանի կանոնադրության հիման վրա:

2023-2024 ուսումնական տարվա ընթացքում ԳՊՀ արխիվի հետ կապված որևէ դիմում կամ հարցադրում անպատասխան չի մնացել, օպերատիվ կերպով համակարգվել է արխիվի ընթացիկ գործունեությունը, ապահովվել են արխիվի գործավարության և արխիվային գործի վարումը, սահմանված կարգով կազմակերպվել են արխիվ հանձնվող փաստաթղթերի գրանցումը, հաշվառումը, արխիվացումը և արխիվ մուտքագրված փաստաթղթերի պահպանությունը, ինչպես նաև արխիվային փաստաթղթերի ու դրանց պատճենների տրամադրումը:

Գավառի պետական համալսարանին հանձնված Գավառի (Կամոյի) ինդուստրիալ մանկավարժական քոլեջի և N 34 մասնագիտական պրոֆտեխնիկական ուսումնարանի արխիվները սահմանված կարգով փոխանցվել են ՀՀ Գեղարքունիքի մարզային արխիվին:

2024-2025 ուսումնական տարում առաջնային են ԳՊՀ արխիվի գործունեության հետևյալ ուղղությունները.

1. ԳՊՀ արխիվում պահպանվող փաստաթղթերի հաշվառում, օգտագործման, համալրման կազմակերպում, համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներից արխիվ հանձնված փաստաթղթերի ընդունում, դասակարգում,
2. համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներից համապատասխան փաստաթղթերը լիարժեք, ժամանակին և պատշաճ ձևով արխիվ հանձնելու գործընթացի հսկողություն,
3. արխիվում փաստաթղթերի պահպանման և տրամադրման համակարգի բարելավում,
4. Հայաստանի Հանրապետության և արտերկրի տարբեր կազմակերպություններից ստացվող հարցումներին սահմանված կարգով պատասխանների տրամադրում,
5. ՀՀ և օտարերկրյա քաղաքացիների դիմումների հիման վրա համապատասխան տեղեկանքների կազմում, դրանց հիմքերի ճշգրտում և ժամանակին տրամադրում կամ առաքում,
6. սահմանված կարգով փաստաթղթերի մարման գործընթացի կազմակերպում,
7. արխիվում պահպանվող փաստաթղթերի էլեկտրոնային գրանցամատյանի ստեղծում:

ԳՊՀ ԱՐԽԻՎԻ 2024-2025 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

հ/հ	**Նպատակը**	**Գործողությունները**	**Ժամկետը**	**Պատասխանատու ստորաբաժանումները /պատասխանատուները/**	**Հնարավոր խոչընդոտները**	**Արդյունավետության ակնկալվող գնահատման ցուցչիները**
1.	Արխիվում պահպանվող փաստաթղթերի հաշվառում, օգտագործման, համալրման կազմակերպում, համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներից արխիվ հանձնված փաստաթղթերի ընդունում, համապատասխան հիմքերի առկայության դեպքում՝ տրամադրում կամ առաքում:	1.Արխիվում պահվող փաստաթղթերի գրանցամատյանների վարում, ուսանողների շարժին հետևում: 2.Շրջանավարտների անձնական գործերի ստուգում, ամբողջականացում: 3.Ուսումնական տարվա ավարտից հետո մատյանների, շրջանավարտների ուսանողական տոմսերի, ստուգման գրքույկների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ցուցակների կազմում, հանձնընդունելության գործընթացի կազմակերպում: 4. ԳՊՀ առկա, հեռակա, մագիստրատուրայի ընդունելության ավարտից հետո ուսանողների անձնական գործերում համապատասխան փաստաթղթերի առկայության ստուգում, հանձնընդունելության գործընթացի կազմակերպում: 5.Ուսանողներին վերաբերող հրամաններից քաղվածքների պահպանում նրանց անձնական գործերում (ընդունում, վարչական տույժ, տարկետում, վերականգնում, հեռացում, ազատում և այլն):	2024-2025 ուստարի	ԳՊՀ արխիվի վարիչ, ամբիոնների լաբորանտներ, առկա, հեռակա բաժինների բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության պատասխանատու քարտուղար, ընդունող հանձնաժողովի անդամներ, մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի աշխատակից:	Պատասխանատու ստորաբաժանման աշխատակցի կողմից պարտականությունների կատարման թերացում:	Արտաքին և ներքին շահակիցների բավարարվածության աճ:

2.	Սահմանված կարգով փաստաթղթերի ընդունում, ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներից համապատաս-խան փաստաթղթերը ժամանակին, լիարժեք և պատշաճ ձևով արխիվ հանձնելու նկատմամբ հսկողության հետևողական իրականացում:	Ըստ ժամանակացույցի աշխատանքի պլանավորում համապատասխան ստորաբաժանում ների աշխատակիցների՝ ամբիոնների լաբորանտների, պատասխանատու քարտուղարի, հանձնաժողովի անդամների հետ: Հանձնընդունելության գործընթացի կազմակերպում:	2024-2025 ուստա-րի	ԳՊՀ արխիվի վարիչ, ամբիոնների լաբորանտներ, առկա, հեռակա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության պատասխանատու քարտուղարի, ընդունող հանձնաժողովի անդամներ, մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի աշխատակից:	Պատասխանատու ստորաբաժանման աշխատակցի կողմից պարտականությունների թերի կատարում:	Արտաքին և ներքին շահակիցների բավարարվածության աճ:
3.	Արխիվում գտնվող փաստաթղթերի պահպանման համակարգի բարելավում:	Արխիվում պահպանվող փաստաթղթերի էլեկտրոնային գրանցամատյանների ստեղծում:	2024-2025 ուստա-րի	Արխիվի վարիչ, ՏՏ բաժնի աշխատակիցներ:	Էլեկտրոնային գրանցամատյանի ծրագրային և տեխնիկական մշակման աշխատանքների դանդաղում կամ ոչ պատշաճ կատարում	Արխիվային փաստաթղթերի գրանցման և վարման էլեկտրոնային համակարգի ներդրում
4.	Հանրապետության և արտերկրի տարբեր կազմակերպություններից ստացվող հարցումներին պատասխանների սահմանված կարգով և ժամկետներում տրամադրում: Քաղաքացիների դիմումների հիման վրա տեղեկանքների կազմում և դրանց հիմքերի ճշգրտում:	Արխիվում պահպանվող համապատասխան փաստաթղթերի հաշվառում, դասակարգում, գրանցամատյանների կազմում:	2024-2025 ուստա-րի	Արխիվի վարիչ	Արխիվում համապատասխան փաստաթղթերի կամ տվյալների բացակայություն	ԳՊՀ-ի սոցիալական պատասխանատվության բարձրացում, համալսարանի նկատմամբ հանրային վստահության աճ:
5.	Սահմանված կարգով փաստաթղթերի մարման գործընթացի կազմակերպում:	Հիմք ընդունելով ԳՊՀ արխիվի կանոնակարգը և ՀՀ «Արխիվային գործի մասին» օրենքը՝ արխիվում պահվող և վաղեմության ժամկետն անցած փաստաթղթերի մարում:	2024-2025 ուստա-րի	ԳՊՀ արխիվի վարիչ, ամբիոնի լաբորանտներ:	Ժամկետների բացթողում, փաստաթղթերի անհարկի կուտակում արխիվում	ԳՊՀ արխիվի գործառույթների արդյունավետ իրականացում, ժամկետանց փաստաթղթերի փոխարեն նոր փաստաթղթերի մուտքագրում:

Գոհար Կարապետյան՝
ԳՊՀ արխիվի վարիչ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2024-2025 ՈՒՍՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվետու ուսումնական տարում ԳՊՀ արհեստակցական կազմակերպությունը կանոնադրական խնդիրներն արդյունավետ լուծելու նպատակով շարունակել է նախորդ տարիներից ավանդույթ դարձած սոցիալական ուղղվածության միջոցառումները բուհի աշխատողների, ինչպես նաև ուսանողների համար:

Համալսարանի աշխատակիցների աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական և այլ շահերն ու իրավունքները ներկայացնելու և պաշտպանելու նպատակով արհեստակցական կազմակերպության և ռեկտորի միջև 2023 թվականի օգոստոսի 31-ին վերակնքվել է համալսարանի կոլեկտիվ պայմանագիրը:

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի արհեստակցական կազմակերպությունը ուշադրություն է դարձրել աշխատակիցների սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացմանը: Այդ նպատակով արհմիությունն իր միջոցներից օգնության կարգով աշխատակիցներին հատկացրել է 1.420.000 (մեկ միլիոն չորս հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

2023 թվականի հոկտեմբերի 20-ին արհեստակցական կազմակերպությունը «Ողջ մնալու արվեստը» ռազմահայրենասիրական կազմակերպությանը փոխանցել է 560.000 ՀՀ դրամ, որի 400.000 դրամը ԳՊՀ արհեստակցական կազմակերպության հաշվին փոխանցվել էր համալսարանի գործընկեր Ucom ընկերության տնօրեն Ռալֆ Յիրիկյանի, իսկ 128.000 ՀՀ դրամը՝ ուսանողական խորհրդի կողմից, որպես սովորողների կատարած կամավոր հանգանակություն:

2024 թվականի մարտի 1-ին համագործակցության պայմանագիր է կնքվել ԳՊՀ արհեստակցական կազմակերպության ւ Հայաստանի կոմունալ-բնակարանային տնտեսության և ծառայությունների ոլորտի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության միջև:

Հաշվետու ուսումնական տարում հանրապետական արհկոմիտեի կողմից տարբեր թեմաներով կազմակերպված սեմինար-պարապմունքներին մասնակցել են համալսարանի երեք աշխատակից:

2024 թվականի հուլիսի 12-ին համալսարանի աշխատակիցների համար կազմակերպվել է էքսկուրսիա դեպի Վայոց Ձորի մարզ: Այդ նպատակով հատկացվել է ընդհանուր 270.000 ՀՀ դրամ:

2024 թվականին տարբեր միջոցառումների (թատերական ներկայացումներին, համերգներին մասնակցության, ուսանողական խորհրդի միջոցառումների կազմակերպման) համար տրամադրվել է 75.000 ՀՀ դրամ:

Ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել ԳՊՀ այն աշխատակիցներին, ում հարազատ է մահացել կամ ընտանիքները նյութական օգնության կարիք են ունեցել:

Հաշվետու ուսումնական տարում արհեստակցական կազմակերպությունը աշխատանքներ է տարել աշխատավայրում տեխնիկական անվտանգության կանոնները

ապահովելու, աշխատակիցների կողմից համալսարանի ներքին կարգապահական կանոնները պահպանելու նպատակով:

Արհեստակցական կազմակերպությունն իր կանոնադրական գործառույթներին համապատասխան 2024-2025 ուստարում ևս հետամուտ կլինի համալսարանի աշխատակիցների և ուսանողների համար սոցիալական ծրագրերի իրականացմանը, ըստ անհրաժեշտության՝ աջակցության ցուցաբերմանը, իր կանոնադրական խնդիրների և գործառույթների պատշաճ իրականացմանը:

Լյովա Սիրունյան՝
ԳՊՀ արհեստակցական կազմակերպության նախագահ

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2024-2025 ՈՒՍՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհրդի (ՈՒԽ) 2023-2024 ուսումնական տարվա գործունեության ծրագիրը կազմվել և հաստատվել է՝ հիմք ընդունելով ուսանողների վերաբերյալ ԳՊՀ 2023-2027թթ. զարգացման ռազմավարական ծրագրի դրույթները: Համալսարանի ուսանողական խորհուրդն իր տարեկան գործունեությունը ծավալել է՝ ակտիվորեն համագործակցելով բուհի ռեկտորատի, ֆակուլտետների խորհուրդների, ամբիոնների, մյուս կառուցվածքային ստորաբաժանումների հետ:

Մեր գործունեության մեջ առաջնորդվել ենք հետևյալ նպատակներով՝ ապահովել կրթական, ուսումնամեթոդական, գիտահետազոտական, հասարակական աշխատանքներում ուսանողների ներգրավվածությունը, նրանց մասնագիտական, անձնային կարողությունների զարգացումը:

Վերոնշյալ նպատակներից ելնելով՝ Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհուրդը միջոցառումներ է իրականացրել հետևյալ ուղղություններով.

1.ուսանողների սոցիալ-մշակութային, մտավոր, ստեղծագործական կարողությունների, նրանց մեջ հայրենասիրական, բարոյական արժեքների զարգացմանն ուղղված աշխատանքների իրականցում,

2. ուսանողական առօրյան հետաքրքիր ու բազմաբովանդակ դարձնելու նպատակով ներֆակուլտետային և համահամալսարանական միջոցառումների կազմակերպում,

3. ԳՊՀ-դպրոցներ-քոլեջներ համագործակցային կապերի ամրապնդման և ավարտական դասարանների աշակերտների մասնագիտական կողմնորոշման նպատակով մարզի դպրոցներ ճանաչողական այցերի կազմակերպում՝ համալսարանականների կազմում ընդգրկելով Գավառի պետական համալսարանի լավագույն ուսանողներին, ինչպես նաև եվրոպական բուհերում սովորած ուսանողներին,

4. միջբուհական սեմինար-քննարկումների, միջոցառումների կազմակերպում,

5. Հայաստանի Հանրապետության գիտահետազոտական և մշակութային կենտրոններ ճանաչողական այցերի կազմակերպում,

6. ինտելեկտուալ, գրական և գեղարվեստական ցերեկույթների կազմակերպում,

7. Հանրապետության տարբեր կրթական հաստատություններում կազմակերպվող ուսանողական գիտաժողովներին և սեմինարներին ԳՊՀ ուսանողների ակտիվ մասնակցության ապահովում՝ ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության հետ համատեղ,

8. ԳՊՀ ՈՒԽ-ի ուշադրության կենտրոնում են եղել ուսանողների հոգևոր-մշակութային, իրավական, գեղագիտական դաստիարակության, ուսանողների շրջանում ակադեմիական ազնվության և բարեվարքության սկզբունքների և նորմերի պահպանմանն ուղղված աշխատանքների իրականացումը,

9. ՈՒԽ-ն զբաղվել է 2023թ. սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ԳՊՀ ընդունված ուսանողներին կրթական գործընթացում աջակցության ցուցաբերման, համալսարանական և համայնքային կյանքին նրանց ինտեգրման աշխատանքներով,

10. ապահովվել է ակտիվ համագործակցություն, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի, Գավառի համայնքապետարանի, Գավառի երիտասարդական կենտրոնի, կրթամշակութային տարբեր կազմակերպությունների հետ,

11. ԳՊՀ ուսանողներն ակտիվորեն մասնակցել են Գավառում՝ որպես Հայաստանի Հանրապետության 2024 թվականի երիտասարդական մայրաքաղաքում կազմակերպված բոլոր միջոցառումներին:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ամփոփելով ‹‹2024 թվականի Հայաստանի երիտասարդ մայրաքաղաք» ծրագրի արդյունքները, Գավառի պետական համալսարանին պարգևատրեց շնորհակալագրով՝ ծրագրին աջակցություն ցուցաբերելու, արդյունավետ համագործակցության և բոլոր ձեռնարկներին կարևոր դերակատարություն ունենալու համար:

2023-2024 ուսումնական տարվա ԳՊՀ ՈՒԽ գործունեությունը ներկայացնում ենք՝ նախ նշելով իրականացված համահամալսարանական ծրագրերը, ապա անցկացված միջոցառումներն ու զանազան ձեռնարկները՝ ըստ ֆակուլտետների:

ՀԱՄԱՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ.

2023-2024 ուսումնական տարին մեկնարկեց Գիտելիքի օրվան նվիրված գեղեցիկ միջոցառմամբ: Ողջ տարվա ընթացքում ուսանողական խորհուրդը աշխատել է առաջին կուրսեցիների հետ, աջակցել կրթական գործընթացում, ինչպես նաև առաջին կուրսեցիների ավանդույթ դարձած միջոցառումների շարքը կազմակերպելիս՝ ‹‹Բարև, մե՛նք ենք» խորագրով:

2024թ փետրվարի 17-18-ին մասնակցեցինք «Ուսանողական ինքնակառավարման հայաստանյան ֆորում»-ին, որը կազմակերպել էր Երևանի պետական համալսարանի ուսանողական խորհուրդը՝ կառույցի հիմնադրման 30-ամյակի կապակցությամբ: Ֆորումն անցկացվեց ԵՊՀ Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայում՝ նպատակ ունենալով քննարկել ուսանողական ինքնակառավարման հիմնախնդիրները, ակտիվացնել համագործակցությունը ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողական ինքնակառավարման մարմինների միջև:

2024թ. մարտի 25-ին ԵՊՀ-ում տեղի ունեցավ բանավեճ-քննարկում՝ ‹‹Արհեստական բանականության զարգացումը սպառնալի՞ք է մարդկության համար, թե՞ ոչ» թեմայով: Հետաքրքիր և բովանդակալից բանավեճին ակտիվորեն մասնակցեցին ԳՊՀ ուսանողները՝ ստանալով նոր գիտելիքներ:

2024 թվականի մայիսի 10-ին Գավառի պետական համալսարանի ուսանողները հասարակական գիտությունների ամբիոնի դասախոս Քանաքարա Հայրապետյանի և արտաքին կապերի և լրատվության բաժնի մասնագետ Նունե Միրիբյանի ուղեկցությամբ մասնակցեցին Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարանի կազմակերպած «Ուսանողական գարուն-2024» ամենամյա մրցույթ-փառատոնին: ԳՊՀ ուսանողները հանդես եկան հետևյալ անվանակարգերում. «Ասմունք», «Մոնոներկայացում», «Ներկայացում» և արժանացան խրախուսական մրցանակների, փառատոնի գավաթին:

2024 թվականի մայիսի 25-ին Գավառի պետական համալսարանի ուսանողները մասնակցեցին Հայ-Ռուսական համալսարանի կողմից կազմակերպված «Ունիվերսիադա»

միջբուհական մրցույթին, հանդես եկան «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ մրցույթում և «Հրաձգության» առաջնությունում:

2024 թվականի հունիս ամսվա ընթացքում ուսանողների համար կազմակերպվեց ճանաչողական էքսկուրսիա դեպի Վայոց ձորի մարզ: Պարբերաբար կազմակերպվել են էքսկուրսիաներ ՀՀ պատմամշակութային վայրեր, ուսումնական այցեր՝ տարբեր ընկերություններ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ.

2023 թվականի նոյեմբերի 17-ին Գավառի պետական համալսարանում Ուսանողների միջազգային օրը նշանավորվեց բանասիրական ֆակուլտետի ուսանողների կազմակերպած՝ «Բարև, մե՛նք ենք» խորագիրը կրող միջոցառմամբ:

2024 թվականի փետրվարի 21-ին Գավառի պետական համալսարանի Հրաչյա Աճառյանի անվան լսարանում կայացավ Մայրենի լեզվի օրվան նվիրված, «Հայոց լեզուն հազարագանձ» խորագիրը կրող ցերեկույթը: Ուսանողները բովանդակալից ելույթներով և սահիկաշարի միջոցով ներկայացրին հայոց լեզվի զարգացման պատմությունը, գրաբարի, միջին հայերենի, աշխարհաբարի, արևելահայերենի և արևմտահայերենի առանձնահատկությունները, այնուհետև ներկայացվեց հետաքրքիր բեմականացում՝ տարբեր բարբառներով:

2024 թվականի մարտի 10-ին ԳՊՀ-ում կայացավ «Աստվածամոր աչքերով...» խորագիրը կրող ցերեկույթը՝ նվիրված կանանց, մայրության և գեղեցկության միամսյակին:

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ.

2023 թվականի հոկտեմբերի 18-ին ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի ՈՒԽ-ի աջակցությամբ կայացավ «Բարև, մե՛նք ենք» միջոցառումը, որին մասնակցում էին տնտեսագիտական ֆակուլտետի առաջին կուրսեցիները:

2023 թվականի նոյեմբերի 3-ին Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողները՝ ֆակուլտետի դեկան Սամվել Ամիրխանյանի գլխավորությամբ անցկացրին բանավեճ՝ նվիրված պետության տնտեսության զարգացման և բնության պահպանության ու օգտագործման հիմնահարցերին:

2023 թվականի դեկտեմբերի 8-ին Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ «Տնտեսագետների ակումբ»-ի հերթական քննարկումը: Քննարկման թեման Գավառ համայնքում գործող ձեռնարկություններն ու կազմակերպություններն էին և նրանց ծավալած գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշները:

Համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողները՝ ֆակուլտետի դեկան Սամվել Ամիրխանյանի, դասախոս Աստղիկ Ավետիսյանի, ֆինանսների և կառավարման ամբիոնի ակադեմիական խորհրդատու Մարիամ Մանուկյանի ուղեկցությամբ այցելեցին Ոսկեվազի գինու գործարան:

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողները՝ ֆակուլտետի դեկան Սամվել Ամիրխանյանի և դասախոս Հասմիկ Մարգարյանի ուղեկցությամբ այցելեցին ՀՀ Տավուշի մարզում գործող «Տավուշ տեքստիլ» ընկերություն, որտեղ տնօրեն Միքայել

Եզեկյանը ուսանողներին ծանոթացրեց ձեռնոցների արտադրամասի աշխատանքին, տեխնոլոգիական առանձնահատկություններին:

Համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի մագիստրատուրիայի 1-ին կուրսի ուսանողները այցելեցին ՀՀ Արագածոտնի մարզի պատմամշակութային վայրեր, եղան Արշակունիների դամբարանում, Տեղերի վանքում, Կարմրավոր եկեղեցիում, ինչպես նաև այցելեցին «Գուրմե-Դուրմե» շոկոլադի տուն:

Տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողներն ակտիվորեն մասնակցեցին ‹‹CaseKey»՝ բիզնես խնդիրների լուծման 2023 թ.-ի մրցույթին և ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում կայացած ամփոփիչ միջոցառմանը:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ.

2023 թվականի նոյեմբերի 9-ին տեղի ունեցավ «Բարև, մե՛նք ենք» խորագիրը կրող միջոցառում, որի ընթացքում ներկայացան հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի առաջին կուրսեցիները:

2023 թվականի նոյեմբերի 10-12-ը Աղվերանում անցկացվեց ՄԱԿ-ի փախստականների գծով Գերագույն հանձնակատարի երևանյան գրասենյակի (ՄԱԿ ՓԳՀ-ը) և ‹‹Առաքելություն Հայաստան» հասարակական կազմակերպության համատեղ կազմակերպած՝ ‹‹Փախստականների իրավունքներ» խորագիրը կրող 12-րդ հերթական աշնանային դպրոցը, որին մասնակցեցին Իրավագիտություն բաժնի 3-րդ և 4-րդ կուսրսերի ուսանողները:

2023 թվականի դեկտեմբերի 9-ին 1-ին կուրսեցիների համար ֆակուլտետում կազմակերպվեց «Գարեգին Նժդեհ» ֆիլմի կոլեկտիվ դիտում և քննարկում:

2023 թվականի դեկտեմբերի 23-ին Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Պատմություն բաժնի ուսանողների նախաձեռնությամբ կայացավ «Հայրենիքը հոգուս մեջ» խորագիրը կրող ցերեկույթ: Ներկա էին նաև հյուրեր, դպրոցների աշակերտներ:

2024 թվականի ապրիլի 26-ին հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի «Պատմություն» բաժնի ուսանողների նախաձեռնությամբ կայացավ «Պատմության խաչուղիներով» խորագիրը կրող ցերեկույթ, որին մասնակցեցին նաև աշակերտներ:

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ.

2023 թվականի նոյեմբերի 4-ին Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի «Դեղագործական քիմիա» բաժնի ուսանողները «Մանրէաբանություն՝ վիրուսոլոգիայի հիմունքներով» դասընթացի շրջանակում դասախոս Մարինե Հովհաննիսյանի ուղեկցությամբ ճանաչողական այց կատարեցին պանրի արտադրությամբ զբաղվող Միքայելյանների ընտանեկան ֆերմա, որը գործունեություն է ծավալում Գավառի Արծվաքար թաղամասում:

2023 թվականի նոյեմբերի 9-ին Գավառի պետական համալսարանում կայացավ բնագիտական ֆակուլտետի առաջին կուրսերի ուսանողների կողմից կազմակերպված «Բարև, մե՛նք ենք» խորագիրը կրող ցերեկույթը: Միջոցառմանը ներկա էին համալսարանի պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի ներկայացուցիչներ, ուսանողներ, Լճափ գյուղի միջնակարգ դպրոցի 6–7–րդ դասարանների աշակերտները:

2023 թվականի դեկտեմբերի 5-ին ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի «Սերվիս» բաժնի ուսանողները՝ կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամայիս Ավագյանի ղեկավարությամբ կազմակերպեցին յուրօրինակ ցերեկույթ՝ «Եկե՛ք, ձեզ հարազատներն են սպասում» խորագրով, նվիրված Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային ներուժի զարգացման, պատմամշակութային հուշարձանների պահպանության հարցերին:

Անահիտ Պողոսյան՝
ԳՊՀ ուսանողական խորհրդի 2022-2024թթ. նախագահ

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՊՀ ուսանողական խորհրդի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հիմնական ուղղությունները բխում են ՈՒԽ ծրագրից, որը մշակվել է՝ հիմք ընդունելով ‹‹Գավառի պետական համալսարան» հիմնադրամի 2023-2027թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը, կանոնադրությունը, ուսանողական խորհրդի կանոնադրությունը, առաջնորդվելով ուսանողների ինքնակառավարման, նրանց ակտիվության բարձրացման, ընդհանուր և մասնագիտական զարգացման նպատակներով:

Ուսանողական խորհուրդը կշարունակի իր գործունեությունը՝ հետևյալ հիմնական ուղղություններով.

1) համալսարանի կառավարման մարմիններում սովորողների շահերի ներկայացում և պաշտպանություն,

2) աջակցություն ուսումնական գործընթացի բարելավման, ուսանողների առաջադիմության բարձրացման գործընթացներին,

3) սովորողների շրջանում կրթական և հետազոտական գործընթացների վերաբերյալ տեղեկատվության տարածում,

4) ուսանողների ստեղծագործական ներուժի բացահայտման համար պայմանների ստեղծում,

5) միջոցների ձեռնարկում, որոնք կնպաստեն ուսանողների և դասախոսների համագործակցության արդյունավետության բարձրացմանը,

6) ուսումնական մասնաշենքերում կարգուկանոնի պահպանությանն աջակցություն,

7) սովորողների սոցիալական աջակցությանը միտված միջոցների ձեռնարկում,

8) համալսարանի ուսանողական կառույցների աշխատանքի համակարգմանը նպաստող այլ միջոցառումների իրականացում,

9) հանրապետության և արտասահմանյան երիտասարդական, ուսանողական կազմակերպությունների հետ կապերի ստեղծում, միջհամալսարանական ուսանողական համագործակցության զարգացում, աջակցություն ուսանողների փոխանակմանը,

10) սովորողների ակադեմիական առաջադիմության բարձրացման, ուսուցման որակի ապահովման և ծրագրային նորացման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստում և նպաստում դրանց ընդունմանն ու հետևողական իրականացմանը,

11) շրջանավարտների աշխատանքի տեղավորմանն աջակցություն,

12) համալսարանի շրջանավարտների և գործատուների միջև կապի պահպանում,

13) ուսանողական միջոցառումների անցկացում,

14) համակողմանի աջակցություն շնորհալի ուսանողների առաջընթացին:

Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհրդի 2024-2025 ուսումնական տարվա զարգացման ուղիներն են.

1. կրթական, հետազոտական և սոցիալ-մշակութային ծրագրերում ԳՊՀ ուսանողների ակտիվ մասնակցության ապահովում,

2. համալսարանական և ֆակուլտետային մշակութային միջոցառումների կազմակերպում,

3. միջֆակուլտետային ինտելեկտուալ, մարզական մրցույթների կազմակերպում,

4. ՀՀ պատմամշակութային վայրեր էքսկուրսիաների կազմակերպում,

5. հայ երիտասարդ ստեղծագործողների և անվանի մտավորականների հետ հանդիպումների կազմակերպում,

6. ԳՊՀ շրջանավարտների հետ հանդիպումների կազմակերպում, նրանց հաջողությունների պատմության, կրթական և աշխատանքային ուսանելի փորձի ներկայացում,

7. ԳՊՀ ֆակուլտետների առկա և հեռակա բաժինների առաջին կուրսեցիների հետ տեղեկատվական և ճանաչողական հանդիպումների կազմակերպում, նրանց ներգրավում ուսանողական խորհրդի աշխատանքներում,

8. Տարածաշրջանի դպրոցների հետ համագործակցության ակտիվացում, աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը նպաստում, ԳՊՀ մասնագիտությունների ներկայացում,

9. ՈՒԽ միջոցառումներին ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների աշակերտների և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողների մասնակցության ապահովում, դպրոցների աշակերտական խորհուրդների և քոլեջների ուսանողական խորհուրդների հետ համատեղ ծրագրերի իրականացում,

10. տարբեր ուղղություններով այլ համալսարանների ուսանողական խորհուրդների հետ գործակցություն, համատեղ միջոցառումների կազմակերպում,

11. ստեղծագործող ուսանողների ներուժի բացահայտում, նրանց խրախուսում, մասնակցության ապահովում ուսանողական խորհրդի կազմակերպած բազմաբնույթ միջոցառումներին,

12. ԳՊՀ ֆակուլտետների ՈՒԽ նախագահների և համալսարանի ուսանողական խորհրդի ղեկավար կազմի համակարգված աշխատանք, ֆակուլտետային ուսանողական խորհուրդների գործունեության ակտիվացում,

13. ուսանողների կողմից բարձրացված խնդիրների հետևողական լուծում և առաջարկությունների ներկայացում ԳՊՀ ֆակուլտետների խորհուրդներին, ռեկտորատին,

14. համագործակցություն համալսարանում գործող բոլոր ուսանողական կառույցների (ՈՒԳԸ, Տնտեսագետների ակումբ, Բանավեճի ակումբ), համալսարանի որակի ապահովման բաժնի, ակադեմիական քաղաքականության բաժնի, գրադարանի և այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ,

15. ՀՀ Գեղարքունիքի մարզի կրթական, մարզական, մշակութային, հասարակական կազմակերպությունների, քաղաքային և մարզային գրադարանների հետ համագործակցության ապահովում,

16. Գավառում գործող երիտասարդական կազմակերպությունների («Ռեստարտ Գավառ» երիտասարդական հասարակական կազմակերպություն, «Բայազետ կենտրոն» հասարակական կազմակերպություն, «Գավառի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոն) հետ ակտիվ համագործակցություն,

17. ԳՊՀ բոլոր ուսանողներին սոցիալական հարթակների (instagram, facebook) միջոցով իրազեկման ապահովում սպասվելիք հանրապետական, միջազգային, ինչպես նաև ԳՊՀ-ում իրականացվող բոլոր մրցույթների և միջոցառումների մասին,

18. ԳՊՀ ՈՒԽ-ին կից համալսարանի կանոնադրությամբ չարգելված ուսանողական, մշակութային, մարզական միությունների, ըստ նախասիրությունների՝ ակումբների ստեղծում, ուսանողական օլիմպիադաների, ունիվերսիադաների, գիտաժողովների, փառատոների, համերգների, հանդեսների և ուսանողական առօրյան հետաքրքիր դարձնող այլ միջոցառումների կազմակերպում:

Լաուրա Մանուկյան՝
ԳՊՀ ուսանողական խորհրդի նախագահ

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2024-2025 ՈՒՍՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը (այսուհետ՝ նաև ՈՒԳԸ) հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է ծրագրեր՝ նպատակ ունենալով նպաստել ուսանողների կարողությունների զարգացմանը և մտահորիզոնի ընդլայնմանը: Ուսանողական գիտական ընկերության առաջնահերթ նպատակն է ապահովել ուսանողների ներգրավվածությունը ուսանողական գիտական կյանքին: Կառույցը ձեռնարկել է միջոցներ, իրականացրել ծրագրեր, որոնք նպաստել են ոչ միայն համալսարանի ներսում, այլ նաև համալսարանից դուրս ուսանողների գիտական կյանքին ներգրավվածությանը:

ԳՊՀ ՈՒԳԸ-ն իրականացրել է աշխատանքներ՝ հետևյալ հիմնական ուղղություններով.

- հանրապետական և միջազգային գիտաժողովներին ուսանողների մասնակցության ապահովում,
- գիտաժողովների և աշխատաժողովների կազմակերպում,
- սովորողների հետազոտական աշխատանքների խրախուսում,
- հետազոտական աշխատանքների արդյունքների վերլուծություն,
- ինտելեկտուալ միջոցառումների և մրցույթների անցկացում և այլն:

Հաշվետու ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի ՈՒԳԸ-ն կազմակերպել է հետևյալ միջոցառումները.

- ✓ 2023թ. դեկտեմբերի 9-ին ԳՊՀ ՈՒԳԸ ներկայացուցիչներն ակտիվորեն մասնակցեցին «Ռեստարտ Գավառ» երիտասարդական կազմակերպության նախաձեռնած «Սատիրան ընդդեմ կոռուպցիայի» թեմայով մեդիագրագիտության մեկօրյա դասընթացին,
- ✓ 2023թ. դեկտեմբերի 11-13-ը ԳՊՀ ՈՒԳԸ ներկայացուցիչները և համալսարանի այլ ուսանողներ մասնակցություն ունեցան «Our Exchange Club»-ի կողմից կազմակերպված «Ֆինտեք Էթիկա» դասընթացի 4-րդ հոսքին,
- ✓ 2023թ. դեկտեմբերի 19-ին ԳՊՀ ՈՒԳԸ նախագահը և փոխնախագահը մասնակցություն ունեցավ «Գավառի երիտասարդական տուն» բաց երիտասարդական հասարակական կազմակերպությունում տեղի ունեցող «ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ» խորագրով երիտասարդական քննարկմանը: Քննարկման արդյունքում գրավոր ներկայացրինք «Հայաստան-Սփյուռք միասնականության» վերաբերյալ սկզբունքներ,
- ✓ 2024թ. ապրիլին ԳՊՀ բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ, Մերի Խաչատրյանի նախաձեռնությամբ տեղի է ունեցել ուսանողական գիտաժողով: Գիտաժողովին ներկա էին ԳՊՀ պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի ներկայացուցիչներ, ուսանողներ և այլն: Զեկուցումներ ներկայացրին Արմինե Սաֆոյանը, Մերի Փուրթոյանը, Թագուհի Թադրոսյանը, Մարիամ Մելոյանը, Ռոզա Աբրահամյանը և Արեգա Հովհանիսյանը,

- ✓ 2024թ. մայիսի 18-ին ԳՊՀ ուսանողները, ինչպես նաև ՈՒԳԸ ներկայացուցչական անձնակազմը մասնակցեցին Իջևանի «Իրական դպրոց»-ում կազմակերպված դասընթացի, որտեղ բանախոսությամբ հանդես եկան Լիլիթ Գևորգյանը (Մարդկային ռեսուրսների կառավարման խորհրդատու, ԵՊՀ դասախոս), Մնացական Շարաֆյանը (Միչիգանի համալսարանի տվյալագետ, Saima AI ընկերության համահիմնադիր), Լիլյա Հարությունյանը («Մարզերի երեխաները մարզերում» նախաձեռնության անդամ), Սերոբ Խաչատրյանը («Իրական դպրոց» կրթամշակութային հիմնադրամի հոգեբարձուների խորհրդի անդամ),
- ✓ 2024թ. մայիսից ԳՊՀ ՈՒԳԸ նախագահը և փոխնախագահը որպես «GAVAR COMMUNITY DEVELOPMENT» կենտրոնի ծրագրի պատասխանատուներ և հանրային կապերի մասնագետներ, ՀՀ Գեղարքունիքի մարզում ապրող արցախահայերի համար դասընթացներ կազմակերպեցինք: Օգոստոսի 23-30-ը ԳՊՀ-ում իրականացրինք դասընթացներ արցախահայերի համար, որտեղ որպես դասընթացավար հանդես եկավ նաև ՈՒԳԸ նախագահ Մերի Փուրթոյանը: Դասընթացի ավարտին շահառու մասնակիցների հետ 3 օր շարունակ եղանք գործատուների մոտ, որպեսզի մասնակիցները պրակտիկ գիտելիքներ ձեռք բերեն: Ծրագիրը շարունակական է: Ծրագրի շահառու են հանդիսանում նաև այժմ ԳՊՀ-ում սովորող արցախցի ուսանողներ,
- ✓ 2024թ. հունիսի 26-ին և 27-ին ԳՊՀ ՈՒԳԸ անդամները և համալսարանի ներկայացուցիչները մասնակցեցին «Молодежный форум между Республикой Армения и Российской Федерацией» խորագրով երկօրյա ֆորումին: Ֆորումի ընթացքում ներկայացվեց նաև ԳՊՀ գործունեությանը վերաբերվող բանախոսություն,
- ✓ 2024թ. սեպտեմբերից ԳՊՀ ՈՒԳԸ նախագահը մասնակցություն է ունենում «ԿԵԽՄ Գավառ»-ի ծրագրին, որի նպատակն է համայնքի դպրոցներում ֆորում թատրոնների կազմակերպման միջոցով տեղեկատվական հանդիպումների անցկացումը,
- ✓ 2024թ. սեպտեմբերի 15-ին ԳՊՀ շրջանավարտ Ալլա Սարգսյանը ՈՒԳԸ անդամների հետ միասին ԳՊՀ-ում անցկացրել է խմբային քննարկում՝ կապված Գավառի տարածաշրջանում համայնքային կյանքին երիտասարդների մասնակցության հարցերին,
- ✓ 2024թ. սեպտեմբերի 28-ին ԳՊՀ ՈՒԳԸ անդամները մասնակցություն ունեցան «Bayazet Center»-ում կազմակերպված քաղաքական ակումբի 3-րդ քննարկմանը: Քննարկման ընթացքում անդրադարձ կատարվել հանրային քաղաքականությունների մշակման գործընթացին, քննարկվեց ՀՀ-ում առկա հնարավորություններն ու բացթողումները՝ կրթական ոլորտի զարգացումն ապահովելու համար,
- ✓ 2024թ. հոկտեմբերի 10-ին ԳՊՀ ՈՒԳԸ նախաձեռնությամբ Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում առաջին կուրսի ուսանողների հետ անցկացվեց սեմինար «ՈՒԳԸ-ի դերը և նշանակությունը» խորագրով: Սեմինարը վարեց ԳՊՀ Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ Լաուրա Մանուկյանը,

- ✓ 2024թ. հոկտեմբերի 15-ին ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ Լաուրա Մանուկյանը, ԳՊՀ ՈՒԳԸ նախագահը և փոխնախագահը մասնակցեցին Գավառի «Արվեստի դպրոց»-ում իրականացված «Գավառը 2024թ. երիտասարդական մայրաքաղաք» խորագրով պանելային քննարկմանը,
- ✓ 2024թ. հոկտեմբերի 26-ին ԳՊՀ ՈՒԳԸ անդամները մասնակցեցին «Bayazet Center»-ում կազմակերպված քաղաքական ակումբի 4-րդ քննարկմանը: Քննարկման ընթացքում հնարավորություն ընձեռնվեց լսելու ոլորտի փորձագետներին, կիսվելու սեփական կարծիքներով և ակտիվորեն մասնակցելու երիտասարդական բնագավառում կարևոր թեմաների քննարկմանը: Քննարկման բանախոսն էր Գավառ համայնքի ՏԻՄ ներկայացուցիչ, «Գավառի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի համակարգող, ԳՊՀ շրջանավարտ Անի Պետոյանը,
- ✓ 2024թ. հոկտեմբերի 27-ին ԳՊՀ-ում ՈՒԳԸ նախաձեռնությամբ իրականացվեց սեմինար՝ «Գիտական հոդված գրելու մեթոդաբանությունը և կարգը» թեմայով: Սեմինարը վարում էր ԳՊՀ Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ Արմինե Սաֆոյանը,
- ✓ 2024թ. նոյեմբերի 15-ին ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ՈՒԳԸ նախաձեռնությամբ իրականացվեց հանրապետության բուհերի ՈՒԳԸ կազմերի փորձի փոխանակման հանդիպում: Հանդիպման ժամանակ մասնակիցներիս կողմից ներկայացվեցին ՈՒԳԸ կառույցների ծրագրերը, իսկ վերջում մշակվեցին համատեղ ծրագրերի առաջարկներ: Հանդիպման ընթացքում նշվեց, որ ԳՊՀ ուսանողները մասնակցում են բոլոր համալսարանների կողմից կազմակերպված գիտաժողովներին:

ԳՊՀ ՈՒԳԸ ֆեյսբուքյան էջի, տելեգրամյան ալիքի, ինչպես նաև էլեկտրոնային փոստի միջոցով ուսանողները տեղեկացվել են հանրապետական և միջազգային տարաբնույթ գիտաժողովների, մրցույթների, միջոցառումների և այլ ձեռնարկների ու դրանց մասնակցելու հնարավորությունների մասին:

Հաշվետու ժամանակաշրջանում ուսանողական գիտական ընկերության անդամները մասնակցել են մի շարք հանրապետական և միջազգային գիտաժողովների.

1. 2024 թվականի փետրվարի 21՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կողմից կազմակերպված «Հայոց լեզվի ուսումնասիրության և ուսուցման արդի խնդիրները» խորագրով միջազգային գիտաժողով,
2. 2024 թվականի ապրիլի 2՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում կայացած «Սկզբնական կրթության արդի հիմնախնդիրները» խորագրով միջազգային ուսանողական գիտաժողով,
3. 2024 թվականի հունիսի 28՝ Շիրակի Միքայել Նալբանդյանի անվան պետական համալսարանի կողմից կազմակերպված հոբելյանական՝ համալսարանի հիմնադրման 90-ամյակին նվիրված հանրապետական ուսանողական գիտաժողով,
4. 2024 թվականի հոկտեմբերի 9՝ Երևանի պետական համալսարանի ՈՒԳԸ-ի կողմից կազմակերպված միջազգային երիտասարդական 10-րդ գիտաժողով,

5. 2024 թվականի հոկտեմբերի 24՝ ՇՊՀ-ի հիմնադրման 90 ամյակին նվիրված «Կրթության և գիտության արդի հիմնախնդիրները» խորագրով միջազգային գիտաժողով:

- **2024-2025 ուսումնական տարում ԳՊՀ ՈՒԳԸ գործունեության հիմնական ուղղություններն են՝**
  1. ԳՊՀ ամբիոնների հետ կազմակերպել և իրականացնել կրթական ու հետազոտական նախագծեր տարբեր բնագավառներում,
  2. իրականացնել արդիական թեմաներով հետազոտություններ, որոնք կնպաստեն ուսանողների գիտելիքների հարստացմանն ու կարողությունների զարգացմանը,
  3. կազմակերպել ամենամյա գիտաժողովներ, որտեղ ուսանողները կարող են ներկայացնել իրենց հետազոտությունները,
  4. կազմակերպել գիտական աշխատանքների, հետազոտությունների ու նախագծերի մրցույթներ, որոնք կարող են նպաստել ուսանողների ստեղծագործական ունակությունների զարգացմանը,
  5. մասնակցել գիտական պարբերականների պատրաստման գործընթացին, որտեղ ուսանողները կկարողանան հրատարակել իրենց հետազոտական աշխատանքները,
  6. համագործակցել այլ համալսարանների, գիտահետազոտական կենտրոնների և կազմակերպությունների երիտասարդական գիտական ծրագրերում,
  7. ուսանողներին հնարավորություններ տալ ձեռք բերելու նոր գիտելիքներ և հմտություններ տարբեր ոլորտներում՝ մենթորության, սեմինար-քննարկումների, բանավեճերի, դասընթացների, տարբեր սոցիալական ծրագրերի միջոցով,
  8. իրականացնել ծրագրեր ՀՀ այլ բուհերի ուսանողական գիտական ընկերությունների հետ, համատեղ մասնակցել տարբեր հասարակական խնդիրների լուծմանը,
  9. ԳՊՀ վարչական, պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների հետ շարունակել կրթության որակի բարձրացման ուղիների և կառուցակարգերի քննարկումները, շարունակական միջոցների ձեռնարկումը, կրթության որակի ապահովման գործընթացներին մասնակցությունը:

Մերի Փուրթոյան՝
ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության նախագահ

ԳՊՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գավառի պետական համալսարանի տարեկան բյուջեի նախագիծը կազմվում է՝ հիմք ընդունելով ԳՊՀ զարգացման հնգամյա ռազմավարական ծրագրի նպատակների իրականացման՝ տվյալ տարվա գործողությունների ծրագիրը: 2024 թվականի բյուջեն և 2025 թվականի բյուջեի նախահաշիվը պլանավորելիս՝ հաշվի են առնվել ԳՊՀ 2023-2027 թվականների զարգացման ռազմավարական ծրագրի նպատակների իրականացմանը միտված համապատասխան ուսումնական տարիների գործողությունների ծրագրերը: Բյուջեում համապատասխան հոդվածների համամասնությունը պլանավորելիս՝ հաշվի են առնվում տվյալ ուղղություններով նախատեսված գործողությունների արդյունավետության գնահատման ակնկալվող ցուցիչները:

Գավառի պետական համալսարանի 2024 թվականի և 2025 թվականի բյուջեները կազմվել են՝ մուտքերի և ելքերի համամասնությունը պահպանելու սկզբունքով, որպեսզի ելքերը չգերազանցեն մուտքերին:

Այսպիսով, ըստ համալսարանի 2023-2027 թվականների զարգացման ռազմավարական ծրագրի գերակա ուղղությունների՝ ԳՊՀ 2024, ապա 2025 թվականների բյուջեների ծախսերի տոկոսային բաշխումը կատարվել է հետևյալ կերպ.

ԳՊՀ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գավառի պետական համալսարանի 2024 թվականի բյուջեի տոկոսային բաշխումները՝ ըստ ԳՊՀ 2023-2027 թվականների զարգացման ռազմավարական ծրագրի հիմնական ուղղությունների կատարվել է հետևյալ կերպ.

1. ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Այս գործունեության համար օգտագործվել են բյուջեի հետևյալ հոդվածները /ըստ տողերի/.

- աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսեր, որի 52 տոկոսը օգտագործվել է այս նպատակով.
- վճարումներ պետական բյուջե /հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ/, այս հոդվածի 47 տոկոսից ավելին օգտագործվել է նշված գործունեության համար,
- կոմունալ վճարներ, այս հոդվածի գրեթե 60 տոկոսը օգտագործվել է այս գործունեության համար,
- Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր, ներառյալ կրթության և գիտահետազոտության, այս հոդվածի գրեթե 45 տոկոսը օգտագործվել է այս գործունեության համար,

- Տրանսպորտային միջոցների ծախսեր, այս հոդվածի գրեթե 49 տոկոսը օգտագործվել է այս ուղղությամբ,
- Ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման ծախսեր, այս հոդվածի 15 տոկոսն է ծախսվել այս նպատակով,
- Ուսանողական ինքնակառավարման մարմինների ծախսեր, այս հոդվածի 100 տոկոսն այս նպատակով է օգտագործվել,
- Կրթաթոշակ, այս հոդվածը նունպես 100 տոկոսով օգտագործվել է այս նպատակով,
- Գրադարանային ծախսեր, այս հոդվածի գրեթե 80 տոկոսը օգտագործվել է այս գործունեության համար:

Ընդհանուր առմամբ 2024թ-ի բյուջեում կատարված ծախսերի 48 տոկոսը բաժին է ընկնում կրթական և սոցիալ-մշակութային գործունեությանը:

2. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Բյուջեում համապատասխան հոդվածները /տողերն/ են՝ գիտահետազոտական աշխատանքների, գրքերի և հաշվետվությունների տպագրման ծախսերը 100 տոկոսով, բացի այս հոդվածից այս գործունեության համար 1-ից 2 տոկոսի սահմաններում միջոցներ են ծախսվել նաև աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսերի, կոմունալ վճարների, ներկայացուցչական և գործուղման ծախսերի հոդվածներով, ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր, ներառյալ կրթության և գիտահետազոտության հոդվածով 3 տոկոսի չափով, ինչպես նաև գրադարանային ծախսեր հոդվածով՝ գրեթե 10 տոկոսի չափով:

2024թ-ին այս գործունեության համար ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի մոտ 4 տոկոսը:

3. ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ, ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Այս գործունեության ուղղությամբ ծախսերը կազմել են բյուջեի ընդհանուր ծախսերի 39 տոկոսը՝ հետևյալ տողային հողվածներով.

- Աշխատանքի վարձատրությանը, լրավճարներին, հավելավճարներին և պարգևատրմանը, այդ թվում՝ ղեկավար անձնակազմի պարգևատրմանն ուղղվող վճարումներ՝ հոդվածի 44 տոկոսը,
- Վճարումներ պետական բյուջե հոդվածի 53 տոկոսը,
- Կոմունալ վճարներ հոդվածի 39 տոկոսը,
- Փոստային և կապի վճարներ հոդվածի 60 տոկոսը,
- Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր, ներառյալ կրթության և գիտահետազոտության հոդվածի 44 տոկոսը,
- Տրանսպորտային միջոցների ծախսեր հոդվածի 41 տոկոսը,
- Ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման ծախսեր հոդվածի 35 տոկոսը,
- Վաճառակետի սպասարկման և վաճառվող ապրանքների ծախսեր հոդվածի 100 տոկոսը,

- Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման ծախսեր հոդվածի 10 տոկոսը,
- Կապիտալ նորոգություններ հոդվածի 100 տոկոսը:

4. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Այս գործունեության իրականացման համար ծախսվել է բյուջեի ծախսերի մոտ 8 տոկոսը՝ ըստ հետևյալ հոդվածների.

- Աշխատանքի վարձատրությանը, լրավճարներին, հավելավճարներին և պարգևատրմանը, այդ թվում՝ ղեկավար անձնակազմի պարգևատրմանն ուղղվող վճարումներ հոդվածի 1 տոկոսը,
- Փոստային և կապի վճարներ հոդվածի 40 տոկոսի չափով,
- Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր, ներառյալ կրթության և գիտահետազոտության հոդվածի 5 տոկոսը,
- Տրանսպորտային միջոցների ծախսեր հոդվածի 10 տոկոսը,
- Ներկայացուցչական և գործուղման ծախսեր հոդվածի 80 տոկոսը,
- Այլ ծախսեր հոդվածի 97 տոկոսը,
- Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման ծախսեր հոդվածի 90 տոկոսը:

5. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Այս գործունեության իրականացումն ապահովվել է բյուջեի ընդհանուր ծախսերի 1 տոկոսով, և ծախսերը կատարվել են հետևյալ տողային հոդվածներով.

- Աշխատանքի վարձատրությանը, լրավճարներին, հավելավճարներին և պարգևատրմանը, այդ թվում՝ ղեկավար անձնակազմի պարգևատրմանն ուղղվող վճարումներ հոդվածի 1 տոկոսը,
- Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր, ներառյալ կրթության և գիտահետազոտության հոդվածի 3 տոկոսը,
- Ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման ծախսեր հոդվածի 50 տոկոսի չափով,
- Ներկայացուցչական և գործուղման ծախսեր հոդվածի 19 տոկոսի չափով,
- Կրթական բարեփոխումների անցկացման և կարիերայի կենտրոնի զարգացման ծախսեր հոդվածի 100 տոկոսի չափով,
- Մարքեթինգի և գովազդի ծախսեր հոդվածի 100 տոկոսի չափով,
- Այլ ծախսեր հոդվածի 3 տոկոսի չափով:

Իսկ ըստ ԳՊՀ 2023-2027 թվականների զարգացման ռազմավարական ծրագրի գերակա ուղղությունների՝ ԳՊՀ 2025 թվականի բյուջեի նախահաշվում ծախսերի տոկոսային բաշխումը կատարվել է հետևյալ կերպ.

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԳՊՀ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Այս գործունեության համար օգտագործվելու են բյուջեի հետևյալ հոդվածները /տողերը/.

- Աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսեր, որի 51 տոկոսը օգտագործվելու է այս նպատակով,
- Վճարումներ պետական բյուջե /հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ/, այս հոդվածի 70 տոկոսից ավելին օգտագործվելու է այս գործունեության համար,
- Կոմունալ վճարներ, այս հոդվածի գրեթե 80 տոկոսը օգտագործվելու է այս գործունեության համար,
- Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր՝ ներառյալ կրթության և գիտահետազոտության, այս հոդվածի գրեթե 47 տոկոսը օգտագործվելու է նշված գործունեության համար,
- Տրանսպորտային միջոցների ծախսեր, այս հոդվածի գրեթե 60 տոկոսը օգտագործվելու է այս ուղղությամբ,
- Ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման ծախսեր, այս հոդվածի 20 տոկոսն է նախատեսված այս նպատակով օգտագործվելու համար,
- Ուսանողական ինքնակառավարման մարմինների ծախսեր, այս հոդվածը 100 տոկոսով այս նպատակով է օգտագործվելու,
- Կրթաթոշակ, այս հոդվածը նունպես 100 տոկոսով օգտագործվելու է այս նպատակով,
- Գրադարանային ծախսեր, այս հոդվածի գրեթե 90 տոկոսը օգտագործվելու է նշված ուղղությամբ:

Ընդհանուր առմամբ 2025թ-ի բյուջեում նախատեսված ծախսերի մոտ 47 տոկոսը բաժին է ընկնում կրթական և սոցիալ-մշակութային գործունեությանը:

2. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Բյուջեում համապատասխան հոդվածով /տողով/ նախատեսված գիտահետազոտական աշխատանքների, գրքերի և հաշվետվությունների տպագրման ծախսերը 100 տոկոսով, բացի այս հոդվածից այս գործունեության համար 1 տոկոսի սահմաններում միջոցներ են նախատեսված նաև աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսերի, կոմունալ վճարների, ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսերի, ներառյալ կրթության և գիտահետազոտության, ներկայացուցչական և գործուղման ծախսերի հոդվածներով, ինչպես նաև գրադարանային ծախսեր հոդվածով՝ գրեթե 10 տոկոսի չափով:

2025թ-ի բյուջեով նախատեսվել է այս գործունեության համար հատկացնել ծախսերի մոտ 3 տոկոսը:

3. ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ, ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Այս գործունեության համար նախատեսվել է օգտագործել ծախսերի 39 տոկոսը, հետևյալ տողային հոդվածներով.

- Աշխատանքի վարձատրությանը, լրավճարներին, հավելավճարներին և պարգևատրմանը, այդ թվում՝ ղեկավար անձնակազմի պարգևատրմանն ուղղվող վճարումներ՝ հոդվածի 45 տոկոսը,
- Վճարումներ պետական բյուջե հոդվածի 30 տոկոսը,
- Կոմունալ վճարներ հոդվածի 19 տոկոսը,
- Փոստային և կապի վճարներ հոդվածի 50 տոկոսը,
- Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր, ներառյալ կրթության և գիտահետազոտության հոդվածի 44 տոկոսը,
- Տրանսպորտային միջոցների ծախսեր հոդվածի 28 տոկոսը,
- Ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման ծախսեր հոդվածի 35 տոկոսը,
- Վաճառակետի սպասարկման և վաճառվող ապրանքների ծախսեր հոդվածի 100 տոկոսը,
- Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման ծախսեր հոդվածի 10 տոկոսը,
- Կապիտալ նորոգություններ հոդվածի 100 տոկոսը:

4. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Գործունեության այս ոլորտում նախատեսվել է բյուջեի ծախսերի ավելի քան 10 տոկոսը՝ ըստ հետևյալ հոդվածների.

- Աշխատանքի վարձատրությանը, լրավճարներին, հավելավճարներին և պարգևատրմանը, այդ թվում՝ ղեկավար անձնակազմի պարգևատրմանն ուղղվող վճարումներ հոդվածի 2 տոկոսի չափով,
- Փոստային և կապի վճարներ հոդվածի 50 տոկոսի չափով,
- Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր, ներառյալ կրթության և գիտահետազոտության հոդվածի 5 տոկոսի չափով,
- Տրանսպորտային միջոցների ծախսեր հոդվածի 2 տոկոսի չափով,
- Ներկայացուցչական և գործուղման ծախսեր հոդվածի 80 տոկոսի չափով,
- Այլ ծախսեր հոդվածի 98 տոկոսի չափով,
- Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման ծախսեր հոդվածի 90 տոկոսի չափով:

5. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Այս ոլորտի համար հատկացվել են բյուջեի ծախսերի ավելի քան 1 տոկոսը, և ծախսերը կատարվելու են հետևյալ տողային հոդվածներով.

- Աշխատանքի վարձատրությանը, լրավճարներին, հավելավճարներին և պարգևատրմանը, այդ թվում՝ ղեկավար անձնակազմի պարգևատրմանն ուղղվող վճարումներ հոդվածի 1 տոկոսի չափով,

- Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր, ներառյալ կրթության և գիտահետազոտության հոդվածի 2 տոկոսի չափով,
- Ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման ծախսեր հոդվածի 45 տոկոսի չափով,
- Ներկայացուցչական և գործուղման ծախսեր հոդվածի 19 տոկոսի չափով,
- Կրթական բարեփոխումների անցկացման և կարիերայի կենտրոնի զարգացման ծախսեր հոդվածի 100 տոկոսի չափով,
- Մարքեթինգի և գովազդի ծախսեր հոդվածի 100 տոկոսի չափով,
- Այլ ծախսեր հոդվածի 2 տոկոսի չափով:

2024 թվականի բյուջեի կատարողականի և
2025 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշվի վերլուծությունը

Գավառի պետական համալսարանի 2024 թվականի բյուջեի ծախսերը կատարվել են՝ մուտքերի և ելքերի համամասնությունը պահպանելու սկզբունքով, որպեսզի ելքերը չգերազանցեն մուտքերին՝ պակասուրդ չառաջացնելու նպատակով: Ինչպես նախորդ տարի, այս տարի ևս անհրաժեշտ է ընդգծել այն փաստը, որ 2024թ-ի ընթացքում ցավոք իրենց շարունակվող հետևանքներն են ունեցել վերջին տարիներում ծագած խնդիրները՝ ուղղակիորեն ազդելով համալսարանի և՛ եկամուտների ձևավորման, և՛ ծախսերի կատարման վրա:

Այսպիսով, 2024 թվականին պլանավորված մուտքերի 64%-ը բաժին էր ընկնում վճարովի ուսուցման ծառայությունից եկամուտներին, սակայն այս հոդվածի կատարողականը ընդհանուր մուտքերի մեջ կազմել է 60%, այսինքն՝ հոդվածի կատարողականը պլանավորվածից մոտ 4%-ով պակաս է, ինչը պայմանավորված է ընդունելության կրճատումով, հեռացվող ուսանողների քանակի աճով, այնպես էլ ուսանողներին տրամադրված զեղչերով, ինչպես նաև ՀՀ Կառավարության կողմից ուսանողներին տրամադրվող փոխհատուցումների աճով: 2025 թվականի բյուջեով վճարովի ուսուցման ծառայությունից եկամուտները կազմելու են բյուջեի ընդհանուր մուտքերի 67%-ը, այսինքն՝ 2024 թվականի փաստացի կատարողականից այս մեծությունը ավել է նախատեսվել, քանի որ հնարավոր չէ նախապես կանխատեսել, թե 2025 թվականի պետական բյուջեի միջոցներից որքան ուսման վարձ կփոխհատուցվի սոցիալապես անապահով, սահմանամերձ ընտանիքների, Արցախյան 44-օրյա պատերազմի մասնակից և 2023թ. սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսանողների համար, հետևաբար՝ ենթադրվում է, որ այդ գումարները վճարվելու են ուսանողների կողմից:

Մուտքերի հաջորդ, համեմատաբար մեծ տեսակարար մասը բաժին է ընկնում ՀՀ պետական բյուջեից ստացվող ֆինանսավորմանը, որը, ըստ 2024 թվականի պլանավորման, նախատեսվել է 24.5%, սակայն ՀՀ պետական բյուջեից ստացվող միջոցները գերազանցել են պլանավորված մեծությունը, քանի որ պետության կողմից տարբեր ծրագրերով ուսանողների ուսման վարձերի ֆինանսավորումն աճել է և կազմել 27.7%, որը նախորդ տարվա 2023թ-ի կատարողականից շեղվել է ընդամենը 0.2%-ով, իսկ 2025թ.-ի համար այս հոդվածը պլանավորվել է ընդհանուր մուտքերի 24.9%-ի չափով:

Պլանավորված մուտքերի հաջորդ խումբը՝ 8%-ից մի փոքր ավելի, կազմում են ոչ գործառնական մուտքերը, որոնք իրենց մեջ ներառում են դրամաշնորհներից և բարեգործական նվիրաբերություններից մուտքերը, բանկերում ներդրված գումարներից եկամուտները և վարձակալական եկամուտները: Ոչ գործառնական եկամուտներից մուտքերը կազմել են 10.2%, քանի որ աճել են նվիրատվություններից և հանրակացարանային ծառայություններից ստացված եկամուտները, ինչպես նաև 2024թ-ին համալսարանը ներառվել է միայն մեկ միջազգային դրամաշնորհային ծրագրի մեջ, որի պայմանագիրը դեռևս հաստատման փուլում է: 2025թ-ի բյուջեով նոր դրամաշնորհային ծրագրի եկամուտների, համապատասխանաբար նաև ծախսերի պլանավորում չի կատարվել, դրանով պայմանավորված 2025թ.-ի համար այս հոդվածը պլանավորվել է ընդհանուր մուտքերի 5.1%-ի չափով:

Պլանավորված մուտքերում հաջորդ ոչ էական խումբը՝ 3%-ով, կազմում են գործառնական այլ եկամուտները, որոնք ներառում են մագիստրատուրայի ընդունելությունից մուտքերը, շարունակական մասնագիտական զարգացման կրթական ծրագրի իրականացման, այլ ծառայություններից և վաճառակետից մուտքերը: Այս հոդվածի կատարողականը կազմել է գրեթե 2.1%, իսկ 2025թ.-ի համար այս հոդվածը պլանավորվել է ընդհանուր մուտքերի 3%-ի չափով:

Գավառի պետական համալսարանի ելքերի ամենամեծ բաժինը՝ գրեթե 79%-ը, աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսերն են, որը պլանավորված էր 77%-ի չափով: Այս հոդվածն իր մեջ ներառում է և՛ գիտահետազոտական գործունեությունը, և՛ ֆինանսական գործունեության ու ներբուհական տնտեսության կազմակերպումը, և՛ մարդկային ռեսուրսների կառավարումը, և՛ վարչարարության, ինչպես նաև կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտի ծախսերը: Այս հոդվածի՝ բյուջեի մեջ ունեցած մեծ տեսակարար կշիռը դեռևս չի նշանակում, թե համալսարանը չի ապահովում կամ չի կարող ապահովել զարգացում, քանի որ այս հոդվածում ներառվում են նաև շարունակական զարգացում ապահովող այնպիսի ծախսեր, ինչպիսիք են հրավիրյալ դասախոս-մասնագետների կամ վերապատրաստող դասախոսների վարձատրությունը, որոնք էլ հենց ապահովել և ընթացս ապահովելու են շարունակական մասնագիտական զարգացում համալսարանի դասախոսների, աշխատակիցների, ուսանողների, այլ շահառուների համար: Հոդվածով 2025թ-ի համար նախատեսվել է ընդհանուր ծախսերի 77 %-ը:

Վճարումներ պետական բյուջե /հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ/ հոդվածը ներառված է ընդհանուր ծախսերի մեջ և ընդգրկում է համալսարանի կողմից վճարվող շահութահարկը, ավելացված արժեքի հարկը, ուսանողական համակազմի 20%-ից ավելիին տրամադրված զեղչերի եկամտային հարկը և այլ հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ: Այս հոդվածի գծով 2024 թվականի համար պլանավորումը կազմել է շուրջ 0.6 %, որը կատարվել է 0.5%, իսկ 2025թ.-ի համար այս հոդվածով նախատեսվել է բյուջեի ծախսերի մոտ 0.6 %-ը:

Կոմունալ վճարները կազմում են պլանավորված բյուջեի գրեթե 5.4 %-ը, որն իր մեջ ներառում է և՛ հետազոտական գործունեության համար անհրաժեշտ կոմունալ ծախսերը, և՛ բոլոր այն ոլորտները, որտեղ անհրաժեշտ են կոմունալ ծախսեր, որի կատարողականը կազմել է 5.3%, և 2025թ.-ի համար դարձյալ նախատեսվել է բյուջեի մոտ 5.3 %-ը ծախսել կոմունալ ծախսերի համար:

Փոստային և կապի վճարները պլանավորվել են 0.24 %-ի չափով: Հոդվածի կատարողականը ընդհանուր ծախսերի մեջ կազմել է 0.22%, իսկ 2024թ.-ի համար պլանավորվել է ընդհանուր ծախսերի 0.23%-ը տրամադրել այս հոդվածին:

Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսերը կազմում են բյուջեի ծախսերի գրեթե 0.97 %-ը: Այս բաժինն իր մեջ ներառում է բոլոր ոլորտների համար անհրաժեշտ նյութերը (հետազոտական աշխատանքների, մարդկային ռեսուրսների կառավարման և վարչարարության, արտաքին կապերի և համագործակցության ընդլայնման և ուսանողների հետ աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերման ծախսերը): Այս հոդվածի կատարողականն ընդհանուր ծախսերի մեջ կազմել է 0.79 %, և 2025 թվականի բյուջեում այս հոդվածը պլանավորվել է մոտ 1.1 %:

Ծախսերի հաջորդ բաժինը տրանսպորտային միջոցների ծախսերն են, որոնք կազմում են բյուջեի ծախսերի գրեթե 1.7 %,-ը, որը նախատեսված է համալսարանի 2 մեքենաների համար, որոնք սպասարկում են ռեկտորին և համալսարանի այլ աշխատակիցներին, և 1 ավտոբուսի համար, որը սպասարկում է համալսարանի աշխատակիցներին և ուսանողներին: Այսինքն՝ այս հոդվածն իր մեջ ներառում է համալսարանի գործունեության բազմաթիվ ոլորտների ծախսեր. և՛ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտը, և՛ ուսումնական-գիտահետազոտական գործունեության ոլորտները, և՛ արտաքին կապերի-համագործակցության ընդլայնման ոլորտը: Այս հոդվածով կատարողականը ընդհանուր բյուջեում կազմել է 1.53%, սակայն 2025թ-ի բյուջեով նախատեսվել է 1.73%-ը՝ պայմանավորված ընթացիկ տարվա համեմատ ուսանողական տարբեր միջոցառումների համար ավտոբուսի շահագործման համար անհրաժեշտ դիզվառելիքի ծավալների մեծացմամբ:

Ծախսերի հաջորդ բաժինը Ծառայությունների ձեռքբերման ծախսերն են: Այս բաժնի համար պլանավորվել էր բյուջեի 0.57%-ը, որն իր մեջ ներառում է բազմաթիվ ծառայությունների ձեռքբերում, ներառյալ տպագրության, մարքեթինգի և գովազդի համար պահանջվող ծախսերը: Նշված հոդվածի կատարողականը կազմել է 2024 թվականի բյուջեի 0.55%-ը, իսկ 2025 թվականի համար նախատեսվել է բյուջեի 0.58%-ը: Հոդվածը ներառում է նաև չնախատեսված իրավիճակների համար միջոցների պլանավորում:

Ծախսերի հաջորդ բաժինը գիտահետազոտական գործունեության համար անհրաժեշտ ելքերն են, որոնք 2024 թվականի համար պլանավորվել էր 2.66 %, կատարողականը կազմել է ընդհանուր ծախսերի 2%-ը, իսկ 2025թ.-ի համար նախատեսվել է բյուջեի 2.3%-ը ծախսել այս ուղղությամբ: Հոդվածը ներառում է գիտահետազոտական աշխատանքների և նյութերի համար անհրաժեշտ ծախսերը, սակայն այս գործունեության համար անհրաժեշտ վարձատրության, կոմունալ, կապի և այլ անհրաժեշտ ծախսերը ներառված են բյուջեի համապատասխան հոդվածներում: Այսինքն՝ գիտահետազոտական գործունեության համար ծախսերն ավելին են:

Ծախսերի հաջորդ բաժինը կազմել են կրթական բարեփոխումների և կարիերայի կենտրոնի ծախսերը: Այս հոդվածով պլանավորվել է ծախսերի 0.1%-ը, կատարողականը կազմել է 0.11%-ը: 2025 թվականի բյուջեում այս հոդվածը պլանավորվել է 0.13%-ի չափով:

Ծախսերի հաջորդ բաժինը ներկայացուցչական և գործուղման ծախսերն են: Այս հոդվածով ծախսերը կազմել են բյուջեի ընդամենը 0.13 %-ը, կատարողականը կազմել է 0.11%: Նշված հոդվածը նախատեսված է ԳՊՀ-ում հյուրերի և պատվիրակությունների

ընդունելությունների կազմակերպման և գործուղումների համար, որի նպատակը արտաքին կապերի, համագործակցության ծրագրերի ավելացումն է և բարերարների շրջանակի ընդլայնումը: Հաջորդ տարվա համար նախատեսվել է ծախսերի 0.16 %-ը:

Ծախսերի հաջորդ բաժինը ուսանողական ինքնակառավարման մարմինների ծախսերն են: Հոդվածը նախատեսված է ուսանողական ինքնակառավարման մարմինների կողմից կազմակերպվող միջոցառումների ֆինանսավորման և վերջիններիս ընթացիկ գործունեության ապահովման ծախսերը հոգալու համար: Նախատեսվել էր բյուջեի գրեթե 0.13 %-ը, կատարողականը կազմել է 0.14%, իսկ 2025թ-ի համար նախատեսվել է 0.16 %-ը: Նշենք, որ ուսանողական ինքնակառավարման մարմինների կողմից գիտահետազոտական գործունեության համար կատարված ծախսերը ներառվել են գիտահետազոտական գործունեության հոդվածում:

Ծախսերի հաջորդ բաժինը ‹‹Այլ ծախսեր›› հոդվածն է, որն իր մեջ ներառում է բազմաբնույթ ծախսեր, ինչպիսիք են հիմնադրամների հետ համագործակցության և բարեգործության համար անհրաժեշտ ծախսերը, աշխատաժողովների և այլ միջոցառումների կազմակերպման համար պահանջվող ծախսերը, դրամաշնորհների գծով կատարվող ծախսերը: Հոդվածը կազմել է 2024 թվականի պլանավորված ծախսերի 4%-ը: Հոդվածի կատարողականը կազմել է ծախսերի 3%-ը: 2025 թվականի բյուջեում նախատեսվել է գրեթե 4%-ի չափով:

Ծախսերի հաջորդ բաժինը վաճառակետի սպասարկման և վաճառվող ապրանքների ձեռքբերման ծախսերն են, որոնք պլանավորվել են ծախսերի 0.13%-ի չափով: Հոդվածի կատարողականը կազմել է 0.13%, և 2025 թվականի բյուջեում նախատեսվել է դարձյալ 0.13 %-ի չափով:

Ծախսերի հաջորդ բաժինը ուսանողներին վճարվող կրթաթոշակի գումարներն են: Այս հոդվածը պլանավորվել է ծախսերի 1 %-ի չափով: Նշված հոդվածով իրականացվում է անվճար սովորող ուսանողներին տրամադրվող կրթաթոշակների պլանավորում և վճարում: 2024 թվականին հոդվածի կատարողականը կազմել է 1.18%, պետության կողմից անվճար սովորող ուսանողների տրամադրվող կրթաթոշակների կարգում կատարված փոփոխության հետևանքով 2025թ-ի համար նախատեսվել է մոտ 1%-ի չափով:

Ծախսերի հաջորդ բաժինը՝ ‹‹Կապիտալ ակտիվների ձեռքբերում›› հոդվածն է, որով ծախսերը պլանավորվել էր 2024 թվականի ծախսերի 4.35-%-ը, իսկ կատարողականը կազմել է 4.89%-ը: Հոդվածի գերակատարումը պայմանավորված է Եվրոպական միության T-Green և KPI4HE դրամաշնորհային ծրագրերով համակարգչային տեխնիկայի գնումով: Այս հոդվածով ծախսումները 2025 թվականի բյուջեում նախատեսվել է մոտ 4 %:

Ծախսերի հաջորդ բաժինը ‹‹Ելքեր կապիտալ նորոգումների գծով›› բաժինն է: Այս հոդվածով 2024 թվականի ընթացքում պլանավորվել է բյուջեի 0.98%-ը, 2024թ.-ի ընթացքում հիմնականում կատարվել են ընթացիկ վերանորոգումներ, և կապիտալ վերանորոգումներ գրեթե չեն կատարվել, այնուամենայնիվ արդյունքում ծախսը կազմել է 0.15%, իսկ 2025 թվականի համար պլանավորվել է բյուջեի մոտ 1.6%-ը: Անհրաժեշտ է նշել, որ 2024 թվականի ընթացքում համալսարանում արտաքին /կոսմետիկ/ վերանորոգման են ենթարկվել մի շարք լսարաններ, սենյակներ, որոնց համար կատարված ծախսերը չեն ներառվել այս հոդվածում, քանի որ իրականացվել են համալսարանի աշխատակիցների ուժերով, որոնց համալսարանը պարգևատրել է որպես խրախուսանք կատարած լրացուցիչ աշխատանքի համար:

2024 թվականի ընթացքում ԳՊՀ գրադարանային ֆոնդի համալրման համար նախատեսվել էր բյուջեի ընդհանուր ծախսերի 0.18 %-ը, ընդհանուր ծախսերի 0.23%-ի չափով տեղի է ունեցել գրադարանային ֆոնդի համալրումը, որում, ինչպես և նախորդ տարիներին, իրենց կարևոր դերն ունեն տարբեր անձանցից արդեն ավանդույթ դարձած նվիրատվությունները գրքերի տեսքով: Անհրաժեշտ է ընդգծել նաև, որ ինչպես և նախորդ տարի, այս տարի ևս իրականացվել է էլեկտրոնային գրադարանի համալրում: 2025 թվականի համար այս հոդվածը պլանավորվել է բյուջեի ընդհանուր ծախսերի 0.18%-ի չափով:

Գուրգեն Մուրադյան՝
ԳՊՀ գլխավոր հաշվապահ

ԳՊՀ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՏՆՏԵՍԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ, 2024-2025 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանի 2023-2024 ուսումնական տարվա ֆինանսական և տնտեսատեխնիկական գործունեությունն իրականացվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, համալսարանի կանոնադրությանը և ներքին իրավական ակտերին համապատասխան՝ նպատակ ունենալով ապահովել բուհի բնականոն կենսագործունեությունը: Վերոհիշյալ նպատակից ելնելով՝ 2024թ. սկզբին ‹‹Գավառի պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի առաջարկությամբ և հոգաբարձուների խորհրդի որոշմամբ համալսարանում տեղի ունեցավ կառուցվածքային փոփոխություն, ուստի 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի տնտեսատեխնիկական գործունեությունն ուղղված էր նաև այդ փոփոխության իրագործմանը և դրանից առաջացող խնդիրների լուծմանը, խոչընդոտների հաղթահարմանը: Նշված ոլորտին ուղղակիորեն փոխկապակցված են նաև այն բոլոր օբյեկտիվ դժվարությունները, որոնք ուղեկցել և ուղեկցում են ընդհանրապես բուհական համակարգին:

ԳՊՀ տնտեսատեխնիկական գործունեությունն իրականացվում է բուհի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների՝ տնտեսական և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինների համապատասխան մասնագետների ուժերով:

Համալսարանում 2023-2024 ուսումնական տարում կրթական և աշխատանքային գործընթացները կազմակերպվել են ԳՊՀ երկու մասնաշենքերում: Համալսարանի գործունեության համար ամրակցված ընդհանուր տարածքը 18.505 քմ է, որից առավել գործածական տարածքը կազմում է մոտ 10.000 քմ: 2023-2024 ուստարում, ԳՊՀ գիտական խորհրդի որոշմամբ, բանասիրական ֆակուլտետը կենտրոնական մասնաշենքից տեղափոխվեց հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի մասնաշենք, իսկ բնագիտական ֆակուլտետը՝ կենտրոնական մասնաշենք: Տեղափոխման աշխատանքների սահուն իրականացումը ապահովեցին ոչ միայն նշված ֆակուլտետների աշխատակիցների օգնությամբ, այլև տնտեսական և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինների համապատասխան մասնագետների ուժերով: Ֆակուլտետների տեղափոխման արդյունքում համալսարանի 2-րդ մասնաշենքի մոտ 4186քմ տարածքը չի օգտագործվում ուսումնական նպատակով, այլ օգտագործվում է միայն լաբորատոր նպատակներով, որի արդյունքում շահագործման ծախսերը կրճատվել են: Միաժամանակ, նշված մասնաշենքի պահպանությունն ու անվտանգությունն ապահովելու նպատակով տեղադրվեց 7 տեսախցիկ ներառող ներքին և արտաքին տեսահսկման համակարգ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի մասնագետները, ինչպես և նախորդ ուսումնական տարիներին շարունակել են բուհի ֆակուլտետներում, ամբիոններում, աշխատասենյակներում և համապատասխան լսարաններում, լաբորատորիաներում ու կենտրոններում իրականացնել համակարգչային տեխնիկայի շահագործման, ծրագրային և տեխնիկական սպասարկման աշխատանքներ, նոր ձեռք բերված տեխնիկաների տեղադրում և շահագործման հանձնում, որոշ դեպքերում առցանց ռեժիմով աշխատելու պահանջով պայմանավորված, ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման համակարգերի, վիրտուալ լսարանների,

էլեկտրոնային դեկանատի, թվային այլ տիրույթների սպասարկում՝ կատարելով առցանց ուսումնական գործընթացն ապահովող այլ աշխատանքներ: Ֆակուլտետների միավորման և տեղափոխման արդյունքում նրանց կողմից ձևավորվել է 3 նոր համակարգչային լսարաններ և մեկ լաբորատորիա: Ինչպես և նախկինում, հաշվետու տարում ևս անխափան գործել է ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման համակարգը, որի արդյունավետ շահագործումը ապահովվել է տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի, իսկ բովանդակային մասը՝ ԳՊՀ ամբիոնների դասախոսների կողմից:

Ձեռնարկվել են հստակ միջոցառումներ ԳՊՀ մասնաշենքերի ֆիզիկական պահպանության, ձմռան ամիսներին ջեռուցման համակարգի հատուկ ռեժիմով գործարկման, բուհում համացանցային կապի ապահովման, ուսումնական գործընթացի և աշխատանքների կազմակերպման, համալսարանի տնտեսական, տեխնիկական սպասարկման ուղղությամբ:

Համալսարանի տնտեսական, նյութատեխնիկական սպասարկման, անվտանգության ապահովման, մաքրության պահպանման գործառույթներն իրականացնող անձանց կողմից ուսումնական տարվա ընթացքում ԳՊՀ բոլոր մասնաշենքերում կատարվել են ներքին կարգավորման և ընթացիկ սպասարկման աշխատանքներ: Հետևողական աշխատանքներ են կատարվել շենքերի և շինությունների անվտանգ շահագործման ուղղությամբ: Ինչպես նախորդ ուսումնական տարիներին, հաշվետու ուսումնական տարվա ընթացքում ևս կատարվել են վերանորոգման աշխատանքներ. ընթացիկ վերանորոգման են ենթարկվել համալսարանի 2-րդ և 3-րդ մասնաշենքերի տանիքների վնասված հատվածները, փոխարինվել են վնասված ազբոթիթեղները, բարեկարգվել են մի շարք լսարաններ և աշխատասենյակներ: ԳՊՀ կենտրոնական մասնաշենքի 4-րդ հարկում ամբողջական վերանորոգվել են 2 լսարան և 1 աշխատասենյակ, ըստ անհրաժեշտության մասնակի վերանորոգվել են այդ հարկի մնացած լսարանները և միջանցքը, ինչպես նաև հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի մասնաշենքի տանիքը, լսարանները, աշխատասենյակները և սանհանգույցները: Մասնակի վերանորոգման են ենթարկվել համալսարանի բակային հատվածները:

ԳՊՀ կաթսայատան միջոցով ջեռուցվել են 2 մասնաշենքերը, այդ թվում՝ հանրակացարանը: Համալսարանի տնտեսատեխնիկական ծառայությունների ուժերով իրականացվել են նաև մասնաշենքերի ջեռուցման ցանցերի և ջրագծերի մասնակի վերանորոգումներ, վերանորոգվել են բազմաթիվ հանգույցներ՝ ինչպես ջեռուցման, այնպես էլ ջրամատակարարման ցանցերում: Ապահովվել է համալսարանի բոլոր մասնաշենքերի էլեկտրաէներգիայի անխափան մատակարարումը:

Համալսարանի կանաչ տարածքներում կատարվել են ծառերի խնամքի, կանաչապատման և ծաղկազարդման աշխատանքներ:

Ուսումնական և աշխատանքային գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով ձեռք են բերվել անհրաժեշտ նյութեր, սարքեր ու սարքավորումներ, գրենական պիտույքներ, անհրաժեշտ այլ պարագաներ՝ համաձայն համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների պահանջագրերի հիման վրա կազմված ԳՊՀ գնումների պլանի: Օրենքով սահմանված կարգով կազմակերպվել են գնման անհրաժեշտ գործընթացները, իրականացվել գրքերի, համակարգչային պահեստամասերի և տեխնիկայի, ուսումնաօժանդակ նյութերի գնումներ, ինչպես նաև ընթացիկ վերանորոգումների և սպասարկումների համար ձեռք են բերվել շինանյութ, տնտեսական ապրանքներ,

կենցաղային տեխնիկա, համալսարանի գործունեության համար անհրաժեշտ այլ ապրանքներ: 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում անհրաժեշտ գնումները իրականացնելու նպատակով, հիմք ընդունելով նախապես հրապարակված գնումների պլանը, ձևավորվել է գնումների 5 հանձնաժողով: Նշված հանձնաժողովները համապատասխան ընթացակարգով՝ էլեկտրոնային աճուրդով, իրականացրել են վառելիքի և տպագրական աշխատանքների ձեռք բերում: Գնումների պլանով նախատեսված, ուսումնական և աշխատանքային գործընթացների համար անհրաժեշտ այն նյութերը, ապրանքները, աշխատանքները և ծառայությունները, որոնց նախահաշվային գինը չի գերազանցել 1 միլիոն ՀՀ դրամը, ձեռք են բերվել ուղակիորեն 35 անձանցից, որոնցից 27-ի հետ կնքվել են պայմանագրեր, քանի որ գնումները նախատեսվել են իրականացնել ոչ թե միանգամից, այլ տարվա ընթացքում՝ բազմափուլ ձեռքբերմամբ: Էլեկտրաէներգիայի, ջրի, գազի մատակարարման և գազասպառման համակարգի, ՀԴՄ-ի և բանկայի սպասարկման ծառայությունները ձեռք են բերվել բացառիկ իրավունքի տիրապետող սուբյեկտներից:

2023-2024թթ.-ի ընթացքում ԳՊՀ գիտական խորհրդի որոշմամբ հրատարակվել են թիվ 14, 15 և 16 գիտական հոդվածների ժողովածուները, ինչպես նաև տպագրության փուլում է 17-րդ ժողովածուն: 2024թ-ի օգոստոսին հրատարակվել է Գավառի պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի աշխատակիցների կողմից, ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ, իրականացվող՝ 21T-6B038 ծածկագրով «Եվրոպական Էպիկական ավանդույթը և «Սասնա Ծռեր» Էպոսը» թեմայով հետազոտական ծրագրի շրջանակներում կազմված մենագրությունը: Նույն թեմայի իրականացման շրջանակում հրատարակվել են նաև 2023թ.-ին առկա-առցանց ձևաչափերով տեղի ունեցած միջազգային գիտաժողովի նյութերը՝ «Գրականություն և բանահյուսություն» խորագրով:

2023-2024 ուսումնական տարվա ընթացքում համալսարանում շարունակել է գործել գրենական պիտույքների վաճառքի և պատճենահանման կետը, որը, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ հաշվետու ուսումնական տարվա ընթացքում շարունակել է ուսանողների համար մատչելի գներով ապրանքների վաճառքի և ծառայությունների մատուցման գործառույթների իրականացումը:

Հաշվապահական հաշվառման բաժին կողմից, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում սահմանված կարգով կատարվել են համալսարանի բոլոր ֆինանսական պարտավորությունները, ժամանակին վճարվել են հարկերն ու տուրքերը, այլ պարտադիր վճարները, վարչական աշխատակազմի և պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատավարձերը, ուսանողների կրթաթոշակները:

ԳՊՀ բոլոր աշխատակիցների աշխատավարձերը ողջ տարվա ընթացքում վճարվել են ժամանակին, կիրառվել են աշխատակիցների բարոյական և նյութական խրախուսման միջոցներ:

Մասնավորապես ուսումնական տարվա ընթացքում իրականացվել են հետևհալ գործառնությունները.

1. **Ապրանքանյութական պաշարների և հիմնական միջոցների գնման և օգտագործման ոլորտում.**

1) ԳՊՀ պահեստից մոտ 260 անուն ապրանքանյութական պաշարներ ելքագրում, ներկայացված պահանջագրերով՝ 185 գործառնությամբ,

2) պահեստ մոտ 180 անուն ապրանքանյութական պաշարների մուտք՝ 37 գործառնությամբ,
3) 90 անուն հիմնական միջոցների մուտք. ձեռք բերում կամ նվիրատվություն՝ 24 գործառնությամբ,
4) 101 անուն հիմնական միջոցների շահագործման հանձնում՝ 101 գործառնությամբ:

2. **Ծառայությունների գնման գործառնություններ՝ 235.**
Բանկային գործարքներ
1) Վճարման հանձնարարականներ՝ 162, որը ներառում է 2264 գործարք,
2) 830 Բանկային քաղվածքներ /‹‹ԱյԴԻ բանկ» ՓԲԸ, ‹‹ԱՇԻԲ Կամո մ-ղ» ՓԲԸ, ‹‹ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ, ‹‹ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ, / որոնք ներառում են 1889 մուտքի և 2264 ելքի գործարքներ:

3. **Դրամարկղային գործառնություններ.**
1) Դրամարկղի մուտք /Դրամարկղի մուտքի օրդեր/՝ 145,
2) Դրամարկղի ելք /Դրամարկղի ելքի օրդեր/՝ 46,

4. **Դուրս գրված հաշիվներ.**
1) Էլեկտրոնային հաշիվ՝ 54 գործառնություն,
2) Հաշիվ անդորրագիր /սոցփաթեթի վճարումների նպատակով/՝ 111 գործառնություն,
3) Հաշիվ անդորրագիր՝ 56 գործառնություն:

5. **Աշխատակիցների հետ գործարքներ.**
1) Աշխատավարձի հաշվարկում և վճարում՝ 49 գործառնություն,
2) Աշխատակիցների ընդունում՝ 97 գործառնություն,
3) Աշխատակիցների ազատում՝ 120 գործառնություն,
4) Կադրային փոփոխություններ՝ 130 գործառնություն,
5) Արձակուրդների և անաշխատունակության ձևակերպումներ՝ 136 գործառնություն:

6. **Պայմանագրերի կազմում.**
1) ԳՊՀ հանրակացարանում կեցության ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր՝ 18,
2) Արցախից բռնի տեղահանված ուսանողների անվճար կեցության կազմակերպում՝ 13,
3) Նյութեր, սարքեր ու սարքավորումներ, գրենական պիտույքներ, անհրաժեշտ այլ պարագաների ձեռքբերում՝ 40,

2023-2024 ուսումնական տարվա ընթացքում հաշվապահական հաշվառման բաժին կողմից միայն հաշվապահական հաշվառման ծրագրում ստեղծվել են ավելի քան 2600 փաստաթղթեր, որոնց արդյունքում ձևավորվել են մոտ 29.000 հաշվապահական ձևակերպումներ:

Հաշվետու ժամանակահատվածում ևս ԳՊՀ իրականացրած միջազգային ծրագրերից շարունակվել են համալրվել բուհի տեխնիկական ռեսուրսները: Միջազգային ծրագրերի շրջանակում համալսարանը ստացել է մոտ 1.6 միլիոն ՀՀ դրամի համակարգչային տեխնիկա, շարունակվել է ԳՊՀ գրադարանի համալրումը բազմաթիվ նոր, արժեքավոր հայերեն և օտարալեզու գրքերով, որոնց զգալի մասը նվիրատվությունների արդյունք են:

ԳՊՀ պատվավոր բարերար, Բարեշնորհ Գևորգ սարկավագ Գևորգյանը գրադարանին նվիրաբերվել է 265 կտոր ժամանակակից գեղարվեստական և մասնագիտական գրականություն: ԳՊՀ բարերարների նվիրատվությունների շնորհիվ շարունակվել է ԳՊՀ թանգարանին համալրումը, մասնավորապես Բարեշնորհ Գևորգ սարկավագ Գևորգյանի կողմից նվիրաբերվել են.

1. 5 հատ 18–19 դդ հայատառ և ռուսալեզու հնատիպ գրքեր՝ 70.000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ,
2. Անգլիայի թագավոր Գեորգ V-ի արծաթե-ոսկեպատ մետաղադրամ՝ 1913թ., բնօրինակ, 490 (չորս հայուր իննսուն) եվրո՝ 215540 (երկու հարյուր տասնհինգ հազար հինգ հարյուր քառասուն) ՀՀ դրամ արժողությամբ,
3. ԱՄՆ քրիստոնյա ուխտավորների մուտք գործելու 100-ամյակին նվիրված արծաթե մետաղադրամ՝ 1920թ., բնօրինակ, 200 (երկու հարյուր) եվրո՝ 87976 (ութսունյոթ հազար ինը հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամ արժողությամբ,
4. Անգլիայի թագուհու կախազարդ, Բրիտանական թագավորության ‹‹Sterling» ֆաբրիկայում պատրաստված, 1903թ, բնօրինակ, 200 (երկու հարյուր) եվրո՝ 87976 (ութսունյոթ հազար ինը հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամ արժողությամբ,
5. Հայկական եկեղեցական օրհնության Ձեռաց Խաչ՝ արծաթ-ոսկեպատ նռնաքարերով, անվանական՝ հայ վարպետի ժամանակակից աշխատանք, 2024թ., 200 (երկու հարյուր) եվրո՝ 87976 (ութսունյոթ հազար ինը հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամ արժողությամբ:

Միաժամանակ, Բարեշնորհի կողմից ԳՊՀ-ին նվիրաբերվել է իր հեղինակած 25 հատ կտավ բնանկարներ՝ տարբեր չափերի, շրջանակներով, 700.000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ և համալսարանի վարչական աշխատակիցներին համար 25 հատ Սուրբ Գրիգոր Նարեկացու ‹‹Մատյան Ողբերգության» աղոթագիրք–պոեմը:

2023-2024 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի ֆինանսական և տնտեսատեխնիկական գործունեության զարգացման հիմնական ուղղություններն են՝

1. ապահովել ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված 2025թ. բյուջեի կատարումը՝ սահմանված կարգով ֆինանսական միջոցների հավաքագրումը և խնայողաբար ու արդյունավետ ծախսերի կատարումը,
2. ԳՊՀ բոլոր մասնաշենքերում ապահովել ուսումնական և աշխատանքային գործընթացների համար անհրաժեշտ նյութատեխնիկական պայմաններ՝ հետևողականորեն արդիականացնելով և առավել գրավիչ դարձնելով կրթական, հետազոտական և աշխատանքային միջավայրը,
3. ձեռնարկել միջոցներ ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման ռեսուրսները համալրելու, անցանց-առկա և առցանց-հեռավար կրթության ու աշխատանքի պայմանները բարելավելու համար,

4. իրականացնել մասնաշենքերի տեխնիկական հետազոտություններ և ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ վերանորոգման նախահաշիվների կազման և իրականացման ուղղությամբ,
5. պլանավորել և իրականացնել լսարանային ֆոնդի ընթացիկ վիճակի պարբերական գնահատումներ և վերանորոգումներ, ապահովել շարունակական արդիականացում և համապատասխանեցում կրթական գործընթացի զարգացման նոր պահանջներին, ուսանողների և դասախոսների սպասելիքներին, որակյալ կրթության ապահովման հրամայականին,
6. շարունակել լսարանային ֆոնդի պատշաճ կահավորման աշխատանքները՝ այն հնարավորինս հագեցնելով ժամանակակից գույքով և նոր կրթական տեխնոլոգիաների կիրառման հնարավորություններ ընձեռող տեխնիկայով ու սարքավորումներով,
7. ապահովել ուսումնական և օժանդակ տարածքների առավել արդյունավետ օգտագործումը՝ վերաբաշխելով տարածքները զարգացման նոր գերակայություններին համապատասխան,
8. շարունակել գործող կաթսայատան արդիականացման փուլային գործընթացը՝ նպատակ ունենալով ապագայում տարանջատել ջեռուցման համակարգը ըստ մասնաշենքերի՝ խնայողական նոր ջրատաքացուցիչ կաթսաներ տեղադրելով,
9. ապահովել համալսարանի ուսումնական և գիտական լաբորատոր բազայի զարգացումն ու արդիականացումը՝ կրթական և հետազոտական ծրագրերի արդի պահանջներին համապատասխան: Այդ նպատակով անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ միջոցառումները.
   1) գնահատել համալսարանի ուսումնական լաբորատոր բազայի առկա վիճակը՝ ըստ կրթության և հետազոտությունների որակի ապահովման չափորոշիչների, և մշակել առկա լաբորատոր բազայի արդիականացման հեռանկարային պլան՝ ըստ մասնագիտությունների,
   2) ապահովել լաբորատոր բազայի արդիականացման պլանների իրականացումն ըստ Հայաստանի Հանրապետության և, մասնավորապես, Գեղարքունիքի մարզի զարգացման հեռանկարային առաջնահերթությունների և տարիների՝ նախատեսելով անհրաժեշտ ֆինանսական միջոցներ համալսարանի և դրամաշնորհատու կազմակերպությունների ներդրումներից,
   3) զարգացնելով և ընդլայնելով գործընկեր արտադրական կազմակերպությունների հետ հաջող համագործակցության առկա փորձը՝ ստեղծել համատեղ լաբորատորիաներ և կենտրոններ՝ դրանք առաջին հերթին նպատակաուղղելով ուսանողության կրթական պահանջների բավարարմանը,
   4) միջազգային դրամաշնորհային նախագծերի, ինչպես նաև առանձին կազմակերպությունների ու բարերարների միջոցներով իրականացնել կրթական միջավայրի զարգացման և նոր մասնագիտությունների պահանջներին համապատասխան՝ առկա լաբորատոր բազայի վերազինման և նորերի ստեղծման ծրագրեր,

10. ապահովել ուսումնական գործընթացի կազմակերպման պահանջները բավարարող նյութատեխնիկական պայմաններ համալսարանի բոլոր ֆակուլտետներում.
    1) մշակել ԳՊՀ տարածքային պայմանների բարելավման նոր պլան և համալսարանում առկա ներքին և արտաքին բոլոր հնարավորություններն ուղղել դրա իրականացմանը՝ այդ նպատակով օգտագործելով համալսարանի և դրամաշնորհատու կազմակերպությունների, բարերարների, հիմնադրամների ներդրումները,
    2) ստեղծել համալսարանի նյութատեխնիկական բազայի հետագա զարգացման լրացուցիչ հնարավորություններ՝ ապահովելով ուսումնական գործունեության չափորոշիչ պահանջների լիարժեք կատարումը,
    3) կրթական ծրագրերի և ուսանողական համակազմի պահանջներին համահունչ՝ մշակել և իրականացնել ուսումնական տարածքների արդյունավետ օգտագործման հեռանկարային պլան՝ ներառելով նաև դեռևս չվերականգնված մասնաշենքի ապագայի հարցը,
    4) օգտագործել արտաքին հնարավորությունները՝ համալսարանի մարզական բացօթյա բազայի վերանորոգման համար,
    5) շարունակել բուհի նյութատեխնիկական պայմանների բարելավման գործընթացը՝ օգտագործելով համագործակցային կապերի ընձեռած հնարավորությունները,

11.ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության ընդլայնումն ու որակական նոր մակարդակի ձեռքբերումը համալսարանի կրթական և գիտական բոլոր գործընթացներում.

1) ակտիվացնել համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գործունեությունը,
2) զարգացնել բուհի տեխնոլոգիական կարողությունները, ապահովել հեռաուսուցման լսարանների համալսարանական ցանցի զարգացման, շարունակական ընդլայնման և տեխնիկական կատարելագործման գործընթաց՝ ըստ անհրաժեշտության հեռաուսուցման անխափան ու որակյալ կազմակերպման համար,
3) կատարելագործել ուսուցման համացանցային հենքով էլեկտրոնային համապիտանի համակարգը (Learn.gsu.am, E-Library.gsu.am)՝ ապահովելով ուսումնական նյութերի շարունակական համալրում և արդիականացում,
4) կատարելագործել ուսանողական համացանցային հարթակը (students.gsu.am)՝ կցված էլեկտրոնային ուսուցման համակարգին՝ ապահովելով ուսումնառության, դասավանդման, խորհրդատվության և գնահատման էլեկտրոնային ռեսուրսների հասանելիությունը համալսարանի բոլոր ուսանողների և դասախոսների համար,
5) խթանել տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառումը բուհի ամբիոնների հետազոտական ծրագրերում, նախագծերում, մագիստրոսական թեզերում և ավարտական աշխատանքներում՝ ԳՊՀ 2023-2027թթ. ռազմավարական ծրագրի համապատասխան:

Նախատեսված ուղղություններով զարգացման ծրագրերի իրականացումը հնարավորություն կընձեռի առավել արդյունավետ կազմակերպել կրթական, գիտահետազոտական, դաստիարակչական գործընթացները համալսարանի բոլոր ֆակուլտետներում և կյանքի կոչել ԳՊՀ 2023-2027 թվականների զարգացման ռազմավարությամբ նախատեսված ‹‹Վիրտուալ համալսարան» ծրագիրը:

Անհրաժեշտ ենք համարում նշել 2024 թվականին սահմանված պահանջներին համապատասխան Գավառի պետական համալսարանի՝ աղետների ռիսկերի կառավարման պլանի հաստատումը, ինչը կարևորում ենք, հաշվի առնելով արտաքին մարտահրավերներին, բնական և տեխնիկական աղետների հնարավոր վտանգներին պատշաճ դիմակայելու անհրաժեշտությունը:

Այսպիսով, ԳՊՀ տնտեսատեխնիկական գործունեությունը ուղղված է համալսարանի կանոնադրական խնդիրների պատշաճ լուծման և առաքելության իրականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, համալսարանի շահառուների պահանջների բավարարմանը:

Գուրգեն Մուրադյան՝
ԳՊՀ գլխավոր հաշվապահ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԻՇԱՐԺԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ԳՊՀ-ՈՒՄ ՆՇՎԵՑ ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐԸ
01.09.2023 թ.

Ս. թ. սեպտեմբերի 1-ին Գավառի պետական համալսարանում նշվեց գիտելիքի և դպրության օրը: ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը ջերմորեն շնորհավորեց բուհի ուսանողներին և դասախոսներին սեպտեմբերմեկյան տոնի՝ Գիտելիքի և դպրության օրվա առիթով: Հավատարիմ մնալով ձևավորված ավանդույթին՝ Գավառի պետական համալսարանի ռեկտորատը բարձր միավորներ վաստակած և անվճար հիմունքներով ԳՊՀ ընդունված առաջին կուրսեցիներին հանձնեց խորհրդանշական նվեր՝ «Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից» գիրքը, որի հեղինակը բուհի հիմնադիր-ռեկտոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժ, Գավառի պատվավոր քաղաքացի Հրանտ Խաչատուրի Հակոբյանն է:

Ինչպես նախորդ տարիներին, 2023 թվականի սեպտեմբերի 1-ին նույնպես գիտելիքի աշխարհ տանող խորհրդանշական բանալին ավարտական կուրսի ուսանողները փոխանցեցին առաջին կուրսի ուսանողներին: Գավառի պետական համալսարանի ուսանողի երդումը կարդաց «Անգլերեն լեզու և գրականություն» բաժնի առաջին կուրսի ուսանողուհի Անի Մանուկյանը:

ԿԱՅԱՑԱՎ ԵՄ «ERASMUS+ FLEXWBL» ԾՐԱԳՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԸ
15.09.2023 թ.

Լիտվայի Հանրապետության Կլայպեդայի համալսարանում տեղի ունեցավ Եվրոպական Միության «ERASMUS+ FLEXWBL» ծրագրի հերթական աշխատաժողովը՝ նվիրված աշխատանքահեն ուսուցման առանձնահատկություններին: Աշխատաժողովին մասնակցեցին ծրագրի անդամ բուհերի՝ Գավառի պետական համալսարանի, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի, ինչպես նաև ծրագիրը համակարգող բուհի՝ Լատվիայի Լիեպայա համալսարանի ներկայացուցիչները:

Գավառի պետական համալսարանից աշխատաժողովին մասնակցեցին ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Վարազդատ Ավետիսյանը, տնտեսագիտական ֆակուլտետի հաշվապահական հաշվառման ամբիոնի դասախոս, գլխավոր հաշվապահ Գուրգեն Մուրադյանը, արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լիլիթ Թոռչյանը և նույն բաժնի մասնագետ Սիրանույշ Մկրտչյանը: Ողջույնի խոսքով հանդես եկան հյուրընկալ բուհի ռեկտոր Արթուրաս Ռազբադաուսկասը: Արթուրաս Ռազբադաուսկասը, Ռուզաննա Հակոբյանը և ԲՊՀ ռեկտորի պաշտոնակատար Դավիթ Գյուրջինյանը քննարկեցին միջբուհական համագործակցության հնարավորությունները:

ՀՌՈՄԻ ՊԱՊԻ ՏԵՂԱՊԱՀ ՊԱՎԵԼ ՊԵՑՑԻԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՑԵԼԵՑ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

19.09.2023 թ.

Գավառի պետական համալսարանը հյուրընկալեց բարձրաստիճան հոգևոր սպասավորների, միանձնուհիների, Իտալիայից, Լեհաստանից, Ռուսաստանից, Բելառուսից Հայաստան ժամանած ուխտագնացներին՝ Հռոմի պապի տեղապահ, կարդինալ Պավել Պեցցիի գլխավորությամբ: ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը ջերմորեն ողջունեց և շնորհակալություն հայտնեց հյուրերին՝ խաղաղասիրական նպատակներով ուխտագնացություն իրականացնելու, Հռոմի պապ Նորին Սրբություն Ֆրանցիսկոսի բանաձևմամբ՝ «Այց առաջին քրիստոնեական երկիր» կատարելու համար: Ռեկտորը շեշտեց նաև, որ Գավառի պետական համալսարանը սերտ կապերի մեջ է Իտալիայի բուհերի՝ Պավիայի, Տուշցիայի, Հռոմի Սապիենզայի, Վենետիկի Կա Ֆոսկարի և այլ համալսարանների հետ: ԳՊՀ ուսանողներն իրենց կրթության մի մասն անցկացնում են Հռոմում, Իտալիայի այլ քաղաքներում, սովորում են նաև իտալերեն, լինում են Վատիկանում և վերադառնում անմոռաց տպավորություններով: Իտալիայի համալսարաններում կարճաժամկետ դասախոսական աշխատանք են կատարում, գիտաժողովների և սեմինարների են մասնակցում ԳՊՀ դասախոսները:

Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ ռեկտորը Մոսկվայի և ողջ Լատինական կաթոլիկ արքեպիսկոպոսության Եպիսկոպոս, Ռուսաստանում Հռոմի Պապի տեղապահ, ԱՊՀ և Բալթյան երկրների Քրիստոնեական միջեկեղեցական կոմիտեի համանախագահ Պավել Պեցցիին շնորհեց Գավառի պետական համալսարանի պատվավոր դոկտորի կոչում՝ երիտասարդ սերնդի հոգևոր, մշակութային, բարոյական կրթության ու դաստիարակության, մարդասիրական արժեքների տարածման գործում ունեցած վաստակի և խաղաղասիրական առաքելության իրականացման համար: ԳՊՀ շնորհակալագրեր ստացան Ռուսաստանում ուխտագնացության ծառայության ղեկավար, Վլադիմիր քաղաքի Կաթոլիկ եկեղեցու վանահայր Սերգեյ Ալեքսանդրի Զուեւը և լեհ միանձնուհի Կիսիել Իոլանտան՝ երիտասարդների հոգևոր-մշակութային դաստիարակության ոլորտում ունեցած ներդրման համար: Ռեկտորը հատուկ շնորհակալություն հայտնեց ԳՊՀ պատվավոր բարերար Գևորգ Վահան սարկավագ Գևորգյանին՝ համալսարանին մշտապես սատարելու և բարեգործական ծրագրեր իրականացնելու համար: Հյուրերը եղան համալսարանի պատմագիտական թանգարանում, ծանոթացան բուհի գործունեությանը, դիտեցին ԳՊՀ-ի պատմությանը նվիրված ֆիլմ: Նրանք աղոթք հնչեցրին առ Աստված հանուն բիբլիական երկրի և համայն աշխարհի խաղաղության ու համերաշխության՝ շարունակելով ուխտավորի իրենց ճանապարհը դեպի Նորատուսի եզակի խաչքարադաշտ:

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՍԵՄԻՆԱՐ-ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈԼՈԳԻԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ

22.09.2023 թ.

Գավառի պետական համալսարանի բնագիտության լաբորատորիայում տեղի ունեցավ Սևանա լճի էկոլոգիական հիմնախնդիրներին նվիրված սեմինար-քննարկում, որը կազմակերպել էր «Շրջակա միջավայր և առողջություն» հասարակական կազմակերպությունը՝ Գավառի պետական համալսարանի և Երևանի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետի էկոլոգիական անվտանգության կենտրոնի հետ համագործակցությամբ: Սեմինարին մասնակցեցին ԳՊՀ ուսանողներ, դասախոսներ, գիտաշխատողներ, ինչպես նաև Գավառի Պապին Ղանդիլյանի անվան թիվ 2-րդ միջնակարգ

և Կարմիրգյուղի թիվ 1 միջնակարգ դպրոցների ուսուցիչներ ու բարձր դասարանների աշակերտներ: Սեմինարը նվիրված էր Սևանա լճի հիմնախնդիրներին, լճի ջրային էկոհամակարգի վրա լվացող միջոցների ու չմաքրված կեղտաջրերի ազդեցություններին, դրանց նվազեցման գիտական լուծումներին:

ԿԱՅԱՑԱՎ ԱՌՑԱՆՑ ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻՆ

22.09.2023 թ.

ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի և Գավառի պետական համալսարանի կողմից համատեղ անցկացվեց լեզվական հարցերի պարզաբանմանը նվիրված առցանց քննարկում, որին մասնակցում էին լեզվի ինստիտուտի և ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի դասախոսներ, ուսանողներ: Քննարկմանը Ֆրանսիայից մասնակցում էր նաև լեզվաբան Արմեն Միքայելյանը: Քննարկման սկզբում Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր, ԳՊՀ պրոֆեսոր Վիկտոր Կատվալյանը անդրադաձավ նախորդ տարվա հանդիպում-քննարկումներին՝ ընդգծելով դրանց արդյունավետությունը: Քննարկվող հարցերի շրջանակը բավականին լայն էր: Բարձրացված հարցերի վերաբերյալ ծավալվեց ակտիվ բանավեճ: Մասնակիցները փաստեցին, որ քննարկումն օգտակար էր և հետաքրքիր:

«ՅՈՒՔՈՄ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ ՌԱԼՖ ՅԻՐԻԿՅԱՆՆ ԱՅՑԵԼԵՑ ԳՊՀ

14.10.2023 թ.

«ՅՈՒՔՈՄ» հեռահաղորդակցության ընկերության գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանն այցելեց Գավառի պետական համալսարան, հանդիպեց ուսանողների ու դասախոսների հետ և երիտասարդներին կոչ արեց գնալ երազանքների իրականացման ճանապարհով՝ այն համոզմունքով, որ գիտակցված ջանքերն ու կամքը միշտ ցանկալի արդյունք են տալիս, և փյունիկը միշտ հառնում է մոխիրներից ու վերածնունդ ազդարարում:

ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը շնորհակալություն հայտնեց պարոն Յիրիկյանին՝ համալսարանին անվճար և հուսալի համացանցային հասանելիություն ապահովելու, սրընթաց զարգացող տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները կրթական և գիտահետազոտական գործընթացներում արդյունավետորեն օգտագործելու հնարավորություն ընձեռելու, ինչպես նաև հանրային ծառայությունների ոլորտում աշխատանքի բարձր մշակույթ արմատավորելու համար: Հանդիպման ընթացքում քննարկվեցին հետագա համագործակցության, «ՅՈՒՔՈՄ» ընկերությունում ուսանողների պրակտիկաների կազմակերպման վերաբերյալ հարցեր:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵՑԻՆ «ԷՐԱԶՄՈՒՍՅԱՆ ՕՐԵՐ»

16.10.2023 թ.

Գավառի պետական համալսարանում ս. թ.հոկտեմբերի 12-ից 15-ն անցկացվեցին «Էրազմուս օրեր»: Այդ ընթացքում ուսանողներին և դասախոսներին ներկայացվեցին Եվրոպական Միության «Էրազմուս+» միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերը (Հիմնական գործողություն՝ ՀԳ-1), «Էրազմուս+» կարողությունների զարգացման ծրագրերը (ՀԳ-2), ակադեմիական շարժունության ծրագրերին մասնակցելու հնարավորություններն ու պայմանները, ինչպես նաև բովանդակալից և հետաքրքիր հաշվետվություններով հանդես եկան եվրոպական բուհերում վերապատրաստում անցած, դասավանդած և սովորած համալսարանականները: ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի Ինֆորմատիկայի և

ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի դասախոս Լալա Մկրտչյանը, բանասիրական ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Անիկ Բալագոզյանը և որակի ապահովման բաժնի մասնագետ Նոնա Մուրադյանը ներկայացրին իրենց վերապատրաստումների արդյունքները՝ համապատասխանաբար Ռումինիայի Հանրապետության Տիմիսոարայի, Իսպանիայի Թագավորության Ալմերիայի և Պորտուգալիայի Հանրապետության Մինհոյի համալսարաններում:

Իսկ տնտեսագիտական ֆակուլտետի «Կառավարման և ֆինանսներ» ամբիոնի դասախոս Արեգ Սինանյանը ներկայացրեց հաշվետվություն Իսպանիայի Թագավորության Մուրսիայի համալսարանում իր կատարած դասախոսական աշխատանքի վերաբերյալ: Հաշվետվությամբ հանդես եկավ նաև հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի «Իրավագիտություն» բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Լարիսա Բադալյանը, ով ուսանել է Իսպանիայի Թագավորության Վալլադոլիդի համալսարանում:

ԿԱՅԱՑԱՎ ՀՀ ԲՈՒՀԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ
17.10.2023 թ.

Հայաստանում «Էրազմուս+» գրասենյակի նախաձեռնությամբ Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում տեղի ունեցավ հայաստանյան բուհերի միջազգային բաժինների ներկայացուցիչների հանդիպում: Հանդիպմանը ներկա էին 22 բուհի 29 ներկայացուցիչ: Հայաստանում «Էրազմուս+» ազգային գրասենյակի համակարգող Լանա Կառլովան ներկայացրեց «Էրազմուս+ 2023թ.» հայտարարված առաջարկների մրցույթի արդյունքները: Ներկայացուցիչների հետ քննարկվեցին հաջողված ծրագրային առաջարկ ներկայացնելու նախադրյալները և բուհերի կողմից այս ուղղությամբ իրականացվող գործողությունները: Գավառի պետական համալսարանից հանդիպմանը մասնակցեց և աշխատանքային խմբի անունից ծրագրային գաղափար ներկայացրեց արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լիլիթ Թոռչյանը:

«ԲԱՐԵՎ, ՄԵ՛ՆՔ ԵՆՔ». ՆԵՐԿԱՅԱՆՈՒՄ ԵՆ ԳՊՀ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԸ
18.10.2023 թ.

Գավառի պետական համալսարանում ձևավորված ավանդույթները նորարարական գաղափարներով և մոտեցումներով իրականացնում են համալսարանական մեծ ընտանիքի կրտսեր անդամները: ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ, «Ֆինանսներ» բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Ռոզա Աբրահամյանի աջակցությամբ կայացավ տնտեսագիտական ֆակուլտետի առաջին կուրսի կուրսեցիների բեմելը: «Բարև, մե՛նք ենք» խորագրով ցերեկույթին մասնակցում էին «Ֆինանսներ», «Հաշվապահական հաշվառում և հարկում», «Տնտեսագիտություն» բաժինների առաջին կուրսի ուսանողները: Ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին հանուն հայրենիքի անմահացած հերոսների հիշատակը: Նրանք հետաքրքիր ձևով ներկայացան և ներկայացրին իրենց նախասիրությունները, հանդես եկան տնտեսագիտության կարևորության մասին դիտարկումներով: Ուսանողները շնորհակալություն հայտնեցին դասախոսներին՝ սիրով ու նվիրումով իրենց հետ աշխատելու համար և վստահեցրին, որ իրենք պատվով են կրելու Գավառի պետական համալսարանի ուսանողի կոչումը և դառնալու են որակյալ մասնագետներ, որպեսզի նպաստեն մեր երկրի առաջընթացին:

ՆՈՐԱՏՈՒՍԻ ԹԻՎ 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՕՐԸ

19.10.2023 թ.

Նորատուսի թիվ 1 միջնակարգ դպրոցի 10, 11, 12-րդ դասարանների աշակերտները պատմության ուսուցչուհիներ Ասպրամ Մարտիրոսյանի և Գայանե Իսրայելյանի ուղեկցությամբ հյուրընկալվեցին Գավառի պետական համալսարանում: Նրանք հանդիպեցին ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանի հետ, լսեցին օգտակար խորհուրդներ կրթության կարևորության և մասնագիտական ճիշտ կողմնորոշման մասին:

Բուհի որակի ապահովման բաժնի վարիչի պաշտոնակատար Քանաքարա Հայրապետյանը, արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լիլիթ Թոռչյանը, հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի փոխդեկան Գոհար Գևորգյանը, արտաքին կապերի և լրատվության բաժնի մասնագետ Նունե Միրիբյանը ուսանողներին հանգամանալից ներկայացրին բուհում իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերը, կրթաթոշակային հիմնադրամներից օգտվելու հնարավորությունները, ԳՊՀ-ի անդամակցած Եվրոպական Միության «Erasmus+» միջազգային ծրագրերը, որոնց շրջանակներում բուհի ուսանողները հնարավորություն ունեն իրենց կրթության որոշակի ժամանակահատվածն անցկացնել եվրոպական առաջատար բուհերում: Աշակերտները եղան Արցախյան պատերազմի հերոսների անվան լսարանում, ԳՊՀ պատմագիտական թանգարանում, ինչպես նաև դիտեցին բուհի մասին տեսաֆիլմ:

ԳՊՀ-ՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ՀԵՐԹԱԿԱՆ ԲԱՑ ԴԱՍԸ՝ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

29.10.2023 թ.

Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնը պարբերաբար կազմակերպում է բաց դասեր, որոնց մասնակցում են նաև տարբեր դպրոցների աշակերտներ: Հերթական բաց դասի թեման էր «Շոտլանդիայի լեգենդները և խորհրդանիշները»: Այն կազմակերպել էր ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Եղիշե Դաշտոյանը: Մասնակիցները անգլերեն լեզվի և գրականության բաժնի 4-րդ կուրսի ուսանողներն էին:

Ներկա էին բանասիրական ֆակուլտետի դեկան Թաթուլ Ասոյանը, օտար լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Գայանե Միրիբյանը, դասախոս Սաթենիկ Հայթյանը, ուսանողներ, ինչպես նաև Գավառի Սամվել Քոչարյանցի անվան թիվ 1 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտները՝ անգլերեն լեզվի ուսուցչուհիներ Վիլենա Դաշտոյանի և Լիլիկ Գասպարյանի ուղեկցությամբ: Դասին ներկա էր Գավառի պետական համալսարանում հյուրընկալված, ԱՄՆ դասախոս Լորի Ֆարքուհարսոնը, որը գործնական անգլերեն է դասավանդում ՀՀ պետական տնտեսագիտական համալսարանում և ԱՄՆ դեսպանատան հետ համատեղ աշխատաժողովներ է անցկացնում անգլերեն դասավանդողների համար:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ» ՄՐՑՈՒՅԹԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ՝ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

30.10.2023 թ.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտարարել է Հայաստանի Հանրապետության 2024 թվականի երիտասարդական մայրաքաղաքի ընտրության մրցույթ: Գավառ համայնքը մրցույթին մասնակցության հայտ է ներկայացրել: Նախընտրական փուլում մրցույթի փորձագիտական խմբի անդամները հանդիպեցին

Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի, համայնքի ավագանու՝ երիտասարդ անդամների, երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Փորձագետներն այցելեցին Գավառի պետական համալսարան և հանդիպեցին բուհի տարբեր ֆակուլտետների ուսանողների հետ: ԳՊՀ ուսանողները պատասխանեցին առաջադրված հարցերին, ներկայացրին իրենց ձեռքբերումներն ու իրականացրած ծրագրերը՝ կարևորելով ՀՀ Գեղարքունիքի մարզի միակ պետական բարձրագույն ուսումնական հաստատության դերն ու նշանակությունը թե՛ իրենց կյանքում, թե՛ տարածաշրջանի զարգացման գործում:

Փորձագիտական խմբի անդամները եղան Արցախյան պատերազմի հերոսների անվան լսարանում, ԳՊՀ՝ Վարշամ Ավետյանի անվան պատմագիտական թանգարանում, ինչպես նաև բուհի «ՍՄԱՐԹ» լսարանում: Այցից հետո իրականացվելու է փորձագիտական գնահատում, ՀՀ բնակչության շրջանում անցկացվելու է կարճ հաղորդագրությամբ «SMS» քվեարկություն, որից հետո տեղի կունենա մրցույթի արդյունքների ամփոփում: ՀՀ երիտասարդական մայրաքաղաք հռչակված քաղաքը 2024 թվականին կդառնա երիտասարդական միջոցառումների և նախաձեռնությունների իրականացման հիմնական վայր: Մաղթում ենք հաջողություն Գավառ քաղաքին և խնդրում համալսարանականներին՝ քվեարկել Գավառի օգտին:

ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅՈՒՄ ԵՎ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ

02.11.2023 թ.

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս Լալա Մկրտչյանը ս. թ. հոկտեմբերի 17-ից 22-ը Պորտուգալիայի Հանրապետության Ռիո Մայոր քաղաքում մասնակցեց «Հանուն կանաչ ներառման» թեմայով վերապատրաստման դասընթացին, իսկ հոկտեմբերի 23-ից 26-ը՝ Իտալիայի Հանրապետության Բոլզանո քաղաքում՝ «Լեռների նորարարական առաջին տոնավաճառ»-ին: Առաջին դասընթացի հիմնական նպատակն էր մասնակիցներին փոխանցել գիտելիքներ «կանաչ» ներառականության վերաբերյալ: Վերապատրաստվողներն առաջարկեցին Եվրոպական Միության «Էրազմուս+» ծրագրերի առաջարկներ՝ միտված բնապահպանական անվտանգության ապահովմանը, առողջ շրջակա միջավայրում բոլորի համար հավասար հնարավորությունների ստեղծմանը: Իտալիայում տեղի ունեցած «Լեռների նորարարական առաջին տոնավաճառ»-ին Լալա Մկրտչյանը ներկայացրեց «Սարվոր տուրիզմ»-ը՝ որպես լեռնային նորարարական բիզնես:

ԲԱՆԱՎԵՃ՝ ԳՊՀ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

03.11.2023 թ.

Ս. թ. նոյեմբերի 3-ին Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողները՝ ֆակուլտետի դեկան Սամվել Ամիրխանյանի գլխավորությամբ անցկացրին բանավեճ՝ նվիրված պետության տնտեսության զարգացման և բնության պահպանության ու օգտագործման հիմնահարցերին: Թիմերը հանգամանորեն ներկայացրին իրենց կողմ և դեմ տեսակետները՝ բանավեճի կանոններին համապատասխան: Արդյունքում հաղթող ճանաչվեց «Դեմ» թիմը՝ հիմնավորելով, որ երկրի տնտեսական աճը չի կարող ապահովվել ի հեճուկս բնության պահպանության շահի: Մասնակիցները փաստեցին, որ բանավեճը ուսուցողական էր և հետաքրքիր:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ՄԻՔԱՅԵԼՅԱՆՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՖԵՐՄԱՅՈՒՄ

04.11.2023 թ.

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի «Դեղագործական քիմիա» բաժնի ուսանողները «Մանրէաբանություն՝ վիրուսոլոգիայի հիմունքներով» դասընթացի շրջանակում դասախոս Մարինե Հովհաննիսյանի ուղեկցությամբ ճանաչողական այց կատարեցին պանրի արտադրությամբ զբաղվող Միքայելյանների ընտանեկան ֆերմա, որը գործունեություն է ծավալում Գավառի Արծվաքար թաղամասում: Ուսանողներին ցուցադրվեցին պանրի արտադրության փուլերը, որոնք ընթանում են սեփական տեխնոլոգիայով: Ուսանողները եղան մառանում, որտեղ որոշակի պայմաններում հասունանում են պանիրների պինդ տեսակները: Ներկայացվեցին պանիրները, որոնք պատրաստվում են դանիական արտադրության ֆերմենտների և մեզոֆիլ կաթնաթթվային բակտերիաների մաքուր կուլտուրաների օգնությամբ:

«ԲԱՐԵՎ, ՄԵ՛ՆՔ ԵՆՔ». ՆԵՐԿԱՅԱՆՈՒՄ ԵՆ ԳՊՀ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԸ

09.11.2023 թ.

Գավառի պետական համալսարանում կայացավ բնագիտական ֆակուլտետի առաջին կուրսերի ուսանողների կողմից կազմակերպված «Բարև, մե՛նք ենք» խորագիրը կրող ցերեկույթը: Միջոցառմանը ներկա էին համալսարանի պռոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի ներկայացուցիչներ, ուսանողներ, Լճափ գյուղի միջնակարգ դպրոցի 6-7-րդ դասարանների աշակերտները՝ կենսաբանության ուսուցչուհի Գայանե Գալստյանի, դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Լիլիթ Խաչիկյանի, լաբորանտ Սյուզաննա Միերյանի ղեկավարությամբ: Միջոցառման առաջին հատվածում ուսանողները ներկայացան և ներկայացրին իրենց ընտրած մասնագիտությունները, նախասիրությունները, ինչպես նաև կարգախոսները:

Ցերեկույթի երկրորդ մասը նվիրված էր անմահ հերոսներին, հայրենիքի պաշտպաններին: Ուսանողները երախտիքի խոսք հղեցին մերօրյա բոլոր հերոսներին: Միջոցառման ընթացքում հնչեցին հայրենասիրական երգեր, բանաստեղծություններ: Գավառի պետական համալսարանի՝ մեր սիրելի նորեկ ուսանողները սրտի կսկիծով, բայց միևնույն ժամանակ հպարտությամբ ներկայացրին Արցախ աշխարհը՝ իր ամբողջ գրավչությամբ և հուզիչ տեսանյութերով:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ՈՍԿԵՎԱԶԻ ԳԻՆՈՒ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

10.11.2023 թ.

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողները՝ ֆակուլտետի դեկան Սամվել Ամիրխանյանի, դասախոս Աստղիկ Ավետիսյանի, ֆինանսների և կառավարման ամբիոնի ակադեմիական խորհրդատու Մարիամ Մանուկյանի ուղեկցությամբ այցելեցին Ոսկեվազի գինու գործարան: Գործարանի աշխատակցուհին ուսանողներին ներկայացրեց արտադրամասի տարածքը, գինու մառանները, ինչպես նաև պատմեց գործարանի վերածննդի գեղեցիկ պատմությունը:

Ուսանողները շրջեցին արտադրամասի տարածքով, ծանոթացան խաղողի մթերման, գինու խմորման և հնեցման մեթոդներին և գործընթացներին, ականատես եղան գինու հնեցման ինչպես ավանդական, այնպես էլ նորագույն տեխնոլոգիաներին, համտեսեցին լավագույն արտադրանք հանդիսացող գինիներից: Համալսարանականները եղան նաև Արագածոտնի մարզի տեսարժան վայրերում՝ Սաղմոսավանքում, Օհանավանի եկեղեցում՝ Հովհաննավանքում և Հույսի խորանում:

«ԲԱՐԵՎ, ՄԵ՛ՆՔ ԵՆՔ». ԿԱՅԱՑԱՎ ԳՊՀ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ ԲԵՄԵԼԸ

11.11.2023 թ.

Գավառի պետական համալսարանում ձևավորված գեղեցիկ ավանդույթներից է առաջին կուրսեցիների մասնակցությամբ «Բարև, մե՛նք ենք» խորագիրը կրող միջոցառումների շարքի կազմակերպումը: Այս անգամ հերթը հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում սովորող «Իրավագիտություն», «Պատմություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բաժինների առաջին կուրսերի ուսանողներինն էր: Ներկաները նախ մեկ րոպե լռությամբ հարգեցին հանուն հայրենիքի անմահացած հերոսների հիշատակը: Առաջին կուրսերի ուսանողները ինքնատիպ ձևով ներկայացրին իրենց ընտրած մասնագիտությունները, նախասիրություններն ու ապագայի տեսլականը: Միջոցառման ընթացքում հնչեցին հայրենասիրական երգեր, պարեր, երախտիքի և ոգեկոչման խոսքեր: Մասնակիցների հոգիներն ալեկոծեցին Գավառի պետական համալսարան եկած մեր սիրելի Արցախի ուսանողների հուզիչ և հույս ներշնչող կատարումները: Միջոցառումն ավարտվեց «Սասունցիների պարը» խրոխտ բանաստեղծությամբ և պարով:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ 12-ՐԴ ԱՇՆԱՆԱՅԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ

16.11.2023 թ.

2023 թվականի նոյեմբերի 10-12-ը Աղվերանում անցկացվեց ՄԱԿ-ի փախստականների գծով Գերագույն հանձնակատարի երևանյան գրասենյակի (ՄԱԿ ՓԳՀ-ը) և «Առաքելություն Հայաստան» հասարակական կազմակերպության համատեղ կազմակերպած՝ «Փախստականների իրավունքներ» խորագիրը կրող 12-րդ հերթական աշնանային դպրոցը ապագա իրավաբանների, հետազոտողների և փախստականների իրավունքների պաշտպանությամբ հետաքրքրված անձանց համար: Եռօրյա աշխատաժողովը համախմբեց մոտ երեսուն մասնակիցների, հիմնականում՝ իրավաբանական կլինիկաների ուսանողների՝ Գավառի պետական համալսարանից, Երևանի «Հյուսիսային» համալսարանից, Գյումրու «Պրոգրես» համալսարանից և Երևանի պետական համալսարանից:

Գավառի պետական համալսարանի պատվիրակների կազմում էին իրավագիտության ամբիոնի դասախոս Անի Ամիրյանը, իրավագիտության բաժնի 4-րդ կուրսի ուսանողներ Աղեկ Ստեփանյանը, Լարիսա Բադալյանը և նույն բաժնի 3-րդ կուրսի ուսանողներ Տաթևիկ Ղազարյանը, Հարություն Գևորգյանը, Հրանտ Մարգարյանը, ովքեր ակտիվորեն մասնակցեցին քննարկվող հարցերին և արժանացան խրախուսանքների: Եռօրյա դպրոցը եզրափակվեց դատախաղով, որի ընթացքում մասնակիցները հնարավորություն ունեցան կիրառել ձեռք բերած նոր գիտելիքները: Դասընթացի ավարտին բոլոր մասնակիցներին շնորհվեցին հավաստագրեր:

ԳՊՀ-ՈՒՄ ՆՇՎԵՑ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ
17.11.2023 թ.

Գավառի պետական համալսարանում Ուսանողների միջազգային օրը նշանավորվեց բանասիրական ֆակուլտետի ուսանողների կազմակերպած՝ «Բարև, մենք ենք» խորագիրը կրող միջոցառմամբ, որի ընթացքում ներկայացան հայոց լեզվի և գրականության, անգլերեն լեզվի և գրականության բաժինների 1-ին կուրսերի ուսանողները, ինչպես նաև Արցախի պետական համալսարանի նույն ֆակուլտետի ուսանողուհի, այժմ՝ Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնի 2-րդ կուրսում իր ուսումը շարունակող Աննա Լազարյանը:

Միջոցառումը վարում էին նույն ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Թագուհի Պետրոսյանն ու անգլերեն լեզվի և գրականության բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Արուսյակ Սմբաթյանը: Բանասիրական ֆակուլտետի առաջին կուրսեցիները, ներկայացնելով իրենց նախասիրությունները, ձեռքբերումները, բանասերի մասնագիտության կարևորությունը, կիսվեցին նաև բուհի մասին իրենց տպավորություններով: Հայրենի Արցախի և այնտեղ իր ուսումնառության մասին հոգեցունց խոսքերով ներկայացավ Աննա Լազարյանը:

ԳՊՀ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ
18.11.2023 թ.

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի «Սերվիս» բաժնի ուսանողները կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս Լալա Մկրտչյանի ուղեկցությամբ հերթական գործնական դասն անցկացրին դաշտային պայմաններում: «Երկրագիտություն», «Տուրիստական երկրագրություն», «Հայաստանի բնական և պատմաճարտարապետական հուշարձանները» դասընթացների շրջանակներում գործնական աշխատանքները կազմակերպվեցին ՀՀ Արագածոտնի մարզում: Ուսանողները մարզը բացահայտեցին նորովի՝ ծանոթանալով մարզի պատմաճարտարապետական հուշարձաններին, հին բնակավայրերին: Երթուղու ընթացքում ուսանողները այցելեցին Ծաղկեվանք, Հովհաննավանք, Մուղնու Սուրբ Գևորգ եկեղեցի, «Ագարակ» պատմամշակութային արգելոց-թանգարան, Կոշի ամրոց, որտեղ ուսանողները հանդես եկան որպես զբոսավարներ՝ ներկայացնելով պատմամշակութային վայրին վերաբերող հետաքրքիր փաստեր: Էքսկուրսիայի ընթացքում հնարավորություն ստեղծվեց՝ ամրապնդելու ուսանողների տեսական գիտելիքները և զարգացնելու մասնագիտական կարողությունները:

ԳՊՀ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
18.11.2023 թ.

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողները՝ ֆակուլտետի դեկան Սամվել Ամիրխանյանի և դասախոս Հասմիկ Մարգարյանի ուղեկցությամբ այցելեցին ՀՀ Տավուշի մարզում գործող «Տավուշ տեքստիլ» ընկերություն, որտեղ տնօրեն Միքայել Եզեկյանը ուսանողներին ծանոթացրեց ձեռնոցների արտադրամասի աշխատանքին, սարքավորումների առանձնահատկություններին: Ուսանողներն եղան նաև «Իրական դպրոց» միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում, որտեղ ծանոթացան դպրոցի ուսումնառության առանձնահատկություններին, մասնակցեցին գործնական պարապմունքի:

Այնուհետև ուսանողները քահանա Տեր Աբելի առաջնորդությամբ այցելեցին Իջևանի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցի՝ ստանալով հաղորդություն:

Ուսանողների արտադրական պրակտիկան եզրափակվեց Տավուշի ջրամբար և Գարիկ Փայտյանի հյուրատուն այցելությամբ, որտեղ կազմակերպված թեյախմության ընթացքում պարոն Փայտյանը ներկայացրեց հյուրատան ստեղծման և բիզնեսի հաջողության ուսանելի պատմությունը:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ «CASEKEY» ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

24.11.2023 թ.

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողները մասնակցեցին «CaseKey»՝ բիզնես խնդիրների լուծման 2023 թ.-ի մրցույթին և ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում կայացած ամփոփիչ միջոցառմանը: Ստեղծագործական, վերլուծական մտածողությամբ ուսանողների և երիտասարդ մասնագետների համար նախատեսված ամենամյա մրցույթն անցկացվում է ՀՀ Կենտրոնական բանկի հովանավորությամբ:

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի «Ֆինանսներ» բաժնի 3-րդ կուրսի ուսանողներ Սամվել Մանուկյանը, Վարդինե Հարությունյանը, «Հաշվապահական հաշվառում և հարկում» բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Աշխեն Հովսեփյանը, բանասիրական ֆակուլտետի «Անգլերեն լեզու և գրականություն» բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Սոնա Հովեյանը, Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի «Ֆինանսներ» բաժնի 3-րդ կուրսի ուսանող Մանվել Գևորգյանը մասնակցեցին ծրագրի եզրափակիչ փուլին: Թիմի բիզնես մարզիչը ԳՊՀ շրջանավարտ, Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջի դասախոս Վարդան Գարեյանն էր: Ձեռնարկատիրական գիտելիքները զարգացնող մրցույթին ԳՊՀ ուսանողները մասնակցում են՝ 2022 թվականից սկսած:

«ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ» ԵՎ «ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԶԵՐՈՒՄ» ԹԵՄԱՆԵՐԸ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱ

25.11.2023 թ.

Ս. թ. նոյեմբերի 24-ին Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Սամվել Ամիրխանյանի և «Ֆինանսներ» բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի, ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախագահ Մերի Խաչատրյանի նախաձեռնությամբ բուհում կայացավ սեմինար-քննարկում՝ նվիրված մարքեթինգային ռազմավարության և մարզերում ոչ ֆորմալ կրթության կարևորության հիմնահարցերին: «Մարքեթինգային ռազմավարություն» թեմայով դասախոսությամբ հանդես եկավ սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, ֆինանսական վերլուծաբան Հայկ Թրունյանը, ում հետ ֆակուլտետն ունի առցանց համագործակցության հաջողված փորձ:

«Մարզերի երեխաները մարզերում» հասարակական կազմակերպության համահիմնադիր Մայիս Մարգարյանն անդրադարձավ մարզերում ոչ ֆորմալ կրթության կարևորությանը՝ նշելով, որ կազմակերպության առաքելությունը Հայաստանի տարբեր համայնքներում ապրող երեխաների և ուսանողների ներուժի բացահայտումն է, նրանց մեջ առաջնորդության հատկանիշների զարգացումը, մարզերում գործող համալսարանների հետ համագործակցությունը: Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը շնորհակալություն հայտնեց հյուրերին՝ հայտնելով բուհի պատրաստակամությունը հետագայում ևս հանդես գալու համատեղ նախաձեռնություններով:

ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂԻ ԹԻՎ 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՕՐԸ

26.11.2023 թ.

Գավառի պետական համալսարանը հյուրընկալեց ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղի թիվ 1 միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտներին՝ կենսաբանության ուսուցչուհի Գոհար Սարգսյանի, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Լուսինե Ջրաղացպանյանի, հասարակագիտության և պատմության ուսուցչուհի Մերի Արևշատյանի ղեկավարությամբ, ովքեր Գավառի պետական համալսարանի շրջանավարտներ են: Աշակերտները հանդիպեցին ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանի հետ, լսեցին օգտակար խորհուրդներ կրթության կարևորության և մասնագիտական ճիշտ կողմնորոշման մասին: Նրանք ծանոթացան բուհի՝ Վարշամ Ավետյանի անվան պատմագիտական թանգարանի ցուցանմուշներին, եղան Արցախյան պատերազմի հերոսների անվան լսարանում: Աշակերտները ներկա գտնվեցին «Իոնափոխանակման ռեակցիաներ» թեմայով բաց դասին, որը վարում էր ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի կենսաբանության և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս, քիմիական գիտությունների թեկնածու, դոցենտ Կարինե Ավետիսյանը: Աշակերտները մեծ հետաքրքրությամբ լսեցին դասախոսին և ոգևորությամբ մասնակցեցին բաց դասին:

ԿԱՅԱՑԱՎ ԵՄ «ERASMUS+ T-GREEN» ԾՐԱԳՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԸ

26.11.2023 թ.

Լեհաստանի Հանրապետության Կրակովի Յագելոնյան համալսարանում տեղի ունեցավ Եվրոպական Միության «ERASMUS+T-Green» ծրագրի հերթական աշխատաժողովը: Աշխատաժողովին մասնակցում էին ներկայացուցիչներ մասնակից բուհերից՝ Երևանի պետական, Գավառի պետական, Հայաստանի պետական տնտեսագիտական, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական, Հայաստանում Ֆրանսիական, Եվրասիա միջազգային, Հայաստանի ազգային ագրարային, Գորիսի պետական համալսարաններից, ինչպես նաև Որակի ապահովման ազգային կենտրոնից, «Էրազմուս ուսանողների ցանց» և «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպություններից:

Գավառի պետական համալսարանից աշխատաժողովին մասնակցեցին ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը, արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լիլիթ Թոռչյանը, տնտեսագիտական ֆակուլտետի հաշվապահական հաշվառման ամբիոնի վարիչ Հակոբ Ղուլոյանը, գլխավոր հաշվապահ, հաշվապահական հաշվառման ամբիոնի դասախոս Գուրգեն Մուրադյանը:

ԳՊՀ-ՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵՑԻՆ ԳԱՎԱՌԻ՝ ՍԱՄՎԵԼ ՔՈՉԱՐՅԱՆՑԻ ԱՆՎԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

03.12.2023 թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների հետ համագործակցության ծրագրի շրջանակներում Գավառի պետական համալսարանը հյուրընկալեց Գավառի՝ Սամվել Քոչարյանցի անվան N 1 հիմնական դպրոցի 7-9-րդ դասարանի աշակերտներին և պատմության ուսուցչուհի Մարինե Հայթյանին: Նրանք հանդիպեցին ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանի հետ, լսեցին օգտակար խորհուրդներ նպատակասլաց և արդյունավետ ուսումնառության, գիտելիքի կարևորության, ընթերցանության անհրաժեշտության մասին: Աշակերտները ներկա գտնվեցին «Հայաստանի 1-ին

հանրապետության ներքին և արտաքին քաղաքականությունը» առարկայի դասին, որն ընթանում էր Արցախյան պատերազմում անմահացած Գևորգ Արշակյանի անվան լսարանում:

Դասը նվիրված էր 1920 թվականի թուրք-հայկական պատերազմին, Ալեքսանդրապոլի պայմանագրին և Հայաստանի խորհրդայնացմանը: Թեման ներկայացրին ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի «Պատմություն» բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողներ Լուսինե Պողոսյանը, Ալլա Ստեփանյանը, Լուսինե Կյուրեղյանը, դասախոս Քանաքարա Հայրապետյանը: Աշակերտների համալսարանական օրը ուսուցողական էր և հետաքրքիր:

ԿԱՅԱՑԱՎ ԵՄ «ERASMUS+ FLEXWBL» ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԱՄՓՈՓԻՉ ՀԱՆԴԻՊՈՒՄ

05.12.2023 թ.

Ս. թ. նոյեմբերի 29-ին տեղի ունեցավ Եվրոպական Միության »ERASMUS+ FLEXWBL» ծրագրի ադյունքների ներկայացմանը նվիրված ամփոփիչ հանդիպում՝ առցանց ձևաչափով: Հանդիպման առաջին մասում ներկաներին ողջունեցին ծրագրի համակարգող, Լատվիայի Հանրապետության Լիեպայայի համալսարանի դասախոս Պատրիկս Մորեվսը, Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի պրոռեկտոր Դոնարա Ղազարյանը, Ճարտա րապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ներկայացուցիչ, ծրագրի լոկալ համակարգող Իրինա Վանյանը: Ռուզաննա Հակոբյանը շնորհակալություն հայտնեց բոլոր գործընկերներին՝ նշելով, որ ծրագրի շնորհիվ մասնակից բուհերում առավել կարևորվեց աշխատանքահեն կրթությունը, ամրապնդվեց աշխատանքի հետ շաղկապված կրթության կազմակերպման մշակույթը, որի պարագայում սովորելու և աշխատելու գործընթացները զուգակցված են, փոխլրացնում են միմյանց և անհրաժեշտ արդյունք ապահովում:

ԿՆՔՎԵՑ ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ ԵՄ «ERASMUS+SMART CAFFES», «CONNECT» ԾՐԱԳՐԵՐԻ ԱՆԴԱՄ ԲՈՒՀԵՐԻ ԵՎ «ԱՐՄԵՆԻԱՆ ԿՈԴ ԱԿԱԴԵՄԻ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

05.12.2023 թ.

Ս. թ. դեկտեմբերի 1-ին կնքվեց փոխըմբռնման հուշագիր՝ Եվրոպական Միության «ERASMUS+SMART CAFFES», «CONNECT» ծրագրերի անդամ ՀՀ բուհերի՝ Բրյուսովի անվան, Գավառի և Վանաձորի պետական համալսարանների և «Արմենիան Կոդ Ակադեմի» (Armenian Code Academy) ընկերության միջև՝ բարձրագույն կրթության ոլորտում համագործակցության և համատեղ ծրագրերի իրականացման վերաբերյալ: Նպատակն է՝ համատեղել ջանքերը որակյալ կրթություն ապահովելու, ուսումնական, գիտահետազոտական, սոցիալ-մշակութային ծրագրեր կյանքի կոչելու, աշխատանքահեն կրթական գործընթաց կազմակերպելու, ուսանողների կարողությունները և հմտությունները զարգացնելու, բիզնես գաղափարների ձևակերպման և իրականացման վերաբերյալ վերապատրաստումներ անցկացնելու ուղղությամբ: Փոխըմբռնման հուշագիրը կնքվեց «Թվային բիզնես» գաղափարների երկօրյա մրցույթի շրջանակներում, որը կազմակերպել էր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԸ. «ԵԿԵ՛Ք, ՁԵԶ ՀԱՐԱԶԱՏՆԵՐՆ ԵՆ ՍՊԱՍՈՒՄ»

06.12.2023 թ.

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի «Սերվիս» բաժնի ուսանողները՝ կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամայիս Ավագյանի ղեկավարությամբ կազմակերպել էին յուրօրինակ ցերեկույթ՝ «Եկե՛ք, ձեզ հարազատներն են սպասում» խորագրով, նվիրված Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային ներուժի զարգացման, պատմամշակութային հուշարձանների պահպանության հարցերին:

Ուսանողներն անդրադարձան Տաթևի վանական համալիրի, Հալիձորի բերդի, Ամբերդի, Սմբատաբերդի, Արծվաքարի, Լճաշենի կիկլոպյան ամրոցների, Գեղարդի, Սանահինի, Հաղպատի, Հաղարծինի վանական համալիրների, Հայաստանի առաջին մայրաքաղաք Արմավիրի նշանակությանը, ներկայացրին դրանց անվան և ստեղծման հետ կապված հետաքրքիր ավանդազրույցները, դարերից եկող և սերնդից սերունդ փոխանցվող խորհուրդը: Միջոցառմանը ներկա էին ԳՊՀ դասախոսներ, աշխատակիցներ, ուսանողներ, ինչպես նաև աշակերտներ՝ Գավառի ավագ դպրոցից:

ԳՊՀ-ՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ԲԱՑ ԴԱՍ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

09.12.2023 թ.

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Վարազդատ Ավետիսյանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ բաց դաս՝ նվիրված արհեստական բանականության կիրառություններին և զարգացման միտումներին: Բաց դասին ներկա էին ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղի թիվ 1 միջնակարգ դպրոցի 9-11-րդ դասարանի աշակերտներ, ֆիզիկայի ուսուցչուհի Սուսաննա Մարդոյանը, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Գոհար Զաքարյանը, Կարմիրգյուղի թիվ 2-րդ միջնակարգ դպրոցի 11-12-րդ դասարանի աշակերտներ, հասարակագիտության ուսուցչուհի Անուշ Դանիելյանը, Գավառի Պապին Ղանդիլյանի անվան թիվ 2-րդ միջնակարգ դպրոցի 9-12-րդ դասարանի աշակերտներ, դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Սիրարփի Սահակյանը, ուսանողներ՝ Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջից, ԳՊՀ ուսանողներ և դասախոսներ:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱ

09.12.2023 թ.

Ս. թ. դեկտեմբերի 8-ին Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ «Տնտեսագետների ակումբ»-ի հերթական քննարկումը՝ ակումբի նախագահ, Ֆինանսներ /ըստ ոլորտի/ բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Սոնա Ավագյանի և նույն բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Արեգա Հովհաննիսյանի նախաձեռնությամբ: Քննարկման թեման Գավառ բազմաբնակավայր համայնքում գործող ձեռնարկություններն ու կազմակերպություններն էին և նրանց ծավալած գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշները: Տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողները ներկայացրին իրենց ինքնուրույն ուսումնասիրություններն ու վերլուծությունները տարածաշրջանի ձեռնարկությունների վերաբերյալ: Միջոցառման ընթացքում ներկայացվեց շուրջ 45 ձեռնարկություն, որոնցից

յուրաքանչյուրը և բոլորը համատեղ նպաստում են Գավառ խոշորացված համայնքի զարգացմանը:

ԳՊՀ–ՈՒՄ ՆՇՎԵՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ

10.12.2023 թ.

Ի նշանավորումն դեկտեմբերի 10-ի՝ Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրվա, Գավառի պետական համալսարանում անցկացվեց բաց դաս, որը վարում էր բուհի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր Ռուզաննա Հակոբյանը: ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի իրավագիտության բաժնի առաջին և չորրորդ կուրսերի ուսանողները բաժանվել էին վեց խմբի և ակտիվորեն մասնակցեցին միջառարկայական բաց դասին՝ նախագծային աշխատանքի մեթոդով, ինքնուրույն հետազոտություն կատարելու արդյունքում ներկայացնելով մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքները խաղաղ պայմաններում, ինչպես նաև պատերազմի ժամանակ: Բաց դասին մասնակցեցին Գավառի ավագ դպրոցի 10-11-րդ դասարանների աշակերտներ, մասնագիտացված աջակցման գծով փոխտնօրեն Լիաննա Բալագոզյանը, դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Արմինե Ավագյանը, ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի Լուսինե Մանուկյանը, Գավառի Հովհաննես Թումանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի 7 և 9-րդ դասարանների աշակերտներ, պատմության ուսուցչուհի Անի Հավտոյանը, ուսուցչի օգնական Սաթեն Մերթարչյանը, Գավառ քաղաքի Մնացական Բունիաթյանի անվան թիվ 8 միջնակարգ դպրոցի 10 և 12-րդ դասարանների աշակերտներ, դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Լուսինե Չիբուխչյանը, անձնակազմի կառավարման մասնագետ Ինեսա Սարգսյանը, Նորատուս գյուղի թիվ 1 միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտներ, հասարակագիտության ուսուցչուհի Բելլա Սարգսյանը, «Գավառի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի համակարգող Անի Պետոյանը, նույն կենտրոնի երիտասարդական աշխատող Գևորգ Հերգնյանն ու կենտրոնի երիտասարդներ, ԳՊՀ ուսանողներ և դասախոսներ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԵՑ «CHATGPT»-Ի ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

20.12.2023 թ.

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Վարազդատ Ավետիսյանի նախաձեռնությամբ բուհի պրոֆեսորադասախոսական կազմի անդամների համար անցկացվեց վերապատրաստման դասընթաց՝ «Արհեստական բանականության գրագիտություն», «ChatGPT-ի կիրառությունը ուսումնական գործընթացներում» թեմաներով:

Դասընթացի նպատակն էր՝ ԳՊՀ դասախոսներին փոխանցել անհրաժեշտ գիտելիքներ և գործնական կարողություններ՝ արհեստական բանականության հնարավորությունները ուսումնական գործընթացում գրագետ և արդյունավետ կիրառելու համար: Դասընթացի շրջանակներում շեշտադրումը կատարվեց առարկայական ծրագրերի մշակման, ուսումնական նյութերի պատրաստման, դասավանդման և հետազոտական աշխատանքներում ChatGPT-ի գործիքակազմի կիրառության կառուցակարգերի վրա:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵՑ «ՖԻՆՏԵՔ ԷԹԻԿԱ» ԴԱՍԸՆԹԱՑԸ

25.12.2023 թ.

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ «Ֆինտեք էթիկա» դասընթացի 4-րդ հոսքը: Դասընթացի նպատակն էր փոխներգործուն մեթոդներով ներկայացնել ֆինտեք ոլորտի առանձնահատկությունները և նորարարությունները, նպաստել մասնակիցների ֆինանսական գրագիտության մակարդակի բարձրացմանը: Երկօրյա դասընթացը վարեց «ԱուրԹիմՔլաբ», «ԱուրէքսչենջՔլաբ», «ՔլաբՕն» ընկերությունների համահիմնադիր, գործադիր տնօրեն, բիզնես խոսնակ Ավետիս Վարոսյանը: Դասընթացի ընթացքում քննարկվեցին հետևյալ թեմաները՝ փողի էվոլյուցիա, էլեկտրոնային փող, բանկային քարտեր, բանկոմատներ, օնլայն գնումներ, բլոկչեյն, կրիպտոարժույթ, կրիպտոպանակներ, կրիպտոընկերություններ: Դասընթացի ավարտին մասնակիցներին շնորհվեցին հավաստագրեր: Մասնակիցները նշեցին, որ դասընթացը հետաքրքիր էր, ուսանելի և օգտակար:

ԳՊՀ-ՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ՑԵՐԵԿՈՒՅԹ՝ “CHRISTMAS SOLE” ԽՈՐԱԳՐՈՎ

30.12.2023 թ.

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի «Սերվիս» բաժնի ուսանողների մասնակցությամբ և օտար լեզուների ամբիոնի դասախոս Լիլիթ Թոռչյանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ “Christmas sole” խորագիրը կրող ցերեկույթ՝ անգլերենով: Միջոցառման ընթացքում ուսանողները կատարեցին Ամանորին և Սուրբ Ծննդյան տոներին նվիրված երգեր, հանդես եկան գեղեցիկ ասմունքով և պարային համարներով: Ուսանողները ներկայացրին տարբեր երկրներում՝ Հայաստանում, Անգլիայում,Իտալիայում, Ճապոնիայում, Դանիայում, Նեպալում Սուրբ Ծննդյան տոները նշելու հետ կապված հետաքրքրիր ավանդույթներ: Պատմության հիմքում այն ճշմարտությունն է, որ նվիրելու և ուրախություն պարգևելու երջանկությունն ավելին է, քան ստանալու հաճույքը: Միջոցառումը եզրափակվեց հանդիսատեսի կողմից անգլերեն լեզվով հնչած ամանորյա մաղթանքներով: Ցերեկույթի մասնակիցները միմյանց մաղթեցին հույս, հավատ, սեր:

ՄԵԿՆԱՐԿԵՑ ԵՄ «ԷՐԱԶՄՈՒՍ + KPI4HE » ԾՐԱԳԻՐԸ

01.02.2024 թ.

Ս. թ. հունվարի 30-ին և 31-ին Երևանի պետական համալսարանում տեղի ունեցան Եվրոպական Միության «Էրազմուս+ KPI4HE. Հայաստանում ներառական, թվային ու կանաչ ուղղվածությամբ բարձրագույն կրթության պատշաճ կառավարման և որակի համար գործունեության առանցքային ցուցանիշների ազգային շրջանակի (ԳԱՑԱԾ) ստեղծում» ծրագրի մեկնարկային հանդիպումները: Եռամյա ծրագրի համակարգողը Երևանի պետական համալսարանն է, իսկ գործընկեր հաստատություններն են ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը (ՈԱԱԿ), ՀՀ հինգ բուհեր՝ Գավառի պետական համալսարանը, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական, Եվրասիա միջազգային և Հյուսիսային համալսարանները, Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը, մեկ հասարակական կազմակերպություն, ինչպես նաև եվրոպական երեք բուհեր՝ Դրեզդենի տեխնիկական, Օլդենբուրգի (Գերմանիա) և Ջենովայի (Իտալիա) համալսարանները:

Գավառի պետական համալսարանից ծրագրի մեկնարկային հանդիպմանը մասնակցեցին ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Վարազդատ Ավետիսյանը, ակադեմիական քաղաքականության բաժնի վարիչ Օլգա Ղազարյանը, գլխավոր հաշվապահ Գուրգեն Մուրադյանը, արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լիլիթ Թոռչյանը և նույն բաժնի մասնագետ Սիրանույշ Մկրտչյանը:

Գավառի պետական համալսարանի գործունեության առանցքային ուղղությունները ներկայացրեց Լիլիթ Թոռչյանը:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ «ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՖՈՐՈՒՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

19.02.2024 թ.

Ս. թ. փետրվարի 17-18-ին կայացավ «Ուսանողական ինքնակառավարման հայաստանյան ֆորում»-ը, որը կազմակերպել էր Երևանի պետական համալսարանի ուսանողական խորհուրդը՝ կառույցի հիմնադրման 30-ամյակի կապակցությամբ: Ֆորումն անցկացվեց ԵՊՀ Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայում՝ նպատակ ունենալով քննարկել ուսանողական ինքնակառավարման հիմնախնդիրները, ակտիվացնել համագործակցությունը ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողական ինքնակառավարման մարմինների միջև: Ֆորումին ներկա էին ՀՀ 19 բուհերի ուսանողական խորհուրդների նախագահներ և ուսանողական ինքնակառավարման մարմինների ղեկավար կազմի անդամներ: Գավառի պետական համալսարանից ֆորումին մասնակցեցին բուհի ուսանողական խորհդի նախագահ, հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Անահիտ Պողոսյանը, նույն ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախագահ Անահիտ Վարդանյանը, ովքեր ողջունեցին ֆորումի կազմակերպումը և այն կարևորեցին՝ որպես բուհերում ուսանողական ինքնակառավարման արդյունավետությանը նպաստող ձեռնարկ:

ՇՆՈՐՀԱՎՈ՛Ր ՏՈՆԴ, ՉՔՆԱ՛Ղ ՄԱՅՐԵՆԻ

21.02.2024 թ.

Փետրվարի 21-ին Գավառի պետական համալսարանի Հրաչյա Աճառյանի անվան լսարանում կայացավ Մայրենի լեզվի օրվան նվիրված, «Հայոց լեզուն հազարագանձ» խորագիրը կրող ցերեկույթը: Մասնակիցները հայոց լեզվի և գրականության, անգլերեն լեզվի և գրականության, պատմության բաժինների ուսանողներն էին:

Հնչեցին հատվածներ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմից, շարականներից, ուսանողներն ասմունքեցին արևելահայերեն և արևմտահայերեն բանաստեղծություններ, հնչեցին ասույթներ հայոց լեզվի մասին, ներկայացվեցին Սայաթ-Նովայի ստեղծագործություններից: Կարևորելով հազարամյակների պատմություն ունեցող հայերենի՝ որպես ազգային, պետական և գրական լեզվի դերը յուրաքանչյուրի ազգային ինքնագիտակցության և արժեհամակարգի ձևավորման հարցում՝ ուսանողները, հավատարիմ մնալով օրվա խորհրդին, ընդգծեցին հայոց լեզուն անաղարտ պահելու անհրաժեշտությունը: Միջոցառմանը ներկա էին Գավառի պետական համալսարանի ռեկտորատի անդամներ, դասախոսներ և ուսանողներ:

«ՀԱՄԱԼՍԱՐԱՆ-ԴՊՐՈՑ» ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
06.03.2024 թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների հետ համագործակցության ծրագրի շրջանակներում ս. թ. մարտի 4-ին և 5-ին Գավառի պետական համալսարանի աշխատակիցներն ու ուսանողները այցելեցին Գավառի ավագ, Նորատուսի թիվ 1, թիվ 2, թիվ 3 դպրոցներ, հանդիպեցին տնօրենների, ուսուցիչների և աշակերտների հետ: Հանդիպումների նպատակն էր ուսումնասիրել բարձր դասարանների աշակերտների կրթական կարիքները, աջակցել նրանց մասնագիտական կողմնորոշման հարցում: Հանդիպումների ընթացքում համալսարանականները ներկայացրին բուհում իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերը, կրթաթոշակային հիմնադրամներից օգտվելու հնարավորությունները, ԳՊՀ-ի անդամակցած Եվրոպական Միության «Erasmus+» միջազգային ծրագրերը, ինչպես նաև պատասխանեցին աշակերտներին հուզող հարցերին: Համալսարանականները նշեցին, որ ԳՊՀ ռեկտորատի, ամբիոնների, դեկանատների, լաբորատորիաների, պատմագիտական թանգարանի և մյուս ստորաբաժանումների դռները բաց են բոլոր դպրոցների աշակերտների և ուսուցիչների առջև:

«ԱՍՏՎԱԾԱՄՈՐ ԱՉՔԵՐՈՎ...»
11.03.2024 թ.

Գավառի պետական համալսարանում կայացավ «Աստվածամոր աչքերով...» խորագիրը կրող ցերեկույթը՝ նվիրված կանանց, մայրության և գեղեցկության միամսյակին: Միջոցառումը խորհրդանշական էր. կնոջ դերի արժևորումը և նրա մեծարումը զուգակցվում էր Աստվածամոր՝ իբրև կնոջ և մոր կատարելատիպի փառաբանմամբ:
Միջոցառմանը ներկա էին Գավառի պետական համալսարանի պատվավոր բարերար Բարեշնորհ Գևորգ սարկավագ Գևորգյանը, համալսարանի բարերար Իվան Սեմյոնովը, Հայաստանի գրողների միության անդամներ Հայկ Սիրունյանը, Արմեն Ավոն, համալսարանի հյուրերը՝ Միխայիլ Սոլովյովը, Մարինա Շինկարենկոն, Սևակ Հովհաննիսյանը, Գագիկ Թադևոսյանը, Սարուխանի թիվ 2 միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտներ, ծնողներ, ինչպես նաև դասախոսներ և ուսանողներ: Ողջույնի և շնորհավորանքի խոսքով հանդես եկավ համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը: Տիկին Հակոբյանը երախտագիտությամբ հայտնեց, որ ԳՊՀ պատվավոր բարերար Բարեշնորհ Գևորգ սարկավագ Գևորգյանը համալսարանին նվիրաբերել է իր ստեղծագործությունները՝ կտավի վրա արված բնանկարներ, ինչպես նաև հայատառ և ռուսալեզու հնատիպ գրքեր, Սուրբ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» աղոթագրքի օրինակներ, գեղարվեստական և մասնագիտական ժամանակակից գրականություն, պատմամշակութային արժեք ունեցող ցուցանմուշներ, որոնք կհարստացնեն ԳՊՀ թանգարանը և գրադարանը:

ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍԸ՝ ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՎՈՐԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ
11.03.2024 թ.

Գավառի պետական համալսարանի կառավարման և ֆինանսների ամբիոնի դասախոս, տնտեսական գիտությունների թեկնածու, դոենտ Մարե Խաչատրյանը Եվրոպական միության «Էրազմուս+» միջազգային շարժունության ծրագրի շրջանակում դասախոսություններով հանդես եկավ Պորտուգալիայի Հանրապետության Էվորայի համալսարանում: Էվորայի համալսարանի բակալավրիատի «Մակրոտնտեսագիտություն» մասնագիտության երկրորդ և մագիստրատուրայի «Բիզնես վարչարարություն»

մասնագիտության առաջին կուրսերի ուսանողների համար Մարե Խաչատրյանը կարդաց հետաքրքիր դասախոսություններ՝ Ֆինանսների հիմունքների, մակրոտնտեսական ցուցանշների, դրամավարկային քաղաքականության, բյուջետային համակարգի, հարկերի և հարկագանձնման կառուցակարգերի վերաբերյալ: ԳՊՀ դասախոսը փորձի փոխանակման նպատակով հանդիպեց և քննարկումներ ունեցավ արտաքին կապերի բաժնի պատասխանատու Դոմինգոս Ալմեիդա Ռոմաոյի, կառավարչական հարցերի գծով մասնագետ Պեդրո Լոպեսի, բնագիտական ուղղության համապատասխանատու, պրոֆեսոր Ֆերնանդա Պեիշի, պրոֆեսոր Միգել Ռոխա դե Սոուսայի և այլոց հետ: Մարե Խաչատրյանը նշեց, որ Գավառի պետական համալսարանի իրականացրած ծրագրերը հնարավորություն են ընձեռում՝ եվրոպական բուհերի կրթական գործընթացն ուսումնասիրելու և նրանց լավագույն փորձը Գավառի պետական համալսարանում կիրառելու համար:

ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍԸ՝ ՀՌՈՄԻ ՍԱՊԻԵՆԶԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

17.03.2024 թ.

Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Սոնա Սիմոնյանը Եվրոպական միության «Էրազմուս+» միջազգային շարժունության ծրագրի շրջանակում դասախոսություններով հանդես եկավ Հռոմի Սապիենզայի համալսարանում: Սոնա Սիմոնյանը իրականացրեց 8-ժամյա դասախոսական աշխատանք Սապիենզայի համալսարանի «Միջմշակութային հաղորդակցություն և անգլերեն լեզու» բաժնի բակալավրիատի երկրորդ և երրորդ կուրսերում: Դասախոսությունները հետևյալ թեմաներով էին. «Քաղաքական հաղորդակցություն և դիսկուրսի վերլուծություն», «Լեզուն և հանրային կարծիքը», «Քաղաքական հաղորդակցությունը թվային դարաշրջանում» և «Պրագմատիկա»: ԳՊՀ դասախոսը քննարկումներ ունեցավ Հռոմի Սապիենզայի համալսարանի Անգլերեն լեզվի և թարգմանության բաժնի ղեկավար պրոֆեսոր Դոնաթելլա Մոնտինիի և նույն բաժնի դասախոս պրոֆեսոր Մարգարիտա Դորեի հետ:

ԳՊՀ իրականացրած միջազգային ծրագրերն ապահովում են ԳՊՀ դասախոսական անձնակազմի անդամների մասնագիտական ու մանկավարժական կարողությունների շարունակական զարգացումը, կրթության որակի բարձրացումը:

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

23.03.2024 թ.

Ս. թ. մարտի 21-ին կայացավ Գավառի պետական համալսարանի իրականացրած՝ Եվրոպական միության «ERASMUS+» ակադեմիական շարժունության ծրագրերով եվրոպական համալսարաններում սովորած ուսանողների շնորհանդես-հաշվետվությունները: Հետաքրքիր և բովանդակալից հաշվետվություններ ներկայացրին ԳՊՀ «Տնտեսագիտություն» բաժնի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողուհի Լիաննա Օհանյանը, ով սովորել է Ռումինիայի Հանրապետության Տիմիշոարայի Արևմտյան համալսարանում, նույն բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Էլիզա Տոնոյանը, ով սովորել է Իտալիայի Հանրապետության Հռոմի Սապիենզայի համալսարանում, ինչպես նաև Իսպանիայի Թագավորության Կորդոբայի համալսարանում ուսանած՝ ԳՊՀ «Ֆինանսներ» բաժնի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողուհի Իսկուհի Թաթարյանը: Ուսանողները, երախտիքի խոսք ուղղելով Գավառի պետական համալսարանին ակտիվ միջազգային համագործակցության և ուսանողական շարժունության կազմակերպման համար, խորհուրդ

տվեցին մյուս ուսանողներին ևս մասնակցել ԳՊՀ եվրոպական ծրագրերին: Հաշվետվությունները լսեցին և բարձր գնահատեցին բուհի պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի անդամներ, տարբեր կուրսերի ուսանողներ, ուսուցիչներ և աշակերտներ՝ Գավառի ավագ, Սարուխանի թիվ 2 միջնակարգ, Նորատուսի Ա. Սողոմոնյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցներից:

ԿԱՅԱՑԱՎ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲՈՒՀԵՐԻՑ ՎԵՐԱԴԱՐՁԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ

01.04.2024 թ.

Գավառի պետական համալսարանի ուսանողներն ու դասախոսները Եվրոպական միության «Էրազմուս+» միջազգային ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակում սովորում, դասավանդում և վերապատրաստման դասընթացների են մասնակցում գործընկեր եվրոպական բուհերում: ԳՊՀ-ում կայացավ հերթական հաշվետու հանդիպումը եվրոպական բուհերից վերադարձած համալսարանականների հետ: Հանդիպման սկզբում բուհի արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լիլիթ Թոռչյանը ներկայացրեց համալսարանում իրականացվող միջազգային ծրագրերը:

Գավառի պետական համալսարանի կառավարման և ֆինանսների ամբիոնի դասախոս, տնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ Մարե Խաչատրյանը ներկայացրեց Պորտուգալիայի Հանրապետության Էվորայի համալսարանում, իսկ օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Սոնա Սիմոնյանը՝ Իտալիայի Հանրապետության Հռոմի Սապիենզայի համալսարանում կատարած իր դասախոսական աշխատանքի արդյունքները:

Բովանդակալից և հետաքրքիր հաշվետվություններով հանդես եկան նաև «Տնտեսագիտություն» բաժնի բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողուհի Էլիզա Տոնոյանը, ով ուսանել է Իտալիայի Հանրապետության Հռոմի Սապիենզայի համալսարանում, «Անգլերեն լեզու և գրականություն» բաժնի բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողուհի Սյուզաննա Գասպարյանը, ով սովորել է Իսպանիայի Թագավորության Կորդոբայի համալսարանում:

Հաշվետու հանդիպմանը ներկա էին բուհի պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի անդամներ, ուսանողներ՝ Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջից, աշակերտներ և ուսուցիչներ՝ Կարմիրգյուղի թիվ 1 միջնակարգ, Գանձակի թիվ 1 միջնակարգ դպրոցներից: Աշակերտները հանդիպեցին ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանի հետ, լսեցին օգտակար խորհուրդներ կրթության կարևորության և մասնագիտական ճիշտ կողմնորոշման մասին, եղան բուհի կառուցվածքային ստորաբաժանումներում:

ՑԵՐԵԿՈՒՅԹ՝ ՆՎԻՐՎԱԾ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

09.04.2024 թ.

Գավառի պետական համալսարանում կայացավ «Գրողը չէ, որ գրելիք է փնտրում, գրելիքն է գրող փնտրում» խորագիրը կրող միջոցառում՝ նվիրված Պարույր Սևակի ծննդյան 100-ամյակին: Միջոցառումը կազմակերպել էին հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի մագիստրատուրայի հայոց լեզվի և գրականության բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Թեհմինե Բատիկյանը և Կարմիրգյուղի թիվ 2 միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Սիլվա Բատիկյանը: Մասնակիցները 11-րդ դասարանի աշակերտներն էին: Միջոցառմանը ներկա էին բուհի պրոֆեսորադասախոսական կազմի անդամներ, Կարմիրգյուղի թիվ 2 միջնակարգ դպրոցի ՄԿԱ գծով փոխտնօրեն Լիլիկ Իսրայելյանը, գրադարանավարուհի Ռուզաննա Մովսիսյանը, ուսանողներ:

Միջոցառումն ամփոփեց հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վաչագան Գրիգորյանը:
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Թաթուլ Ասոյանը իր խոսքում կարևորեց դպրոց-բուհ համագործակցությունը՝ նշելով, որ նմանատիպ միջոցառումները պետք է շարունակական բնույթ կրեն:

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ՝ ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱ

14.04.2024 թ.

Գավառի պետական համալսարանի կառավարման և ֆինանսների ամբիոնի և Ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ կայացավ ուսանողական գիտաժողով՝ նվիրված ականավոր տնտեսագետ Ջոն Մեյնարդ Քեյնսի ծննդյան 140-ամյակին: Գիտաժողովի թեման էր. «Զբաղվածության և գործազրկության հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում»:
Գիտաժողովի հյուրերն էին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության պետ Ժորա Սարգսյանը, ԳՊՀ ասպիրանտուրայի շրջանավարտ, տնտեսագիտության թեկնածու, դասախոս և սոցիալական ձեռնարկատեր Արտակ Մարտիրոսյանը:
Գիտաժողովին բովանդակալից զեկուցումներ ներկայացրին «Ֆինանսներ» բաժնի ուսանողուհիներ Ռոզա Աբրահամյանը, Արեգա Հովհաննիսյանը և Մարիամ Մելոյանը, «Հաշվապահական հաշվառում» բաժնի ուսանողուհի Թագուհի Թադևոսյանը, «Տնտեսագիտություն» բաժնի ուսանողուհի Մերի Փուրթոյանը:
Գիտաժողովին ներկա էին բուհի պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի ներկայացուցիչներ, ուսանողներ՝ Գավառի պետական համալսարանից և Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջից:

ԲՈՒՀԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ՝ ԵՄ «ԷՐԱԶՄՈՒՍ+» ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

15.04.2024 թ.

Հայկական պետական մանկավարժական համալսարանում կայացավ հանդիպում՝ «Բուհերի միջազգայնացմանն ուղղված «Էրազմուս+» նախագծերի միջև փորձի փոխանակում» խորագրով, որը կազմակերպվել էր Հայաստանում «Էրազմուս+» ազգային գրասենյակի նախաձեռնությամբ: Հանդիպման սկզբում գրասենյակի տնօրեն տիկին Լանա Կառլովան ողջունեց մասնակիցներին և կարևորեց կարողությունների զարգացմանն ուղղված նախագծերի իրականացման ընթացքում ծառացած մարտահրավերների քննարկումը՝ միասնական ջանքերով դրանք հաղթահարելու նպատակով:

Գավառի պետական համալսարանից հանդիպմանը մասնակցեց արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լիլիթ Թոռչյանը:

«ՃԱՆԱՊԱՐՀ ԴԵՊԻ ՈՐԱԿ». ՔՆՆԱՐԿՈՒՄ ՈԱԱԿ-ՈՒՄ

15.04.2024 թ.

Հայաստանի Հանրապետության «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը «ՈԱԱԿ» կազմակերպեց հերթական հանդիպում-քննարկումը ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրում ունեցող բուհերի որակի ապահովման պատասխանատուների հետ: Քննարկմանը մասնակցեց Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի վարիչ Քանաքարա Հայրապետյանը:

Քանաքարա Հայրապետյանը խոսեց բուհում կրթության որակի ապահովման, ներքին ստուգման և բարելավման գործընթացի մասին: ԳՊՀ որակի ապահովման բաժինը պատրաստակամ է հետայսու ևս մասնակցելու նման հանդիպումների, ինչպես նաև ներկայացնելու Գավառի պետական համալսարանի հաջողված փորձը՝ ՀՀ այլ բուհերի և ՈԱԱԿ-ի հետ միասին անցնելով շարունակական «Ճանապարհ դեպի որակ»:

ԳՊՀ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ՝ ԵՄ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇԱԲԱԹ»-Ի ԱԿՏԻՎ ՄԱՍՆԱԿԻՑ
28.04.2024 թ.

Ս. թ. ապրիլի 21-ից 26-ը Եվրոպական միության «Էրազմուս+» ծրագրի շրջանակում Իսպանիայի Թագավորության Մուրսիայի Սան Անտոնիո կաթոլիկ համալսարանում կայացավ «Միջազգային շաբաթ», որին մասնակցեց ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լիլիթ Թոռչյանը: Միջոցառմանը ներկա էին բուհերի միջազգային բաժինների ներկայացուցիչներ հետևյալ երկրներից՝ Հայաստան, Միացյալ Թագավորություն, Ֆրանսիա, Իռլանդիա, Ֆինլանդիա, Նիդերլանդներ, Ավստրիա, Պորտուգալիա, Լեհաստան, Հունաստան, Կիպրոս, Ռումինիա, Մոլդովա և Ուգանդա:

Օրակարգի համաձայն՝ Գավառի պետական համալսարանի արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լիլիթ Թոռչյանը ներկայացրեց բովանդակալից շնորհանդես Հայաստանի Հանրապետության և Գավառ քաղաքի մասին, անդրադարձավ ԳՊՀ գործունեության հիմնական ուղղություններին, միջազգայնացման տեսլականին, այդ ուղղությամբ կատարվող աշխատանքներին: Ներկայացված տեղեկատվությունը մեծ հետաքրքրություն առաջացրեց ներկաների մոտ, ովքեր ցանկություն հայտնեցին լինելու Հայաստանի ամենախոշոր մարզում՝ Գեղարքունիքում գործող և տարածքում սոցիալական մեծ պատասխանատվություն կրող միակ բուհում՝ Գավառի պետական համալսարանում, այցելելու Հայաստանի պատմամշակութային վայրեր:

ԿԱՅԱՑԱՎ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ
04.05.2024 թ.

Կայացավ Գավառի պետական համալսարանի 27-րդ գիտաժողովը, որն իր աշխատանքները կազմակերպեց զուգակցված՝ առկա-առցանց եղանակով, լիագումար նիստում և 10 գիտական բաժանմունքներում զեկուցումների ներկայացման և քննարկման ձևաչափով: Գիտաժողովի ծրագրում ներառվել էին բնական և հասարակական գիտությունների տարբեր ուղղություններին նվիրված 108 զեկուցում՝ ներկայացված 158 հեղինակի և համահեղինակի կողմից: Մասնակիցները 30-ից ավելի բուհերի, գիտահետազոտական ինստիտուտների ու կազմակերպությունների ներկայացուցիչներ էին: Գիտաժողովին մասնակցեցին Գավառի, Երևանի, Շիրակի, Վանաձորի, Գորիսի պետական համալսարանների, Հայաստանի ազգային ագրարային, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական, Հայաստանի պետական տնտեսագիտական, Եվրոպական համալսարանների, Պետական կառավարման ակադեմիայի, Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի դասախոսները, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ինստիտուտների՝ Հրաչյա Աճառյանի անվան Լեզվի, Պատմության, Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի, Հնագիտության և ազգագրության ինստիտուտների, Գիտակրթական միջազգային կենտրոնի, Լ. Մնջոյանի անվան Նուրբ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի գիտաշխատողները, դպրոցների ուսուցիչներ, ինչպես նաև գիտության կիրառական ուղղություններով զբաղվող ընկերությունների ներկայացուցիչներ: Գիտաժողովի աշխարհագրությունը լայն էր և կրում էր միջազգային բնույթ՝ ներառելով

գիտահետազոտական գործունեությամբ զբաղվող անձանց ԱՄՆ-ից, Գերմանիայից, Ռուսաստանի Դաշնությունից, Բելառուսի Հանրապետությունից: Գիտական զեկուցումներով հանդես եկան Գավառի պետական համալսարանի գործընկեր բուհերի՝ Ալթայի պետական մանկավարժական համալսարանի, Վորոնեժի պետական համալսարանի, Պովոլժիեյի կառավարման ինստիտուտի, Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի, Բելառուսի պետական տնտեսագիտական համալսարանի դասախոսներն ու ասպիրանտները: Գիտաժողովի զեկուցումները կհրապարակվեն ԳՊՀ գիտական պարբերականում:

ԼՐԱՑԱՎ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 31-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

05.05.2024 թ.

Ս. թ. մայիսի 5-ին լրացավ Գավառի պետական համալսարանի հիմնադրման 31-րդ տարեդարձը: Արդեն 31 տարի Գեղարքունյաց աշխարհում տրոփում է համալսարանական կյանքի զարկերակը: Բուհը պատվով իրականացնում է տարածաշրջանի կրթական, գիտահետազոտական, սոցիալ-մշակութային կենտրոնի իր հանձնառությունը: ԳՊՀ-ն գործում է ակադեմիական ազնվության, սոցիալական արդարության, մարդասիրության և սերնդասիրության սկզբունքներով:

Համալսարանն ունի ութ հազարից ավելի շրջանավարտներ, որոնք հաջողությամբ աշխատում են հասարակության և պետության կենսագործունեության տարբեր ոլորտներում: Համալսարանի շրջանավարտների թվում կան գիտության թեկնածուներ, որոնք դասախոսում են ԳՊՀ-ում և այլ բուհերում: Համալսարանն ակտիվորեն անդամակցում է Եվրոպական միության ծրագրերին, ապահովում ուսանողների և դասախոսների միջազգային ակադեմիական շարժունություն:

ԳՊՀ ուսանողները տարիներ շարունակ հաղթող են ճանաչվում «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթում, մասնակցում միջազգային և հանրապետական բազմաթիվ ծրագրերի, գիտաժողովների, մրցույթների, այլ ձեռնարկների:

Ազգային և միջազգային փորձագետների այցելությունների, ուսումնասիրությունների և զեկույցների հիման վրա համալսարանը բարեհաջող ինստիտուցիոնալ հավատարմագրում անցավ 2017 թվականին, ապա վերահավատարմագրվեց 2022 թվականին՝ դրանով իսկ հավաստելով բուհի համապատասխանությունը որակի ապահովման եվրոպական չափանիշներին:

Գավառի պետական համալսարանը այն լուսավոր կրթօջախն է, որը յուրօրինակ «սոցիալական վերելակ» է ծառայում ուսանողների համար՝ փոխանցելով ընդհանուր աշխարհայացքային և մասնագիտական գիտելիքներ, օգտակար սոցիալական փորձ, բարոյական բարձր արժեքներ: Համալսարանի ծննդյան տարեդարձին ընդառաջ կայացավ բուհի 27-րդ միջազգային գիտաժողովը, ընթացքի մեջ են բազմաթիվ ծրագրեր:

Ծնունդդ շնորհավոր, սիրելի՛ համալսարան:

ԳՊՀ ՊՐՈՖԵՍՈՐԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱԿՏԻՎ ՄԱՍՆԱԿԻՑ

07.05.2024 թ.

Գավառի պետական համալսարանի կառավարման և ֆինանսների ամբիոնի դասախոս, տնտեսական գիտությունների թեկնածու, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմեն Սահակյանը ս. թ. ապրիլի 25-ին մասնակցեց Ուֆայի պետական նավթային տեխնիկական համալսարանի կազմակերպած 7-րդ միջազգային գիտաժողովին և հանդես եկավ թվայնացման գործընթացի սոցիալ-մշակութային հիմնախնդիրներին նվիրված զեկուցումով:

Հաջորդը Մոսկվայի Գ. Վ. Պլեխանովի անվան տնտեսագիտական համալսարանի կազմակերպած 3-րդ միջազգային գիտա-գործնական կոնֆերանսն էր՝ նվիրված գովազդային ու զբոսաշրջային գործունեությանը, հանրային հաղորդակցությանը: Պարոն Սահակյանը հանդես եկավ զեկուցմամբ՝ «Էթնոմշակութային տուրիզմը որպես տարածաշրջանի զարգացման ռազմավարական միջոց» թեմայով: Իսկ ս.թ. մայիսի 4-ին մասնակցեց Գավառի պետական համալսարանի 27-րդ միջազգային գիտաժողովին՝ ներկայացնելով տնտեսական սոցիոլոգիայի արդի հիմնահարցերին նվիրված զեկուցում:

ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍԸ՝ ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅԻ ՄԻՆՀՈՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ
11.05.2024 թ.

Գավառի պետական համալսարանի օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռուզաննա Սարգսյանը Եվրոպական միության «Էրազմուս+» միջազգային ակադեմիական շարժունության ծրագրի շրջանակներում Պորտուգալիայի Մինհոյի համալսարանում հանդես եկավ դասախոսություններով: Պորտուգալական համալսարանում Ռուզաննա Սարգսյանի դասախոսական աշխատանքն իրականացավ երկու հիմնական ուղղությամբ:

Համալսարանի հումանիտար մասնագիտությունների բարձրագույն դպրոցում Ռուզաննա Սարգսյանի դասախոսությունների շարքը (6 ժամ) նվիրված էր ռուսերենի՝ որպես օտար լեզվի ուսումնական պլանով նախատեսված թեմաներին (A1 և A2 մակարդակներ, հյուրընկալ դասախոս՝ պրոֆեսոր Նադեժդա Մաշադու): Դասախոսություններում ներառված էր նաև մշակութային և երկրագիտական բաղադրիչ. զուգահեռներ անցկացվեցին Պորտուգալիայի, Հայաստանի և Ռուսաստանի մշակույթների միջև:

ԳՊՀ դասախոսը սեմինար անցկացրեց Մինհոյի համալսարանի պրոֆեսոր Մարիու Մատուշի դասընթացի շրջանակներում՝ «Հայաստանը որպես քաղաքակրթությունների խաչմերուկ») թեմայով, որին մասնակցեցին «Քաղաքագիտություն», «Միջազգային հարաբերություններ», «Մշակութաբանություն», «Լեզվաբանություն» մասնագիտությունների ուսանողները և Մինհոյի համալսարանի դասախոսներն ու հետազոտողները:

ԳՊՀ-Ի ԵՎ ԱԿՈՒՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԵՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
20.05.2024 թ.

Գավառի պետական համալսարանը հյուրընկալել էր ՀՀ Գեղարքունիքի մարզի Ակունք գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն Լուսիկ Ավագյանին, փոխտնօրեն Աննա Յավրյանին, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Իրինա Ասոյանին և աշակերտներին:

ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը և Ակունքի դպրոցի տնօրեն Լուսիկ Ավագյանը ստորագրեցին համագործակցության պայմանագիր: Այնուհետև աշակերտները համալսարանականներին ներկայացրին «Սիրո ճանապարհ» խորագիրը կրող հուզիչ և բովանդակալից ցերեկույթ, որը կազմակերպել էր հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Իրինա Ասոյանը՝ դպրոցի 9-ից 12-րդ դասարանների ստեղծագործող աշակերտների մասնակցությամբ:

Դպրոցականները համալսարանին նվիրեցին ««Խորակումբ»-ից ներս» ժողովածուն, որտեղ ընդգրկված են համանուն գրական ակումբի 16 պատանի անդամների ստեղծագործությունները՝ սիրո, հայրենիքի ու կյանքի մասին:

Ցերեկույթից հետո աշակերտներն այցելեցին բուհի՝ Վարշամ Ավետյանի անվան պատմագիտական թանգարան:

ԳՊՀ-ՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԵՑ ԵՄ «ERASMUS+ KPI4HE» ԾՐԱԳՐԻ ԸՆԹԱՑՔԸ
30.06.2024 թ.

Ս. թ. հունիսի 29-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի ռեկտորատի հերթական նիստը, որի օրակարգի համաձայն քննարկվեց Եվրոպական միության «ERASMUS+ KPI4HE» ծրագրի կատարման ընթացքը:
Ծրագրի համակարգողն է Երևանի պետական համալսարանը:

Ծրագրի աշխատանքային խմբի անդամները՝ ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը և արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լիլիթ Թոռչյանը ներկայացրին ծրագրի ընթացքը, աշխատանքային հանդիպումների արդյունքները, քննարկվեցին կազմակերպչական մի շարք հարցեր, հստակեցվեցին ծրագրի շրջանակում ԳՊՀ-ի կողմից կատարվելիք աշխատանքները:

ԵՄ «ERASMUS + T-GREEN» ԾՐԱԳԻՐԸ՝ ԳՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱ
30.06.2024 թ.

Ս. թ. մայիսի 31-ին կայացավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի հերթական նիստը, որի օրակարգային հարցերից մեկը վերաբերում էր Եվրոպական միության «ERASMUS+T-GREEN» ծրագրի կատարման ընթացքին:
Ծրագիրը բուհերում իրականացվող հետբակալավրի կրթության անհրաժեշտ բարեփոխումներին ուղղված նախագիծ է, որի համար առանցքային է «Կանաչ» քաղաքականությունը:

ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լիլիթ Թոռչյանը, ով «ERASMUS+T-GREEN» ծրագրի աշխատանքային խմբի անդամ է, համալսարանի գիտական խորհրդին հանգամանորեն ներկայացրեց ծրագրի ընթացքը, աշխատանքային հանդիպումների արդյունքները, քննարկվեցին կազմակերպչական մի շարք հարցեր, հստակեցվեցին ծրագրի շրջանակում ԳՊՀ-ի կողմից կատարվելիք հետագա աշխատանքները:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՇՊՀ-ՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ
02.07.2024 թ.

Գավառի պետական համալսարանի ուսանողները մասնակցեցին Շիրակի Միքայել Նալբանդյանի անվան պետական համալսարանի կազմակերպած հանրապետական ուսանողական գիտաժողովին՝ նվիրված բուհի հիմնադրման 90-ամյակին:

Գիտաժողովի լիագումար նիստին բացման խոսքով հանդես եկավ ՇՊՀ ռեկտոր Երվանդ Սերոբյանը: Լիագումար նիստից հետո գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին բնագիտամաթեմատիկական, պատմական, բանասիրական, հոգեբանական, մանկավարժական գիտություններին և դասավանդման մեթոդիկաներին նվիրված մասնագիտական բաժանմունքներում:
Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի ուսանողները հանդես եկան հետևյալ զեկուցումներով.
1. Լաուրա Մանուկյան՝ «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության բակալավրի 3-րդ կուրսի ուսանողուհի, թեմա՝ «Կարճասույթ բանաձևային կառույցները Մխիթար Գոշի առակներում», գիտական ղեկավար՝ Ղռեջյան Լ.,
2. Արմինե Ասլանյան՝ «Պատմություն» մասնագիտության բակալավրի 2-րդ կուրսի ուսանողուհի, թեմա՝ «Նոր Բայազետ գավառի Դալիղարդաշ բնակավայրը (1828-1913 թվականներ)», գիտական ղեկավար՝ Հայրապետյան Ք.,

3. Լուսինե Պողոսյան՝ «Պատմություն» մասնագիտության մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի, թեմա՝ «Ջրի և պտղաբերության պաշտամունքը Գեղարքունյաց աշխարհում», գիտական ղեկավար՝ Պողոսյան Ա.,
4. Արփի Սարիբեկյան՝ «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի, թեմա՝ «Սոցիալական մեդիայի ազդեցությունը հայ երիտասարդների շրջանում նոր լեզվական բառապաշարի ձևավորման վրա», գիտական ղեկավար՝ Սարգսյան Ռ.:
Գիտաժողովի փակման արարողությունից հետո մասնակիցները շրջեցին Գյումրի քաղաքի պատմամշակութային վայրերում:

ԳՊՀ-ՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԴԻՊԼՈՄՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ
05.07.2024 թ.

Հուլիսի 5-ը՝ Սահմանադրության և պետական խորհրդանիշների օրը Գավառի պետական համալսարանի համար նշանավորվում է յուրովի, քանզի յուրաքանչյուր տարի այս օրը ջերմ ու հաճելի մթնոլորտում դիպլոմներ են շնորհվում առկա և հեռակա բաժինների բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտներին:
Այսօր բարձրագույն մասնագիտական կրթության վավերագիր՝ դիպլոմ ստացավ ԳՊՀ շրջանավարտների 27-րդ սերունդը, ով կմիանա ութ հազարից ավելի համալսարանականների բանակին, պատվով կծառայի մայր հայրենիքին ու ժողովրդին, քանզի Գավառի պետական համալսարանը ոչ միայն տալիս է մասնագիտական խորը գիտելիքներ ու կարողություններ, այլև նպաստում է ուսանողների լայն աշխարհայացքի, արժեքային ճիշտ կողմնորոշումների ու սկզբունքների ձևավորմանը:

ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը ջերմորեն ողջունեց և շնորհավորեց բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտներին, նրանց ծնողներին, դասախոսներին, բոլոր համալսարանականներին ու հյուրերին՝ նշելով, որ բուհում կրթության ու դաստիարակության ուղենիշը եղել և մնում է ազնիվ ու առաքինի, ազգային ու համամարդկային բարձր արժեքներով օժտված մասնագետներ պատրաստելու կարևոր առաքելությունը:

Ավանդույթի համաձայն տեղի ունեցավ մագիստրոսների երդման հանդիսավոր արարողություն: ԳՊՀ շրջանավարտներին իր գեղեցիկ կատարմամբ ողջունեց Գավառ քաղաքի Հայրապետ Խաչատրյանի անվան արվեստի դպրոցի ուսուցիչ, Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի շրջանավարտ Գրիգոր Բալագոզյանը:

ԿԱՅԱՑԱՎ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳՊՀ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ
31.08.2024 թ.

Նոր ուսումնական տարվան ընդառաջ՝ 2024թ. օգոստոսի 31–ին Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ հանդիպում առաջին կուրսի ուսանողների և նրանց ծնողների հետ:
ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը ջերմորեն ողջունեց և շնորհավորեց առաջին կուրսեցիներին ու նրանց ծնողներին, ուսանողներին մաղթեց արդյունավետ ուսումնառություն և բարձր առաջադիմություն:
ԳՊՀ ռեկտորատի անդամները ներկայացրին բուհում ուսումնական գործընթացի կազմակերպման սկզբունքները, առկա կրթական հնարավորությունները, միջազգային համագործակցության և սոցիալական աջակցության ծրագրերը, ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման «Learn.gsu.am» համակարգից և էլեկտրոնային գրադարանից օգտվելու

կանոնները, անդրադարձան սովորողներին առաջադրվող պահանջներին՝ նրանց կոչ անելով լինել աշխատասեր և նպատակասլաց:
Առաջին կուրսի ուսանողները ստացան տեղեկատվական թերթիկներ:

Նունե Միրիբյան՝
ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության
բաժնի մասնագետ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐԻ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ

Ազգանուն, անուն, հայրանուն	*ծառայողական*	*Էլեկտրոնային փոստի հասցե*
ԳՊՀ Հոգաբարձուների Խորհրդի նախագահ Ղազարյան Էդուարդ Մուշեղի	**0-60-46-02-01** **0-264-2-57-75**	info@gsu.am
ԳՊՀ ռեկտոր Հակոբյան Ռուզաննա Խաչիկի	**0-60-46-03-02**	rector@gsu.am
Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Կուտուզյան Նելլի Ալբերտի	**0-60-46-04-03**	n.kutuzyan@gsu.am
Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ավագյան Մարտին Պատվականի	**0-60-46-12-55**	m.avagyan@gsu.am
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Ասոյան Թաթուլ Արտիկի	**0-60-46-12-70**	t.asoyan@gsu.am
Ակադեմիական քաղաքականության բաժին վարիչ Ղազարյան Օլգա Ալբերտի	**0-60-46-12-42**	t.khachikyan@gsu.am
Ուսանողական խորհրդի նախագահ Մանուկյան Լաուրա Հայկի	**0-60-46-12-40**	student@gsu.am
Ուսանողական գիտական ընկերության նախագահ Փուրթոյան Մերի Ալբերտի	**0-60-46-12-60**	sssgsu@mail.ru
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկանի տեղակալ Սարգսյան Ռուզաննա Մարատի	**0-60-46-12-70**	r.sargsyan@gsu.am
Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի դեկանի տեղակալ Գարեյան Մելանյա Վարդանի	**0-60-46-12-50**	**m.gareyan@gsu.am**
Որակի ապահովման բաժին վարիչ Հայրապետյան Քանաքարա Խաչիկի	**0-60-46-12-43**	qa@gsu.am
Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին վարիչ Հովհաննիսյան Մարգար Աչտավազդի	**0-60-46-12-56**	IT-Department@gsu.am
Գլխավոր հաշվապահ Մուրադյան Գուրգեն Գևորգի	**0-60-46-12-46**	g.muradyan@gsu.am
Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի վարիչ Սաֆարյան Խաչատուր Ժորայի	**0-60-46-12-41**	kh.safaryan@gsu.am
Արհմիության նախագահ Սիրունյան Լյովա Գուրգենի	**0-60-46-12-49**	l.sirunyan@gsu.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՊՀ ռազմավարական ծրագրի կատարման ընթացքը, արդյունքները, խնդիրները.....	3
Ընդհանուր տեղեկություններ համալսարանի մասին.....	14
ԳՊՀ միջազգային համագործակցություն.....	48
ԳՊՀ դասախոսների գործուղումներ.....	62
ԳՊՀ ուսումնագիտական աշխատանքներ.....	69
ԳՊՀ բնագիտատնտեսագիտական ֆակուլտետ.....	101
ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ.....	117
ԳՊՀ ակադեմիական քաղաքականության բաժին.....	146
ԳՊՀ որակի ապահովման բաժին.....	155
ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժին	164
ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին.....	173
ԳՊՀ գրադարան	176
ԳՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման բաժին.....	181
ԳՊՀ արխիվ.....	188
ԳՊՀ արհեստակցական կազմակերպություն.....	191
ԳՊՀ ուսանողական խորհուրդ	193
ԳՊՀ ուսանողական գիտական ընկերություն.....	200
ԳՊՀ ֆինանսական գործունեության վերլուծություն.....	204
ԳՊՀ տնտեսատեխնիկական գործունեություն.....	214
ԳՊՀ հիշարժան միջոցառումներ.....	222
ԳՊՀ տեղեկատու.....	248

CONTENTS

The Objectives, Outcomes and Process of GSU Strategic Program Implementation	3
General Information about the University.....	14
International Cooperation.....	48
Business Trips of the Academic Staff.....	62
Educational and Scientific Activities.....	69
Faculty of Natural Sciences and Economics	101
Faculty of Humanities.....	117
GSU Academic Policy Department.....	146
GSU Quality Assurance Department.....	155
GSU Foreign Relations and Information Department.....	164
Information Technology Department.....	173
GSU Library.....	176
GSU Department of Human Resource Management	181
GSU Archive.....	188
GSU Trade Union.....	191
GSU Student Council.....	193
GSU Student Scientific Society.....	200
Analysis of the financial activities of GSU.....	204
Economic and Technological Activities of GSU.....	214
Memorable events of GSU.....	222
Information leaflet.....	248

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
GAVAR STATE UNIVERSITY

2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ACTIVITY REPORT OF THE 2023-2024 ACADEMIC YEAR AND SELF-ASSESSMENT REPORT

ԳՊՀ
Գեղարքունիքի մարզ,
քաղաք Գավառ, Հրանտ Հակոբյան 1,
հեռ. (37460) 46-03-02
կայք. www.gsu.am
էլ. փոստի հասցե - infogsu@mail.ru
info@gsu.am

GSU
Gegharkunik Marz
1 Hrant Hakobyan Str., Gavar
tel. (37460) 46-03-02
website: www.gsu.am
E-mail - infogsu@mail.ru
info@gsu.am